

# «Գուդ մայնինգ (Ինթերնեշնլ) Լիմիթեդ»

«International GAAP®» ֆինանսական հաշվետվությունների  
ցուցադրական օրինակ 2011թ. դեկտեմբերի 31-ին  
ավարտվող տարվա համար

Հիմնված 2011թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ թողարկված Ֆինանսական  
հաշվետվությունների միջազգային ստանդարտների վրա



# Բովանդակություն

<b>Հապավումներ և կարևոր սահմանումներ</b> .....	<b>2</b>
<b>Ներածություն</b> .....	<b>3</b>
<b>Հիմնական տեղեկություններ</b> .....	<b>9</b>
<b>Անկախ աուդիտորական եզրակացություն «Գուդ մայնինգ (Ինթերնեշլ) Լիմիթեդ»-ի բաժնետերերին</b> .....	<b>10</b>
<b>Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն</b> .....	<b>11</b>
<b>Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն</b> .....	<b>12</b>
<b>Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն</b> .....	<b>14</b>
<b>Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն</b> .....	<b>15</b>
<b>Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ</b> .....	<b>17</b>
1. Տեղեկատվություն ընկերության վերաբերյալ .....	17
2.1 Հաշվետվությունների պատրաստման հիմունքները .....	17
2.2 Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ .....	18
2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ և բացահայտումներ .....	23
2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր .....	25
2.5 Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ .....	59
3. Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ, ձեռքբերումներ .....	62
4. Համատեղ ձեռնարկումներում մասնակցություններ .....	63
5. Գործառնական սեզմենտներ .....	64
6. Գործառնական (վնաս)/օգուտ .....	68
7. Հասույթ .....	69
8. Շահութահարկ .....	69
9. Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ .....	71
10. Առաջարկված և վճարված շահաբաժիններ .....	72
11. Հետախուզման և գնահատման ակտիվներ .....	72
12. Հանքեր .....	73
13. Հիմնական միջոցներ .....	74
14. Ոչ նյութական ակտիվներ .....	75
15. Արժեզրկման կորուստներ .....	75
16. Թոշակային հատուցումների գծով պարտավորություն .....	77
17. Պաշարներ .....	79
18. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր .....	79
19. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ .....	80
20. Թողարկված կապիտալ .....	81
21. Տոկոսային վարկեր և փոխառություններ .....	82
22. Պահուստներ .....	82
23. Կրեդիտորական պարտքեր և հաշվեգրված պարտավորություններ .....	83
24. Կապիտալ ներդրումների գծով պարտավորվածություններ և այլ պայմանական պարտավորություններ .....	84
25. Կապակցված կողմերի բացահայտումներ .....	85
26. Ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակները և քաղաքականությունները .....	86
27. Ածանցյալներ և ֆինանսական գործիքներ .....	90
28. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր .....	92
<b>Հավելված 1. ՖՀՄՍ-ների առաջին անգամ որդեգրում</b> .....	<b>93</b>
<b>Բառարան</b> .....	<b>104</b>
<b>Նշումներ</b> .....	<b>106</b>

## Հապավումներ և կարևոր սահմանումներ

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն պատրաստված սույն ֆինանսական հաշվետվությունների ցուցադրական օրինակում օգտագործվում են հետևյալ հապավումները՝

ՀՀՄՍ 33.41	Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ թիվ 33, պարագրաֆ 41
ՀՀՄՍ 1.ԵՀ13	Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ թիվ 1, Եզրակացության հիմքեր, պարագրաֆ 13
ՖՀՄՍ 2.44	Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ թիվ 2, պարագրաֆ 44
ՄՄԿ 29.6	Մեկնաբանությունների մշտական կոմիտեի մեկնաբանություն թիվ 29, պարագրաֆ 6
ՖՀՄՄԿ 4.6	ՖՀՄՍ մեկնաբանությունների կոմիտեի (նախկինում ՖՀՄՄԿ) մեկնաբանություն թիվ 4, պարագրաֆ 6
ՀՀՄՍ 39. ԻՈՒ.Է.2	ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ: ճանաչումը և չափումը», ՀՀՄՍ 39 ստանդարտի իրագործման ուղեցույց, Բաժին Է՝ Այլ, պարագրաֆ Է.2
ՀՀՄՍ 39.ԿՈՒ71	ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ: ճանաչումը և չափումը», հավելված Ա, կիրառման ուղեցույց, պարագրաֆ ԿՈՒ 71
ԱՄՍ 700.25	Աուդիտի միջազգային ստանդարտ թիվ 700, պարագրաֆ 25
Մեկնաբանություն	Մեկնաբանությունը պարզաբանում է, թե ինչպես են ՖՀՄՍ-ների պահանջներն իրագործվում ներկայացված ցուցադրական օրինակում:
ՀԸՀՍ	Համընդհանուր ընդունված հաշվապահական սկզբունքներ/փորձ
ՀՀՄՍԽ	Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդ
Մեկնաբանությունների կոմիտե	ՖՀՄՍ մեկնաբանությունների կոմիտե (նախկինում Ֆինանսական հաշվետվությունների մեկնաբանությունների միջազգային կոմիտե (ՖՀՄՄԿ))
ՄՄԿ	Մեկնաբանությունների մշտական կոմիտե

# Ներածություն

Սույն հրապարակումը պարունակում է 2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար համախմբված ֆինանսական հաշվետվությունների ցուցադրական օրինակ, որը պատրաստվել է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան, «Գուդ մայնինգ (Ինթերնեշնլ) Լիմիթեդ» ընկերության («Գուդ մայնինգ») համար, որը պայմանական հանքարդյունաբերական ընկերությունների խումբ է:

## Նպատակը

Ֆինանսական հաշվետվությունների փաթեթի սույն ցուցադրական օրինակը «Էրնսթ ընդ Յանգ» ընկերության կողմից պատրաստված բազմաթիվ օրինակներից մեկն է՝ օժանդակելու Ձեզ սեփական ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու ընթացքում: Ներկայումս հասանելի են հետևյալ ցուցադրական օրինակները՝

- ▶ «Գուդ գրուփ (Ինթերնեշնլ) Լիմիթեդ»
- ▶ «Գուդ գրուփ (Ինթերնեշնլ) Լիմիթեդ»՝ *ցուցադրական միջանկյալ խտացված համախմբված ֆինանսական հաշվետվություններ*
- ▶ «Առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրող Գուդ (Ինթերնեշնլ) Լիմիթեդ»
- ▶ «Գուդ բանկ (Ինթերնեշնլ) Լիմիթեդ»
- ▶ «Գուդ ինշուրանս (Ինթերնեշնլ) Լիմիթեդ»
- ▶ «Գուդ ռեալ էսթեյթ գրուփ (Ինթերնեշնլ) Լիմիթեդ»
- ▶ «Գուդ ինվեսթմենթ ֆանդ Լիմիթեդ» (կապիտալ)
- ▶ «Գուդ ինվեսթմենթ ֆանդ Լիմիթեդ» (պարտավորություններ)
- ▶ «Գուդ փեթրոլիում (Ինթերնեշնլ) Լիմիթեդ»
- ▶ «Գուդ քոնսթրաքշն գրուփ (Ինթերնեշնլ) Լիմիթեդ»

«Գուդ մայնինգ» ընկերության գործունեությունն ընդգրկում է հանքերի հետախուզումը, մշակումը և արդյունահանումը: Այս հրապարակումը ցուցադրում է ՖՀՄՍ-ների բացահայտումները, որոնք ավելի բնորոշ են հանքային արդյունաբերությանը, քան ընդհանուր բնույթի ընկերություններին:

Հետևաբար, որոշ ընդհանուր բնույթի գործարքներ և վերջիններիս բացահայտումները դիտարկելիս կերպով բաց են թողնվել կամ պարզեցվել, քանի որ նկարագրված են «Էրնսթ ընդ Յանգ» ընկերության այլ ցուցադրական ֆինանսական հաշվետվությունների հրապարակումներում, այնպիսին ինչպիսին է 2011թ. «Գուդ գրուփ (Ինթերնեշնլ) Լիմիթեդ»-ի հրապարակումը: Մենք հղում ենք կատարում նման հրապարակումներին, որպեսզի ընթերցողն ավելի լավ հասկանա հանքային արդյունաբերությանը ոչ հատուկ ներկայացման և բացահայտումների նկատմամբ այլ պահանջները:

Հետախուզման, մշակման և արդյունահանման հաշվառումը բարդ է՝ ընկերության կողմից հետախուզման և գնահատման փուլի գործարքների վերաբերյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության ենթակա տարբեր մոտեցումներով: Ոլորտի խնդիրն է հրապարակել որոշումների կայացման համար օգտակար ֆինանսական հաշվետվություններ՝ արդյունավետ ներկայացման և բացահայտման միջոցով: Ցավոք, հաշվապահական հաշվառման քաղաքականությունների միջև տարբերությունները և դրանց կիրառումը համադրելիությունը դարձնում են ավելի դժվար և առաջացնում լրացուցիչ բարդություններ:

ՖՀՄՍ-ները սահմանում են բացահայտման նկատմամբ նվազագույն պահանջներ: Հանքային արդյունաբերության ընկերության առջև ծառայած արտասովոր հանգամանքների բացատրության նպատակով կարևոր է տրամադրել լրացուցիչ բացահայտում: Բացի այդ, ընկերության կողմից ընտրված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է մանրամասն բացահայտվի, որպեսզի ընթերցողին թույլ տա համեմատել հանքային արդյունաբերության ոլորտի տարբեր ընկերություններ:

Այս հրապարակումը պարզաբանում է, թե որն է մեր կողմից համարվում լավագույն բացահայտում և կենտրոնանում է ՖՀՄՍ-ներով հաշվետվությունների այն մասերի վրա, որոնց վրա մեծապես հիմնվում է ղեկավարությունը մասնագիտական դատողություններ իրականացնելիս:

Այս ցուցադրական բացահայտումները ներկայացման միակ հնարավոր տարբերակները չեն, բայց վերջիններս արտացոլում են հանքային արդյունաբերության ոլորտի առավել կիրառելի բացահայտումները: Դրանք հաշվի չեն առնում երկրի կամ արժեթղթերի շուկայի կարգավորող մարմինների պահանջները տրված որևէ իրավական դաշտում: Կարևոր է հաշվի առնել համապատասխան հաշվապահական հաշվառման ստանդարտները և/կամ հատուկ իրավական պահանջները և, անհրաժեշտության դեպքում, երբ կասկածներ են առաջանում պահանջների վերաբերյալ, դիմել համապատասխան մասնագիտական խորհրդատվության:

Մենք հուսով ենք, որ այս ձեռնարկը օգտակար կլինի Ձեզ ՖՀՄՍ-ների վրա հիմնված հաջորդ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ժամանակ: Եթե հարկավոր կլինի այս հրապարակմանը վերաբերող լրացուցիչ տեղեկատվություն, խնդրում ենք դիմել Ձեզ առավել մոտ գտնվող «Էրնսթ ընդ Յանգ» ընկերության հանքային արդյունաբերության մասնագետի:

# Ներածություն (շարունակություն)

## Պատրաստման և ներկայացման հիմունքները

Այս հրապարակումը հիմնված է 2011թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ՀՀՄՍԽ-ի կողմից թողարկված այն ՖՀՄՍ-ների և մեկնաբանությունների պահանջների վրա, որոնք կիրառելի են 2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ: Ընդունված ստանդարտների և մեկնաբանությունների մանրամասները ներառվել են այս ցուցադրական ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում: Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած նոր հաշվապահական հաշվառման ստանդարտների և մեկնաբանությունների ազդեցությունը, որոնք կարող են վերաբերել «Գուդ մայնինգ» ընկերությանը և նրա դուստր կազմակերպություններին («Խմբին») ապագայում, համապատասխանաբար ընդգրկվել են այս ցուցադրական ֆինանսական հաշվետվություններում: Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած այլ ստանդարտների և մեկնաբանությունների մանրամասնությունները, որոնք կարող են վերաբերել մասնավորապես Ձեր ընկերությանը, խնդրում ենք նայել կա՛մ մեկնաբանությունների բաժնում, կա՛մ «Գուդ գրուպի (Ինթերնեշլ) Լիմիթեդ» 2011թ. ցուցադրական ֆինանսական հաշվետվություններում:

## Ընդհանուր փաստեր

Խումբը ոսկու և պղնձի հետախուզմամբ, մշակմամբ և արդյունահանմամբ զբաղվող ընկերություն է, որի գործունեությունը ներառում է ոսկու և պղնձի հանքավայրերի հետախուզման և մշակման աշխատանքները, ինչպես նաև ոսկու ձուլակտորների և ոսկու և պղնձի մետաղական խտանյութի արտադրությունը և վաճառքը: Ընկերության ամբողջ գործունեությունը ծավալվում է Մետալվիլում (պայմանական երկիր):

## Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ

«ՖՀՄՍ» հապավումը սահմանված է ՀՀՄՍ 1-ի 7-րդ և ՀՀՄՍ 8-ի 5-րդ պարագրաֆներում որպես «ՀՀՄՍԽ-ի կողմից թողարկված ստանդարտներ և մեկնաբանություններ», որոնք ներառում են՝

- ▶ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ,
- ▶ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներ,
- ▶ ՖՀՄՄԿ մեկնաբանություններ  
և
- ▶ ՄՄԿ մեկնաբանություններ:

Այսպիսով, երբ ֆինանսական հաշվետվությունները համարվում են ՖՀՄՍ-ներին համապատասխան, նշանակում է, որ դրանք համապատասխանում են ՀՀՄՍԽ-ի բոլոր պաշտոնական հրապարակումներին:

## Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդ (ՀՀՄՍԽ)

ՀՀՄՍԽ-ն հանդիսանում է ՖՀՄՍ հիմնադրամի (անկախ, շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն, որը ներկայացնում է հանրային շահը) ստանդարտներ սահմանող անկախ մարմին: ՀՀՄՍԽ-ի անդամները (ներկա դրությամբ 15 լրիվ դրույթով աշխատող անդամներ) պատասխանատու են ՖՀՄՍ-ների և Փոքր ու միջին կազմակերպությունների ՖՀՄՍ-ների մշակման և հրապարակման, ինչպես նաև ՖՀՄՍ մեկնաբանությունների կոմիտեի կողմից մշակված ՖՀՄՍ-ների մեկնաբանությունների հաստատման համար: Ստանդարտների ընդունման պարտականությունները կատարելիս՝ ՀՀՄՍԽ-ն վերահսկում է ստանդարտների հաստատման և թողարկման ընթացակարգերը, որոնցից՝ խորհրդատվական փաստաթղթերի (քննարկման համար նախատեսված և առաջարկվող նախագծեր) հրապարակումը հանրային մեկնաբանությանը ներկայացնելու նպատակով հանդիսանում է կարևոր բաղկացուցիչ:

## ՖՀՄՍ մեկնաբանությունների կոմիտե

ՖՀՄՍ մեկնաբանությունների կոմիտեն (Մեկնաբանությունների կոմիտե) (նախկինում՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային մեկնաբանությունների կոմիտե (ՖՀՄՄԿ)) հանդիսանում է ՖՀՄՍ հիմնադրամի հոգաբարձուների կողմից նշանակված կոմիտե, որն օժանդակում է ՀՀՄՍԽ-ին՝ ֆինանսական հաշվետվությունները պատրաստողների, օգտագործողների և աուդիտորների համար ֆինանսական հաշվառման ստանդարտների և հաշվետվությունների սահմանման ու բարելավման նպատակով:

Մեկնաբանությունների կոմիտեն անդրադառնում է համեմատաբար լայնամասշտաբ կարևորության խնդիրների և ոչ այնպիսի խնդիրների, որոնք ամռնվում են միայն քիչ քանակով կազմակերպություններին: Կոմիտեի մեկնաբանություններն անդրադառնում են՝

- ▶ ֆինանսական հաշվետվությունների նոր հայտնաբերված խնդիրներին, որոնց հատուկ անդրադարձ չի կատարվել ՖՀՄՍ-ում,
- ▶ այն խնդիրներին, որոնց գծով անբավարար կամ հակասական մեկնաբանություններ են մշակվել կամ հնարավոր է, որ կմշակվեն համապատասխան ուղեցույցի բացակայության պատճառով՝ տվյալ հարցի շուրջ փոխհամաձայնության հասնելու նպատակով  
և
- ▶ ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումների նախագծի իրականացման ընթացքում ուշադրության արժանի խնդիրների շուրջ ՀՀՄՍԽ-ին խորհրդատվությանը:

# Ներածություն (շարունակություն)

## ՖՀՄՍ-ներ 2011 թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ

Սույն ցուցադրական ֆինանսական հաշվետվություններում կիրառված ստանդարտները 2011 թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ հրապարակված տարբերակներն են և ուժի մեջ են այն հաշվետու ժամանակաշրջանների համար, որոնք սկսվում են 2011 թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո:

Այն ներառում է հետևյալը՝

### Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ (ՖՀՄՍ)

ՖՀՄՍ 3	Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ (2008 թ. վերանայված)
ՖՀՄՍ 6	Օգտակար հանածոների հետախուզում և գնահատում
ՖՀՄՍ 7	Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ
ՖՀՄՍ 8	Գործառնական սեզմենտներ

### Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներ (ՀՀՄՍ)

ՀՀՄՍ 1	Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում
ՀՀՄՍ 2	Պաշարներ
ՀՀՄՍ 7	Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին
ՀՀՄՍ 8	Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ
ՀՀՄՍ 10	Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր
ՀՀՄՍ 12	Շահութահարկեր
ՀՀՄՍ 16	Հիմնական միջոցներ
ՀՀՄՍ 17	Վարձակալություն
ՀՀՄՍ 18	Հասույթ
ՀՀՄՍ 19	Աշխատակիցների հատուցումներ
ՀՀՄՍ 21	Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները
ՀՀՄՍ 23	Փոխառության ծախսումներ
ՀՀՄՍ 24	Կապակցված կողմերի բացահայտումներ
ՀՀՄՍ 27	Համախմբված և առանձին ֆինանսական հաշվետվություններ (2008 թ. վերանայված)
ՀՀՄՍ 31	Մասնակցություն համատեղ ձեռնարկումներում
ՀՀՄՍ 32	Ֆինանսական գործիքներ. ներկայացումը
ՀՀՄՍ 33	Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ
ՀՀՄՍ 36	Ակտիվների արժեզրկում
ՀՀՄՍ 37	Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ
ՀՀՄՍ 38	Ոչ նյութական ակտիվներ
ՀՀՄՍ 39	Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը

### Մեկնաբանություններ

ՖՀՄՍԿ 1	Փոփոխություններ ապագործարկման, վերականգնման և նմանատիպ գոյություն ունեցող պարտավորություններում
ՖՀՄՍԿ 4	Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում
ՖՀՄՍԿ 5	Ապագործարկման, վերակառուցման և շրջակա միջավայրի վերականգնման ֆոնդերում մասնակցության իրավունքը



## Ներածություն (շարունակություն)

### Հետևյալ ստանդարտները և մեկնաբանությունները չեն արտացոլվել սույն ֆինանսական հաշվետվությունում՝

ՖՀՄՍ 1	Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների առաջին անգամ որդեգրումը (ներկայացված է Հավելված 1-ում)
ՖՀՄՍ 2	Բաժնետոմսերի վրա հիմնված վճարում
ՖՀՄՍ 4	Ապահովագրության պայմանագրեր
ՖՀՄՍ 5	Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործունեություն
ՀՀՄՍ 11	Կառուցման պայմանագրեր
ՀՀՄՍ 20	Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում
ՀՀՄՍ 26	Թոշակային հատուցումների պլանների հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունները
ՀՀՄՍ 28	Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում
ՀՀՄՍ 29	Ֆինանսական հաշվետվությունները գերսղաճային տնտեսություններում
ՀՀՄՍ 34	Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ (տե՛ս «Էրնսթ և Եյնսթ ընդ Յանգ» ընկերության առանձին հրապարակումը՝ «Գուդ գրուպ (Ինթերնեշնլ) Լիմիթեդ» ցուցադրական միջանկյալ խտացված համախմբված ֆինանսական հաշվետվությունները)
ՀՀՄՍ 40	Ներդրումային գույք
ՀՀՄՍ 41	Գյուղատնտեսություն
ՖՀՄՄԿ 2	Կոուպերատիվ կազմակերպություններում անդամների բաժնեմասերը և նմանատիպ գործիքներ
ՖՀՄՄԿ 6	Էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների թափոնների յուրահատուկ շուկայում մասնակցությունից առաջացող պարտավորություններ
ՖՀՄՄԿ 7	Վերահաշվարկման մոտեցման կիրառումը՝ համաձայն ՀՀՄՍ 29-ի ֆինանսական հաշվետվությունները գերսղաճային տնտեսություններում
ՖՀՄՄԿ 9	Պարունակվող ածանցյալ գործիքների գնահատման վերանայում
ՖՀՄՄԿ 10	Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ և արժեզրկում
ՖՀՄՄԿ 12	Ծառայության կոնցեսիայի համաձայնություններ
ՖՀՄՄԿ 13	Հաճախորդի հավատարմության ծրագրեր
ՖՀՄՄԿ 14	ՀՀՄՍ 19 – Սահմանված հատուցումների գծով ակտիվի սահմանափակումը, նվազագույն ֆինանսավորման պահանջները և դրանց փոխազդեցությունը
ՖՀՄՄԿ 15	Անշարժ գույքի կառուցման պայմանագրեր
ՖՀՄՄԿ 16	Արտերկրյա ստորաբաժանումում զուտ ներդրման հեջերը
ՖՀՄՄԿ 17	Ոչ դրամական ակտիվների բաշխումը սեփականատերերին
ՖՀՄՄԿ 18	Հաճախորդների կողմից ստացված ակտիվներ
ՖՀՄՄԿ 19	Բաժնային գործիքներով ֆինանսական պարտավորությունների մարումը
ՄՄԿ 7	Անցումը եվրոյի
ՄՄԿ 10	Պետական օգնություն՝ առանց գործառնական գործունեության հետ յուրահատուկ կապի
ՄՄԿ 12	Համախմբում. հատուկ նշանակության կազմակերպություններ
ՄՄԿ 13	Համատեղ վերահսկվող կազմակերպություններ. ձեռնարկողների ոչ դրամային ներդրումները
ՄՄԿ 15	Գործառնական վարձակալություն. խրախուսող պայմաններ
ՄՄԿ 21	Շահութահարկ. վերագնահատված չնաշվող ակտիվների վերականգնում
ՄՄԿ 25	Շահութահարկ. փոփոխություններ կազմակերպության կամ նրա բաժնետերերի հարկային կարգավիճակում
ՄՄԿ 27	Վարձակալության իրավական ձև ներառող գործարքների բովանդակության գնահատումը
ՄՄԿ 29	Ծառայության կոնցեսիայի համաձայնություններ. բացահայտում
ՄՄԿ 31	Հասույթ. բարտերային գործարքներ, որոնք ներառում են զովազդային ծառայություններ
ՄՄԿ 32	Ոչ նյութական ակտիվներ. ինտերնետային կայքի ծախսումներ



## Ներածություն (շարունակություն)

Ստանդարտները նաև ներառում են 2010թ. մայիսին ՖՀՄՍ բարեփոխումների արդյունքում առաջացած փոփոխությունները, եթե կան այդպիսիք:

Հարկավոր է նշել, որ ՀՀՄՍԽ-ն 2011թ. սեպտեմբերի 30-ից հետո կարող է հրապարակել նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ: Հետևաբար, սույն հրապարակումը օգտագործողները պետք է համոզվեն, որ 2011թ. սեպտեմբերի 30-ի և իրենց ֆինանսական հաշվետվությունների հրապարակման համար վավերացման ամսաթվի միջև ընկած ժամանակահատվածում ՖՀՄՍ-ների պահանջներում փոփոխություններ չեն եղել: Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ցանկացած ստանդարտ պետք է հաշվի առնվի հաշվետու կազմակերպության բացահայտման պահանջներում:

### «Գուդ մայնինգ (Ինթերնեշլ) Լիմիթեդ»-ի տարեկան ֆինանսական հաշվետվությունների 2011թ.-ի հրատարակությունում փոփոխությունները

2010թ. հրապարակման և սույն ցուցադրական ֆինանսական հաշվետվությունների միջև էական տարբերություններ չկան: Նոր և փոփոխված ստանդարտներն ու մեկնաբանությունները ոչ մի ազդեցություն չեն ունեցել Խմբի վրա ընդհանուր առմամբ, դրանք միայն հանգեցրել են Խմբի հրապարակված հաշվապահական հաշվառման քաղաքականության թարմացմանը:

Թեև ՖՀՄՍԿ Մեկնաբանություն 20 (ՖՀՄՍԿ 20) «Արդյունահանման փուլում հանքի բաց մշակման մակաբացման ծախսումներ» չի թողարկվել մինչև 2011թ. սեպտեմբերի 30-ը, «Գուդ մայնինգ» ընկերության այս հրատարակումը ներառում է որոշ լրացուցիչ մեկնաբանություններ, որոնք են՝

#### ՖՀՄՍԿ Մեկնաբանություն 20 (ՖՀՄՍԿ 20)՝ «հետաձգված մակաբացում» (տե՛ս Ծան. 2.4(Ժգ))

2011թ. հուլիսի ընթացքում ՖՀՄՍ Մեկնաբանությունների կոմիտեն վերջնական տեսքի բերեց «Արդյունահանման փուլում հանքի բաց մշակման մակաբացման ծախսումներ» մեկնաբանությունը: 2011թ. սեպտեմբերին ՀՀՄՍԽ-ն հաստատեց այդ մեկնաբանությունը, և ակնկալում է, որ վերջնական մեկնաբանությունը (ՖՀՄՍԿ Մեկնաբանություն 20) կթողարկվի 2011թ. հոկտեմբերին: Այն ուժի մեջ կմտնի 2013թ. հունվարի 1-ից: Հետևաբար, այն չի ազդի «Գուդ մայնինգ» 2011թ. ֆինանսական հաշվետվությունների վրա: Այնուամենայնիվ, հաշվապահական քաղաքականության 2.4(Ժգ) «Հետաձգված մակաբացման ծախսումներ» ծանոթագրությունը թարմացվել է, որպեսզի ներառի Մեկնաբանության՝ մեր կողմից ակնկալվող էական պահանջների վերաբերյալ որոշակի քննարկում:

Քանի որ մեկնաբանությունը դեռ չէր թողարկվել 2011թ. «Գուդ մայնինգ» թողարկման ժամանակ, այս տարբերակում ՖՀՄՍԿ 20-ի պարտադիր բոլոր ցուցադրական բացահայտումները չեն ներառվել: Այնուամենայնիվ, մենք պլանավորում ենք մեկնաբանությունը թողարկման ժամանակ հրապարակել «Գուդ մայնինգ» հրապարակման լրացում, և արդեն ավարտել ենք մանրամասն քննարկումները ոլորտի ներկայացուցիչների հետ՝ հասկանալու համար, թե ինչպես ՖՀՄՍԿ 20-ի պահանջները կկիրառվեն գործնականում: Այդ լրացումը կտրամադրի որոշակի ցուցադրական բացահայտումներ, որոնք կհանդիսանան ՖՀՄՍԿ 20-ի ուժի մեջ մտնելու հետևանք:

### Թույլատրվող այլընտրանքային մոտեցումներ հանքային արդյունաբերության ոլորտում

Որոշ դեպքերում ՖՀՄՍ-ները նույնանման գործարքների կամ իրավիճակների և/կամ պայմանների համար թույլ են տալիս այլընտրանքային հաշվապահական մոտեցումներ: Ֆինանսական հաշվետվություններ պատրաստողները պետք է ընտրեն այն մոտեցումը, որն առավել տեղին է իրենց գործունեության համար:

ՀՀՄՍ 8-ը պահանջում է, որ կազմակերպությունը հետևողականորեն ընտրի և կիրառի իր հաշվապահական հաշվառման քաղաքականությունը նույնանման գործարքների համար և/կամ այլ դեպքերի և իրավիճակների համար, քանի դեռ ՖՀՄՍ-ները հատուկ չեն պահանջում կամ թույլատրում հոդվածների դասակարգում, որոնց նկատմամբ տարբեր քաղաքականություններ կարող են կիրառվել: Երբ ՖՀՄՍ-ն պահանջում կամ թույլատրում է նման դասակարգում, ընտրվում է համապատասխան հաշվապահական հաշվառման քաղաքականություն, որը հետևողականորեն կիրառվում է յուրաքանչյուր դասի համար: Այդ իսկ պատճառով հիմնականում, երբ որևէ այլընտրանքային մոտեցման ընտրությունը կատարված է, այն դառնում է հաշվապահական հաշվառման քաղաքականություն, որը պետք է կիրառվի հետևողականորեն: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունում փոփոխություններ իրականացվում են միայն այն դեպքում, երբ պահանջվում է ստանդարտով կամ մեկնաբանությունով, կամ եթե այդ փոփոխությունը հանգեցնում է ավելի արժանահավատ և տեղին տեղեկատվության ֆինանսական հաշվետվություններում:

Այդ այլընտրանքային տարբերակները նկարագրվել են «Գուդ մայնինգ» ընկերության ցուցադրական ֆինանսական հաշվետվություններում որպես հաշվապահական քաղաքականության ծանոթագրության մեկնաբանության մաս:

### Ղեկավարության կողմից ֆինանսական ակնարկ

Շատ կազմակերպություններ ֆինանսական հաշվետվություններից դուրս ներկայացնում են ղեկավարների կողմից ֆինանսական ակնարկ: ՖՀՄՍ-ները չեն պահանջում նման տեղեկատվության բացահայտում, թեև ՀՀՄՍ 1-ի 13-րդ պարագրաֆը կարճ նկարագրում է, թե ինչը կարող է ներառվել տարեկան հաշվետվությունում: ՀՀՄՍԽ-ն 2010թ. դեկտեմբերին թողարկել է ՖՀՄՍ Գործնական հաշվետվություն ղեկավարության մեկնաբանություններով, որը տրամադրում է ղեկավարության մեկնաբանությունների ընդարձակ և չպարտադրող ուղեցույց ՖՀՄՍ-ների համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Եթե կազմակերպությունը որոշում է հետևել Գործնական հաշվետվության ուղեցույցին, ապա ղեկավարությանը խրախուսվում է բացատրել Գործնական հաշվետվությանը հետևելու աստիճանը: Գործնական հաշվետվությանը համապատասխանության վերաբերյալ հայտարարություն թույլատրվում է միայն այն դեպքում, երբ հաշվետվությանը հետևել են ամբողջությամբ: Ղեկավարության ֆինանսական ակնարկի բովանդակությունը հաճախ որոշվում է տվյալ երկրի շուկայական կամ օրենսդրական պահանջներին համապատասխան: Այդ պատճառով, սույն հրապարակման մեջ ղեկավարության ֆինանսական ակնարկ չի ներառվել:

«Գուդ մայնինգ  
(Ինթերնեշնլ) Լիմիթեդ»

Համախմբված ֆինանսական  
հաշվետվություններ

2011թ. դեկտեմբերի 31

## Հիմնական տեղեկություններ

### Տնօրեններ

- Մ. Լավլի (Նախագահ)
- Ս. Վլահովիտ (Գլխավոր գործադիր տնօրեն)
- Մ. Թուլման
- Թ. Վարինգթոն
- Մ. Հերբերթ
- Թ. Վելանդս
- Ջ. Լուսինգթոն
- Լ. Հիգլի
- Ֆ. ՄաքԳիլսոն

### Ընկերության քարտուղար

- Վ. Թիդիման

### Գրանցված գրասենյակ

- Հոնֆայր Հաուզ
- Էշդաուն հրապարակ, Մետալսիթի
- Մետալվիլ

### Հավատարմատար

- Սոլիսիթորս ընդ. Քո.
- Սքոթ փողոց 7, Մետալսիթի
- Մետալվիլ

### Բանկեր

- Բանկ ՍՊԸ
- Ջորջ փողոց 10, Մետալսիթի
- Մետալվիլ

### Աուդիտոր

- «Փորձագետ Հաշվապահներ ընդ. Քո»
- Մետալվիլ պողոտա 17, Մետալսիթի
- Մետալվիլ

# Անկախ աուդիտորական եզրակացություն «Գուդ մայնինգ (Ինթերնեշնլ) Լիմիթեդ»-ի բաժնետերերին

Մենք աուդիտի ենք ենթարկել «Գուդ մայնինգ (Ինթերնեշնլ) Լիմիթեդ» ընկերության և իր դուստր կազմակերպությունների (այսուհետ՝ «Խմբի») կից ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

## Համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան պատրաստելու և ճշմարիտ ներկայացնելու, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համար:

## Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է, անցկացված աուդիտի հիման վրա, կարծիք արտահայտել սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտները պահանջում են, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և պլանավորենք ու իրականացնենք աուդիտը՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով:

Աուդիտը ներառում է ընթացակարգերի իրականացում՝ համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից՝ ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու և արժանահավատ ներկայացնելու համար կիրառվող ընկերության ներքին վերահսկողության համակարգը, սովյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր մշակելու, սակայն ոչ ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է նաև կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների հիմնավորվածության, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

## Կարծիք

Մեր կարծիքով, համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի ֆինանսական վիճակը 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

«Փորձագետ Հաշվապահներ ընդ Քո»

2012թ. հունվարի 27

Մետալվիլ փողոց 17, Մետալսիթի

Մետալվիլ

## Մեկնաբանություն

Աուդիտորական եզրակացությունը պատրաստվել է ԱՄՄ 700 (վերամշակված) «Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության և կարծիքի ձևավորում» ստանդարտի համապատասխան, որը կիրառելի է 2010թ. դեկտեմբերի 15-ին կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար:

Աուդիտորական եզրակացությունները կարող են տարբերվել՝ կախված համապատասխան օրենսդրական պահանջներից:

# Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն

## 2011 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Նշված ամսաթվին ավարտվող տարվա համար	Ծան.	2011թ.	2010թ.	ՀՀՄՍ 1.10(բ) ՀՀՄՍ 1.51(բ)(գ)
		դեկտեմբերի 31 մլն. ԱՄՆ դոլար	դեկտեմբերի 31 մլն. ԱՄՆ դոլար	ՀՀՄՍ 1.51(դ)(ե)
Հասույթ	7	3,828	2,917	ՀՀՄՍ 1.82(ա) ՀՀՄՍ 1.99,
Վաճառքի ինքնարժեք		(1,556)	(1,219)	ՀՀՄՍ 1.103 ՀՀՄՍ 1.85, ՀՀՄՍ 1.103
<b>Համախառն շահույթ</b>		<b>2,272</b>	<b>1,698</b>	
Այլ եկամուտ		41	76	ՀՀՄՍ 1.85
Հիմնական միջոցների վաճառքից օգուտ/(վնաս)		11	(11)	ՀՀՄՍ 1.98(գ)
Գուդվիլի արժեզրկում		(15)	–	ՀՀՄՍ 1.85
Ածանցյալ ֆինանսական գործիքներից օգուտ	27	2	9	ՀՀՄՍ 1.85
Համատեղ ձեռնարկման զուտ շահույթի բաժնեմաս	4	16	25	ՀՀՄՍ 1.82(գ)
Այլ ծախսեր		(193)	(128)	ՀՀՄՍ 1.103
Ընդհանուր և վարչական ծախսեր		(180)	(205)	ՀՀՄՍ 1.103
<b>Գործառնական շահույթ</b>		<b>1,954</b>	<b>1,464</b>	ՀՀՄՍ 1.85
Ֆինանսական եկամուտ	7	24	25	ՀՀՄՍ 1.82(ա)
Ֆինանսական ծախսեր		(94)	(40)	ՀՀՄՍ 1.82(բ)
<b>Շահույթ նախքան շահութահարկը</b>		<b>1,884</b>	<b>1,449</b>	ՀՀՄՍ 1.85
Շահութահարկի գծով ծախս	8	(797)	(529)	ՀՀՄՍ 1.82(դ), ՀՀՄՍ 12.77
<b>Հաշվետու տարվա շահույթ</b>		<b>1,087</b>	<b>920</b>	ՀՀՄՍ 1.82(զ)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		–	–	ՀՀՄՍ 1.82(է)
<b>Հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ՝ զուտ հարկերից</b>		<b>1,087</b>	<b>920</b>	ՀՀՄՍ 1.82(թ)
Մեկ սովորական բաժնետոմսի գծով բազային և նուրբացված շահույթ (ԱՄՆ դոլար մեկ բաժնետոմսի համար)	9	0.70	0.96	ՀՀՄՍ 33.66

### Մեկնաբանություն

Վերոնշյալ բացահայտումը այնպիսի կազմակերպության ներկայացում է, որն ընտրել է ներկայացնել մեկ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն: Ընդունելի է նաև ներկայացնել առանձին ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների զրոյական տողը ներառվել է բացառապես ցուցադրական նպատակներով: Խումբը կարող է չներառել այդ տողը, քանի որ այն զրոյական է, այսինքն՝ ոչ նշանակալի: Խնդրում ենք նայել «Գուդ գրուի (Ինթերնեշլ) Լիմիթեդի» 2011 թ. ցուցադրական ֆինանսական հաշվետվությունները լրացուցիչ տեղեկատվության և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մեջ ընդգրկվող հոդվածների օրինակների համար:

# Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

## 2011 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծան.	2011թ.		2010թ.	
		մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար
<b>Ակտիվներ</b>					
<b>Ոչ ընթացիկ ակտիվներ</b>					
Հետախուզման և գնահատման ակտիվներ	11	759	501	ՀՀՄՍ 1.10(ա), ՀՀՄՍ 1.51(բ)	
Հանքեր	12	4,943	3,706	ՀՀՄՍ 1.60, ՀՀՄՍ 1.66, ՀՀՄՍ 1.54(գ), ՖՀՄՍ 6.15, ՖՀՄՍ 6.23	
Հիմնական միջոցներ	13	238	227	ՀՀՄՍ 1.54(ա)	
Ոչ նյութական ակտիվներ	14	53	27	ՀՀՄՍ 1.54(գ)	
Համատեղ ձեռնարկումներում ներդրումներ՝ հաշվարկված բաժնեմասնակցության մեթոդով	4	114	98	ՀՀՄՍ 1.54(ե)	
Սառեցված դրամական միջոցներ	19	50	50	ՀՀՄՍ 7.48-49, ՀՀՄՍ 1.54(ժե), ՀՀՄՍ 1.56	
Հետաձգված հարկային ակտիվներ	8	83	57		
<b>Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ</b>		<b>6,240</b>	<b>4,666</b>		
<b>Ընթացիկ ակտիվներ</b>					
Պաշարներ	17	93	88	ՀՀՄՍ 1.60, ՀՀՄՍ 1.66, ՀՀՄՍ 1.54(է)	
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	18	618	599	ՀՀՄՍ 1.54(ը)	
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	19	458	489	ՀՀՄՍ 1.54(թ)	
Այլ ֆինանսական ակտիվներ	27	22	20	ՀՀՄՍ 1.54(դ)	
<b>Ընդամենը ընթացիկ ակտիվներ</b>		<b>1,191</b>	<b>1,196</b>		
<b>Ընդամենը ակտիվներ</b>		<b>7,431</b>	<b>5,862</b>		
<b>Սեփական կապիտալ և պարտավորություններ</b>					
<b>Բաժնետիրական կապիտալ</b>					
Թողարկված կապիտալ	20	1,564	1,564	ՀՀՄՍ 1.54(ժը)	
Զբաղիված շահույթ		3,192	2,455	ՀՀՄՍ 1.54(ժբ)	
<b>Ընդամենը բաժնետիրական կապիտալ</b>		<b>4,756</b>	<b>4,019</b>		
<b>Ոչ ընթացիկ պարտավորություններ</b>					
Թոշակային հատուցումների գծով պարտավորություններ	16	20	18	ՀՀՄՍ 1.60, ՀՀՄՍ 1.69, ՀՀՄՍ 1.54(ժբ), ՀՀՄՍ 19.120	
Տոկոսային վարկեր և փոխառություններ	21	532	315	ՀՀՄՍ 1.54(ժգ), ՀՀՄՍ 1.54(ժե), ՀՀՄՍ 1.56	
Հետաձգված հարկային պարտավորություններ	8	468	386		
Պահուստներ	22	610	373	ՀՀՄՍ 1.54(ժբ)	
<b>Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ</b>		<b>1,630</b>	<b>1,092</b>		
<b>Ընթացիկ պարտավորություններ</b>					
Թոշակային հատուցումների գծով պարտավորություններ	16	2	2	ՀՀՄՍ 1.60, ՀՀՄՍ 1.69, ՀՀՄՍ 1.54(ժբ), ՀՀՄՍ 19.120	
Կրեդիտորական պարտքեր և հաշվեգրված պարտավորություններ	23	567	516	ՀՀՄՍ 1.54(հ)	
Հարկերի գծով պարտավորություններ		365	166	ՀՀՄՍ 1.54(ժդ)	
Տոկոսային վարկեր և փոխառություններ	21	82	51	ՀՀՄՍ 1.54(ժգ)	
Պահուստներ	22	29	16	ՀՀՄՍ 1.54(ժբ)	
<b>Ընդամենը ընթացիկ պարտավորություններ</b>		<b>1,045</b>	<b>751</b>		
<b>Ընդամենը պարտավորություններ</b>		<b>2,675</b>	<b>1,843</b>		
<b>Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ</b>		<b>7,431</b>	<b>5,862</b>		

# Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

## Մեկնաբանություն

ՀՀՄՍ 1 ստանդարտը պահանջում է, որ ընկերությունը ներկայացնի ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն ամենավաղ համադրելի ժամանակաշրջանի սկզբի դրությամբ, երբ այն հետընթաց կիրառում է հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, կատարում ֆինանսական հաշվետվությունների հողվածների վերաներկայացում կամ երբ վերադասակարգում է հողվածները իր ֆինանսական հաշվետվություններում (ՀՀՄՍ 1.10(գ)): Այս պարագայում ՀՀՄՍ 1.39-ը պահանջում է, որ կազմակերպությունը պետք է ներկայացնի ֆինանսական վիճակի մասին նվազագույնը երեք հաշվետվություններ, երկուական այլ հաշվետվություններ և դրանց հետ կապված ծանոթագրություններ:

«Գուդ մայնինգ» ընկերությունը չի տրամադրել վերահաշվարկված համեմատական ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն ամենավաղ համադրելի ժամանակաշրջանի սկզբի դրությամբ, քանի որ նոր հաշվապահական հաշվառման քաղաքականությունը չի հանգեցրել ֆինանսական հաշվետվության հողվածների որևէ էական հետընթաց վերահաշվարկման կամ վերադասակարգման: Տե՛ս «Գուդ գրուպի (Ինթերնեշնլ) Լիմիթեդ» ընկերության 2011թ. ցուցադրական ֆինանսական հաշվետվությունները ամենավաղ համադրելի ժամանակաշրջանի սկզբի դրությամբ՝ հաշվետվության և համապատասխան ծանոթագրությունների ներկայացման վրա վերջինիս ազդեցության օրինակների համար:

Համաձայն ՀՀՄՍ 1.60-ի՝ Խումբը ֆինանսական վիճակի մասին հաշվետվության տարրերը դասակարգել է ըստ ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվների և ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորությունների: ՀՀՄՍ 1-ը պահանջում է, որ կազմակերպությունները ներկայացնեն իրենց ակտիվները և պարտավորությունները ընդհանուր առմամբ ըստ իրացվելիության հերթականության, երբ ներկայացման այդպիսի ձևն ավելի տեղին է և արժանահավատ:



# Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

## 2011 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	Թողարկված կապիտալ		Չբաշխված շահույթ		Ընդամենը սեփական կապիտալ	
	Ծան.	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	ՀՀՄՍ 1.106(դ) ՀՀՄՍ 1.51(դ)(ե)
<b>Մնացորդը 2010 թ. հունվարի 1-ի դրությամբ</b>		<b>836</b>	<b>1,675</b>	<b>2,511</b>		
Հաշվետու տարվա շահույթ		–	920	920		ՀՀՄՍ 1.106(դ)(i)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		–	–	–		ՀՀՄՍ 1.106(դ)(ii)
<b>Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ</b>		<b>–</b>	<b>920</b>	<b>920</b>		ՀՀՄՍ 1.106(ա)
Բաժնետիրական կապիտալի թողարկում	20	728	–	728		ՀՀՄՍ 1.106(դ)(iii) ՀՀՄՍ 1.106(դ)(iii), 107
Վճարված շահաբաժիններ	10	–	(140)	(140)		
<b>Մնացորդը 2011 թ. հունվարի 1-ի դրությամբ</b>		<b>1,564</b>	<b>2,455</b>	<b>4,019</b>		
Հաշվետու տարվա շահույթ		–	1,087	1,087		ՀՀՄՍ 1.106(դ)(i)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		–	–	–		ՀՀՄՍ 1.106(դ)(ii)
<b>Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ</b>		<b>–</b>	<b>1,087</b>	<b>1,087</b>		
Վճարված շահաբաժիններ	10	–	(350)	(350)		ՀՀՄՍ 1.106(դ)(iii), 107
<b>Մնացորդը 2011 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>		<b>1,564</b>	<b>3,192</b>	<b>4,756</b>		

# Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

## 2011 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Նշված ամսաթվին ավարտվող տարվա համար	Ծան.	2011 թ.	2010 թ.	ՀՀՍՄ 7.10 ՀՀՍՄ 1.10(դ) ՀՀՍՄ 1.51(դ)(ե) ՀՀՍՄ 7.18(բ)
		դեկտեմբերի 31 մլն. ԱՄՆ դոլար	դեկտեմբերի 31 մլն. ԱՄՆ դոլար	
<b>Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր</b>				
Գործառնական գործունեությունից շահույթ նախքան շահութահարկը		1,884	1,449	
Ոչ դրամական հոդվածները ավելացնելու/(նվազեցնելու) գծով ճշգրտումներ`				ՀՀՍՄ 7.20(բ)
Մաշվածություն, սպառում և ամորտիզացիա	6	642	293	
Ածանցյալ ֆինանսական գործիքների գծով չիրացված օգուտ		(3)	(5)	
Վերականգնման գծով գեղչերի հետադարձում	22	27	28	
Հանքերի արժեզրկում	6	33	9	
Հանքերի վաճառքից օգուտ	6	(39)	(58)	
Հիմնական միջոցների վաճառքից (օգուտ) / վնաս	6	(11)	11	
Հետախուզման և գնահատման ակտիվների արժեզրկում	6	5	6	
Հետախուզման և գնահատման ակտիվների նախկին արժեզրկման հակադարձում	6	(16)	-	
Գուդվիլի արժեզրկում	15	15	-	
Հետախուզման և գնահատման ակտիվների վաճառքից օգուտ	6	(1)	-	
Այլ ոչ դրամական եկամուտներ և ծախսեր		(3)	(1)	
Անհաջող հետախուզման և գնահատման ծախսումներ	11	90	75	
Գումարած` տոկոսային ծախսեր (բացահայտված ֆինանսավորման գործունեությունում)		67	12	
Հանած` տոկոսային եկամուտ (բացահայտված ներդրումային գործունեությունում)		(20)	(24)	
Շրջանառու կապիտալի ճշգրտումներ`				ՀՀՍՄ 7.20(ա)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն		(19)	(207)	
Պաշարների փոփոխություն		(5)	(3)	
Գործառնական գործունեությանը վերաբերող առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն		35	142	
Վճարված շահութահարկ		(737)	(678)	ՀՀՍՄ 7.35
<b>Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից</b>		<b>1,944</b>	<b>1,049</b>	
<b>Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր</b>				
Ներդրումներ հետախուզման և գնահատման ակտիվներում	11	(358)	(293)	ՀՀՍՄ 7.21
Հանքերի մշակման ծախսումներ		(1,108)	(1,433)	ՀՀՍՄ 7.16(ա)
Այլ ոչ նյութական ակտիվների գծով ծախսումներ	14	(5)	(4)	ՀՀՍՄ 7.16(ա)
Հիմնական միջոցների գծով ծախսումներ	13	(1)	(32)	ՀՀՍՄ 7.16(ա)
Դուստր կազմակերպության ձեռքբերում` ստացված դրամական միջոցների նվազեցումից հետո	3	(439)	-	ՀՀՍՄ 7.39
Մուտքեր հետախուզման և գնահատման ակտիվների օտարումից	11	22	-	ՀՀՍՄ 7.16(բ)
Մուտքեր հանքերի օտարումից		110	98	ՀՀՍՄ 7.16(բ)
Մուտքեր հիմնական միջոցների օտարումից		24	12	ՀՀՍՄ 7.16(բ)
Ներդրումային գործունեությունից ստացված տոկոսներ		20	24	ՀՀՍՄ 7.31
<b>Զուտ դրամական հոսքեր` օգտագործված ներդրումային գործունեությունում</b>		<b>(1,735)</b>	<b>(1,628)</b>	
<b>Ֆինանսավորման գործունեությունից դրամական հոսքեր</b>				ՀՀՍՄ 7.21
Մուտքեր բաժնետոմսերի թողարկումից	20	-	728	ՀՀՍՄ 7.17(ա)
Մուտքեր վարկերից և փոխառություններից		331	-	ՀՀՍՄ 7.17(գ)
Վարկերի և փոխառությունների վճարում		(114)	(32)	ՀՀՍՄ 7.17(դ)
Վճարված տոկոսներ		(64)	(20)	ՀՀՍՄ 7.31
Վճարված շահաբաժիններ	10	(350)	(140)	ՀՀՍՄ 7.31
<b>Զուտ դրամական հոսքեր` (օգտագործված)/ստացված ֆինանսավորման գործունեությունից</b>		<b>(197)</b>	<b>536</b>	
Դրամական միջոցների զուտ ավելացում/(նվազում)		12	(43)	
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	19	438	481	
<b>Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ</b>	19	<b>450</b>	<b>438</b>	ՀՀՍՄ 7.45
				ՀՀՍՄ 7.48

# Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

## Մեկնաբանություն

ՀՀՄՍ 7.18-ը թույլ է տալիս կազմակերպություններին գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը ներկայացնել ուղղակի կամ անուղղակի մեթոդով: Խումբն իր դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը ներկայացնում է անուղղակի մեթոդի միջոցով:

Խումբը համաձայնեցրել է մինչև շահութահարկը շահույթը գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքերին: Այնուամենայնիվ, շահութահարկից հետո շահույթի համաձայնեցումը ևս ընդունելի է ՀՀՄՍ 7-ի շրջանակներում:

ՀՀՄՍ 7.33-ը թույլ է տալիս, որպեսզի վճարված տոկոսը ներկայացվի որպես գործառնական կամ որպես ֆինանսավորման գործունեություն, իսկ ստացված տոկոսը՝ որպես գործառնական կամ որպես ներդրումային գործունեություն՝ կախված, թե կազմակերպությունը որ տարբերակն է տեղին համարում: Խումբը նախընտրել է ստացված տոկոսը արտացոլել ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքերում:

ՀՀՄՍ 7.16-ի համաձայն այն ծախսումները, որոնք հանգեցնում են ֆինանսական հաշվետվությունում ակտիվների ճանաչմանը, ենթակա են որպես ներդրումային գործունեություն դասակարգվելու: Այդ իսկ պատճառով, եթե կազմակերպությունը որդեգրել է հետախուզման և/կամ գնահատման ծախսումների ծախսագրման քաղաքականություն, դրանց հետ կապված դրամական հոսքերը չեն կարող դասակարգվել որպես ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր: Խումբը կապիտալացնում է հետախուզման և գնահատման ծախսումները որոշակի պայմանների ամկայության դեպքում, հետևաբար, համապատասխան դրամական հոսքերը դասակարգվել են որպես ներդրումային գործունեությունից հոսքեր:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ

## 1. Տեղեկատվություն ընկերության վերաբերյալ

ՀՀՄՍ 1.138 (ա)

«Գուդ մայնինգ (Ինթերնեշնլ) Լիմիթեդ» ընկերության («Գուդ մայնինգ») 2011 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունները վավերացվել են հրապարակման համար Տնօրենների խորհրդի 2012թ. հունվարի 27-ի որոշման համաձայն: «Գուդ մայնինգ»-ը հանդիսանում է սահմանափակ պատասխանատվությամբ կազմակերպություն, որը գրանցված է և գործում է Մետալիլում և որի բաժնետոմսերը հրապարակայնորեն վաճառվում են:

ՀՀՄՍ 1.51(ա),(բ),  
(գ)

ՀՀՄՍ 10.17

Խմբի հիմնական գործունեությունն է՝ ոսկյա ձուլակտորների և ոսկու/պղնձի խտանյութի հետախուզումը, մշակումը և արտադրությունը:

ՀՀՄՍ 1.138(ա)  
ՀՀՄՍ 1.138(բ)

### 2.1 Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

«Գուդ մայնինգ»-ի (որպես մայր կազմակերպության) և վերջինիս բոլոր դուստր կազմակերպությունների («Խումբ») համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՀՀՄՍ) համապատասխան, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

ՀՀՄՍ 1.112(ա)  
ՀՀՄՍ 1.16

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի սկզբունքի հիման վրա՝ բացառությամբ ածանցյալ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են իրական արժեքով: Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ԱՄՆ դոլարով և բոլոր արժեքները կլորացված են մինչև միլիոն (ԱՄՆ մլն. դոլար)՝ եթե այլ բան նշված չէ:

ՀՀՄՍ 1.117(ա)

ՀՀՄՍ 1.51(դ), (ե)

### Համախմբման հիմունքները

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները բաղկացած են Խմբի ընկերությունների 2011 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվություններից:

Դուստր կազմակերպությունները ամբողջապես համախմբվում են Խմբի կողմից վերահսկողություն ձեռք բերելու պահից սկսած և շարունակվում են համախմբվել, մինչև այդ վերահսկողությունը չի դադարում:

ՀՀՄՍ 27.12  
ՀՀՄՍ 27.26  
ՀՀՄՍ 27.22  
ՀՀՄՍ 27.23  
ՀՀՄՍ 27.24

Դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում են մայր կազմակերպության հետ միևնույն հաշվետու ժամանակաշրջանի համար՝ օգտագործելով հետևողական հաշվապահական հաշվառման քաղաքականություններ:

Ներխմբային բոլոր հաշիվները, գործարքները, ներխմբային գործունեության արդյունք հանդիսացող չիրացված օգուտներն ու վնասները և շահաբաժինները ամբողջությամբ բացառվում են:

ՀՀՄՍ 27.20

Այն դեպքում, երբ դուստր կազմակերպությունում բաժնեմասը 100%-ից պակաս է և դրա հետևանքով առկա է չվերահսկող բաժնեմաս, չվերահսկող բաժնեմասին է վերագրվում ժամանակաշրջանի համար ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքների իրենց բաժինը, նույնիսկ եթե դա հանգեցնում է բացասական մնացորդի:

ՀՀՄՍ 27.28

Առանց վերահսկման կորստի դուստր կազմակերպության սեփականության փոփոխությունը հաշվառվում է որպես սեփական կապիտալի փոփոխություն: Եթե Խումբը կորցնում է դուստր կազմակերպության նկատմամբ վերահսկողությունը, այն՝

ՀՀՄՍ 27.30

- ▶ ապաճանաչում է դուստր կազմակերպության ակտիվները (ներառյալ՝ գուդվիլը) և պարտավորությունները,
- ▶ ապաճանաչում է չվերահսկող բաժնեմասի հաշվեկշռային արժեքը,
- ▶ ապաճանաչում է սեփական կապիտալում ճանաչված կուտակված փոխարժեքային տարբերությունները,
- ▶ ճանաչում է ստացված հատուցման իրական արժեքը,
- ▶ ճանաչում է մնացած ներդրման իրական արժեքը,
- ▶ ճանաչում է գործարքի արդյունքում առաջացած ավել կամ պակաս գումարը շահույթում կամ վնասում,
- ▶ վերադասակարգում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում նախկինում ճանաչված մայր կազմակերպության տարրերի բաժինը շահույթում կամ վնասում, կամ չբաշխված շահույթում, որը որ ավելի համապատասխան է:

ՀՀՄՍ 27.34

ՀՀՄՍ 27.41

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ (շարունակություն)

## 2.2 Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ

Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ՖՀՄՍ-ներին համապատասխան ղեկավարությունից պահանջում է կիրառել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդում են հաշվետու ամսաթվի դրությամբ համախմբված ֆինանսական հաշվետվություններում ակտիվների, պարտավորությունների գումարների և պայմանական պարտավորությունների բացահայտման վրա, և հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ներկայացված հասույթների և ծախսերի մեծությունների վրա: Գնահատումներն ու ենթադրությունները անընդհատ դիտարկվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա ներառյալ այն սպասումները, որոնք կիրառվել են որոշակի պայմանների դեպքում: Այնուամենայնիվ, իրական արդյունքները կարող են տարբերվել այս գնահատումներից, եթե տարբեր ենթադրություններ կիրառվեն և տարբեր պայմաններ գոյություն ունենան:

Մասնավորապես, Խումբը հայտնաբերել է հետևյալ ոլորտները, որտեղ նշանակալի դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ են պահանջվում և որտեղ փաստացի արդյունքները կարող են տարբերվել, որի արդյունքում հնարավոր է ապագա ժամանակաշրջանների ֆինանսական վիճակը կամ ֆինանսական արդյունքները էապես փոփոխվեն: Լրացուցիչ տեղեկատվությունը նշվածի վերաբերյալ, և թե ինչպես են դրանք ազդում տարբեր հաշվապահական քաղաքականությունների վրա ներկայացված է ֆինանսական հաշվետվությունների համապատասխան ծանոթագրություններում:

ՀՀՄՍ 1.122,  
ՀՀՄՍ 1.125

### **(ա) Հանքաքարի պաշարների և օգտակար հանածոների գնահատումներ**

ՀՀՄՍ 1.125

Հանքաքարի պաշարները գնահատվել են այն չափով, որքանով հնարավոր է տնտեսապես և օրինական հիմունքներով արդյունահանումը Խմբի հանքերից: Խումբը գնահատում է հանքաքարի պաշարները և օգտակար հանածոները համապատասխան որակավորում ունեցող մասնագետներից ստացված հանքամարմնի չափերի, խորության, ձևի և աստիճանի, ինչպես նաև արտադրության հարմար տեխնոլոգիաների և վերականգնման աստիճանների մասին տեղեկատվության հիման վրա: Նման վերլուծությունը պահանջում է բարդ երկրաբանական դատողություններ տվյալների մեկնաբանման համար: Վերականգնվող պաշարների գնահատականները հիմնված են արտադրության փոխարժեքների, ապրանքների գների, ապագա կապիտալացման պահանջների և արտադրության ծախսումների գնահատման վրա՝ հանքամարմնի չափի և աստիճանի վերաբերյալ կատարված երկրաբանական դատողությունների և ենթադրությունների հետ միասին:

Խումբը հանքաքարի պաշարների վերաբերյալ գնահատում է հաշվետվություն է ներկայացնում Հետախուզման արդյունքների, Օգտակար հանածոների և հանքաքարի պաշարների հաշվետվության Ավստրալիական օրենսգրքի հիման վրա (ղեկտեմբեր 2004), հայտնի որպես ՀՊՄԿ օրենսգրք, որը պատրաստվել է Հանքարդյունահանման և մետաղագործության ավստրալիական ինստիտուտի՝ Հանքային պաշարների միասնական կոմիտեի և Աշխարհագետների և օգտակար հանածոների ավստրալիական խորհրդի կողմից: ՀՊՄԿ օրենսգրքը պահանջում է որջամիտ ներդրումային ենթադրությունների կիրառում, որը ներառում է՝

- ▶ ապագա արտադրության ծավալների գնահատումը, որը ներառում է ստույգ և հավանական պաշարները, հանածոների գնահատումը և հանձնառած ընդլայնումը,
- ▶ ապրանքների ակնկալվող ապագա գները՝ հիմնված ընթացիկ շուկայական գների, ֆորվարդ գների և Խմբի՝ երկարաժամկետ միջին գնի գնահատման վրա, և
- ▶ արտադրության ապագա կանխիկ/ընթացիկ ծախսումները, կապիտալ ծախսումները և վերականգնման գծով պարտավորությունները:

Այսպիսով, ղեկավարությունը կձևավորի կանխատեսվող վաճառքի գների վերաբերյալ կարծիք՝ հիմնված ընթացիկ և երկարաժամկետ պատմական միջին գների տրենդերի վրա: Օրինակ, եթե ընթացիկ գները համեմատաբար երկար ժամանակահատվածում ավելի բարձր մնան, քան երկարաժամկետ պատմական միջինները, ղեկավարությունը կարող է ենթադրել, որ ապագայում կգերակշռեն ավելի ցածր գները և դրա արդյունքում, այդ ցածր գներն են օգտագործվում ՀՊՄԿ օրենսգրքի համաձայն պաշարները գնահատելու նպատակով: Ավելի ցածր գնի ենթադրությունները հանգեցնում են պաշարների ավելի ցածր գնահատականների:

Քանի որ կիրառված տնտեսական ենթադրությունները կարող են փոփոխվել և քանի որ հանքի գործարկման ժամանակ լրացուցիչ երկրաբանական տեղեկատվություն կարող է ի հայտ գալ, պաշարների գնահատումը կարող է փոփոխվել: Նման փոփոխությունները կարող են անդրադառնալ Խմբի ներկայացված ֆինանսական վիճակի և արդյունքների վրա, ինչը ներառում է՝

- ▶ հետախուզման և գնահատման ակտիվների, հանքերի, հիմնական միջոցների և գույվիլի հաշվեկշռային արժեքները կարող են փոփոխվել՝ կախված գնահատված ապագա դրամական հոսքերի փոփոխություններից,

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 2.2 Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ (շարունակություն)

### (ա) Հանքաքարի պաշարների և օգտակար հանածոների գնահատումներ (շարունակություն)

- ▶ շահույթում կամ վնասում ճանաչված մաշվածության և անորտիզացիայի ծախսերը կարող են փոփոխվել, եթե նման ծախսերը որոշվում են՝ օգտագործելով թողարկված միավորների մեթոդը, կամ այն դեպքում, երբ կապակցված ակտիվների օգտակար գործողության ժամկետն է փոփոխվում,
- ▶ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված կապիտալացված, կամ շահույթում կամ վնասում ծախսագրված մակաբացման ծախսումները կարող են փոփոխվել մակաբացման գործակցի փոփոխության արդյունքում,
- ▶ վերականգնման գծով պահուստները և շրջակա միջավայրի գծով պահուստները կարող են փոփոխվել այն դեպքերում, երբ պահուստների գնահատականների վրա անդրադառնում են այդ գործողությունները տեղի ունենալու ժամկետները և այդ գործողությունների հետ կապված ծախսումները,
- ▶ շահութահարկի գծով հետաձգված հարկային ակտիվի ճանաչումը և հաշվեկշռային արժեքը կարող է փոփոխվել՝ նման ակտիվների գոյության վերաբերյալ դատողությունների և նման ակտիվների հնարավոր վերականգնման գնահատումների փոփոխություններից կախված:

### Մեկնաբանություն

Ֆինանսական հաշվետվություններում հանքաքարի պաշարների և հանածոների սահմանումները և բացահայտումը ՖՀՄՍ-ներում ներկա պահին ընդգրկված չեն: Ոլորտում ընդունված պրակտիկա է՝ հաշվետվությունները ՖՀՄՍ-ների համաձայն ներկայացնելիս, ֆինանսական հաշվետվություններից բացառել հանքաքարի պաշարների որոշման համար կիրառվող հանքի գործողության ժամկետին վերաբերող տեղեկատվությունը: Նմանապես, հանքաքարի պաշարները առանձին չեն ճանաչվում որպես ակտիվ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, սակայն ընդգրկվում են հանքի արժեքի մեջ: Այնուամենայնիվ, ՀՀՄՍ 1-ի 125 պարագրաֆը պահանջում է բացահայտել անորոշության գնահատման հիմնական աղբյուրները. մնացորդային տնտեսապես վերականգնելի պաշարների գնահատման գծով անորոշության վերաբերյալ պարբերությունը և կազմակերպության կողմից տնտեսապես վերականգնելի պաշարների հաշվարկման համար կիրառվող մեթոդի նկարագրությունը (ՀՊՄԿ օրենսգրքի մեթոդները) կընդգրկվեն համապատասխան թանոթագրությունում (թանոթագրություններում):

### (բ) Հետախուզման և գնահատման ծախսումներ (Ծան. 11)

Խմբի հետախուզման և գնահատման ծախսումների գծով հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառումը պահանջում է դատողություն՝ որոշելու արդյոք հավանական է, որ ապագա տնտեսական օգուտներ կհոսեն շահագործումից կամ վաճառքից, կամ գործունեությունը դեռ չի հասել այն մակարդակի, որը թույլ կտա պաշարների գոյության վերաբերյալ ողջամիտ գնահատականներ տալ: Ըստ ՀՊՄԿ-ի՝ հանքաքարի պաշարների որոշումն ինքնին գնահատման գործընթաց է, որը պահանջում է անորոշության տարբեր մակարդակներ՝ կախված ենթադասակարգումից, և այդ գնահատումներն ուղղակիորեն ազդում են հետախուզման և գնահատման ծախսումների հետաձգման պահի որոշման վրա: Հետաձգման քաղաքականությունը պահանջում է, որպեսզի ղեկավարությունը կատարի որոշակի գնահատումներ և ենթադրություններ ապագա իրադարձությունների կամ պայմանների վերաբերյալ, մասնավորապես, արդյոք հնարավոր է իրականացնել տնտեսապես կենսունակ արդյունահանման գործունեություն: Կատարված գնահատականները և ենթադրությունները կարող են փոխվել՝ նոր տեղեկատվության ի հայտ գալուն պես: Եթե ծախսումների կապիտալացումից հետո ի հայտ է գալիս այնպիսի տեղեկատվություն, ըստ որի ծախսումների փոխհատուցումը հավանական չէ, կապիտալացված գումարը դուրս է գրվում շահույթ կամ վնաս այն ժամանակաշրջանում, երբ ի հայտ է գալիս նոր տեղեկատվությունը:

### (գ) Հետաձգված մակաբացման ծախսումներ (Ծան. 2.4 (Ժգ))

Խումբը հետաձգում է մակաբացման ծախսումները (թափոնների հեռացում), որոնք առաջանում են արտադրության ընթացքում: Այս հաշվարկը պահանջում է դատողությունների և գնահատականների կիրառում՝ կապված հանքի տարածքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում հեռացվելիք թափոնների ակնկալվող ծավալներից և դրա արդյունքում արդյունահանված տնտեսապես վերականգնելի ակնկալվող պաշարներից: Այս տեղեկատվությունը օգտագործվում է հանքի մակաբացման գործակցի միջին օգտակար ծառայության (ակնկալվող թափոնների ծավալը հարաբերած ակնկալվող օգտակար հանածոների ծավալին գործակից) հաշվարկման համար: Հանքի օգտակար ծառայության և որակի փոփոխությունը սովորաբար հանգեցնում է հանքի մակաբացման միջին օգտակար ծառայություն գործակցի փոփոխությանը: Այս փոփոխությունները հաշվառվում են առաջընթաց:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ (շարունակություն)

## 2.2 Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ (շարունակություն)

### (դ) Արտադրությունը սկսելու ամսաթիվ (Ծան. 12)

ՀՀՍՍ 1.125

Խուճրդ գնահատում է, թե յուրաքանչյուր կառուցման մեջ գտնվող հանքը ինչ փուլում է՝ որոշելու, թե երբ է հանքը անցնելու արտադրության փուլ: Սա տեղի կունենա, երբ հանքը լինի էապես ավարտված և պատրաստ նախատեսված օգտագործմանը: Արտադրության սկզբի ամսաթվի գնահատման չափանիշը որոշվում է՝ յուրաքանչյուր հանքի կառուցման նախագծի յուրահատուկ բնույթից կախված, ինչպես օրինակ՝ նախագծի բարդությունն է և գտնվելու վայրը: Խուճրդ հաշվի է առնում տարբեր չափանիշներ՝ գնահատելու, թե երբ է արտադրության փուլը մեկնարկելու: Այդ պահին բոլոր համապատասխան գումարները վերադասակարգվում են «Կառուցման մեջ գտնվող հանքերից» «Գործող հանքեր» և/կամ «Հիմնական միջոցներ» հոդվածներ: Արտադրությունը սկսելու ամսաթիվը որոշելու համար կիրառվող որոշ չափանիշները ընդգրկում են, բայց չեն սահմանափակվում հետևյալով՝

- ▶ կատարված կապիտալ ծախսումների մակարդակը համեմատած կառուցման ծախսումների նախնական գնահատականների հետ,
- ▶ հանքի հիմնական միջոցների ստուգման աշխատանքների ողջամիտ ժամանակաշրջանի ավարտ,
- ▶ վաճառքի համար պիտանի մետաղի արտադրություն (տեխնիկական բնութագրերին համապատասխան) կարողությունը,
- ▶ մետաղի ընթացիկ արտադրությունը շարունակելու կարողություն:

Երբ հանքի մշակման/կառուցման նախագիծը տեղափոխվում է արտադրության փուլ, տվյալ հանքի մշակման/կառուցման ծախսումների կապիտալացումը դադարում է և ծախսումները կա՛մ դիտարկվում են որպես պաշարների ինքնարժեքի մաս, կա՛մ ծախսագրվում են՝ բացառությամբ հանքերի ավելացմանը կամ բարելավմանը վերագրվող կապիտալացման ենթակա ծախսումների, ստորգետնյա հանքերի մշակման ծախսումների և արդյունահանման ենթակա պաշարների մշակման ծախսումների: Այս փուլում է՝ նաև, որ սկսվում է մաշվածությունը/ամորտիզացիան:

### (ե) Թողարկված միավորների մեթոդով մաշվածություն (Ծան. 12 և 13)

Հանքարդյունաբերությանը հատուկ ակտիվների մաշվածությունը և/կամ ամորտիզացիան որոշելու համար կիրառվում են տնտեսապես փոխհատուցելի պաշարների ծավալների գնահատականները: Սա հանգեցնում է մաշվածության/ամորտիզացիայի գծով ծախսումները հանքի արտադրության մնացորդային ժամկետի սպառմանը համամասնորեն հաշվառմանը: Յուրաքանչյուր հոդվածի օգտակար ծառայություն, որը գնահատվում է տարեկան, կապված է և՛ վերջինիս ֆիզիկական օգտակար ծառայության սահմանափակումների, և՛ հանքի, որի վրա տեղակայված է ակտիվը, տնտեսապես փոխհատուցելի պաշարների ընթացիկ գնահատականների հետ: Այս հաշվարկները պահանջում են ենթադրությունների և գնահատականների կիրառում՝ ներառյալ փոխհատուցելի պաշարների ծավալները և ապագա կապիտալ ծախսումների գնահատականը: Գոյություն ունեն թողարկված միավորների (ԹՄ) մաշվածության հաշվարկման բազմաթիվ մեթոդներ, որոնցից կարելի է ընտրություն կատարել: Հանքարդյունաբերության ծախսումների համար Խուճրդ կիրառում է Արդյունահանման փուլում (ԱՓ) արտադրված հանքաքարի տոննաների մեթոդը/ֆունտների մեթոդը: Փոփոխությունները հաշվառվում են առաջընթաց:

### (զ) Հանքի վերականգնման գծով պահուստ (Ծան. 2.4 (ժա) և Ծան. 22)

Խուճրդ գնահատում է հանքի վերականգնման գծով պահուստը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Հանքի վերականգնման գծով պահուստի որոշման համար նշանակալի գնահատականներ և ենթադրություններ են արվում, քանի որ գոյություն ունեն բազմաթիվ գործոններ, որոնք կարող են ազդել վճարման ենթակա վերջնական գումարի վրա: Այդ գործոնները ընդգրկում են վերականգնման գործունեության ծավալները և ծախսումները, տեխնոլոգիական փոփոխությունները, կանոնակարգերի փոփոխությունները, ծախսումների աճը կախված սղաճի մակարդակից (3% (2010թ.՝ 3%)) և զեղչի դրույքաչափի (4% (2010թ.՝ 4%)) փոփոխությունները: Այս անորոշությունները կարող են հանգեցնել արդեն ներկայացված ապագա փաստացի ծախսումների շեղմանը: Հաշվետու ամսաթվի դրությամբ պահուստը իրենից ներկայացնում է ղեկավարության՝ ապագա վերականգնման գծով ծախսումների լավագույն գնահատականը:

ՀՀՍՍ 1.122



# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 2.2 Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ (շարունակություն)

### (Է) Ակտիվների արժեզրկում (Ծան. 11, 12, 13, 14 և 15)

Խումբը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար դիտարկում է յուրաքանչյուր ակտիվը կամ դրամաստեղծ միավորը (բացառությամբ գուդվիլը, որը դիտարկվում է տարեկան՝ անկախ հայտանիշներից)՝ պարզելու, արդյոք, առկա է որևէ արժեզրկման հայտանիշ: Արժեզրկման հայտանիշների առկայության դեպքում կատարվում է փոխհատուցվող գումարի ֆորմալ հաշվարկ, որն իրենից ներկայացնում է իրական արժեքից հանած վաճառքի համար անհրաժեշտ ծախսումների և օգտագործման արժեքի առավելագույնը: Այս հաշվարկները պահանջում են այնպիսի գնահատումների և ենթադրությունների օգտագործում, ինչպիսիք են ապրանքների երկարաժամկետ գները (հաշվի առնելով ընթացիկ և պատմական գները, գնային տրենդները և համապատասխան գործոնները), զեղչման դրույքները, գործառնական ծախսերը, ապագա կապիտալի ծախսումների պահանջները, փակման և վերականգնման ծախսումները, հետախուզման ներդրումը, պահուստները (տե՛ս վերոնշյալ Ծան. 2.2(ա) Հանքաքարի պաշարների և օգտակար հանածոների գնահատումները) և գործունեության արդյունքները (որոնք ներառում են արտադրության և վաճառքի ծավալները): Այս գնահատումները և ենթադրությունները ենթակա են ռիսկի և անորոշության: Այդ իսկ պատճառով, հնարավոր է, որ հանգամանքների փոփոխությունը կանդրադառնա այդ կանխատեսումների վրա, ինչը կարող է անդրադառնալ ակտիվների և/կամ դրամաստեղծ միավորների փոխհատուցվող գումարների վրա:

Իրական արժեքը սահմանվում է որպես իրազեկ և պատրաստական անկախ կողմերի միջև առևտրային գործարքի արդյունքում ակտիվի վաճառքից ստացվելիք գումար: Հանածոների իրական արժեքը սովորաբար հաշվակվում է որպես ակտիվի շարունակական օգտագործումից ապագա դրամական միջոցների հոսքերի ներկա արժեք՝ ներառյալ ապագա ընդլայնման ծրագրերի և վերջնական օտարման ծախսումների գնահատումները՝ օգտագործելով շուկայի անկախ մասնակիցների կողմից հաշվի առնվող ենթադրությունները: Դրամական միջոցների հոսքերը զեղչվում են՝ օգտագործելով այնպիսի զեղչման դրույք, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և սովյալ ակտիվին հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները: Դեկավարությունը գնահատել է դրամաստեղծ միավորները որպես առանձին հանքարդյունաբերական տարածքներ, որոնք հանդիսանում են ամենացածր մակարդակը, որի համար դրամական միջոցների ներհոսքերը առավելագույն անկախ են այլ ակտիվներից առաջացած դրամական միջոցների ներհոսքերից:

### (ը) Հետաձգված շահութահարկի գծով ակտիվների վերականգնում (Ծան. 8)

Դատողություն է անհրաժեշտ՝ որոշելու, թե որ տեսակի գործարքներն են հանդիսանում հարկվող շահույթի մաս՝ ի տարբերություն գործառնական ծախսումների: Դատողություններ են նաև անհրաժեշտ պարզելու, թե արդյոք հետաձգված շահութահարկի գծով ակտիվները ենթակա են ճանաչման ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Հետաձգված շահութահարկի գծով ակտիվները՝ ներառյալ չօգտագործված հարկային վնասներից առաջացածները, պահանջում են, որպեսզի ղեկավարությունը հետաձգված շահութահարկի գծով ակտիվները օգտագործելու համար գնահատի Խմբի՝ ապագայում բավարար հարկային եկամուտներ ձևավորելու հնարավորությունը: Հարկման ենթակա ապագա եկամուտների ձևավորման վերաբերյալ ենթադրությունները կախված են ղեկավարության՝ ապագա դրամական միջոցների հոսքերի գնահատումներից: Հարկման ենթակա ապագա եկամուտների գնահատումները հիմնված են գործառնականություններից կանխատեսվող դրամական միջոցների հոսքերի վրա (որոնք կախված են արտադրության և վաճառքի ծավալներից, ապրանքների գներից, պահուստներից, գործառնական ծախսերից, փակման և վերականգնման ծախսումներից, կապիտալ ծախսումներից, շահաբաժիններից և այլ սեփական կապիտալի կառավարման գործարքներից) և յուրաքանչյուր իրավական համակարգում հարկերին վերաբերող գործող օրենքների կիրառմանը վերաբերյալ դատողություններից: Այնքանով, որքանով ապագա դրամական միջոցների հոսքերը և հարկման ենթակա եկամուտները էապես կտարբերվեն գնահատումներից, Խմբի՝ զուտ հետաձգված շահութահարկի գծով ակտիվները իրացնելու կարողությունը հաշվետու ամսաթվի դրությամբ կարող է փոփոխվել:

Ի լրումն դրան, այն իրավական համակարգում, որտեղ գործում է Խումբը, հարկերին վերաբերող օրենքներում ապագա փոփոխությունները կարող են սահմանափակել Խմբի՝ հարկային նվազեցումներ ստանալու ապագա կարողությունը:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 2.2 Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ (շարունակություն)

### (թ) Թոշակային հատուցումների գծով պարտավորություններ (Ծան. 16)

Խմբի կողմից կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը սահմանված թոշակային սխեմաների համար պահանջում է, որպեսզի ղեկավարությունը կատարի դատողություններ յուրաքանչյուր նման սխեմայով տրամադրված հատուցումների բնույթի վերաբերյալ, որն այդպիսով սահմանում է յուրաքանչյուր սխեմայի դասակարգումը: Սահմանված հատուցումների թոշակային պլանների, այլ հետաշխատանքային առողջապահական հատուցումների արժեքները և թոշակային պարտավորությունների ներկա արժեքը որոշվում են՝ կիրառելով ակտուարային գնահատումներ: Ակտուարային գնահատումը ներառում է տարբեր ենթադրությունների և գնահատումների կիրառում: Դրանք ներառում են յուրաքանչյուր տեսակի սխեմաների ակտիվների ապագա եկամուտների, զեղչման դրույքի, ապագա աշխատավարձի աճի, աշխատողների շրջանառության գործակիցների, մահացության գործակիցների, աշխատակիցների ծառայության կանխատեսվող մնացորդային ժամկետների և ապագա թոշակների աճի վերաբերյալ գնահատականների որոշումները: Գնահատման բարդության, տվյալ ենթադրությունների և դրանց երկարաժամկետ բնույթի հետևանքով սահմանված հատուցումների գծով պարտավորությունները առավել զգայուն են այդ ենթադրությունների փոփոխությունների նկատմամբ: Բոլոր ենթադրությունները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

Համապատասխան զեղչման դրույքը որոշելիս ղեկավարությունը հաշվի է առնում նվազագույնը AA վարկանիշ ունեցող համապատասխան արժույթով կորպորատիվ պարտատոմսերի տոկոսադրույքները՝ սահմանված հատուցումների պարտավորության ակնկալվող տևողությանը համապատասխան էքստրապոլացված մարումներով, եթե պարտավորությունը կապված չէ մի երկրի հետ, որը համարվում է, որ չունի կորպորատիվ պարտատոմսերի զարգացած շուկա: Այդ պարագայում կիրառվում են նմանատիպ ժամկետայնությամբ պետական պարտատոմսերի դրույքաչափերը: Տվյալ պարտատոմսերը հետագայում վերանայվում են որակական տեսանկյունից և խոշոր կրեդիտային սփրեդեր ունեցողները բացառվում են պարտատոմսերի բազմությունից, որոնց վրա հիմնվում է զեղչման դրույքը, քանի որ դրանք չեն ներկայացնում բարձրորակ պարտատոմսեր:

Մահացության մակարդակը հիմնվում է տվյալ երկրի հասարակությանը մատչելի մահացության աղյուսակների վրա: Աշխատավարձի և թոշակի ապագա բարձրացումները հիմնված են համապատասխան երկրի ակնկալվող տղաճի ապագա դրույքների վրա:

### (ժ) Պաշարներ (Ծան. 17)

Իրացման զուտ արժեքի ստուգումները իրականացվում են առնվազն տարեկան և ներկայացնում են ապրանքի վաճառքի գնահատված գինը, որը կազմակերպությունն ակնկալում է ստանալ այդ ապրանքը արտադրելուց և վաճառելուց հետո՝ հանած համալրման սպասվող ծախսումները և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ սպասվող ծախսումները: Այն դեպքում, երբ ժամանակի մեջ դրամի արժեքը նշանակալի է, այդ ապագա գինը և ավարտին հասցնելու ծախսումները զեղչվում են:

Հորատանցքերը չափվում են՝ գնահատելով հորատանցքերին ավելացված և հորատանցքերից հեռացված տոննաները, փորձաքննական տվյալների վրա հիմնված ոսկու ունեցիաների քանակը և կանխատեսվող մշակման մեթոդից կախված գնահատված փոխհատուցման տոկոսադրույքը:

Հորատանցքերի տարողունակությունը հաստատվում է պարբերական ստուգումների միջոցով:

### (ժա) Իրական արժեքի հիերարխիա (Ծան. 27)

Եթե ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվառվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքը հնարավոր չէ ստանալ ակտիվ շուկաներից, ապա դրանց իրական արժեքը որոշվում է՝ օգտագործելով գնահատման մեթոդներ, ներառյալ զեղչված դրամական հոսքերի մոդելը: Այս մոդելների ելակետային տվյալները հնարավորության դեպքում վերցվում են դիտարկելի շուկաներից, իսկ եթե չկան այդպիսի տվյալներ, ապա իրական արժեքը որոշելու համար կիրառվում է դատողություն:

Դատողությունները ներառում են այնպիսի տվյալների դիտարկում, ինչպես օրինակ՝ իրացվելիության ռիսկը, պարտքային ռիսկը և տատանումները: Այս գործոնների վերաբերյալ ենթադրությունների փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ հաշվառվող ֆինանսական գործիքների իրական արժեքների վրա:

### (ժբ) Պայմանական պարտավորություններ (Ծան. 24)

Իրենց բնույթով պայմանական պարտավորությունները առաջ են գալիս միայն մեկ կամ մի քանի անորոշ իրադարձություններ տեղի ունենալու կամ ընդհակառակը՝ տեղի չունենալու դեպքում: Պայմանական պարտավորությունների գոյության և պոտենցիալ ծավալների գնահատումը ներառում է նշանակալի դատողություններ և ապագա իրադարձությունների արդյունքների վերաբերյալ գնահատումների կիրառում:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ և բացահայտումներ

### Նոր և լրացված ստանդարտներ և մեկնաբանություններ

ՀՀՄՍ 8.14

Ընդունված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը համապատասխանում է նախորդ ֆինանսական տարվա քաղաքականությանը՝ բացառությամբ հետևյալ նոր և լրացված ՀՀՄՍ-ների և ՀՀՄՄԿ մեկնաբանությունների, որոնք ուժի մեջ են մտնում 2011թ. հունվարի 1-ից:

#### Մեկնաբանություն

Ստորև նշված են միայն այն նոր և լրացված ստանդարտները, որոնք ազդեցություն ունեն ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների, բացահայտումների կամ խմբի հայտարարված հաշվապահական հաշվառման քաղաքականության վրա: Կազմակերպություններից չի պահանջվում բացահայտել այն ստանդարտները կամ մեկնաբանությունները, որոնք ոչ մի ազդեցություն չունեն խմբի վրա: Այլ նոր և փոփոխված ստանդարտների և մեկնաբանությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև բերված ցուցակում: Նոր ստանդարտների կամ մեկնաբանությունների բացահայտման օրինակները կարող եք գտնել «Գուդ գրուփ (Ինթերնեշլ) Լիմիթեդ» 2011թ. ցուցադրական ֆինանսական հաշվետվություններում:

### Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք ուժի մեջ են մտնում 2011թ. հունվարի 1-ից

- ▶ ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտումներ (փոփոխություն)» ուժի մեջ է մտնում 2011թ. հունվարի 1-ից,
- ▶ ՀՀՄՄԿ 14 «Նվազագույն ֆինանսավորման պահանջների գծով կանխավճարներ (փոփոխություն)» ուժի մեջ է մտնում 2011թ. հունվարի 1-ից,
- ▶ ՀՀՄՍ-ների բարեփոխումներ (2010թ. մայիս)
  - ▶ ՀՀՄՍ 3 «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ»՝ չվերահսկող բաժնեմասի չափման առկա տարբերակները, ուժի մեջ են մտնում 2010թ. հուլիսի 1-ից:
  - ▶ ՀՀՄՍ 7 «Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ»՝ գրավի և որակական բացահայտումներ,
  - ▶ ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների վերլուծություն:

Այս ստանդարտների և մեկնաբանությունների ազդեցությունը նկարագրված է ստորև:

#### ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտումներ (փոփոխություն)»

ՀՀՄՍԽ-ն թողարկել է ՀՀՄՍ 24-ի փոփոխություն, որը հստակեցնում է կապակցված կողմի սահմանումները, մասնավորապես՝ նշանակալի ազդեցության և համատեղ ձեռնարկումների մատով: Նոր սահմանումները ընդգծում են կապակցված կողմերի հանդեպ երկակի վերաբերմունք, ինչպես նաև պարզաբանում, թե ինչպես է անձը կամ առանցքային կառավարչական անձնակազմը ազդում կազմակերպության կապակցված կողմերի հարաբերությունների վրա: Փոփոխության կիրառումը ընթացիկ ազդեցություն չի ունեցել խմբի ֆինանսական վիճակի, գործունեության կամ բացահայտումների վրա, քանի որ պահանջվող տեղեկատվությունը ներկայումս ամբողջությամբ ներառված և բացահայտված է, սակայն այն վերաբերում է խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառմանը՝ ապագայում հնարավոր կապակցված կողմերի հետ հարաբերությունները բացահայտելու նպատակով:

#### ՀՀՄՄԿ 14 «Նվազագույն ֆինանսավորման պահանջների գծով կանխավճարներ (փոփոխություն)»

Փոփոխությունը կատարվել է չնախատեսված հետևանքները վերացնելու նպատակով այն դեպքում, երբ կազմակերպությունը հանդիսանում է նվազագույն ֆինանսավորման պահանջների առարկա և այդ պահանջները կատարելու նպատակով կատարում է վաղաժամկետ վճարումներ: Լրացումը թույլ է տալիս ծառայության ապագա ծախսումների գծով կազմակերպության կողմից կատարված կանխավճարը ճանաչել որպես թոշակային ակտիվ: Խումբը ենթակա չէ նվազագույն ֆինանսավորման պահանջների Մետալվիլում, հետևաբար, մեկնաբանության տվյալ փոփոխությունը ազդեցություն չունի ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների, հայտարարված հաշվապահական հաշվառման քաղաքականության կամ խմբի այլ բացահայտումների վրա:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ (շարունակություն)

## 2.3 Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ և բացահայտումներ (շարունակություն)

### ՖՀՄՍ-ների բարեփոխումներ

2010թ. մայիսին Խորհուրդը թողարկել է ստանդարտներում փոփոխությունների երրորդ ժողովածուն՝ հիմնականում անհամապատասխանությունների վերացման և տեքստերի հստակեցման նպատակով: Յուրաքանչյուր ստանդարտի գծով գոյություն ունեն առանձին անցումային դրույթներ: Հետևյալ լրացումների կիրառումը հանգեցրել է հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների, սակայն ազդեցություն չունի Խմբի ֆինանսական վիճակի կամ գործունեության վրա՝

- ▶ **ՖՀՄՍ 3 «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ».** փոփոխվել են չվերահսկող բաժնեմասի համար առկա չափման ընտրության տարբերակները: Չվերահսկող բաժնեմասի միայն այն տարրերը, որոնք կազմում են սեփականության ներկա բաժնեմաս և լուծարման դեպքում դրա սեփականատիրոջն իրավունք են տալիս կազմակերպության զուտ ակտիվների համամասնական բաժնի նկատմամբ, պետք է չափվեն իրական արժեքով կամ ձեռք բերվողի որոշելի զուտ ակտիվներում սեփականության ներկա գործիքների համամասնական բաժնով: Բոլոր մնացած տարրերը պետք է չափվեն ձեռքբերման ամսաթվի իրական արժեքով, քանի դեռ այլ ՖՀՄՍ-ները չեն չափահանում չափման այլ հիմունքներ, օրինակ՝ ՖՀՄՍ 2-ը:
- ▶ **ՖՀՄՍ 7 «Ֆինանսական գործիքներ՝ բացահայտումներ».** փոփոխության նպատակն է պարզեցնել բացահայտումները՝ պահվող գրավի բացահայտումների ծավալը նվազեցնելով և բացահայտումները կատարելագործելով՝ քանակական տեղեկատվության հետ որակական տեղեկատվություն տրամադրելու միջոցով:
- ▶ **ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում».** փոփոխությունը հստակեցնում է, որ կազմակերպությունը կարող է ներկայացնել այլ համապարփակ ֆինանսական արդյունքների յուրաքանչյուր տարրի վերլուծությունը սեփական կապիտալի փոփոխությունների մասին հաշվետվությունում կամ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

### Այլ նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք ուժի մեջ են մտնում 2011թ.-ի համար

- ▶ ՀՀՄՍ 32 «Ֆինանսական գործիքներ. ներկայացում» (փոփոխություն)՝ իրավունքների թողարկման դասակարգում,
- ▶ ՖՀՄՍ 4 19 «Բաժնային գործիքների միջոցով ֆինանսական պարտավորությունների մարումը»:

Բարեփոխումների արդյունքում հետևյալ փոփոխությունները ազդեցություն չունեն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության, ֆինանսական վիճակի կամ գործունեության վրա՝

- ▶ ՖՀՄՍ 3 «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ» (ձեռնարկատիրական գործունեության միավորումից առաջացող պայմանական հատուցում նախքան ՖՀՄՍ 3-ի (2008թ. փոփոխված) ընդունումը),
- ▶ ՖՀՄՍ 3 «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ» (չփոխարինված կամ կամավոր փոխարինված բաժնեմասի վրա հիմնված վճարումներ),
- ▶ ՀՀՄՍ 27 «Համախմբված և առանձին ֆինանսական հաշվետվություններ»,
- ▶ ՀՀՄՍ 34 «Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ»,
- ▶ ՖՀՄՍ 4 13 «Հաճախորդի հավատարմության ծրագրեր» (պարզևի կրեդիտային միավորների իրական արժեքի որոշում):

Վերոնշյալի և դրանց համապատասխան ցուցադրական բացահայտումների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է «Գույ. գրու. Ինթերնեշնլ) Լիմիթեդ» 2011թ.-ի ցուցադրական ֆինանսական հաշվետվություններում:

### Մեկնաբանություն

Որոշ երկրներում ՖՀՄՍ-ների ընդունումը հաշվետվության նպատակներով կարող է լինել որոշ իրավական գործընթացների առարկա (օրինակ՝ ԵՄ-ում, Ավստրալիայում): Նման երկրներում ուժի մեջ մտնելու ժամկետները կարող են տարբերվել ՀՀՄՍ-ի կողմից հայտարարված ժամկետներից: Այնուամենայնիվ, երբ կազմակերպությունը ներկայացնում է ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթ, ապա բոլոր նոր ստանդարտները և մեկնաբանությունները պետք է հաշվի առնվեն բացահայտումներում, որպես հրապարակված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ ՀՀՄՍ 8.30-ի համաձայն, անկախ այն բանից իրավական գործընթացն ավարտվել է թե՛ ոչ:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր

ՀՀՄՍ 1.10(ե)

### (ա) Մասնակցություն համատեղ ձեռնարկումներում

ՖՀՄՍ-ները սահմանում են համատեղ վերահսկողությունը՝ որպես պայմանագրային համաձայնությամբ որևէ տնտեսական գործունեության նկատմամբ վերահսկողության բաշխում, և ֆինանսական և գործառնական որոշումները պահանջում են վերահսկողությունը կիսող կողմերի («ձեռնարկողներ») միաձայն համաձայնություն:

#### (i) Համատեղ վերահսկող ակտիվներ

Համատեղ վերահսկող ակտիվները (ՀՎԱ) ներառում են համատեղ ձեռնարկումների նպատակով տրամադրված կամ ձեռքբերված ակտիվների համատեղ վերահսկում և հաճախ համատեղ սեփականություն խմբի կամ այլ ձեռնարկողների կողմից՝ առանց ընկերության, ընկերակցության կամ այլ կազմակերպության ձևավորման:

ՀՀՄՍ 31.57  
ՀՀՄՍ 31.21

Այն դեպքում, երբ խմբի գործունեությունը իրականացվում է ՀՎԱ-ի միջոցով խումբն իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչում է համատեղ վերահսկող ակտիվների և իր կողմից ստանձնած պարտավորությունների իրեն վերագրվող մասը, այլ ձեռնարկողների հետ միասին ստանձնած պարտավորությունների իր մասնաբաժինը, դրա հետ կապված հասույթը, գործառնական ծախսերը և արտադրության իր մասնաբաժինը:

#### (ii) Համատեղ վերահսկող կազմակերպություններ

Համատեղ վերահսկող կազմակերպությունը (ՀՎԿ) ընկերություն է, ընկերակցություն կամ այլ կազմակերպություն, որում յուրաքանչյուր ձեռնարկող ունի բաժնեմաս (մասնակցություն): ՀՎԿ-ն գործում է նույն եղանակով, ինչ այլ կազմակերպությունները, բացառությամբ այն բանի, որ պայմանագրային համաձայնությունը սահմանում է համատեղ վերահսկողություն: ՀՎԿ-ն վերահսկում է համատեղ ձեռնարկման ակտիվները, վաստակում է իր սեփական եկամուտը և ստանձնում իր սեփական պարտավորությունները և ծախսումները: Համատեղ վերահսկող կազմակերպություններում բաժնեմասերը հաշվառվում են բաժնեմասնակցության մեթոդի կիրառմամբ:

ՀՀՄՍ 31.57  
ՀՀՄՍ 31.38

Համաձայն բաժնեմասնակցության մեթոդի՝ համատեղ ձեռնարկումում ներդրումն արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ինքնարժեքով՝ գումարած ձեռքբերումից հետո համատեղ ձեռնարկման զուտ ակտիվների մեջ խմբի բաժնեմասի փոփոխությունները: Համատեղ ձեռնարկմանը վերաբերող գույքի ընդգրկվում է ներդրման հաշվեկշռային արժեքում և ո՛չ ամորտիզացվում է, ո՛չ էլ անհատապես ստուգվում արժեզրկման համար:

ՀՀՄՍ 28.11  
ՀՀՄՍ 28.23

Շահույթ կամ վնասն արտացոլում են խմբի մասնաբաժինը համատեղ ձեռնարկման գործունեության արդյունքներում: Այն դեպքում, երբ համատեղ ձեռնարկման այլ համապարփակ ֆինանսական արդյունքների կամ սեփական կապիտալի մեջ ուղղակիորեն ճանաչված փոփոխություններ են լինում, խումբը ճանաչում է իր մասնաբաժինը այդ փոփոխություններում, և բացահայտում է այն համապատասխանաբար համապարփակ ֆինանսական արդյունքների կամ սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություններում: Խմբի և համատեղ ձեռնարկման միջև գործառնություններից առաջ եկող չիրացված օգուտները և վնասները նվազեցվում են համատեղ ձեռնարկումում բաժնեմասին համապատասխան:

ՀՀՄՍ 28.39

Համատեղ ձեռնարկման զուտ շահույթի կամ վնասի մասնաբաժինը ներկայացվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ: Դա համատեղ ձեռնարկման ձեռնարկողների վերագրվող շահույթ կամ վնասն է:

ՀՀՄՍ 28.22

ՀՎԿ-ի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում են նույն հաշվետու ժամանակաշրջանի համար ինչ ձեռնարկողի ֆինանսական հաշվետվությունները: Անհրաժեշտության դեպքում կատարվում են ճշգրտումներ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխանեցնելու նպատակով:

ՀՀՄՍ 28.37(ե)  
ՀՀՄՍ 28.26

#### (iii) Համատեղ ձեռնարկման օպերատորի ծախսերի փոխհատուցում

Երբ «Գույ մայնինգ» ընկերությունը, հանդես գալով որպես օպերատոր, ստանում է համատեղ ձեռնարկմանը վերագրված ուղղակի ծախսերի փոխհատուցում, նման վերագումներն իրենցից ներկայացնում են այն ծախսերը, որոնք օպերատորը կրել է որպես համատեղ ձեռնարկման օպերատոր և, հետևաբար, ոչ մի ազդեցություն չունեն շահույթի կամ վնասի վրա:

ՀՀՄՍ 31.52

Շատ դեպքերում «Գույ մայնինգ» ընկերությունը կրում է նաև համատեղ ձեռնարկման գործարքների վերադիր ծախսումները: Քանի որ այդ ծախսումները հաճախ չեն որոշակիացվում, համատեղ ձեռնարկման պայմանագրերը թույլ են տալիս օպերատորին փոխհատուցել ընդհանուր վերադիր ծախսումները՝ գանձելով վերադիր վճար, որը հիմնված է տարվա ընդհանուր ծախսերի հաստատված տոկոսադրույքի վրա՝ հաճախ կառավարման վճարների տեսքով: Չնայած, որ տվյալ վճարը շատ նման է փոխհատուցման ծախսերին, սակայն այս դեպքում «Գույ մայնինգ» ընկերությունը չի գործում որպես գործակալ: Հետևաբար, ընդհանուր վերադիր ծախսումները և վերադիր վճարը ճանաչվում են ֆինանսական արդյունքներում համապատասխանաբար որպես ծախս կամ եկամուտ:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

ՀՀՄՍ 1.10(ե)

### (ա) Մասնակցություն համատեղ ձեռնարկումներում (շարունակություն)

#### Մեկնաբանություն

«Գուդ մայնինգ» ընկերությունը հաշվարկում է իր բաժնետնասը համատեղ վերահսկվող կազմակերպությունում բաժնետնասնակցության մեթոդի միջոցով: ՀՀՄՍ 31.30 պահանջում է համամասնական համախմբման կիրառում, բայց թույլ է տալիս որպես այլընտրանք կիրառել բաժնետնասնակցության մեթոդը:

ՀՀՄՍ 31-ում նշված համատեղ ձեռնարկման մյուս տեսակը (չի բացահայտվել, քանի որ չի վերաբերվում «Գուդ մայնինգ» ընկերությանը) համատեղ վերահսկվող գործառնությունն է: Նման համատեղ ձեռնարկումը դիտարկվում է որպես համաձայնություն, որը ներառում է ձեռնարկողների ակտիվների և այլ ռեսուրսների օգտագործում, այլ ոչ թե ընկերության, ընկերակցության կամ այլ կազմակերպության, կամ ձեռնարկողներից ամանսին որևէ ֆինանսական կառուցվածքի հիմնադրում: Յուրաքանչյուր ձեռնարկող օգտագործում է իր սեփական հիմնական միջոցները, և ունի իր սեփական պաշարները: Այն կատարում է նաև իր սեփական ծախսերը և ստանձնում է իր պարտավորությունները, հայթայթում է իր սեփական ֆինանսական միջոցները, ինչը վերջինիս պարտավորությունն է: Համատեղ ձեռնարկման գործունեությունը կարող է իրականացվել ձեռնարկողի աշխատակիցների կողմից՝ ձեռնարկողի նմանատիպ գործունեությանը զուգահեռ: Համատեղ ձեռնարկման համաձայնությունը սովորաբար նախատեսում է, թե ինչպես պետք է ձեռնարկողների միջև բաշխվեն համատեղ արտադրանքի վաճառքից հասույթը և համատեղ կրած ծախսերը:

ՖՀՄՍ 11 «Համատեղ գործունեության համաձայնություններ» հրապարակվել է 2011թ. մայիսին, որի գործողությունը տարածվում է 2013թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: ՖՀՄՍ 11-ը ներկայացնում է համատեղ գործունեության համաձայնությունից առաջ եկող իրավունքների և պարտավորությունների հաշվառման հիմնական սկզբունքները: Ըստ ՖՀՄՍ 11-ի գոյություն ունի միայն երկու տիպի համատեղ համաձայնություն՝ համատեղ գործառնություն կամ համատեղ ձեռնարկում: Համատեղ գործառնությունը սահմանվում է որպես համատեղ գործունեության համաձայնություն, որի դեպքում գործունեության համատեղ վերահսկողություն իրականացնող կողմերը ունեն գործունեությանը վերաբերող ակտիվների նկատմամբ իրավունքներ և պարտավորությունների գծով պարտականություններ: Համատեղ ձեռնարկումը սահմանվում է որպես համատեղ գործունեության համաձայնություն, որի դեպքում գործունեության համատեղ վերահսկողություն իրականացնող կողմերը ունեն գործունեությանը վերաբերող զուտ ակտիվների նկատմամբ որոշակի իրավունքներ: Ընթացիկ համատեղ վերահսկվող ակտիվները և գործառնությունները, հավանաբար, կհամարվեն որպես համատեղ գործառնություններ համաձայն ՖՀՄՍ 11-ի: Ընթացիկ համատեղ վերահսկվող կազմակերպությունները կարող են համարվել կամ որպես համատեղ գործառնություններ, կամ որպես համատեղ ձեռնարկումներ, որոնց դասակարգումը կախված է համաձայնության իրավունքներից և պարտականություններից: Այն համատեղ վերահսկվող կազմակերպություններում ներդրումները, որոնք ըստ ՖՀՄՍ 11-ի դասակարգված են որպես համատեղ ձեռնարկումներ, չեն կարող հաշվառվել համամասնական համախմբմամբ, և կազմակերպությունը պետք է օգտագործի բաժնետնասնակցության մեթոդով հաշվառումը: Համատեղ վերահսկվող կազմակերպությունը որպես համատեղ գործառնություն կամ համատեղ ձեռնարկում դասակարգելը պահանջում է մանրամասն վերլուծություն:

### (բ) Արտարժույթի փոխարկում

ՀՀՄՍ 1.51(դ)

Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ԱՄՆ դոլարով, որը նաև մայր կազմակերպության ֆունկցիոնալ արժույթն է և Խմբի ներկայացման արժույթը: «Գուդ մայնինգ» ընկերությունը չի ծավալում որևէ օտարերկրյա գործունեություն:

Արտարժույթով գործարքները սկզբնապես հաշվառվում են ֆունկցիոնալ արժույթի սփոթ փոխարժեքով այն ամսաթվի դրությամբ, երբ գործարքը ենթակա է ճանաչման:

ՀՀՄՍ 21.21

Արտարժույթով սահմանված դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են հաշվետու ամսաթվի դրությամբ ֆունկցիոնալ արժույթի փոխանակման սփոթ փոխարժեքով:

ՀՀՄՍ 21.23

Առաջացող բոլոր տարբերությունները ներառվում են շահույթում կամ վնասում, կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում, եթե համապատասխանում են որոշակի չափանիշի: Ոչ դրամային հոդվածները, որոնք չափվում են պատմական արժեքով արտարժույթով փոխարկվում են՝ օգտագործելով սկզբնական գործարքի ամսաթվի դրությամբ փոխարժեքները: Արտարժույթով իրական արժեքով չափվող ոչ դրամային հոդվածները փոխարկվում են՝ օգտագործելով իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքները:

ՀՀՄՍ 21.28

ՀՀՄՍ 21.32

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

ՀՀՄՍ 1.10(ե)

### (բ) Արտարժույթի փոխարկում (շարունակություն)

#### Մեկնաբանություն

Հանքային արդյունաբերությանը զբաղվող ձեռնարկություններից շատերը գտնուում են, որ իրենց գործառնությունների ֆունկցիոնալ արժույթը որոշելը բավականին բարդ է: Ֆունկցիոնալ արժույթի ճիշտ որոշումը կարևոր է, քանի որ վերջինս կարող է օրինակ՝ (1) բերել եկամտի և գործառնական շահույթի անկայունությանը՝ փոխարժեքի տատանումների պատճառով, (2) որոշել թե, արդյոք, գործարքները կարող են հեջավորվել թե՛ ոչ, (3) ազդել պարունակվող արտարժույթային ածանցյալ գործիքների նույնականացման վրա և (4) կարող են բերել ժամանակավոր տարբերությունների, որոնք ազդում են շահույթի կամ վնասի վրա: Չնայած ըստ ՀՀՄՍ 21-ի կազմակերպությունը կարող է ընտրել ներկայացման որևէ արժույթ, այն չունի ազատ ընտրության հնարավորություն իր ֆունկցիոնալ արժույթի որոշման հարցում: Ընդհանրապես, ՀՀՄՍ 21-ը պահանջում է, որպեսզի կազմակերպությունը իր ֆունկցիոնալ արժույթը որոշելիս հաշվի առնի հետևյալ գործոնները՝

- ա) Այն արժույթը, որը հիմնականում ազդում է ապրանքների և ծառայությունների վաճառքի գների վրա (հաճախ այն արժույթը, որով իր ապրանքների և ծառայությունների վաճառքի գները սահմանվում և հաշվարկները կատարվում են),
- բ) Այն երկրի արժույթը, որի մրցակցային գործոններն ու կանոններն են հիմնականում որոշում իր ապրանքների և ծառայությունների վաճառքի գները,
- գ) Արժույթը, որը հիմնականում ազդում է ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ աշխատուժի, նյութական և այլ ծախսումների վրա (նշվածը հաճախ այն արժույթն է, որով նման ծախսումները սահմանվում և կատարվում են):

Չնայած, որ վերոնշված (ա) կետում նշված արժույթը կլինի այն արժույթը, որով իր ապրանքների և ծառայությունների վաճառքի գները սահմանվում և հաշվարկները կատարվում են, սակայն ոչ բոլոր դեպքերում է դա այդպես: Հանքային արդյունաբերության ոլորտում սովորաբար օգտագործվում է ԱՄՆ դոլարը որպես գործարքների պայմանագրի կամ համաձայնության արժույթ (օրինակ՝ երկաթի հանքերի համար), սակայն գործարքների գնագոյացման վրա ազդում են ԱՄՆ դոլարի հետ ընդհանրապես կապ չունեցող գործոններ (օրինակ՝ պահանջարկը Չինաստանում): Նման դեպքերում մենեջմենթը կարող է եզրակացնել, որ ԱՄՆ դոլարը այն արժույթը չէ, որը հիմնականում ազդում է վաճառքի գնի վրա:

Հանքային արդյունաբերության ոլորտում, որն իր բնույթով միջազգային է, հաճախ դժվար է լինում որոշել այն երկրի արժույթը, որի մրցակցային ուժերի և կանոնակարգերի ազդեցությամբ են որոշվում ապրանքների և ծառայությունների վաճառքի գները: Հետևաբար, նշված (բ) գործոնը հաճախ անհանդիշ կլինի, երբ արդյունահանվում է կոնկրետ հանածո տարբեր երկրներում:

Հիմնականում շատ պարզ է որոշել այն արժույթը, որն ազդում է միայն կազմակերպության հիմնական ռեսուրսների վրա (այսինքն՝ (գ) գործոնը): Զարգացող երկրներում կազմակերպությունը հաճախ կարիք կունենա իր հիմնական ռեսուրսների մեծ մասը ներմուծել (օրինակ՝ վառելիքը, սարքավորումները և օտարերկրյա աշխատողները) և անգամ բարձր ինֆլյացիայի մակարդակ ունեցող տնտեսությունների տեղական ռեսուրսների գները հաճախ կախված կլինեն ԱՄՆ դոլարից: Նման դեպքերում, քիչ հավանական է, որ տեղական արժույթը հանդիսանա կազմակերպության հիմնական ռեսուրսների վրա ազդող հիմնական արժույթը: Այնուամենայնիվ, զարգացած երկրների մեծ մասում, ռեսուրսները միտում կա սահմանել տեղական արժույթով, չնայած որոշ ռեսուրսներ (օրինակ՝ հանքարդյունաբերության սարքավորումները) կարող են սահմանվել այլ արժույթով: Քանի որ հանքային արդյունաբերության ոլորտը կապիտալ մեծ ներդրումներ պահանջող է, սարքավորումների գինը հաճախ գերազանցում է գործառնական ծախսերը: Քանի որ սարքավորումները հաճախ գնվում են ԱՄՆ դոլարով, անգամ զարգացած երկրներում որպես ֆունկցիոնալ արժույթ ԱՄՆ դոլարը օգտագործելու միտում գոյություն ունի:

Երբ նշված (ա)-ից (գ) գործոնները առանձին հնարավոր չէ դիտարկել, ինչը հաճախ է լինում գործնականում, և ֆունկցիոնալ արժույթը ակնհայտ չէ, կազմակերպության ղեկավարությունը պետք է օգտագործի որոշակի դատողություններ համապատասխան գործառնությունների, դեպքերի և իրադարձությունների տնտեսական հետևանքները առավել ճշմարտացի ներկայացնող ֆունկցիոնալ արժույթի որոշման համար: Եթե տվյալ գործոնները համոզիչ չեն, ապա կազմակերպությունը պետք է հաշվի առնի նաև հետևյալ լրացուցիչ գործոնները՝

- ▶ արժույթը, որով արտահայտված են ֆինանսավորման գործունեությունից ստացված միջոցները (օրինակ՝ պարտքային և սեփական կապիտալի գործիքների թողարկում)
- ▶ արժույթը, որով սովորաբար պահվում են գործառնական գործունեությունից առաջացած մուտքերը
- ▶ հաշվետու կազմակերպության ֆունկցիոնալ արժույթը, որն արտերկրյա գործունեություն է ծավալում իր ստորաբաժանման, մասնաճյուղի, ասոցիացված կամ համատեղ ձեռնարկման միջոցով:

Անգամ առաջնային և լրացուցիչ գործոնները հաշվի առնելուց հետո հանքային արդյունաբերությանը զբաղվող կազմակերպության ֆունկցիոնալ արժույթը կարող է ակնհայտ չլինել, քանի որ, որպես օրինակ, վերջինիս եկամուտը կարող է սահմանված լինել ԱՄՆ դոլարով, մինչդեռ փաստացի բոլոր ծախսերը սահմանված են տեղական արժույթով: Այնուամենայնիվ, անգամ նման իրավիճակում ղեկավարությունը կարող է եզրակացնել, որ ԱՄՆ դոլարով սահմանված եկամուտը կրում է մի քանի արժույթների ազդեցությունը: Հետևաբար, հնարավոր է, որ միևնույն միջավայրում գործող հանքային արդյունաբերությանը զբաղվող կազմակերպությունները կարող են տարբեր եզրակացությունների գալ իրենց ֆունկցիոնալ արժույթի վերաբերյալ: Հետազոտությունները ցույց են տալիս, որ ԱՄՆ-ից դուրս գտնվող հանքային արդյունաբերությանը զբաղվող կազմակերպությունների կեսը եկել են այն եզրահանգմանը, որ իրենց ֆունկցիոնալ արժույթը ԱՄՆ դոլարն է:

Վերջապես, ՀՀՄՍ 21-ը պահանջում է, որպեսզի կազմակերպությունը առանձին որոշի համախմբված Խմբի յուրաքանչյուր կազմակերպության ֆունկցիոնալ արժույթը: Խմբի ֆունկցիոնալ արժույթի հասկացություն գոյություն չունի, կա միայն ներկայացման արժույթ: Հետևաբար, գործող ստորաբաժանման ֆունկցիոնալ արժույթը հաճախ կտարբերվի Խմբի մայր կազմակերպության և/կամ արտերկրյա վաճառքի ընկերության ֆունկցիոնալ արժույթից, որին կազմակերպությունը վաճառում է իր արտադրանքը:



# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

ՀՀՄՍ 1.10(ե)

### (գ) Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ և գուդվիլ

Ձեռնարկատիրական գործունեության միավորումները հաշվառվում են՝ օգտագործելով ձեռքբերման մեթոդը: Ձեռքբերման արժեքը չափվում է որպես ձեռքբերման օրվա դրությամբ փոխանցված հատուցման իրական արժեքի և ձեռքբերվող ընկերության ցանկացած չվերահսկվող բաժնեմասի հանրագումար: Յուրաքանչյուր ձեռնարկատիրական գործունեության միավորման համար Խուճը չափում է ձեռքբերված կազմակերպության չվերահսկվող բաժնեմասը կա՛մ իրական արժեքով, կա՛մ ձեռքբերված ընկերության որոշելի զուտ ակտիվների համապատասխան մասի գումարի չափով: Առաջացած ձեռքբերման ծախսումները ծախսագրվում են և ներառվում վարչական ծախսերում:

ՖՀՄՍ 3.4  
ՖՀՄՍ 3.18  
ՖՀՄՍ 3.19

ՖՀՄՍ 3.15  
ՖՀՄՍ 3.16

Երբ Խուճը ձեռք է բերում ձեռնարկատիրական գործունեություն, այն գնահատում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների պայմանագրային պայմանները, տնտեսական բնույթը և ձեռքբերման պահին այլ նշանակալի պայմանները համապատասխան դասակարգման և նախատեսման համար: Այն ներառում է ձեռքբերվող կազմակերպության հիմնական պայմանագրերով նախատեսված պարունակվող ածանցյալ գործիքների տարանջատումը: Որպես ձեռնարկատիրական գործունեության միավորման մաս, Խուճը գնահատում է, արդյոք, ձեռքբերվող ընկերությունը որևէ գործառնական վարձակալության պայմանագրեր ունի, որոնք անբարենպաստ են, այսինքն՝ վարձակալության պայմանագրի վճարները գերազանցում են նման գործարքների շուկայական արժեքը:

ՖՀՄՍ 3 F28-29

ՖՀՄՍ 3.42

Ձեռնարկատիրական գործունեության փուլային ձեռքբերման դեպքում ձեռք բերող սեփական կապիտալում իր նախկինում ունեցած ձեռք բերվող բաժնեմասը պետք է վերաչափի ձեռքբերման ամսաթվի դրությամբ (այն ամսաթիվը, երբ ձեռքբերողն ունի վերահսկողություն) իրական արժեքով և արդյունքում ստացված օգուտը կամ վնասը ճանաչի շահույթում կամ վնասում:

Ցանկացած պայմանական հատուցում, որը պետք է փոխանցվի ձեռք բերողի կողմից, ճանաչվում է ձեռքբերման պահին իրական արժեքով: Ակտիվ կամ պարտավորություն հանդիսացող պայմանական հատուցումների իրական արժեքի ցանկացած հետագա փոփոխություն ճանաչվում է ՀՀՄՍ 39-ի համաձայն շահույթում կամ վնասում կամ որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում փոփոխություն: Եթե պայմանական հատուցումը դասակարգված է որպես սեփական կապիտալ, ապա այն չի վերաչափվում: Հետագա մարումը հաշվառվում է սեփական կապիտալի ներսում: Այն դեպքում, երբ պայմանական հատուցումը չի համապատասխանում ՀՀՄՍ 39 ստանդարտի գործողության ոլորտին, այն չափվում է համապատասխան այլ ՖՀՄՍ-ների համաձայն:

ՖՀՄՍ 3.58

ՖՀՄՍ 3.54

Գուդվիլը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով, որը հանդիսանում է փոխանցված հատուցման և ճանաչված չվերահսկող բաժնեմասի հանրագումարի և ձեռքբերված որոշելի զուտ ակտիվների և ստանձնած պարտավորությունների իրական արժեքների տարբերությունը: Եթե փոխհատուցումը ավելի քիչ է, քան ձեռքբերված դուստր կազմակերպության զուտ ակտիվների իրական արժեքը, ապա տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Սկզբնական ճանաչումից հետո գուդվիլը չափվում է սկզբնական արժեքով՝ նվազեցնելով արժեզրկումից կուտակված ցանկացած կորստով: Արժեզրկման ստուգման նպատակով ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում ձեռքբերված գուդվիլը, ձեռքբերման ամսաթվից սկսած, պետք է բաշխվի Խմբի այն դրամաստեղծ միավորներին, որոնք ակնկալվում է, որ կստանան օգուտներ ձեռնարկատիրական գործունեության միավորումից՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք ձեռք բերվողի այլ ակտիվները կամ պարտավորությունները վերագրված են այդ միավորներին թե՛ ոչ:

ՖՀՄՍ 3.F63(ա)

Եթե գուդվիլը վերագրվել է այնպիսի դրամաստեղծ միավորի, որի գործունեության մի մասը օտարվել է, ապա օտարված գործունեությանը առնչվող գուդվիլը գործունեության օտարումից օգուտը կամ վնասը հաշվելու ժամանակ ներառվում է գործունեության հաշվեկշռային արժեքում: Այս պարագայում օտարված գուդվիլը չափվում է օտարված գործունեության և դրամաստեղծ միավորի մնացած մասի հարաբերական մեծությունների հիմունքով:

ՀՀՄՍ 36.80

ՀՀՄՍ 36.86

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ (շարունակություն)

## 2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

ՀՀՄՍ 1.10(ե)

### (գ) Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ և գուղվիլ (շարունակություն)

#### Մեկնաբանություն

##### Ձեռնարկատիրական գործունեության սահմանումը

##### Ըստ ՖՀՄՍ 3 (վերանայված 2008թ.) «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ»

Կազմակերպությունը, որն ակտիվ կամ ակտիվների խումբ ձեռք բերելիս, պետք է կատարի զգուշորեն վերլուծություն՝ պարզելու, արդյոք, այն ինչ ձեռք է բերվել կազմում է ձեռնարկատիրական գործունեություն, թե միայն ներկայացնում է ակտիվներ կամ ակտիվների խումբ, որոնք չեն կազմում ձեռնարկատիրական գործունեություն:

Համաձայն ՖՀՄՍ 3 (վերանայված 2008թ.) ձեռնարկատիրական գործունեությունը սահմանվում է որպես գործունեությունների և ակտիվների փոխկապակցված ամբողջություն, որը կարելի է իրականացնել և կառավարել՝ ուղղակիորեն ներդրողներին կամ այլ սեփականատերերին, անդամներին կամ մասնակիցներին շահաբաժինների, ծախսումների տնտեսման կամ այլ տնտեսական օգուտների տեսքով հատուցում ապահովելու նպատակով: Ի տարբերություն ՖՀՄՍ 3-ի (2007թ.) ՖՀՄՍ 3-ի (վերանայված 2008թ.) հիմնական փոփոխությունները հետևյալն են՝

- ▶ Պահանջում է գործունեությունների և ակտիվների փոխկապակցված ամբողջություն, որը հնարավորություն կտա իրականացնել կամ կառավարել՝ ուղղակիորեն ներդրողներին կամ այլ սեփականատերերին, անդամներին կամ մասնակիցներին շահաբաժինների, ծախսումների տնտեսման կամ այլ տնտեսական օգուտների տեսքով հատուցում ապահովելու նպատակով: Ձեռնարկատիրական գործունեության նպատակների հասնելու կարողությունը օգնում է խուսափել չափից շատ սահմանափակող մեկնաբանություններից, որոնք տեղ էին գտել նախկին ուղեցույցում,
- ▶ Պարզաբանում է «մուտքային գործունեություն», «գործընթացներ», «արդյունքներ» տերմինների նշանակությունը, ինչը թույլ է տալիս նվազեցնել մանրամասն ծավալուն ուղեցույցի անհրաժեշտությունը և ոչ ճիշտ մեկնաբանությունները, որոնք ի հայտ են գալիս նման ուղեցույցից,
- ▶ Պարզաբանում է, որ մուտքային գործունեություն և վերջիններիս նկատմամբ կիրառվող գործընթացները նշանակալի են և չնայած, որ արդյունքները նորմալ են ներկայացված, անհրաժեշտ չեն ձեռնարկատիրական գործունեության գոյության համար,
- ▶ Պարզաբանում է, որ ձեռնարկատիրական գործունեությունը չպետք է ներառի տվյալ ձեռնարկատիրական գործունեությունը ծավալելու ընթացքում վաճառողի կողմից օգտագործված բոլոր մուտքային գործունեություն կամ գործընթացները, եթե շուկայի տվյալ մասնակիցը ի վիճակի է շարունակել արդյունքների արտադրությունը: Սա թույլ է տալիս խուսափել մանրամասն ծավալուն ուղեցույցի անհրաժեշտությունից և գնահատումներից, թե արդյոք բացակայող մուտքային գործունեություն կամ գործընթացները կարևոր են:

Ամփոփելով ՖՀՄՍ 3-ը (վերանայված 2008թ.)՝ ձեռնարկատիրական գործունեության սահմանումը կարող է ներառել «գործընթացների փոխկապակցված ամբողջություն», որոնք նախկինում չեն համարվել ձեռնարկատիրական գործունեություն: Օրինակ՝ մշակման, հետազոտման կամ գնահատման փուլում գտնվող հանքերը կարող են դասվել որպես ձեռնարկատիրական գործունեություն ըստ ՖՀՄՍ-ների: Ընդհանուր առմամբ, ենթադրվում է, որ երբ որևէ գործունեություն մոտենում է արտադրության փուլին, ավելի հավանական է, որ ձեռքբերված ակտիվը կամ ակտիվների խումբը համարվի ձեռնարկատիրական գործունեություն:

Որոշելու համար, թե արդյոք որոշակի գործունեությունների և ակտիվների փոխկապակցված ամբողջությունը հանդիսանում է ձեռնարկատիրական գործունեություն, թե ոչ՝ անհրաժեշտ են նշանակալի դատողություններ:

#### Ակտիվների գնման գործարքների և ձեռնարկատիրական գործունեության միավորումների միջև տարբերությունները

Ակտիվների գնման գործարքների և ձեռնարկատիրական գործունեության միավորումների հաշվառման հիմնական տարբերությունները կարող են ամփոփվել հետևյալ կերպ՝

- ▶ Գուղվիլը (կամ գեղջված ձեռքբերումը) առաջանում է միայն ձեռնարկատիրական գործունեության միավորումներից
- ▶ Ձեռնարկատիրական գործունեության միավորումների ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են իրական արժեքով՝ մինչդեռ ակտիվների գնման գործարքներում ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են հաշվեկշռային արժեքով հիմնված իրենց համապատասխան ձեռքբերման գործարքի իրական արժեքի վրա:
- ▶ Ըստ ՖՀՄՍ 3-ի (վերանայված 2008թ.) գործարքի հետ կապված ծախսումները պետք է ճանաչվեն որպես ծախս, սակայն կարող են կապիտալացվել որպես առանձին ակտիվի ձեռքբերման ծախսումներ,
- ▶ Ակտիվի գնման գործարքի դեպքում ձեռքբերված ակտիվների և կրած պարտավորությունների հետ կապված հետաձգված հարկեր չեն առաջանա, երբ որ տվյալ գումարները տարբերվում են իրենց հարկային բազաներից, որը պայմանավորված է հետաձգված հարկերի սկզբնական ճանաչման բացառությամբ ըստ ՀՀՄՍ 12-ի:

#### Գուղվիլը ձեռնարկատիրական գործունեության միավորումներում

Ավանդաբար, հանքային արդյունաբերությամբ զբաղվող ընկերություններից շատերը միշտ ենթադրել են, որ հետախուզման և մշակման ակտիվների համար վճարված ամբողջ հատուցումը պետք է բաշխվի ձեռքբերված որոշելի գուտ ակտիվների միջև, այսինքն՝ որոշելի գուտ ակտիվների (բացառությամբ՝ ձեռքբերված օգտակար հանածոների պաշարների) իրական արժեքը գերազանցող վճարված ցանկացած հատուցում պետք է ներառվի ձեռքբերված օգտակար հանածոների պաշարների մեջ: Այնուամենայնիվ, գուղվիլը կարող է առաջանալ ձեռքբերված սինթետիկների, ձեռք բերողի գերավճարման արդյունքում կամ երբ, ՖՀՄՍ-ները պահանջում են, որ ձեռքբերված ակտիվները և/կամ պարտավորությունները չափվեն ոչ իրական արժեքով (օրինակ՝ հետաձգված հարկեր): Ինչ վերաբերվում է գերավճարներին, ապա ենթադրվում է, որ գործնականում հնարավոր չէ գերավճարը որոշել և հավաստիորեն չափել ձեռքբերման ամսաթվի դրությամբ և վերջինիս հաշվառումը լավագույն կերպով կիրականացվի հետագա արժեզրկման ստուգումների միջոցով՝ փաստացի գերավճարի ապացույցների ի հայտ գալու դեպքում [ՖՀՄՍ3.ԵՀ382]: Հետևաբար, հանքային արդյունաբերությամբ զբաղվող ընկերությունների համար ըստ ՖՀՄՍ-ների ճիշտ չէր լինի պարզապես ընդունել, որ գուղվիլը երբեք չի առաջանում ձեռնարկատիրական գործունեության միավորումներից և որ ցանկացած տարբերություն մեխանիկորեն վերագրվում է օգտակար հանածոների պաշարներին: Ընդհակառակը, ձեռքբերված օգտակար հանածոները պետք է գնահատվեն առանձին, իսկ ձեռքբերման պահին որոշվող գուտ ակտիվների (ինչը ընդգրկում է օգտակար հանածոների պաշարները, ռեսուրսները և ձեռքբերված հետախուզման պոտենցիալը) հատուցման գերազանցումը նրանց արժեքից, պետք է վերագրվի գուղվիլին:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

ՀՀՄՍ 1.10(ե)

### (գ) Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ և գույզվիլ (շարունակություն)

#### Մեկնաբանություն (շարունակություն)

##### Հետաձգված հարկում

Ըստ ՀՀՄՍ-ների, կազմակերպությունը պետք է նախատեսի ձեռքբերված որոշելի գույզ ակտիվների (ներառյալ՝ օգտակար հանաժողովների պաշարների) ժամանակավոր տարբերությունների հետաձգված հարկում՝ բացառությամբ գույզվիլի վերաբերող ժամանակավոր տարբերությունների: Եթե գնման հատուցման ձեռքբերված որոշելի գույզ ակտիվների իրական արժեքին գերազանցումը դասվում է որպես օգտակար հանաժողովի պաշար, ապա համաձայն ՀՀՄՍ 12-ի անհրաժեշտ է ճանաչել ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկային պարտավորությունը: Սկզբունքորեն, դա կբերի կրկնակի հաշվարկի, որում ճանաչված հետաձգված հարկային պարտավորությունը կավելացնի օգտակար հանաժողովին հատկացվելիք գումարը, ինչը իր հերթին կբերի հետաձգված հարկային պարտավորության աճի: Քանի որ արդյունահանման գործառնությունները, որոնք հարկվում են բարձր սահմանային հարկային դրույքներով (այսինքն՝ 60-ից 80% դրույքները սովորական են), օգտակար հանաժողովի պաշարները կարող են գերազանցատվել 2.5-ից 5 գործակցով (այսինքն՝  $1/(1-60\%) = 2.5$ ): Հենց դա է պատճառը, որ գնման հատուցման ձեռքբերված որոշելի գույզ ակտիվների (բացառությամբ՝ օգտակար հանաժողովի պաշարների) իրական արժեքի կանաչական գերազանցում չի կարող ճանաչվել որպես օգտակար հանաժողովի պաշարների մի մաս: Տվյալ խնդիրը չի լինի, եթե հետաձգված հարկային պարտավորությունը մարվի (վերացվի) գույզվիլի ճանաչմամբ:

### (դ) Հանքերի հետախուզման, գնահատման և մշակման ծախսումներ

#### (i) Ծախսումներ մինչև լիցենզավորվելը

Մինչև լիցենզիայի ստանալը կատարված նախնական ծախսումները ծախսագրվում են այն ժամանակաշրջանում, որում կատարվում են:

ՀՀՄՍ 6.23

#### (ii) Հետախուզման և գնահատման ծախսումներ

Հետախուզման և գնահատման գործունեությունը ներառում է օգտակար հանաժողովի որոնում, տեխնիկական իրագործելիության որոշում և որևէ որոշակի հանաժողի ամևտրային կենսունակության գնահատում:

Հետախուզման և գնահատման գործունեությունը ներառում է՝

- ▶ Սկզբնական հետախուզման տվյալների ուսումնասիրում և վերլուծում
- ▶ Երկրաբանական ուսումնասիրությունների միջոցով հետախուզման տվյալների հավաքագրում
- ▶ Հետախուզական հորատում և նմուշարկում
- ▶ Հանաժողի ծավալի և աստիճանի որոշում և ստուգում
- ▶ Փոխադրման և ենթակառուցվածքների պահանջների ուսումնասիրություն
- ▶ Շուկայի և ֆինանսների ուսումնասիրության իրականացում

ՀՀՄՍ 6.9

Գոյություն ունեցող հետախուզման տարածքի հետախուզման իրավունքի համար վճարված լիցենզիայի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են մինչև թույլտվության ուժը կորցնելը (լուծումը):

Հետախուզման օրինական իրավունք ստանալուց հետո հետախուզման և գնահատման ծախսումները հաշվառվում են շահույթ կամ վնասում, եթե տնօրենները եզրակացնում են, որ ապագա տնտեսական օգուտները հավանական չէ, որ կհոսեն տվյալ կազմակերպություն: Այդ ծախսումները ներառում են օգտագործված նյութերը և վառելիքը, ուսումնասիրման ծախսումները, հորատման ծախսումները և պայմանագրային աշխատողներին կատարված վճարները:

ՀՀՄՍ 6.10

Որոշելու համար, թե արդյոք ծախսումները համապատասխանում են կապիտալացման չափանիշին՝ օգտագործվում են տեղեկատվության տարբեր աղբյուրներ: Ապագա օգուտների հավանականությունը որոշելու համար օգտագործվող տեղեկատվությունը կախված է իրականացված հետախուզման և գնահատման աշխատանքների խորությունից:

Հետախուզման և գնահատման ծախսումները, որոնք վերաբերում են այն լիցենզիաներին, որոնց հանաժող դեռ չի ձևավորվել ՀՊՄԿ-ի համապատասխան ծախսագրվում են, երբ կազմակերպությունը կրում է տվյալ ծախսումները, քանի դեռ նշանակալի գնահատում չի իրականացվում ՀՊՄԿ-ի համապատասխան հանաժողի ձևավորման համար: Այս փուլում դուրս գրված ծախսումները ներառվում են շահույթի կամ վնասի հաշվետվության «դուրս գրված հետախուզման և գնահատման ծախսումներ» հաշվում:

#### Մեկնաբանություն

Չնայած, որ ՀՊՄԿ-ի դասակարգումը մշակված է Ավստրալիայում, ֆինանսական հաշվետվությունների մեծ մասը հղում է համապատասխան ազգային ստանդարտներին, որոնք նշանակալիորեն համապատասխանեցվել են ՕՀՀՄՍԿ-ի (Օգտակար հանաժողի համար հաշվետվությունների միջազգային ստանդարտների կոմիտե) դրույքներին:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

ՀՀՄՍ 1.10(ե)

### (դ) Հանքերի հետախուզման, գնահատման և մշակման ծախսումներ (շարունակություն)

ՀՊՄԿ-ին համապատասխան հանաժողովի ձևավորվելու դեպքում (այս փուլում Խումբը ենթադրում է, որ տնտեսական օգուտների հոսքը տվյալ կազմակերպությունը հավանական է), Խումբը կապիտալացնում է տվյալ լիցենզիայի գծով հետագա գնահատման ծախսումները, որպես հետախուզման և գնահատման ակտիվներ, մինչև ՀՊՄԿ-ին համապատասխան հանաժողովի պաշարի ձևավորվելը:

#### Մեկնաբանություն

ՀՊՄԿ-ին համապատասխան հանաժողովի պաշարի ձևավորումը անհրաժեշտ չէ, այլ պարզապես հարմար է տնտեսապես կենսունակ ծրագրի հաշվապահական մեկնաբանությունը իրականացնելու համար: Հաճախ իրագործելիության ուսումնասիրության իրականացումը, ՀՊՄԿ-ին համապատասխան հանաժողովի պաշարի գնահատումը և առևտրային կենսունակության ստեղծումը համընկնում են:

Ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ձեռքբերված հետախուզման և գնահատման ակտիվները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Նմանապես, հետախուզման և գնահատման ակտիվներ (որոնք չեն ներկայացնում ձեռնարկատիրական գործունեություն) ձեռք բերելու հետ կապված ծախսումները նույնպես կապիտալացվում են: Այդ ակտիվները հետագայում չափվում են իրենց սկզբնական արժեքով՝ հանած կուտակված արժեքից:

ՀՊՄԿ -ի դասակարգմանը համապատասխան հանաժողովի պաշարի ձևավորման և դրանց մշակման գործընթացը սկսելու պահից հետախուզման և գնահատման հետ կապված ակտիվները ստուգվում են արժեքից համար և փոխանցվում են «Կառուցման գործընթացում գտնվող հանքեր» դասին: Հետախուզման և գնահատման փուլում ամորտիզացիա չի հաշվարկվում:

#### (iii) Հանքում մասնաբաժնի փոխանցման պայմանագրեր – հետախուզման և գնահատման փուլում

Խումբը չի գրանցում հանքում մասնաբաժնի ստացող կողմի (մասնակցի) կատարված ծախսումները իր հաշվին: Այն Նաև չի ճանաչում հետախուզման և գնահատման փուլում հանքի մասնաբաժնի տրամադրման համաձայնությունների հետ կապված օգուտներ ու վնասներ, այլ վերադասակարգում է ամբողջ Նախկինում կապիտալացված ծախսումները որպես միայն պահպանված մասնակի մասնաբաժնին վերաբերող: Ստացող (մասնակցի) կողմից ուղղակիորեն ստացված ցանկացած դրամական փոխհատուցում ուղղվում է Նախկինում կապիտալացված ծախսումների նվազմանը, և ցանկացած դրական տարբերություն ընդերքօգտագործող հաշվառվում է որպես օգուտ օտարումից:

#### Մեկնաբանություն

Հանքի մասնաբաժնի փոխանցումը սահմանված է Միացյալ Թագավորության Նավթային արդյունաբերության հաշվապահական հաշվառման խորհրդի (ՄԹՆԱՀՀԽ) կողմից հրապարակված Գործնականում ընդունելի փորձում որպես «նավթի կամ գազի գծով մասնակցության բաժնի փոխանցում մասնակցին, վերջինիս կողմից որոշակի ծախսումներ կրելու համաձայնության դիմաց, որոնք այլապես կկրեր ընդերքօգտագործողը» (ՄԹՆԱՀՀԽ բաժին 16): Հանքի մասնաբաժնի փոխանցման գործարքները հիմնականում առաջանում են հետախուզման և մշակման փուլում, և բնութագրվում են որպես ընդերքօգտագործողի կողմից օգտակար հանաժողովի պաշարների տեսքով ապագա տնտեսական օգուտներից հրաժարում՝ ի փոխհատուցում ապագա ֆինանսական պարտավորությունների նվազման:

ՖՀՄՍ 6-ը վերաբերում է հետախուզման և գնահատման ծախսումների հաշվառմանը և չի անդրադառնում օգտակար հանաժողովի հետախուզման և գնահատման զբաղվող ընկերությունների հաշվապահական հաշվառման այլ դրոյթներին [ՖՀՄՍ 6.4]: Հետևաբար հարցը, թե արդյոք հանքի մասնաբաժնի փոխանցման համաձայնությունները պետք է հաշվի առնվեն ՖՀՄՍ 6-ում, բաց է մնում: Այնուամենայնիվ, քանի որ հանքի մասնաբաժնի փոխանցման համաձայնությունը բերում է մասնակցի կողմից հետախուզման և գնահատման ակտիվների ձեռքբերմանը և ընդերքօգտագործողի կողմից այդ ակտիվի օտարումանը, ապա մենք կարծում ենք, որ հանքի մասնաբաժնի փոխանցման համաձայնությունը կներառվի ՖՀՄՍ 6-ում: Հետևաբար, կազմակերպությունը ունի երկու ընտրանք՝

- Կամ մշակել ՀՀՄՍ 8-ին համաձայն հաշվապահական հաշվառման քաղաքականություն,
- Կամ մշակել ՖՀՄՍ 6-ին համաձայն հաշվապահական հաշվառման քաղաքականություն:

Գործնականում, շատ կազմակերպություններ օգտագործում են երկրորդ այլընտրանքը և հանքի մասնաբաժնի փոխանցման համաձայնությունների նկատմամբ կիրառում են հաշվապահական հաշվառման իրենց քաղաքականությունը, որը հիմնված է նրանց Նախկին ՀՀՄՍ-ի վրա:

Հետախուզման և գնահատման փուլում գտնվող հանքի մասնաբաժնի փոխանցման համաձայնությունների հաշվապահական հաշվառման քաղաքականությունները, որոնք հիմնված են կազմակերպության Նախկին ՀՀՄՍ-ի վրա, հաճախ կպահանջեն հետևյալը՝

- ▶ Մասնակիցը ճանաչում է համաձայնությունից բխող իր մասով ծախսումները, որոնք վերահսկվում են ընդերքօգտագործողի կողմից համապատասխանաբար այն պահին, երբ դրանք առաջանում են: Մասնակիցը հաշվառում է հանքի մասնաբաժնի փոխանցման համաձայնագրի ծախսումները այնպես, ինչպես ուղղակի առաջացած հետախուզման և գնահատման ծախսումները, և:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

ՀՀՄՍ 1.10(ե)

### (դ) Հանքերի հետախուզման, գնահատման և մշակման ծախսումներ (շարունակություն)

#### Մեկնաբանություն (շարունակություն)

- ▶ Ընդերքօգտագործող հանքի մասնաբաժնի փոխանցման համաձայնությունը հաշվառում է հետևյալ կերպ՝
  - ▶ Ընդերքօգտագործող չի գրանցում մասնակցի կողմից իրականացված ծախսումները,
  - ▶ Ընդերքօգտագործող չի ճանաչում հանքի մասնաբաժնի փոխանցման համաձայնության գծով օգուտը կամ վնասը, այլ վերադասակարգում է ամբողջ մասնակցության գծով նախկինում կապիտալացված ծախսումները որպես մասնակի պահպանված մասնակցություն,
  - ▶ Մասնակցից ուղղակիորեն ստացված ցանկացած դրամական փոխհատուցում կրեդիտագրվում է ամբողջ նախկինում կապիտալացված ծախսումներին, և ցանկացած դրական տարբերություն ընդերքօգտագործող հաշվառվում է որպես օգուտ օտարումից:

Եթե կազմակերպությունը կիրառում է իր նախկին ՀԸՀՄ-ին համաձայն հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հանքի մասնակցության փոխանցման համաձայնությունների նկատմամբ, ապա ակնկալվում է, որ կազմակերպությունը կկատարի հանքի մասնակցության փոխանցման բացահայտումներ համաձայն այդ ստանդարտներին:

#### (iv) Կառուցման փուլում գտնվող հանքեր

«Հետախուզման և գնահատման ակտիվները» «Հանքերի»՝ «Կառուցման փուլում գտնվող հանքեր» հաշվին փոխանցելուց հետո ենթակառուցվածքների կառուցման, տեղադրման և ավարտի հետ կապված բոլոր հետագա ծախսումները կապիտալացվում են «Կառուցման փուլում գտնվող հանքեր» հաշվում: Մշակման ծախսումները նվազեցվում են մշակման փուլում դուրս բերված հանքերի բոլոր պատահական վաճառքների գծով մուտքերի չափով: Արտադրությունը սկսելուց հետո «Կառուցման փուլում գտնվող հանքեր» հաշվում ներառված բոլոր ակտիվները փոխանցվում են «Հանքերի» «Գործող հանքեր» հաշվին:

#### Մեկնաբանություն

Ոլորտում ընդունված հետախուզման և գնահատման ծախսումների կապիտալացման գործընթացը տարբեր ընկերությունների համար էապես տարբեր է: Կարևոր է նշել, որ հետախուզման և գնահատման ծախսումների կապիտալացման որոշումը պահանջում է նշանակալի դատողություններ և, հետևաբար, կարևոր է, որ ընկերությունները տրամադրեն հետախուզման և գնահատման ծախսումների կապիտալացման վերաբերյալ հաշվապահական հաշվառման իմաստալից բացահայտումներ: Ստորև բերված մեկնաբանությունը ապահովում է տարբեր քաղաքականությունների կիրառման ուղեցույց:

#### Հետախուզման, գնահատման և մշակման ծախսումներ

##### Հաջողված փորձի մեթոդ

Նավթի և գազի արդյունաբերության մեջ առավել հաճախ օգտագործվող հաջողված փորձերի մոտեցման պես միայն այն ծախսումները, որոնք ուղղակիորեն բերում են որոշակի առանձնահատուկ օգտակար հանաձոյի պաշարների հայտնաբերմանը, ձեռքբերմանը կամ մշակմանը կապիտալացվում են և կազմում են ծախսային կենտրոնի կապիտալացված ծախսումների մաս: Համաձայն այս մեթոդի՝ կազմակերպությունը հաշվի կառնի ցանկացած առանձին հանքը որպես ծախսային կենտրոն: Այն ծախսումները, որոնք առաջացնում պահին չեն համապատասխանում նշված չափանիշին ծախսագրվում են, չնայած հաջողված փորձի մոտեցման որոշ մեկնաբանությունների համաձայն չհաջողված ընդերքի տեղամասի որոշ ծախսումները կապիտալացվում են:

Երբ կազմակերպությունը նման մեթոդ է կիրառում ըստ ՖՀՄՍ-ների, այն պետք է հաշվառի մինչև հետախուզման և գնահատման փուլը կրած որոնման ծախսումները համաձայն ՀՀՄՍ 16-ի կամ ՀՀՄՍ 38-ի: Քանի որ ծրագրի այս փուլում տնտեսական օգուտները շատ անորոշ են, ապա որոնման ծախսումները հիմնականում կթափառվեն առաջացման պահին: Չմշակված օգտակար հանաձոյների իրավունքների ձեռք բերման ծախսումները ինչևէ պետք է կապիտալացվեն ըստ ՖՀՄՍ-ների, եթե կազմակերպությունը ակնկալում է ապագա տնտեսական օգուտների ներհոսք:

ՖՀՄՍ 6-ը չի սահմանում ծրագրի հետախուզման և գնահատման փուլում կրած ծախսումների որևէ ճանաչման և չափման կանոններ: Հետևաբար, նման ծախսումները հնարավոր է որպես ակտիվներ հաշվառել և դուրս գրել, երբ որոշվում է, որ տվյալ ծախսումները չեն բերի տնտեսական օգուտներ, կամ ծախսագրել, եթե դրանց առաջնախալու պահին վերջնական արդյունքը բնութագրվում է անորոշությամբ:

Չմշակված օգտակար հանաձոյների իրավունքների գծով հետաձգված ծախսումները յուրաքանչյուր ժամանակաշրջանում կարող են ստուգվել արժեզրկման համար կամ կարող են մնալ անփոփոխ, մինչև որոշումը, թե արդյոք հետաքրքրող ընդերքի տարածքը պարունակում է օգտակար հանաձոյների պաշարներ թե՛ ոչ: Այնուամենայնիվ, հետախուզման և գնահատման ակտիվները պետք է վերադասակարգվեն օգտակար հանաձոյների արդյունահանման տեխնիկական իրագործելիությունն ու առևտրային կենսունակությունը ցուցադրելուց հետո:

#### Հետախուզման, գնահատման և մշակման ծախսումների հաշվառման այլ մեթոդներ

##### Լրիվ արժեքի մեթոդը

Լրիվ արժեքի մեթոդի կիրառումը համաձայն ՀԸՀՄ-ների մեծ մասի պահանջում է, որպեսզի որոնման, ընդերքի տեղամասի նկատմամբ իրավունքը ձեռք բերելու, հետախուզման, գնահատման, մշակման և կառուցման ծախսումները կուտակվեն խոշոր ծախսային կենտրոններում: Մինչև լիցենզիայի ստացումը կրած ծախսումները պետք է ծախսագրվեն: Այնուամենայնիվ, ՖՀՄՍ 6-ը չի թույլ տալիս հետախուզման և գնահատման փուլից դուրս լրիվ արժեքի մեթոդի կիրառում:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

ՀՀՄՍ 1.10(ե)

### (դ) Հանքերի հետախուզման, գնահատման և մշակման ծախսումներ (շարունակություն)

#### Մեկնաբանություն (շարունակություն)

Լրիվ արժեքի մեթոդի կիրառումը մի շարք այլ ոլորտներում ևս արգելվում է համաձայն ՀՀՄՍ-ների, քանի որ՝

- ▶ ՀՀՄՍ 6-ը պահանջում է արժեզրկման հայտանիշների առկայության դեպքում ՀՀՄՍ 36-ի համաձայն կատարել արժեզրկման ստուգում,
- ▶ ՀՀՄՍ 6-ը պահանջում է, որպեսզի հետախուզման և գնահատման ակտիվները դասակարգվեն որպես նյութական կամ ոչ նյութական ակտիվներ՝ կախված դրանց բնույթից, անգամ եթե կազմակերպությունը հետախուզման և գնահատման ծախսումները հաշվառում է համեմատաբար մեծ խմբերում, այն պետք է տարանջատի նյութական և ոչ նյութական ակտիվները, և
- ▶ Օգտակար հանածոների արդյունահանման տեխնիկական իրագործելիությունն ու առևտրային կենսունակությունը ցուցադրելուց հետո ՀՀՄՍ 6-ը պահանջում է հետախուզման և գնահատման ակտիվների արժեզրկման ստուգման իրականացում համաձայն ՀՀՄՍ 36-ի, ակտիվների ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում վերադասակարգում և համաձայն ՀՀՄՍ 16-ի կամ ՀՀՄՍ 38-ի հաշվառում: Սա նշանակում է, որ հնարավոր չէ հաջող և անհաջող ծրագրերը միասին հաշվառել մեկ ծախսային կենտրոնում:

Այդ պատճառով, հնարավոր չէ կիրառել լրիվ արժեքի մեթոդը ըստ ՀՀՄՍ-ների առանց մեթոդի կիրառման նշանակալի փոփոխությունների կատարման: Կազմակերպությունը կարող է ցանկանալ կիրառել լրիվ արժեքի մեթոդը որպես սկիզբ հետախուզման և գնահատման ակտիվների հաշվառման քաղաքականությունը որոշելիս ըստ ՀՀՄՍ-ների: Այնուամենայնիվ, հազվադեպ է, որ տեղին կլինի նկարագրել հաշվապահական քաղաքականությունը որպես լրիվ արժեքի մեթոդ, քանի որ տվյալ մեթոդի հիմնական տարրերը անթույլատրելի են ըստ ՀՀՄՍ-ների:

#### Հետաքրքրություն ներկայացնող տարածքի մեթոդ

Տվյալ մեթոդը ենթադրում է, որ օգտակար հանածոների պարունակմանը նպաստող բնութագրիչներ ունեցող երկրաբանական տարածքի գծով կրած ծախսումները հետաձգվում են որպես ակտիվ, քանի որ կոմերցիոն ակտիվների հայտնաբերումը դեռևս ընթացքի մեջ է: Եթե տարածքը պարունակում է կոմերցիոն պաշարներ, պապ կուտակված ծախսումները կապիտալացվում են: Եթե տարածքը չի պարունակում կոմերցիոն պաշարներ՝ կուտակված ծախսումները ծախսագրվում են: Ունենք համարում են, որ այս մեթոդը որպես հաջողված փորձի մեթոդի հաշվառման տարատեսակ է, որի միավորը հետաքրքրություն ներկայացնող տարածքն է, այլ ոչ առանձին լիցենզիան: Մյուսները կարծում են, որ այս մեթոդն ավելի նման է լրիվ արժեքի մեթոդին, սակայն հետաքրքրության տարածքի հիման վրա կիրառվող: Ծախսումները, որոնք կազմակերպությունը կրել է մինչև հետաքրքրության տարածքի հայտնաբերումը, հաճախ ծախսագրվում են հետաքրքրության տարածքի մոտեցման դեպքում: Մինչդեռ ՀՀՄՍ 6-ը չի թույլ տալիս ազգային ՀՀՀՄՍ-ների համաձայն որոշված հետաքրքրության տարածքի մեթոդի բոլոր դրույթների կիրառումը, այն կազմակերպությունը, որն օգտագործում է համեմատաբար փոքր հետաքրքրության տարածքներ, կարող է կիրառել այս մեթոդը խելամուտք են համաձայն ՀՀՄՍ-ների:

### (ե) Հիմնական միջոցներ և հանքեր

#### (i) Սկզբնական ճանաչում

ՀՀՄՍ 16.73(ա)

Հանքի կառուցումից հետո ակտիվները փոխանցվում են «Հիմնական միջոցներ» կամ «Հանքեր» հաշիվներին: Հիմնական միջոցները և գործող հանքերը հաշվառված են ըստ սկզբնական արժեքի՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները:

ՀՀՄՍ 16.73(ա)  
ՀՀՄՍ 16.30

Ակտիվի սկզբնական արժեքը ներառում է գնման գինը կամ կառուցման արժեքը, ակտիվը աշխատանքային վիճակի բերելու ուղղակիորեն կապված ցանկացած ծախսումները, սկզբնապես գնահատված վերականգնման պարտավորությունները և որակավորվող ակտիվների դեպքում (երբ տեղին է)՝ փոխառության ծախսումները: Գնման գինը կամ կառուցման արժեքը վճարված գումարի և ակտիվի ձեռք բերման նպատակով տրված որևէ հատուցման իրական արժեքի գումարն է: Ֆինանսական վարձակալության կապիտալացված արժեքը ևս ներառվում է հիմնական միջոցներում:

ՀՀՄՍ 16.15  
ՀՀՄՍ 16.16

Երբ հանքի կառուցման ծրագիրը տեղափոխվում է արտադրական փուլ, հանքի կառուցման ծախսումները դադարում են կապիտալացվել, և կա՛մ համարվում են պաշարների արժեք, կա՛մ ծախսագրվում են, բացառությամբ հանքերի ավելացմանը, բարելավմանը, ստորերկրյա հանքերի մշակմանը կամ արդյունահանման ենթակա պաշարների մշակմանը վերաբերող կապիտալացվող ծախսումների:

#### (ii) Մաշվածություն/ամորտիզացիա

ՀՀՄՍ 16.73(բ)  
ՀՀՄՍ 16.73(գ)

Հանքի մշակման կուտակված ծախսումները մաշվում/ամորտիզացվում են տվյալ հանքի տնտեսապես փոխհատուցելի պաշարների թողարկված միավորի հիման վրա՝ բացառությամբ այն ակտիվների, որոնց օգտակար ծառայության ժամկետը ավելի կարճ է հանքի օգտակար գործողության ժամկետից, որի դեպքում կիրառվում է ուղիղ գծային մեթոդը: Հանքերի շահագործման ծախսումների հաշվառման միավորն է հանդիսանում հանքաքարի տոննաները, մինչդեռ հետշահագործման ծախսումների համար՝ ոսկու փոխհատուցվող ունցիաները և պղնձի փոխհատուցվող տոննաները: Իրավունքները և զիջումները սպառվում են համապատասխան տարածքի ընդհանուր պաշարների թողարկված միավորի հիման վրա: Հանքի մշակման ծախսումների մաշվածության/ամորտիզացիայի թողարկված միավորի դրույթը հաշվի է առնում մինչև ներկա պահը կատարված բոլոր ծախսումները՝ գումարած ապագա արտոնված մշակման ծախսումները:



# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ (շարունակություն)

## 2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

ՀՀՄՍ 1.10(ե)

### (ե) Հիմնական միջոցներ և հանքեր (շարունակություն)

Հողի ներքին արժեքից ավել կատարված վճարը՝ ընդերքին մուտք ունենալու նպատակով, ամորտիզացվում է հանքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ հիմնական միջոցների, ինչպիսիք են հանքերի շարժական սարքավորումները, մաշվածությունը հիմնականում հաշվարկվում է վերջիններիս օգտակար ծառայության ժամկետների հիման վրա ուղիղ գծային մեթոդով հետևյալ կերպ՝

ՀՀՄՍ 16.67

- ▶ Ծենքեր 20 տարի ՀՀՄՍ 16.68
- ▶ Արտադրական հզորություններ և սարքավորումներ 5-ից 15 տարի ՀՀՄՍ 16.71

Հիմնական միջոցների որևէ տարր և նշանակալի մաս ապաճանաչվում է դուրսգրման պահին կամ երբ դրանց օգտագործումից կամ օտարումից տնտեսական օգուտներ չեն սպասվում: Ակտիվի ապաճանաչումից առաջացող ցանկացած օգուտ կամ վնաս (հաշվարկված որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և օտարումից մուտքերի տարբերություն) ներառվում է շահույթում կամ վնասում ապաճանաչման պահին:

ՀՀՄՍ 16.51

Ակտիվների մնացորդային արժեքները, օգտակար ծառայության ժամկետները և մաշվածության/ ամորտիզացիայի հաշվարկման եղանակները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում և, համապատասխանաբար, ճշգրտվում են առաջընթաց:

Արտադրության փուլում առաջացած մակաբացման աշխատանքների գծով ծախսումների մաշվածության հաշվարկի համար տե՛ս Խմբի քաղաքականության 2.4 (Ժզ) Ծանոթագրությանը:

### Մեկնաբանություն

#### Հանածոյի պաշարները որպես մաշվածության թողարկման միավորի մեթոդի հիմք

Թողարկված միավորի մեթոդը կիրառելիս կարևոր է հաշվի առնել որպես հիմք օգտագործվող հանածոյի պաշարների ընտրությունը: ՖՀՄՍ-ն չի ապահովում որևէ ուղեցույց համապատասխան հանածոյի պաշարների ընտրության հարցում թողարկված միավորի մեթոդի կիրառման համար: Որպես հիմք կարող են օգտագործվել հետևյալ պաշարները՝

- (ա) Ապացուցված մշակված հանածոյի պաշարներ;
- (բ) Ապացուցված մշակված և չմշակված հանածոյի պաշարներ;
- (գ) Ապացուցված և հավանական հանածոյի պաշարներ; և
- (դ) Ապացուցված, հավանական և հնարավոր հանածոյի պաշարներ:

Կարևոր է, որ անկախ ընտրված պաշարների հաշվարկման հիմունքից, այդ պաշարներին վերագրվող ծախսումները ընդգրկվեն մաշվող գումարի մեջ՝ ծախսումների և արտադրանքի ճիշտ համապատասխանեցման համար: Օրինակ, եթե ծախսային կետերը ամբողջովին չի ձևավորվել, կարող են լինել այնպիսի ծախսումներ, որոնք մասնակի կամ ամբողջությամբ չեն համարվում ապացուցված մշակված հանածոյի պաշարներ, ինչը դժվարություններ կառաջացնի ծախսումների և հանածոյի պաշարների համապատասխանեցման մեջ: Բացի այդ, հանածոյի պաշարների որոշ կատեգորիաներ կպահանջեն ապագա ծախսումներ արտադրությունը սկսելու համար:

#### Հանածոյի պաշարների գնահատում

Մաշվածության թողարկված միավորի մեթոդի կիրառման դեպքում հանածոյի պաշարների հաշվարկի լավագույն գնահատականը դա հանածոյի պաշարներն են ժամանակաշրջանի սկզբի դրությամբ: Այնուամենայնիվ, հաճախ ժամանակաշրջանի ավարտին հնարավոր է վերանայված և ավելի ճշգրիտ գնահատում: Հետևաբար, վիճելի է թե արդյոք առավել նոր տեղեկատվությունը հաշվի առնելու համար սկզբնական հանածոյի պաշարները պետք է հաշվարկվեն որպես տարվա վերջին հաշվարկված հանածոյի պաշարների մնացորդը ընթացիկ տարվա արտադրությանը գումարելով: Ինչպես, հանածոյի պաշարների գնահատումը կարող է տարբեր պատճառներով փոփոխվել՝

- (ա) Առկա հանածոյի պաշարների վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվություն (օրինակ՝ մանրամասն ինժեներական ուսումնասիրություններ)
- (բ) Հանածոյի պաշարների ֆիզիկական քանակի վրա ազդող նոր իրադարձություններ
- (գ) Տնտեսական ենթադրությունների փոփոխություններ (օրինակ՝ ապրանքների բարձր գները)

Հիմնականում ճիշտ չէ այս իրադարձությունները հաշվի առնել հետադարձ կերպով: Օրինակ՝ պաշարների գնահատման վրա ազդող հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած իրադարձությունները (այնպիսին ինչպիսին վերը նշվածի (բ) կետում) չճշգրտող իրադարձություններ են, որոնք պետք է հաշվառվեն առաջընթաց համաձայն ՖՀՄՍ-ների: «Նոր տեղեկատվության կամ զարգացումների» արդյունք հանդիսացող հանածոյի պաշարների գնահատման փոփոխությունները (այնպիսին ինչպիսին վերը նշվածի (ա) կետում) չեն համարվում սխալների ուղղում, փոխարենը դրանք հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխություններ են, որոնք պետք է կիրառվեն առաջընթաց ըստ ՖՀՄՍ-ների (ՀՀՄՍ 8 պարագրաֆներ 32-ից 38):



# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

ՀՀՄՍ 1.10(ե)

### (ե) Հիմնական միջոցներ և հանքեր (շարունակություն)

#### Մեկնաբանություն (շարունակություն)

##### Հանածոյի պաշարների հաշվարկման հիմունքները

Կազմակերպությունը, որը պատրաստում է իր ֆինանսական հաշվետվությունները ըստ ՀՀՄՍ-ների, պետք է ընտրի «Ապացուցված մշակված հանածոյի պաշարների», «Ապացուցված մշակված և չմշակված հանածոյի պաշարների» և «Ապացուցված և հավանական հանածոյի պաշարների» օգտագործման միջև: Համաձայն ՀՀՄՍ-ների այս մոտեցումներից յուրաքանչյուրն ընդունելի է: Ֆինանսական հաշվետվություններ պատրաստողները պետք է տեղյակ լինեն այն բարդությունների մասին, որոնք գոյություն ունեն հանածոյի պաշարների հաշվարկման հիմքերի և մաշվածության ենթարկված ծախսումների համապատասխանության համոզման մեջ: Ֆինանսական հաշվետվություններ օգտագործողները պետք է հասկանան, որ ՀՀՄՍ-ների համաձայն հաշվետվությունների միջև համադրելիությունը երբեմն կարող է սահմանափակ լինել, ինչպես նաև տեղյակ լինեն, մաշվածության ծախսի վրա յուրաքանչյուր մոտեցման ազդեցության մասին:

I - Ապացուցված մշակված հանածոյի պաշարներ

Համաձայն որոշ տեղական ՀՀՄՍ-ների, որոնք ներառում էին նաև արդյունահանող ոլորտների հաշվապահական հաշվառման ստանդարտներ, կազմակերպությունը պետք է օգտագործեր ապացուցված մշակված հանածոյի պաշարները, որպես իր հանածոյի պաշարների գնահատման հիմք: Հետևաբար, կազմակերպությունը կհաշվարկեր իր մաշվածությունը մինչև տվյալ ժամանակաշրջանը կրած փաստացի ծախսումների հիման վրա: Այնուամենայնիվ, հաճախ ծախսային կենտրոնը ներառում է չմշակված հանածոյի պաշարներին վերաբերող կապիտալացված ծախսումներ, ինչը խնդիր է առաջացնում մաշվածության հաշվարկման համար: Նման դեպքում, մաշվածությունը ճիշտ հաշվարկելու համար անհրաժեշտ է հանել կապիտալացված ծախսումների մեծությունը հաշվարկված մաշվածությունից:

II - Ապացուցված մշակված և չմշակված հանածոյի պաշարներ

Ըստ ՀՀՄՍ-ի Հրապարակված ծանոթագրությունների վիճելի է, որ կարելի ընտրել (ա) Ապացուցված մշակված և չմշակված հանածոյի պաշարները և արդեն կրած մաշվող ծախսումներին գումարել ապացուցված չմշակված հանածոյի պաշարների գծով գնահատված ապագա մշակման ծախսումները, կամ (բ) օգտագործել միայն ապացուցված մշակված հանածոյի պաշարները և նվազեցնել մաշվածության հաշվարկից այն հանածոյի պաշարների մշակման ծախսումները, որոնց հետագա մշակումը ի հայտ կգա ապագայում, սակայն հաճախ դժվար է բաշխել արդեն կրած ծախսումները մշակված և չմշակված հանածոյի պաշարների միջև:

Հետևաբար, ըստ ՀՀՄՍ-ների, կարելի է օգտագործել ապացուցված մշակված և չմշակված հանածոյի պաշարները որպես հանածոյի պաշարների հաշվարկման հիմք թողարկված միավորի մեթոդի կիրառման համար: Այս մոտեցման առավելությունը կայանում է նրանում, որ այն հավասարաչափ է բաշխում մաշվածությունը թողարկված միավորի գծով ծրագրի տարբեր փուլերում: Հետևաբար, կազմակերպությունը կորոշի իր ծախսային կենտրոնը (այսինքն՝ հաշվառման միավորը)՝ ներառելով իրեն տվյալ պահին պատկանող ակտիվները և որոշակի ապագա ներդրումները: Չնայած ՀՀՄՍ-ների շրջանակներում նման լայն հաշվառման միավորի օգտագործման դեպք չի հանդիպել, նման մոտեցումը արգելված չէ: Գործնականում, այն մեծապես ընդունվել է արդյունահանող կազմակերպությունների կողմից:

III - Ապացուցված և հավանական հանածոյի պաշարներ

Թողարկված միավորի մեթոդը կիրառելիս ապացուցված և հավանական հանածոյի պաշարները որպես հիմք օգտագործելու համար բերվող փաստարկները նույնն են ինչ II-ում նշվածները: ՀՀՄՍ-ի Հրապարակված ծանոթագրությունները ամփոփում են այս մոտեցման դրական փաստարկները, հետևյալ կերպ՝

Կողմնակիցները հանածոյի պաշարների հաշվարկման հիմքի համար ապացուցված և հավանական հանածոյի պաշարներն օգտագործելը հիմնավորում են մաշվածությունը հաշվարկելու համար ապացուցված չմշակված հանածոյի պաշարների ներառման և դրանց հետ կապված ապագա ծախսումների միևնույն փաստարկներով: Նրանք նշում են, որ այն ծախսային կենտրոնում, որում մշակման գործընթացը նոր է սկսվել, կապիտալացված հետախուզման, օգտակար հանածոների ձեռքբերման, հետազոտման, և գնահատման ծախսումների մեծ մասը կարող են վերաբերվել հավանական հանածոյի պաշարներին: Հաճախ, նման դեպքերում, հավանական հանածոյի պաշարների մեծ քանակություն գոյություն ունի, որոնք հնարավորություն են տալիս միայն համեմատաբար քիչ լրացուցիչ հետախուզման և/կամ գնահատման ծախսումներով վերաժել դրանց ապացուցված հանածոյի պաշարների: Նրանք վիճարկում են, որ մաշվածության հաշվարկի ժամանակ, հնարավոր է հետաձգել հավանական հանածոյի պաշարներին վերաբերող բոլոր ծախսումները, եթե միայն ապացուցված մշակված հանածոյի պաշարները կամ բոլոր ապացուցված հանածոյի պաշարները կօգտագործվեն որպես հիմք, մաշվածությունը հաշվարկելու համար: Նրանք պնդում են, որ հավանական և ապացուցված հանածոյի պաշարների օգտագործումը որպես պաշարների հաշվարկման հիմք, և մաշվածության մեջ այդ պաշարների հետախուզման և մշակման լրացուցիչ սպասվող ծախսումների ներառումը ապահովում են ավելի ճշգրիտ և արժանահավատ տեղեկատվություն:

Այս մոտեցման հիմնական թերություններն են՝

- (1) Հավանական հանածոյի պաշարների գնահատումները գրեթե միշտ տարբերվում են պաշարներից, որոնք փաստացի կմշակվեն,
- (2) Մշակումը ավարտելու ծախսումների գնահատումը հավանաբար սխալ կլինեն՝ ներգրավված երկար ժամանակահատվածի պատճառով:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ (շարունակություն)

## 2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

ՀՀՄՍ 1.10(ե)

### (ե) Հիմնական միջոցներ և հանքեր (շարունակություն)

#### (iii) Հանքի մասնաբաժնի տրամադրման պայմանագրեր - հետախուզման և գնահատման փուլից դուրս

Խուները փոխանցման հաշվառման ժամանակ՝

- ▶ Ապաճանաչում է մասնակցողին վաճառված ակտիվները,
- ▶ ճանաչում է մասնակցից ստացված կամ ստացվելիք հատուցումը, որը ներկայացնում է մասնակցի պարտավորությունը՝ ընդերքօգտագործողին մնացած մասնաբաժնի կապիտալ ծախսումների դիմաց,
- ▶ ճանաչում է օտարումից մուտքերի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությունը որպես գործարքից շահույթ կամ վնաս: Օգուտը ճանաչվում է միայն երբ հատուցման արժեքը կարող է արժանահավատորեն չափվել: Հակառակ դեպքում, ստացված հատուցումը հաշվառում է որպես տվյալ ակտիվի հաշվեկշռային արժեքի նվազում,
- ▶ Ստուգում է պահպանված մասնաբաժնի արժեքը, եթե համաձայնության պայմաններից բխում է, որ վերջինս կարող է արժեքը կրել:

Հիմնական միջոցի կամ ոչ նյութական ակտիվի օտարումից ստացվելիք հատուցումը սկզբնապես ճանաչվում է իրական արժեքով Խմբի կողմից: Այնուամենայնիվ, եթե վճարումը հետաձգվում է, ստացված հատուցումը սկզբնապես ճանաչվում է անհապաղ վճարման գնի համարժեքով: Հատուցման և անհապաղ վճարման գնի համարժեքի տարբերությունը ճանաչվում է որպես տոկոսային եկամուտ: Ցանկացած հատուցում, որը ստացվելու է դրամական միջոցներով, դիտարկվում է որպես ֆինանսական ակտիվ և հաշվառվում է ամորտիզացված արժեքով:

### Մեկնաբանություն

Ինչպես նշվել է 2.4(դ)(iii) ծանոթագրությունում, հանքի մասնաբաժնի փոխանցումը իրենից ներկայացնում է գույքի համամասնական բաժնի սեփականության ամբողջական ձեռքբերում:

#### Մասնակից (Գնորդ)

Հետևաբար Մասնակիցը պետք է՝

- ▶ ճանաչի ակտիվը, որն իրենից ներկայացնում է (մասամբ) ինքնարժեքով ձեռքբերված չնշակված մասնաբաժին ՀՀՄՍ 16-ի կամ ՀՀՄՍ 38-ի [ՀՀՄՍ 16.15, ՀՀՄՍ 38.21] համապատասխան, և
- ▶ ճանաչի ընդերքօգտագործողի՝ ապագա ներդրման ֆինանսավորման պարտավորությունը, որից մասնակիցը չի ստանա որևէ տնտեսական օգուտ:

Հանքի մասնաբաժնի փոխանցման համաձայնությունները կարող են տարբեր կերպ ձևակերպվել: Որոշները կարող են պահանջել ֆիքսված վճարների կատարում, միևնույն մյուսները ավելի ճկուն են և պահանջում են, որ օրինակ հաջորդ հինգ տարիների կապիտալ ծախսումները պետք է վճարվեն մասնակցի կողմից՝ անկախ դրանց մեծությունից:

Վերջին դեպքում, մասնակիցը պետք է պահուստ ստեղծի ըստ ՀՀՄՍ 37, քանի որ պարտավորության ժամկետը և չափը անորոշ են:

[ՀՀՄՍ 37.10]: Այնուամենայնիվ, նախորդ դեպքում հնարավոր է վիճարկել, որ պարտավորությունը համապատասխանում է ֆինանսական պարտավորությանը ըստ ՀՀՄՍ 32-ի, որը պետք է հաշվառվի համաձայն ՀՀՄՍ 39-ի [ՀՀՄՍ 32.11]:

#### Ընդերքօգտագործող (Վաճառող)

Հանքի մասնաբաժնի փոխանցման հաշվառման ժամանակ ընդերքօգտագործողը պետք է՝

- ▶ Ապաճանաչի մասնակցին վաճառված ակտիվի համամասնական բաժինը համաձայն ՀՀՄՍ 16-ի կամ ՀՀՄՍ 38-ի պահանջների [ՀՀՄՍ 16.67, ՀՀՄՍ 38.112],
- ▶ ճանաչի մասնակցից ստացված կամ ստացվելիք հատուցումը, որը ներկայացնում է մասնակցի պարտավորությունը՝ ընդերքօգտագործողի պահպանված մասնաբաժնի կապիտալ ծախսումների դիմաց,
- ▶ ճանաչում է օտարումից մուտքերի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությունը որպես գործարքից շահույթ կամ վնաս: [ՀՀՄՍ 16.71, ՀՀՄՍ 38.113]: Շահույթը կճանաչվի միայն երբ հատուցման արժեքը կարող է արժանահավատորեն չափվել: Հակառակ դեպքում՝ հաշվառում է ստացված հատուցումը, որպես տվյալ ակտիվի հաշվեկշռային արժեքի նվազում, և
- ▶ Ստուգի պահպանված մասնաբաժնի գծով արժեքը, եթե համաձայնության պայմաններից բխում է, որ վերջինս կարող է արժեքը կրել:

Ըստ ՀՀՄՍ 16-ի և ՀՀՄՍ 38-ի՝ հիմնական միջոցների կամ ոչ նյութական ակտիվի օտարումից ստացվելիք հատուցումը ընդերքօգտագործողի կողմից սկզբնապես ճանաչվում է իրական արժեքով: Այնուամենայնիվ, եթե վճարումը հետաձգվում է, ստացված հատուցումը սկզբնապես ճանաչվում է անհապաղ վճարման գնի համարժեքով: Հատուցման և անհապաղ վճարման գնի համարժեքի տարբերությունը ճանաչվում է որպես տոկոսային եկամուտ համաձայն ՀՀՄՍ 18-ի՝ արտացոլելով ստացվելիք գումարի իրական հավելումը: [ՀՀՄՍ 16.72, ՀՀՄՍ 38.116]: Այնուամենայնիվ, դրամական միջոցներով ստացվելիք հատուցման ցանկացած մաս կհամապատասխանի ֆինանսական ակտիվի սահմանմանը ըստ ՀՀՄՍ 32-ի և պետք է հաշվառվի համաձայն ՀՀՄՍ 39-ի, [ՀՀՄՍ 32.11] կամ ամորտիզացված արժեքով, կամ իրական արժեքով՝ ընդերքօգտագործողի որոշումից կախված:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

ՀՀՍՍ 1.10(ե)

### (ե) Հիմնական միջոցներ և հանքեր (շարունակություն)

#### (iv) Պահպանման և վերանորոգման հիմնական ծախսումներ

ՀՀՍՍ 16.12  
ՀՀՍՍ 16.13  
ՀՀՍՍ 16.14

Պահպանման և վերանորոգման աշխատանքների գծով ծախսումները ներառում են ակտիվների կամ դրանց մասերի փոխարինման և ստուգման ծախսումները: Եթե փոխարինվում է այն ակտիվը կամ ակտիվի մի մասը, որի մաշվածությունը առանձին էր հաշվարկվել և որը դուրս գրված է, բայց հավանական է, որ ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Խումբը՝ երկարաձգված օգտակար ծառայության ժամկետի տեսքով, ապա վերջինիս հետ կապված ծախսումները կապիտալացվում են:

Եթե ակտիվի մասը հաշվի չի առնվել որպես առանձին բաղադրիչ, ապա փոխարինված ակտիվի կամ մասի հաշվեկշռային արժեքը գնահատելու համար, որն անմիջապես դուրս է գրվում, օգտագործվում է փոխարինման արժեքը: Բոլոր այլ ամենօրյա պահպանման և վերանորոգման ծախսումները ծախսագրվում են առաջացման պահին:

### (զ) Այլ ոչ նյութական ակտիվներ

Այլ ոչ նյութական ակտիվները ներառում են համակարգչային ծրագրերը:

ՀՀՍՍ 38.24

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են սկզբնական արժեքով:

ՀՀՍՍ 38.74

Ձեռնարկատիրական գործունեության միավորումում ձեռք բերված ոչ նյութական ակտիվների արժեքն իրենց իրական արժեքն է ձեռք բերման պահին: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիա և արժեզրկումից կուտակված կորուստները, եթե առկա են: Ներստեղծված ոչ նյութական ակտիվները՝ բացառությամբ կապիտալացված մշակման ծախսումների, չեն կապիտալացվում և ծախսումներն արտացոլվում են առաջացման տարվա շահույթում կամ վնասում:

ՀՀՍՍ 38.33

ՀՀՍՍ 38.88

Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետները գնահատվում են որպես որոշակի, կամ անորոշ:

ՀՀՍՍ 38.97

ՀՀՍՍ 38.104

Որոշակի օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են այդ ժամկետի ընթացքում և գնահատվում են արժեզրկման համար ամեն անգամ, երբ առկա է արժեզրկման հայտանիշ:

Որոշակի օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվի ամորտիզացման ժամանակահատվածը և մեթոդը վերանայվում են առնվազն յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Օգտակար ծառայության ժամկետի կամ ապագա տնտեսական օգուտների սպառման սպասվելիք ձևի փոփոխությունները հաշվառվում են համապատասխանաբար ամորտիզացման ժամանակահատվածի կամ մեթոդի փոփոխությամբ և դիտարկվում են որպես հաշվապահական գնահատումների փոփոխություններ: Որոշակի օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ ծախսերի այն կատեգորիայում, որը համապատասխանում է ոչ նյութական ակտիվի գործառնություն:

ՀՀՍՍ 38.99

ՀՀՍՍ 38.107-108

ՀՀՍՍ 38.109

Անորոշ օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, սակայն ստուգվում են արժեզրկման համար ամեն տարի կամ անհատապես, կամ դրամաստեղծ միավորի մակարդակով: Անորոշ օգտակար ծառայության ժամկետի գնահատումը ամեն տարի վերանայվում է՝ որոշելու համար, արդյոք, անորոշ ժամկետը շարունակում է մնալ հիմնավորված: Եթե ոչ, ապա օգտակար ծառայության ժամկետը անորոշից փոխվում է որոշակիի առաջընթաց:

ՀՀՍՍ 38.112-113

Ոչ նյութական ակտիվի ապաճանաչումից առաջացող օգուտները կամ վնասները չափվում են որպես օտարումից մուտքերի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերություն, և ճանաչվում են շահույթում կամ վնասում ակտիվի ապաճանաչման ժամանակ:

### Հետազոտության և մշակման ծախսումներ

ՀՀՍՍ 38.54

Հետազոտության ծախսումները ծախսագրվում են տեղի ունենալուն զուգընթաց: Առանձին ծրագրի մշակման ծախսումները ճանաչվում են որպես ոչ նյութական ակտիվ, երբ Խումբը կարող է ցույց տալ հետևյալը.

- ▶ Ոչ նյութական ակտիվն այնպիսի ավարտուն վիճակի հասցնելու տեխնոլոգիական իրագործելիությունը, որ այն մատչելի լինի օգտագործման կամ վաճառքի համար,
- ▶ Ոչ նյութական ակտիվն ավարտին հասցնելու և այն օգտագործելու կամ վաճառելու իր մտադրությունը,
- ▶ Այն, թե ինչպես է ոչ նյութական ակտիվն առաջացնելու ապագա տնտեսական օգուտներ,
- ▶ Ակտիվի մշակումն ավարտելու համար անհրաժեշտ ռեսուրսների առկայությունը,
- ▶ Մշակման ընթացքում կրած ծախսումների արժանահավատ չափման հնարավորությունը:

ՀՀՍՍ 38.57

ՀՀՍՍ 38.74

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

ՀՀՄՍ 1.10(ե)

### (գ) Այլ ոչ նյութական ակտիվներ (շարունակություն)

Մշակման ծախսումները որպես ակտիվ սկզբնապես ճանաչելուց հետո կիրառվում է սկզբնական արժեքի մոտեցումը և, հետևաբար, ակտիվը հաշվառվում է սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կուտակված կորուստները: Ակտիվի ամորտիզացիան սկսվում է մշակման ավարտից հետո, երբ ակտիվը օգտագործման համար մատչելի է: Այն ամորտիզացվում է ակնկալվող ապագա օգուտների ստացման ընթացքում: Ամորտիզացիան գրանցվում է վաճառքի ինքնարժեքում: Մշակման ընթացքում ակտիվը տարեկան ստուգվում է արժեզրկման համար:

ՀՀՄՍ 36.10(ա)

### (ե) Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում

#### (i) Ակտիվներ (բացառությամբ գուղվիլի և անորոշ օգտակար ծառայության ոչ նյութական ակտիվների)

Խուճրդ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին գնահատում է, արդյոք, գոյություն ունեն ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) արժեզրկման հայտանիշներ: Եթե գոյություն ունեն նման հայտանիշներ, կամ երբ ակտիվի տարեկան արժեզրկման ստուգումը անհրաժեշտ է, Խուճրդ հաշվարկում է ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը: Փոխհատուցվող գումարն ակտիվի կամ դրամաստեղծ միավորի իրական արժեքից հանած վաճառքի ծախսումների և օգտագործման արժեքի առավելագույնն է, և որոշվում է առանձին ակտիվի համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ակտիվը չի ստեղծում դրամական ներհոսքեր, որոնք մեծապես անկախ են այլ ակտիվների կամ ակտիվների Խմբի ստեղծածից, որի դեպքում ակտիվը ստուգվում է որպես ավելի մեծ դրամաստեղծ միավորի մաս: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է վերջինիս փոխհատուցվող գումարը, ապա ակտիվը/դրամաստեղծ միավորը համարվում է արժեզրկված և նվազեցվում է մինչև իր փոխհատուցվող գումարը: Օգտագործման արժեքը հաշվարկելիս՝ ակնկալվող ապագա դրամական հոսքերը գեղջկում են իրենց ներկա արժեքին՝ օգտագործելով մինչև հարկումը գեղջման դրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և ակտիվին/դրամաստեղծ միավորին հատուկ ռիսկերը: Իրական արժեքը՝ հանած վաճառքի համար ծախսումները որոշելիս՝ հաշվի են առնվում ամենավերջին շուկայական գործարքները, եթե այդպիսիք առկա են: Եթե նման գործարքներ չեն կարող որոշվել՝ օգտագործվում է համապատասխան գնահատման մոդելը: Այս հաշվարկները հիմնավորվում են գնահատման բազմապատկիչներով, իրապարակայնորեն վաճառվող դուստր կազմակերպությունների ցուցակված բաժնետոմսերի արժեքով և իրական արժեքի այլ ցուցանիշներով:

ՀՀՄՍ 36.9

ՀՀՄՍ 36.10

ՀՀՄՍ 36.18

ՀՀՄՍ 36.22

ՀՀՄՍ 36.66

ՀՀՄՍ 36.59, 60

ՀՀՄՍ 36.27

ՀՀՄՍ 36.33

ՀՀՄՍ 36.35

Խուճրդ արժեզրկման հաշվարկներում հիմնվում է մանրամասն բյուջեների և կանխատեսումների վրա, որոնք պատրաստվում են առանձին՝ Խմբի ակտիվները պարունակող յուրաքանչյուր դրամաստեղծ միավորի համար: Այս բյուջեները և կանխատեսումները հիմնականում հինգ տարվա կտրվածքով են պատրաստվում: Ավելի երկար ժամանակահատվածների համար հաշվարկվում է երկարաժամկետ աճի գործակիցը և կիրառվում հինգերորդ տարվան հաջորդող տարիների ապագա դրամական հոսքերի կանխատեսման համար:

ՀՀՄՍ 36.60

Շարունակական գործունեությունների արժեզրկման վնասները՝ ներառյալ պաշարների արժեզրկումը, ճանաչվում են շահույթի կամ վնասի ծախսերի այն կատեգորիաներում, որոնք համապատասխանում են արժեզրկված ակտիվի գործառնություն, բացառությամբ մինչև այդ վերագնահատված գույքի, որի վերագնահատումը ճանաչվել էր այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Այս դեպքում արժեզրկումը ևս ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում՝ նախորդ վերագնահատման չափով:

Ակտիվները՝ բացառությամբ գուղվիլի, գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին նախկինում ճանաչված արժեզրկումից կորուստների գոյություն չունենալու կամ նվազման հայտանիշները պարզելու համար: Եթե նման հայտանիշներ գոյություն ունեն, ապա Խուճրդ որոշում է ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը: Նախկինում ճանաչված արժեզրկման վնասը հակադարձվում է միայն, եթե ակտիվի փոխհատուցվող գումարի որոշման ենթադրությունները փոխվել են վերջին արժեզրկումից կորուստի ճանաչումից հետո: Հակադարձումը սահմանափակված է այնպես, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չի գերազանցում ոչ նրա փոխհատուցվող գումարը, ոչ էլ այն հաշվեկշռային արժեքը՝ զուտ կուտակված մաշվածությունից, եթե նախորդ տարիներում արժեզրկումից վնասներ չճանաչվելին: Նման հակադարձումը ճանաչվում է շահույթում կամ վնասում, եթե ակտիվը չի հաշվառվում վերագնահատված արժեքով, որի դեպքում հակադարձումը դիտարկվում է որպես վերագնահատման աճ և հաշվառվում այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

ՀՀՄՍ 36.110

ՀՀՄՍ 36.114

ՀՀՄՍ 36.117

ՀՀՄՍ 36.119

#### (ii) Գուղվիլ

Գուղվիլը ստուգվում է արժեզրկման համար ամեն տարի (դեկտեմբերի 31-ի դրությամբ) և երբ իրավիճակը վկայում է հաշվեկշռային արժեքի արժեզրկման մասին:

ՀՀՄՍ 36.10(բ)

ՀՀՄՍ 36.90

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ (շարունակություն)

## 2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

ՀՀՄՍ 1.10(ե)

### (Է) Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում (շարունակություն)

Գուդվիլի արժեզրկումը որոշվում է՝ գուդվիլին վերաբերող յուրաքանչյուր դրամաստեղծ միավորի (կամ դրամաստեղծ միավորների խմբի) փոխհատուցվող գումարը գնահատելով: Եթե դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ճանաչվում է արժեզրկումից կրուսատ: Գուդվիլին վերաբերող արժեզրկումից կրուսատները չեն կարող հետագայում հակադարձվել:

ՀՀՄՍ 36.124

### (iii) Անորոշ օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվներ

ՀՀՄՍ 36.10(ա)

Անորոշ օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվները ստուգվում են արժեզրկման համար ամեն տարի դեկտեմբերի 31-ին կամ անհատապես կամ դրամաստեղծ միավորի մակարդակով, ըստ համապատասխանության, և երբ իրավիճակը վկայում է, որ հաշվեկշռային արժեքը կարող արժեզրկված լինել:

## Մեկնաբանություն

ՀՀՄՍ 36.96 թույլ է տալիս, որպեսզի գուդվիլին վերաբերող դրամաստեղծ միավորի արժեզրկման տարեկան ստուգումը իրականացվի տարվա ընթացքում ցանկացած ժամանակ, սակայն այն պետք է իրականացվի յուրաքանչյուր տարվա ընթացքում միևնույն ժամանակ: Այնուամենայնիվ, եթե դրամաստեղծ միավորին վերագրվող գուդվիլի ամբողջ կամ որևէ մասը է բերվել ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում ընթացիկ տարում, ապա այդ միավորը պետք է ստուգվի արժեզրկման համար մինչև ընթացիկ տարվա ավարտը:

Նույն կանոնով են ստուգվում անորոշ օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվները: Տարբեր դրամաստեղծ միավորներ և ոչ նյութական ակտիվներ կարող են ստուգվել տարբեր ժամանակաշրջաններում:

### Դրամաստեղծ միավորների մակարդակը

ՀՀՄՍ 36-ը նկարագրում է արժեզրկման մասին վկայող նվազագույն հայտանիշները: Այնուամենայնիվ, արդյունահանման ոլորտում գործող կազմակերպությունները կարող են հաշվի առնել նաև հետևյալը՝

- ▶ Ապրանքների գների նվազումը կամ արտադրության ծախսումների աճը
- ▶ Կառավարության գործողությունները, օրինակ՝ շրջակա միջավայրի վերաբերյալ նոր կանոնակարգերը, գների վերահսկման իրականացումը և հարկերի բարձրացումը
- ▶ Խոշոր գործառնական խնդիրները կամ պատահարները
- ▶ Հանաձոյի պաշարների գնահատման նշանակալի կրճատումը
- ▶ Հանաձոյի պաշարների արտադրության ակնկալվող ժամանակաշրջանի ավելացումը
- ▶ Հանքի մշակման և կառուցման փուլում ծախսումների նշանակալի հավելաճը

ՀՀՄՍ 36-ը սահմանում է դրամաստեղծ միավորը որպես որոշյալ ակտիվների փոքրագույն խումբ, որը ստեղծում է այլ ակտիվների կամ ակտիվների խմբի դրամական միջոցների ներհոսքից առավելապես անկախ դրամական հոսքեր:

Համապատասխան դրամաստեղծ միավորները որոշելիս՝ կազմակերպությունը պետք է հաշվի առնի հետևյալ խնդիրները, մասնավորապես՝

- ▶ Արդյո՞ք գոյություն ունի գործող շուկա միջանկյալ արտադրանքների համար, ինչպիսիք են հանքաքարերը կամ խտանյութերը,
- ▶ Արդյո՞ք գոյություն ունեն վերամշակման ակտիվների արտաքին օգտագործողներ,
- ▶ Արդյո՞ք գոյություն ունեն հանքեր, որոնք գործարկվում են որպես մեկ ամբողջություն՝ շնայած ընդհանուր ենթակառուցվածքներին,
- ▶ Արդյո՞ք գոյություն ունեն առանձին հանքեր, որոնք գործարկվում են պորտֆելի հիման վրա:

Արդյունահանող կազմակերպություններից շատերի համար, հանքերի արդյունահանման և արտադրության հաջող փուլերը հաճախ համարվում են որպես մեկ դրամաստեղծ միավոր, քանի որ հնարավոր չէ տեղաբաշխել զուտ դրամական ներհոսքերը գործընթացի առանձին փուլերի միջև:

Արժեզրկման հաշվարկը իրականացվում է տնտեսապես վերականգնվող հանաձոյների պաշարների հիման վրա:

### Ապագա արտադրության գները

Մենք սովորաբար ակնկալում ենք, որ կազմակերպության ղեկավարությունը կօգտագործի շուկայի դիտարկելի գները, քանի որ դիտարկելի շուկայի գները ավելի հավաստի են: Արժեզրկման հաշվարկման համար օգտագործվող մուտքային տվյալները և երկարաժամկետ գները պետք է լինեն հետևողական՝ ներդրումների գնահատման համար օգտագործվողների հետ և, հավանաբար, կապված կլինեն ներքին երկարաժամկետ պլանավորման ենթադրությունների հետ:

### Արտարժույթով ապագա դրամական հոսքերը

Ըստ ՀՀՄՍ 36-ի դրամաստեղծ միավորի օգտագործման արժեքը հաշվարկելիս՝ ապագա դրամական հոսքերը հաշվարկվում են այն արժույթով, որով դրանք պետք է առաջանան, և այնուհետև գեղջվեն՝ օգտագործելով այդ արժույթին համապատասխան գեղջման դրույքը: Այնուհետև, կազմակերպությունը այդ դրամական հոսքերի ներկա արժեքը վերահաշվարկում է՝ կիրառելով օգտագործման արժեքի հաշվարկի ամսաթվի սփոթ փոխարժեքը:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

ՀՀՄՍ 1.10(ե)

### (ե) Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում (շարունակություն)

#### Մեկնաբանություն (շարունակություն)

##### Ընդհանուր ենթակառուցվածքներ

Երբ մի քանի հանքերի ենթակառուցվածքները նույն են (օրինակ՝ խողովակաշարերը, երկաթգիծը, նավահանգիստը կամ զտման և հալեցման արտադրամասերը) հանքերի և ենթակառուցվածքների միևնույն դրամաստեղծ միավորի մեջ ներառման խնդիր է առաջանում: Հանքերի և ենթակառուցվածքների միասին դիտարկումը տեղին չէ հետևյալ դեպքերում՝

- ▶ Եթե ընդհանուր ենթակառուցվածքը համեմատաբար նշանակալի չէ, ճիշտ չի լինի տարբեր հանքերը դիտարկել որպես միևնույն դրամաստեղծ միավորի մաս,
- ▶ Եթե հանքերը ի վիճակի են վաճառել իրենց արտադրանքները՝ առանց ընդհանուր ենթակառուցվածքի օգտագործման, ապա դա ևս ցույց կտա, որ դրանք չեն կարող լինել միևնույն դրամաստեղծ միավորի մաս,
- ▶ Եթե ընդհանուր ենթակառուցվածքը դասակարգվում է որպես կորպորատիվ ակտիվ, որը ՀՀՄՍ 36-ում սահմանված է որպես գույքի չտարբեր ակտիվներ, որոնք նպաստում են դիտարկվող դրամաստեղծ միավորի և այլ դրամաստեղծ միավորների ապագա դրամական հոսքերին: Այդ դեպքում կազմակերպությունը պետք է կիրառի կորպորատիվ ակտիվների վերաբերյալ ՀՀՄՍ 36-ի պահանջները:

Այնուամենայնիվ, եթե վերը նշված պայմանները կիրառելի չեն, ապա հանքը և ընդհանուր ենթակառուցվածքը կարող են դիտարկվել որպես մեկ դրամաստեղծ միավոր:

##### Արժեզրկումից կորստի հակադարձումը – հետախուզման և գնահատման ակտիվներ

Հետախուզման և գնահատման ակտիվների արժեզրկումից ցանկացած կորուստ, որը ճանաչվել է համաձայն ՖՀՄՍ-ների, պետք է հակադարձվի, երբ ՀՀՄՍ 36-ի 109-ից 123 պարագրաֆներում նշված պահանջները բավարարվում են: Նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված գույքի չտարբեր ակտիվի գծով արժեզրկումից կորուստը կհակադարձվի այն և միայն այն դեպքում, երբ վերջին արժեզրկումից հետո ակտիվի փոխհատուցվող գումարի հաշվարկման ենթադրությունները փոփոխվել են: Տվյալ դեպքում ակտիվի հաշվեկշռային արժեքը կաճի մինչև վերջինիս փոխհատուցվող գումարը: Այնուամենայնիվ, նման հակադարձումը չպետք է գերազանցի ակտիվի այն հաշվեկշռային արժեքը (հանած մաշվածությունը կամ ամորտիզացիան), որը որոշված է կլինեք արժեզրկումից վնասի բացակայության դեպքում: Որոշ իրավիճակներում, երբ կազմակերպությունը ճանաչում է հետախուզման և գնահատման ակտիվի արժեզրկումը, այն նաև պետք է որոշի ապաճանաչի ակտիվը թե՛ ոչ, քանի որ ապագա տնտեսական օգուտները այլևս հավանական չեն: Եթե կազմակերպությունը եզրակացնում է, որ արտադրությունը տեխնիկապես իրագործելի և տնտեսապես կենսունակ չէ, ապա համապատասխան հետախուզման և գնահատման ակտիվները պետք է ստուգվեն արժեզրկման համար: Նման վկայությունների վրա հիմնվելով՝ կազմակերպությունը կարող է նաև եզրակացնել, որ ապագա տնտեսական օգուտները այլևս հավանական չեն և տարածքը պետք է թողնվի:

Չնայած ՖՀՄՍ-ները հետախուզման և գնահատման ակտիվների ապաճանաչումը հատուկ չեն պարզաբանում, կազմակերպությունը պետք է ապաճանաչի հետախուզման և գնահատման ակտիվները, որովհետև՝ (1) ակտիվը այլևս հետախուզման և գնահատման փուլում չէ և, հետևաբար, դուրս է մտնում ՖՀՄՍ 6-ի գործողության ոլորտից, և (2) ակտիվների այլ ստանդարտները ինչպիսիք են ՀՀՄՍ 16-ը և ՀՀՄՍ 38-ը, կպահանջեն նման իրավիճակում ակտիվների ապաճանաչում: Ապաճանաչումից հետո հետախուզման և գնահատման ակտիվի արժեքը, որն ապաճանաչվել է, չի կարող ո՛չ վերաճանաչվել որպես նոր հետախուզման և գնահատման ակտիվի մաս, ո՛չ էլ հակադարձվել՝ ի տարբերություն հետախուզման և գնահատման ակտիվի արժեզրկմանը, որը կարող է հակադարձվել (տե՛ս վերոնշյալը):

### (ը) Ֆինանսական գործիքներ՝ սկզբնական ճանաչում և հետագա չափում

#### (i) Ֆինանսական ակտիվներ

##### Սկզբնական ճանաչումը և չափումը

ՖՀՄՍ 7.21

Համաձայն ՀՀՄՍ 39-ի դրույթների՝ ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, փոխառություններ և դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ կամ, անհրաժեշտության դեպքում, արդյունավետ հեջում որպես հեջավորման գործիքներ նախատեսված ածանցյալ գործիքներ: Խուճրդը որոշում է ֆինանսական ակտիվի դասը սկզբնական ճանաչման ժամանակ:

ՀՀՄՍ 39.9

ՀՀՄՍ 39.43

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով գումարած՝ գործարքի ծախսումները, բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները:

ՀՀՄՍ 39.38

Այն ֆինանսական ակտիվների գնումը կամ վաճառքը, որը պահանջում է ակտիվների առաքում շուկա (կանոնավոր վաճառքի վայր) օրենքով կամ պայմանագրով սահմանված ժամանակահատվածում, ճանաչվում է առևտրի ամսաթվին, այսինքն՝ այն օրը, երբ Խուճրդը պարտավորվում է գնել կամ վաճառել ակտիվը:

Խմբի ֆինանսական ակտիվները ներառում են դրամական միջոցները և կարճաժամկետ ավանդները, առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, փոխառությունները և այլ դեբիտորական պարտքերը, գնանշվող և չգնանշվող ֆինանսական գործիքները և ածանցյալ ֆինանսական գործիքները:



# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

ՀՀՄՍ 1.10(ե)

### ը) Ֆինանսական գործիքներ՝ սկզբնական ճանաչում և հետագա չափում (շարունակություն)

#### Հետագա չափումը

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը կախված է ֆինանսական ակտիվի դասից.

#### **Ֆինանսական ակտիվներ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով**

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները ներառում են առևտրական նպատակով պահվող ֆինանսական ակտիվները և ֆինանսական ակտիվներ, որոնք սկզբնապես նախատեսվել են որպես շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող: Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես առևտրական նպատակներով պահվող, եթե դրանք ձեռք են բերվել մոտ ժամանակում վաճառելու կամ հետ գնվելու նպատակով: Ածանցյալ գործիքները, ներառյալ առանձնացված պարունակվող ածանցյալ գործիքները, և դասակարգվում են որպես առևտրական նպատակներով պահվող, եթե դրանք նախատեսված չեն որպես արդյունավետ հեջավորման գործիքներ, ինչպես նկարագրված է ՀՀՄՍ 39-ում: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ հաշվառվում են իրական արժեքով, իսկ իրական արժեքի զուտ փոփոխությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ֆինանսական ծախս կամ ֆինանսական եկամուտ (ըստ համապատասխանության):

ՀՀՄՍ 39.9  
ՀՀՄՍ 39.46

ՀՀՄՍ 39.40-14  
ՀՀՄՍ 39.55(ա)

Սկզբնական ճանաչման ժամանակ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող նախատեսված ֆինանսական ակտիվները նախատեսվում են սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ՝ միայն եթե ՀՀՄՍ 39 ստանդարտի չափանիշները բավարարված են: Խումբը չի նախատեսել որևէ ֆինանսական ակտիվ որպես իրական արժեքով չափվող շահույթի կամ վնասի միջոցով:

ՀՀՄՍ 39.50-50<sup>7</sup>

Խումբը գնահատում է առևտրական նպատակով պահվող ֆինանսական ակտիվները, բացառությամբ ածանցյալ գործիքների, որոշելու՝ արդյոք մոտ ապագայում վաճառելու նպատակը դեռ տեղի է: Երբ հազվադեպ դեպքերում Խումբը հնարավորություն չի ունենում վաճառել այդ ֆինանսական ակտիվները ոչ ակտիվ շուկայի պատճառով և ղեկավարության մտադրությունը դրանք վաճառելու ուղղությամբ տեսանելի ապագայում էապես փոխվում է, Խումբը կարող է վերադասակարգել այդ ֆինանսական ակտիվները: Վերադասակարգումը փոխառությունների կամ դեբիտորական պարտքերի, վաճառքի համար մատչելի կամ մինչև մարման ժամկետը պահվող ակտիվների կախված է ակտիվի բնույթից: Գնահատումը ազդեցություն չունի այն ֆինանսական ակտիվների վրա, որոնք սկզբնապես կիրառելով իրական արժեքի հնարավորությունը նախատեսվել են որպես ֆինանսական ակտիվ՝ շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող: Տվյալ գործիքները չեն կարող վերադասակարգվել սկզբնական ճանաչումից հետո:

ՀՀՄՍ 39.10  
ՀՀՄՍ 39.11

Հիմնական պայմանագրերում ներառված պարունակվող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես առանձին ածանցյալ գործիքներ և գրանցվում են իրական արժեքով, եթե դրանք տնտեսական բնութագրերը և ռիսկերը սերտորեն կապված չեն հիմնական պայմանագրերի բնութագրերին և ռիսկերին և հիմնական պայմանագրերը չեն պահվում առևտրական նպատակներով կամ չեն նախատեսվել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող գործիքներ: Այս պարունակվող ածանցյալ գործիքները չափվում են իրական արժեքով, իսկ իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Գնահատման վերանայում տեղի է ունենում միայն, եթե առկա է փոփոխություն պայմանագրի պայմաններում, որն էապես փոխում է դրամական հոսքերը:

#### **Փոխառություններ և դեբիտորական պարտքեր**

Փոխառությունները և դեբիտորական պարտքերը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են ֆիքսված կամ որոշակի վճարումներով, որոնք չեն գնանշվում ակտիվ շուկայում: Սկզբնական չափումից հետո այդպիսի ֆինանսական ակտիվները հետագայում չափվում են անորոշագացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը՝ հանելով արժեզրկումը: Անորոշագացված արժեքը հաշվարկվում է՝ հաշվի առնելով ձեռքբերման ժամանակ ցանկացած զեղչ կամ հավելված, և վճարներ կամ ծախսեր, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույթի մաս: Արդյունավետ տոկոսադրույթով հաշվարկված անորոշագացման ներառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ֆինանսական եկամուտներում: Արժեզրկումից առաջացած կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ փոխառությունների գծով ֆինանսական ծախսերում, իսկ դեբիտորական պարտքերի գծով՝ վաճառքի ինքնարժեքում կամ այլ գործառնական ծախսերում:

ՀՀՄՍ 39.9  
ՀՀՄՍ 39.46(ա)  
ՀՀՄՍ 39.56

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ (շարունակություն)

## 2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

ՀՀՄՍ 1.10(ե)

### ը) Ֆինանսական գործիքներ՝ սկզբնական ճանաչում և հետագա չափում (շարունակություն)

#### Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվը (կամ, եթե կիրառելի է ֆինանսական ակտիվի մասը կամ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ.

ՖՀՄՍ 7.21

- ▶ ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու իրավունքի ժամկետն ավարտված է,
- ▶ խումբը փոխանցել է ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքը կամ փոխանցման համաձայնագրի համաձայն պարտավորվում է վճարել ստացված բոլոր դրամական միջոցները առանց նշանակալի ուշացման երրորդ կողմին, և, կամ (ա) Խումբը փոխանցել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) Խումբը ո՛չ փոխանցել և ո՛չ էլ պահպանում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողության իրավունքը:

ՀՀՄՍ 39.17(ա)  
ՀՀՄՍ 39.18(բ)

Այն դեպքում, երբ Խումբը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը կամ կնքել է փոխանցման համաձայնագիր, ապա Խումբը գնահատում է՝ պահպանել է, արդյոք, և որքանով է պահպանել սեփականության հետ կապված ռիսկերը և օգուտները: Երբ Խումբը ոչ փոխանցել, ու ոչ էլ պահպանում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, և չի փոխանցել ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ակտիվը հաշվառվում է Խմբի շարունակվող ներգրավվածության չափով: Տվյալ դեպքում Խումբը նաև ճանաչում է դրան համապատասխան պարտավորություն: Փոխանցված ակտիվը և համապատասխան պարտավորությունը չափվում են Խմբի մոտ պահպանվող իրավունքները և պարտականությունները արտահայտող հիմունքի վրա:

ՀՀՄՍ 39.20(ա)  
ՀՀՄՍ 39.20(գ)  
ՀՀՄՍ 39.18(բ)

Երբ փոխանցված ակտիվում շարունակվող ներգրավվածությունը ձեռք է բերում երաշխիքի ձև, այն չափվում է ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեքից և Խմբից հնարավոր պահանջվելիք առավելագույն փոխհատուցման գումարներից նվազագույնով:

ՀՀՄՍ 39.30(ա)

#### Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Խումբը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ իրականացնում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի՝ արժեզրկված լինելու անկողմնակալ վկայության գնահատում: Ֆինանսական ակտիվը կամ ակտիվների խումբը համարվում են արժեզրկված այն և միայն այն դեպքում, եթե կա արժեզրկման անկողմնակալ վկայություն, որպես ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձությունների («կորստի իրադարձություն») արդյունք, և երբ այդ իրադարձությունը կամ իրադարձություններն ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվից կամ ակտիվների խմբից ակնկալվող ապագա դրամական հոսքերի վրա, որոնք կարելի է արժանահավատորեն չափել: Արժեզրկումից առաջացած կորստի անկողմնակալ վկայությունը կարող է ներառել դեբիտորի կամ դեբիտորների խմբի զգալի ֆինանսական դժվարությունները, տոկոսագումարների և մայր գումարների վճարման պարտավորությունների չվճարումը կամ վճարման ուշացումը, այն հավանականությունը, որ տեղի կունենա գործընկերոջ սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմավորում, ինչպես նաև դիտարկվող տեղեկատվություն ակնկալվող ապագա դրամական հոսքերի չափերի նվազման վերաբերյալ, օրինակ՝ մարման ժամկետի փոփոխություն կամ տնտեսական պայմանների փոփոխություն, որոնք կապված են ակտիվների արժեզրկման հետ:

ՀՀՄՍ 39.58  
ՀՀՄՍ 39.59  
ՖՀՄՍ 7.Բ5(գ)

#### Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների համար, Խումբն ի սկզբանե գնահատում է արժեզրկված լինելու անկողմնակալ վկայությունը անհատապես՝ նշանակալի ակտիվների համար, կամ խմբային՝ բոլոր ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես նշանակալի չեն համարվում: Եթե Խումբը որոշում է, որ անհատապես գնահատված ֆինանսական ակտիվի համար չկա արժեզրկման անկողմնակալ վկայություն, անկախ այն հանգամանքից, նշանակալի է այն, թե ոչ, ապա այդ ակտիվը ներառում է համանման պարտքային ռիսկերի բնութագրիչներ ունեցող ֆինանսական ակտիվների խմբում և գնահատում է դրանց արժեզրկված լինելը խմբային հիմունքով: Ակտիվները, որոնց արժեզրկված լինելը գնահատվում է անհատական հիմունքով և որոնց նկատմամբ ճանաչվում են արժեզրկումից կորուստներ, չափտը է գնահատվեն խմբային հիմունքով:

ՀՀՄՍ 39.64

Արժեզրկված լինելու անկողմնակալ վկայության առկայության դեպքում՝ արժեզրկումից կորուստը ակտիվի հաշվեկշռային արժեքի և դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի (բացառությամբ՝ պարտքի հետ կապված դեռևս չկրած ապագա վնասները) ներկա արժեքի տարբերությունն է: Ակնկալվող ապագա դրամական հոսքերի ներկա արժեքը գեղչվում է ֆինանսական ակտիվների սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Եթե վարկն ունի փոփոխական տոկոսադրույք, ցանկացած արժեզրկման կորուստ գնահատելու համար որպես գեղչման դրույք օգտագործվում է ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքը:

ՀՀՄՍ 39.63



# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

ՀՀՄՍ 1.10(ե)

### ը) Ֆինանսական գործիքներ՝ սկզբնական ճանաչում և հետագա չափում (շարունակություն)

Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկման պահուստի հաշվի միջոցով, իսկ արժեզրկումից կորուստն արտացոլվում է շահույթում կամ վնասում: Տոկոսային եկամուտները շարունակվում են հաշվեզրկվել նվազեցված հաշվեկշռային արժեքից՝ օգտագործելով արժեզրկման կորուստը հաշվելու նպատակով ապագա դրամական հոսքերը գեղջելու տոկոսադրույքը: Տոկոսային եկամուտները արտացոլվում են շահույթում կամ վնասում որպես ֆինանսական եկամուտ: Վարկերը համապատասխան պահուստների հետ միասին դուրս են գրվում, եթե ապագայում չկա վարկը հավաքագրելու իրատեսական հեռանկար, և երբ բոլոր գրավներն օգտագործվել են կամ փոխանցվել էմբիոն: Եթե հաջորդող տարիներին գնահատված արժեզրկման կորուստն ավելանում կամ նվազում է արժեզրկման ճանաչումից հետո կատարված իրադարձությունների պատճառով, նախկինում ճանաչված արժեզրկման կորուստն ավելացվում կամ նվազեցվում է՝ ճշգրտելով պահուստի գումարը: Եթե դուրսգրումը հետագայում վերականգնվում է, ապա վերականգնված գումարը կրեդիտագրվում է շահույթի կամ վնասի ֆինանսական ծախսերում:

ՀՀՄՍ 39.40-84  
ՖՀՄՍ 7.16  
ՖՀՄՍ  
7.Բ5(դ)(i)  
ՖՀՄՍ  
7.Բ5(դ)(ii)  
ՀՀՄՍ 39.65  
ՀՀՄՍ 39.40-93

### (ii) Ֆինանսական պարտավորություններ

#### Սկզբնական ճանաչում և չափումը

ՀՀՄՍ 39-ի գործողության ոլորտում գտնվող ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, վարկեր և փոխառություններ կամ ածանցյալ գործիքներ՝ նախատեսված որպես հեջավորման գործիք արդյունավետ հեջում, ըստ անհրաժեշտության: Խումբը սահմանում է ֆինանսական պարտավորության դասը սկզբնական ճանաչման ժամանակ:

ՖՀՄՍ 7.21  
ՀՀՄՍ 39.43  
ՀՀՄՍ 39.56

Բոլոր ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ վարկերի ու փոխառությունների պարագայում՝ նվազեցված ուղղակի վերագրելի գործարքի ծախսումներով:

Խմբի ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, բանկային օվերդրաֆտները, վարկերը և փոխառությունները, ֆինանսական երաշխավորության պայմանագրերը և ածանցյալ ֆինանսական գործիքները:

#### Հետագա չափումը

Ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը կախված է դասակարգումից:

#### Ֆինանսական պարտավորություններ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրական նպատակներով պահվող ֆինանսական պարտավորությունները և այն ֆինանսական պարտավորությունները, որոնք սկզբնական ճանաչման ժամանակ նախատեսված են որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով:

ՀՀՄՍ 39.9  
ՀՀՄՍ 39.47(ա)  
ՀՀՄՍ 39.55(ա)

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես առևտրական նպատակներով պահվող, եթե դրանք ձեռք են բերվել մոտ ապագայում վաճառելու նպատակով: Այս դասը ներառում է Խմբի կողմից իրագործվող ֆինանսական ածանցյալ գործիքները, որոնք նախատեսված չեն որպես հեջավորման գործիքներ հեջավորման հարաբերություններում, ինչպես սահմանված է ՀՀՄՍ 39 ստանդարտով: Առանձնացված պարունակվող ածանցյալ գործիքները նույնպես դասակարգված են որպես առևտրական նպատակներով պահվող, եթե դրանք չեն նախատեսվել որպես արդյունավետ հեջավորման գործիքներ:

Առևտրական նպատակներով պահվող պարտավորությունների գծով օգուտները և վնասները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

ՀՀՄՍ 39.47

Սկզբնական ճանաչման ժամանակ իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով նախատեսված ֆինանսական պարտավորությունները նախատեսվում են սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ և, եթե ՀՀՄՍ 39 ստանդարտի չափանիշները բավարարված են: Խումբը չի նախատեսել որևէ ֆինանսական պարտավորություն որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով:

#### Տոկոսային վարկեր և փոխառություններ

Սկզբնական ճանաչումից հետո տոկոսային վարկերն ու փոխառությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Օգուտները և վնասները ճանաչվում են շահույթում կամ վնասում, երբ պարտավորություններն ապաճանաչվում են, ինչպես նաև արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի միջոցով ամորտիզացնելիս:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ (շարունակություն)

## 2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

ՀՀՄՍ 1.10(ե)

### ը) Ֆինանսական գործիքներ՝ սկզբնական ճանաչում և հետագա չափում (շարունակություն)

Ամորտիզացված արժեքը հաշվարկվում է՝ հաշվի առնելով ձեռքբերման ժամանակ ցանկացած գեղչ կամ հավելվածար և վճարներ կամ ծախսեր, որոնք հանդիսանում են արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մաս: Արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված ամորտիզացիան ներառվում է շահույթի կամ վնասի ֆինանսական ծախսեր հոդվածում:

#### Ապաճանաչում

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ այն մարվում է, չեղյալ է համարվում կամ լրացել է դրա՝

ՀՀՄՍ 39.39

ՀՀՄՍ 39.41

ՀՀՄՍ 39.40

Նույն փոխառուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորության փոխարինումը այլ ֆինանսական պարտավորությամբ (որի պայմանները նշանակալիորեն տարբերվում են նախորդից, կամ տեղի է ունեցել գործող պարտավորության պայմանների նշանակալի փոփոխություն) հանգեցնում է հին պարտավորության ապաճանաչմանը և Նոր պարտավորության ճանաչմանը: Համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը ձևակերպվում է շահույթում կամ վնասում:

#### (iii) Ֆինանսական գործիքների հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են և զուտ գումարը ներկայացվում է համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում այն և միայն այն դեպքում, երբ գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավական հիմք, և գոյություն ունի դրանք զուտ հիմունքով մարելու կամ միաժամանակ ակտիվները իրացնելու և պարտավորությունները մարելու մտադրություն:

ՀՀՄՍ 32.42

#### (iv) Ֆինանսական գործիքների իրական արժեքը

Ակտիվ շուկայում վաճառվող ֆինանսական գործիքների իրական արժեքը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին որոշվում է շուկայական գների կամ դիվերների գնային առաջարկների համաձայն (գնման գինը երկար դիրքի համար և վաճառքի գինը կարճ դիրքի համար)՝ առանց հաշվի առնելու գործարքի ծախսումները:

ՀՀՄՍ 39.48Ա  
ՖՀՄՍ 7.27

Ակտիվ շուկայում չվաճառվող ֆինանսական գործիքների իրական արժեքը որոշվում է համապատասխան գնահատման մեթոդների կիրառման միջոցով: Նման մեթոդները կարող են ներառել՝ վերջերս տեղի ունեցած «անկախ կողմերի միջև» շուկայական գործարքների գների օգտագործումը, նմանատիպ մեկ այլ գործիքի ընթացիկ իրական արժեքին հղումը, գեղչված դրամական հոսքերի վերլուծությունը կամ գնահատման այլ մեթոդներ:

Ֆինանսական գործիքների իրական արժեքների վերլուծությունը և դրանց չափման այլ մանրամասներ ներկայացված են Ծանոթագրություն 27-ում:

#### (v) Ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգումը

ՀՀՄՍ 1.60

Այն ածանցյալ գործիքները, որոնք նախատեսված չեն որպես արդյունավետ հեջավորման գործիքներ, դասակարգվում են որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ, կամ ընթացիկ և ոչ ընթացիկ մասերի բաժանված, հիմնվելով փաստերի և իրադարձությունների գնահատումների վրա (այսինքն՝ համապատասխան պայմանագրային դրամական հոսքերը):

- ▶ Եթե խումբը ածանցյալ ֆինանսական գործիքը կիրառում է որպես տնտեսական հեջ (և չի իրականացնում հեջի հաշվառում) հաշվետու ամսաթվից հետո ավելի քան 12 ամսով, ածանցյալ գործիքը դասակարգվում է որպես ոչ ընթացիկ (կամ ընթացիկ և ոչ ընթացիկ մասերի բաժանված)՝ համապատասխան կապակցված ցուցանիշի դասակարգմանը:
- ▶ Հիմնական պայմանագրի հետ սերտորեն չկապված պարունակվող ածանցյալ գործիքները դասակարգվում են համապատասխան հիմնական պայմանագրի դրամական հոսքերին:
- ▶ Արդյունավետ հեջավորման գործիքներ հանդիսացող ածանցյալ գործիքները դասակարգվում են համապատասխան հեջավորման առարկայի դասակարգմանը: Ածանցյալ գործիքը բաժանվում է ընթացիկ և ոչ ընթացիկ մասերի միայն արժանահավատ տեղաբաշխման դեպքում:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

ՀՀՄՍ 1.10(ե)

### ը) Ֆինանսական գործիքներ՝ սկզբնական ճանաչում և հետագա չափում (շարունակություն)

#### (vi) Դրամական միջոցներ և կարճաժամկետ ավանդներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներառում են դրամական միջոցները բանկում և դրամարկղում, ինչպես նաև կարճաժամկետ ավանդները, որոնց մարման ժամկետը սկզբնապես երեք ամսից պակաս է, բայց բացառում է ցանկացած սահմանափակված դրամական միջոցները, որոնք հասանելի չեն օգտագործման համար Խմբի կողմից և, հետևաբար, չեն համարվում բարձր իրացվելի, օրինակ՝ առանձնացված դրամական միջոցները վերականգնման պարտավորության համար:

ՀՀՄՍ 7.6,  
ՀՀՄՍ 7.7  
ՀՀՄՍ 7.48-49

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն պատրաստելու նպատակով դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցները և դրանց համարժեքները վերոնշյալ սահմանումով՝ զուտ բանկային օվերդրաֆտներից:

ՀՀՄՍ 7.45

#### (vii) Նորմալ գնման կամ վաճառքի բացառություն

Ոչ ֆինանսական ակտիվի մատակարարման կամ ստացման համար կնքված և դեռ պահվող պայմանագրերը համաձայն Խմբի ակնկալվող գնումների, վաճառքի կամ օգտագործման պահանջների, ազատվում են ՀՀՄՍ 32-ից և ՀՀՄՍ 39-ից, որը հայտնի է որպես Նորմալ գնման կամ վաճառքի բացառություն (բացառությամբ՝ գնանշման ժամանակաշրջանի պարբերություններ ունեցողներից, որոնք հանգեցնում են պարունակվող ածանցյալ գործիքների ճանաչման: Տես Ծան. 2.4 (ժգ)-ը ավելի մանրամասն տեղեկատվության համար): Այդ պայմանագրերը և պարունակվող ածանցյալով պայմանագրերի հիմնական մասերը հաշվարկվում են որպես կատարման ենթակա պայմանագրեր: Խումբը նման պայմանագրերը ճանաչում է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, միայն եթե կողմերից մեկը կատարում է դրամական միջոցներ կամ ոչ ֆինանսական ակտիվներ մատակարարելու պայմանագրում նշված իր պարտականությունը:

ՀՀՄՍ 39.5

## Մեկնաբանություն

«Գուդ մայնինգ» ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության թանոթագրության մեջ շնչված ֆինանսական գործիքների (օրինակ՝ մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ներդրումներ, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, հեջավորման գործիքներ և այլն) համար խնդրում ենք նայել «Գուդ գրուպի (Ինթերնեշնլ) Լիմիթեդ» 2011թ. ցուցադրական ֆինանսական հաշվետվությունները:

### (թ) Պաշարներ

Ոսկու ձուլակտորները, ոսկու և պղնձի կոնցենտրատը, արտադրության ցիկլում գտնվող մետաղը և հանքաքարի պաշարները քանակապես չափվում են կամ գնահատվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը ապրանքի հաշվարկված ապագա վաճառքի գինն է, որով կազմակերպությունը ենթադրում է իրացնել այն, երբ ապրանքը լինի արտադրված և վաճառված՝ հանած արտադրությունը ավարտին հասցնելու և վաճառքի ծախսումները: Այն դեպքում, երբ դրամի ժամանակային արժեքը նշանակալի է, ապագա ավարտին հասցնելու և վաճառքի ծախսումները զեղչվում են:

ՀՀՄՍ 2.36(ա)  
ՀՀՄՍ 2.9  
ՀՀՄՍ 2.6  
ՀՀՄՍ 2.10

Արժեքը որոշվում է միջին կշռված մեթոդով և ներառում է գնման ուղղակի ծախսումները և վերջնական արտադրանքի ստացման փոփոխում և ֆիքսված վերադիր ծախսումների համապատասխան մասը՝ ներառյալ ամորտիզացիան և մաշվածությունը: Արտադրության ծախսումները բաշխվում են համատեղ արտադրանքի միջև՝ օգտագործելով յուրաքանչյուր ամսվա վերջին սիդո գների գործակիցը ըստ ծավալի: Յուրաքանչյուր մետաղի ձևափոխման առանձին որոշվող ծախսումները հատուկ բաշխվում են:

ՀՀՄՍ 2.29

Նյութերը և մանր պարագաները գնահատվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Հնացվածության և բարոյական մաշվածության համար ցանկացած պահուստ որոշվում է պաշարների յուրաքանչյուր տեսակի համար առանձին: Հնացվածության և բարոյական մաշվածության համար ցանկացած պահուստի չափի որոշման համար պարբերաբար իրականացվում է վերանայում:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

ՀՀՄՍ 1.10(ե)

### (թ) Պաշարներ (շարունակություն)

#### Մեկնաբանություն

Հանքերի արդյունահանման ոլորտում հաճախ է լինում, որ միևնույն հանածոյի պաշարից դուրս բերվի մեկից ավել տեսակի արտադրանք (օրինակ՝ ոսկու և պղնձի հետ մեկտեղ հաճախ հայտնաբերվում է նաև արծաթ)։ Հիմնականում, երբ արդյունահանվում է մեկ արտադրանքից ավել, հիմնական արտադրանքը և կողմնակի արտադրանքը հստակորեն տարանջատվում են։ ՀՀՄՍ 2-ը ենթադրում է, որ երբ յուրաքանչյուր արտադրանքի վերաձևակման ծախսումները առանձին չեն նույնականացվում, ապա դրանք բաշխվում են արտադրանքների միջև ռացիոնալ և հետևողական հիմունքով։ Բաշխումը կարող է հիմնվել յուրաքանչյուր արտադրանքի՝ օրինակ վաճառքի ծավալի հիման վրա, կամ արտադրության այն փուլում, որում յուրաքանչյուր արտադրանք կարող է առանձնացվել, կամ արտադրության ավարտին։ Կողմնակի արտադրանքի մեծ մասը իրենց բնույթով ոչ նշանակալի են։ Նման դեպքում դրանք սկզբնապես չափվում են իրացման գուտ արժեքով։ Մնացած ծախսումները, եթե փոխհատուցվող են, վերագրվում են հիմնական արտադրանքին։ Որպես արդյունք, հիմնական արտադրանքի հաշվեկշռային արժեքը էական չի տարբերվում իր սկզբնական արժեքից։ ՀՀՄՍ 2-ը չի պահանջում ծավալուն բացահայտումներ կողմնակի արտադրանքի վերաբերյալ։ Այնուամենայնիվ, եթե գումարները նշանակալի են, անհրաժեշտ է կողմնակի արտադրանքին վերաբերող հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտում և այն հոդվածների, որոնցում կողմնակի արտադրանքի գծով հաստատվածները և հաշվեկշռային արժեքները հաշվառվում են ֆինանսական հաշվետվություններում։

Նշանակալի արժեք ունեցող կողմնակի արտադրանքները պետք է հաշվառվեն որպես համատեղ արտադրանքներ։ Համատեղ արտադրանքները ըստ սահմանման ունեն նշանակալի արժեք, ինչը պահանջում է կազմակերպությանը ռացիոնալ և հետևողական հիմունքով բաշխել վերաձևակման այն ծախսումները, որոնք յուրաքանչյուր արտադրանքի համար առանձին չեն կարող որոշվել։

### (ժ) Վարձակալություն

Որոշելու համար, արդյոք, համաձայնությունը պարունակում է վարձակալություն, պետք է ուշադրություն դարձնել համաձայնության տնտեսական բովանդակությանը համաձայնության սկզբի դրությամբ՝ արդյոք համաձայնության կատարումը կախված է որոշակի ակտիվի կամ ակտիվների օգտագործումից, թե համաձայնությունը փոխանցում է ակտիվը օգտագործելու իրավունք, նույնիսկ, եթե այդ իրավունքը բացահայտորեն նշված չէ համաձայնությունում։

ՖՀՄՄԿ 4.6

ՖՀՄՄԿ 4.17

Մինչև 2005թ. հունվարի 1-ը տեղի ունեցած համաձայնությունների համար սկզբնական ժամկետ հանդիսանում է 2005թ. հունվարի 1-ը համաձայն ՖՀՄՄԿ 4 «Համաձայնություններում վարձակալության առկայության որոշումը» մեկնաբանության անցումային դրույթների։

ՀՀՄՍ 17.8  
ՀՀՄՍ 17.20  
ՀՀՄՍ 17.25

#### Խումբը որպես վարձակալ

Ֆինանսական վարձակալությունը, որը Խումբին փոխանցում է վարձակալված ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտները, կապիտալացվում է վարձակալության մեկնարկին վարձակալված գույքի իրական արժեքով կամ, եթե ավելի փոքր է, նվազագույն վարձակալական վճարների ներկա արժեքով։ Վարձավճարները բաշխվում են ֆինանսական ծախսերի և վարձակալական պարտավորությունների նվազեցման նկատմամբ այնպես, որ ստացվի հաստատուն տոկոսադրույք պարտավորությունների մնացորդի նկատմամբ։ Ֆինանսական ծախսերը ճանաչվում են շահույթի կամ վնասի ֆինանսական ծախսեր հոդվածում։

ՀՀՄՍ 17.27

ՀՀՄՍ 17.33

Վարձակալված գույքի համար հաշվարկվում է մաշվածություն ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում։ Այն դեպքում, երբ չկա ողջամիտ հավաստիացում, որ Խումբը վարձակալության ժամկետի ավարտին կստանա սեփականության իրավունք, ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է հետևյալ երկու ժամկետներից նվազագույնով՝ ակտիվի գնահատված օգտակար ծառայության ժամկետ և վարձակալության ժամկետ։

Գործառնական վարձակալության գծով վճարումները ճանաչվում են որպես գործառնական ծախս շահույթում կամ վնասում գծային մեթոդով վարձակալական ժամկետի ընթացքում։

#### Պարունակվող ֆինանսական վարձակալություն

Բոլոր «վերցրու կամ վճարիր» պայմանագրերը վերանայվում են առաջացման պահից՝ որոշելու համար, թե արդյոք ներառում են պարունակվող ֆինանսական վարձակալություն։

ՖՀՄՄԿ 4.6

#### Խումբը որպես վարձատու

Գույքի վարձակալությունը, երբ Խումբը չի փոխանցում ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու օգուտները, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն։ Գործառնական վարձակալության գծով բանակցությունների ընթացքում առաջացող սկզբնական ուղղակի ծախսումները գումարվում են վարձակալված ակտիվի հաշվեկշռային արժեքին և ճանաչվում վարձակալական ժամկետի ընթացքում նույն հիմունքով, ինչպես վարձակալական եկամուտը։ Պայմանական վարձակալությունը ճանաչվում է որպես հասույթ այն ժամանակաշրջանում, որում վաստակվել է։

ՀՀՄՍ 17.8  
ՀՀՄՍ 17.52

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր ՀՀՄՍ 1.10(Ե)

### (Ժա) Պահուստներ

#### (i) Ընդհանուր

Պահուստները ճանաչվում են, երբ Խումբն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և այդ պարտականությունը կարելի է արժանահավատորեն չափել: Երբ Խումբն ակնկալում է, որ պահուստն ամբողջությամբ կամ դրա մի մասը կփոխհատուցվի, օրինակ՝ ապահովագրական պայմանագրի շրջանակներում, փոխհատուցման գումարը ճանաչվում է որպես առանձին ակտիվ, բայց միայն այն դեպքում, երբ փոխհատուցումը ըստ էության որոշակի է: Ցանկացած պահուստին վերաբերող ծախս ներկայացվում է շահույթում կամ վնասում՝ զուտ ցանկացած փոխհատուցումից: Եթե դրամի ժամանակային արժեքի ազդեցությունը նշանակալի է, պահուստները զեղչվում են՝ օգտագործելով ընթացիկ մինչև հարկումը դրույքը, որն արտացոլում է պարտավորությանը հատուկ ռիսկերը: Երբ զեղչում է կիրառվում, ժամանակ անցնելու պատճառով պահուստների աճը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս շահույթում կամ վնասում:

ՀՀՄՍ 37.14

ՀՀՄՍ 37.53

ՀՀՄՍ 37.54

ՀՀՄՍ 37.45

ՀՀՄՍ 37.47

ՀՀՄՍ 37.60

#### (ii) Շրջակա միջավայրի վերականգնման պահուստ

Խումբը հաշվառում է արդյունահանման և այլ գործառնությունների վերականգնման համար անհրաժեշտ իրավական և կառուցողական պարտականությունների ներկա արժեքը պարտականությունների առաջացման ամսաթվի դրությամբ: Այս գործառնությունները, ըստ էության, ներառում են կառուցվածքների ապատեղակայում և հեռացում, հանքերի և աղհամբարների վերականգնում, գործառնական սարքավորումների ապատեղակայում, գործարանի և թափոնների տարածքի փակում և տուժած տարածքների վերականգնում, բարելավում և կանաչապատում:

ՀՀՄՍ 37.45

ՀՀՄՍ 37.47

ՀՀՄՍ 37.60

Պարտականությունը սովորաբար ի հայտ է գալիս ակտիվի ներդրման կամ հանքի արդյունահանման տարածքի հողի/միջավայրի փչացման ժամանակ: Պարտավորության սկզբնական ճանաչումից հաշվարկված ծախսումների ներկա արժեքը կապիտալացվում է՝ ավելացնելով համապատասխան հանքի հաշվեկշռային արժեքը հանքի մշակմանը/կառուցմանը վերաբերվող ծախսումների չափով: Պաշարների արտադրության ընթացքում առաջ եկող ցանկացած վերականգնման պարտավորություններ ծախսագրվում են առաջանալուն պես: Ժամանակի ընթացքում զեղչված պարտավորությունը ավելանում է շուկայի ընթացիկ գնահատումները և պարտավորությանը հատուկ ռիսկերը արտացոլող զեղչման դրույքի վրա հիմնված ներկա արժեքի փոփոխությամբ:

ՖՀՄՄ 4 1.8

Զեղչի պարբերաբար հետադարձումը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ որպես ֆինանսական ծախս: Վերականգնման ծախսումների լրացուցիչ փոփոխությունները կամ խիստ տատանումները ճանաչվում են հենց առաջացման պահին որպես համապատասխան ակտիվների և վերականգնման պարտավորությունների նկատմամբ ավելացումներ կամ նվազեցումներ: Տուժած տարածքի վերականգնման ծախսումները (կոմերցիոն արտադրությունը սկսելուց հետո), որոնք ստեղծվել են շարունակական հիմունքի վրա արտադրության ընթացքում, ներկայացվում են զեղչված արժեքով և ճանաչվում շահույթում կամ վնասում, երբ արդյունահանումը սկսվում է:

ՖՀՄՄ 4 1.5

Հաշվարկված ապագա ծախսումների գնահատումների փոփոխությունները ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում վերականգնման համապատասխան պարտավորության և ակտիվի կամ ավելացմամբ, կամ նվազմամբ, եթե այդ հաշվարկված ծախսումները սկզբնապես ճանաչվել էին որպես ակտիվի մի մաս համաձայն ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտի:

Վերականգնման պարտավորության ցանկացած կրճատում և, հետևաբար, համապատասխան ակտիվի ցանկացած նվազում չի կարող գերազանցել ակտիվի հաշվեկշռային արժեքը: Եթե այն գերազանցում է ակտիվի հաշվեկշռային արժեքը, ապա այդ գումարն անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Այն դեպքում, երբ գնահատման փոփոխությունը բերում է վերականգնման պարտավորության աճի և, հետևաբար, ակտիվի հաշվեկշռային արժեքի ավելացմանը, Խումբը պետք է դիտարկի, թե արդյոք վերջինս ամբողջ ակտիվի արժեքի կամ հայտանիշ է, և եթե այո, ստուգի այն արժեքի կամ համար համաձայն ՀՀՄՍ 36-ի: Եթե հատուկ հանքերի համար վերանայված հանքերի ակտիվը՝ հանած շրջակա միջավայրի վերականգնման պահուստները, գերազանցում է փոխհատուցվող գումարին, ապա այդ գերազանցող գումարն անմիջապես ճանաչվում է որպես ծախս:

Փակված տարածքների համար հաշվարկված ծախսումների փոփոխություններն անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

ՀՀՄՍ 1.10(Ե)

### (Ժա) Պահուստներ (շարունակություն)

#### Մեկնաբանություն

##### Պահուստի փոփոխություններ

Երբ վերականգնման պարտավորության նվազումը պետք է հանվի ակտիվի արժեքից, ակտիվի արժեքը նվազեցված հաշվեկշռային արժեքն է (ներառյալ՝ ակտիվի կառուցման և վերականգնման ծախսումները): Այս խնդիրը և համապատասխան լուծումը ցույց են տրված ՖՀՄՄԿ 1-ում: Ըստ վերջինիս՝ վերականգնումը չի դիտարկվում որպես ակտիվի առանձին տարր: Համապատասխանաբար, մենք կարծում ենք, որ ճիշտ չէ ճանաչել որևէ օգուտ, մինչ ամբողջ ակտիվի հաշվեկշռային արժեքի մարումը:

ՖՀՄՄԿ 1  
ՑՕ1-4

##### Հետաձգված հարկեր

Վերականգնման ակտիվի և պարտավորության ճանաչումը և համապատասխան հարկային ազդեցությունները հանքարդյունաբերությամբ զբաղվող կազմակերպությունների մոտ առաջացրել են երկու տարբեր մոտեցումներ՝

**1-ին մոտեցում:** Կազմակերպությունը ճանաչում է (1) վերականգնման պարտավորության ժամանակավոր տարբերությանը վերաբերող հետաձգված հարկային ակտիվը և (2) վերականգնման ակտիվի ժամանակավոր տարբերությանը վերաբերող հետաձգված հարկային պարտավորությունը: Առաջին օրվա դրությամբ հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը հավասար են, և ՀՀՄՍ 12-ի 71-ից 76 բաժիններում ներառված հաշվանցման չափանիշները բավարարվում են այնպես, որ ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարը զրո է: Այնուամենայնիվ, հետագայում վերականգնման ակտիվը կամորոտիզացվի համապատասխան պարտավորությունից տարբերվող դրույթով, երբ հետաձգված օգուտ հարկային ակտիվները կամ պարտավորությունները կճանաչվեն:

ՀՀՄՍ 12.56  
ՀՀՄՍ 12.37

**2-րդ մոտեցում:** Ընկերությունը չի ճանաչում վերականգնման ակտիվի ժամանակավոր տարբերությանը վերաբերող ո՛չ հետաձգված հարկային ակտիվը, ո՛չ համապատասխան հետաձգված հարկային պարտավորությունը: ՀՀՄՍ 12-ի 15 և 24 բաժիններում նշված սկզբնական ճանաչման ազատումը՝ առանց հետագա ճանաչման վերանայման, վերաբերում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվության յուրաքանչյուր առանձին ճանաչված տարրի:

### (iii) Զերմոցային գազի արտանետում

ՀՀՄՍ 8.10

Որոշակի երկրներում Խումբը ձեռք է բերել ազատ արտանետումների իրավունք որպես այդ երկրներում Արտանետումների վաճառքի ծրագրերի արդյունք: Իրավունքները տրվում են տարեկան կտրվածքով և որպես արդյունք պահանջվում է, որպեսզի Խումբը նվազեցնի իր փաստացի արտանետումները մինչև իրավունքներին հավասար: Ստացված արտանետումների իրավունքների գծով Խումբը որդեգրել է զուտ պարտավորությունների մոտեցումը: Հետևաբար, պահուստը ճանաչվում է միայն այն դեպքում, երբ փաստացի արտանետումները գերազանցում են ստացված և դեռ պահվող արտանետումների իրավունքներին: Արտանետումների հետ կապված ծախսումները ճանաչվում են որպես այլ գործառնական ծախսեր:

Այն դեպքում, երբ արտանետման իրավունքները գնվում են այլ կողմերից, դրանք ճանաչվում են սկզբնական արժեքով և դիտարկվում են որպես փոխհատուցման իրավունք, և համապատասխանեցվում են արտանետումների պարտավորություններին, վերազնահատվում են իրական արժեքով և իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

#### Մեկնաբանություն

ՖՀՄՄԿ 3-ը «Արտանետման իրավունքներ» ուժը կորցրած է ճանաչվել 2005թ. հունիսին, քանի որ ՀՀՄՍ-ն մշակում է արտանետման իրավունքների հաշվառման ուղեցույց: Հատուկ ուղեցույցի բացակայության պայմաններում կազմակերպության ղեկավարությունը պետք է մշակի համապատասխան հավաստի հաշվապահական հաշվառման քաղաքականություն:

Խումբը կիրառում է ՀՀՄՍ 20.23-ի վրա հիմնված զուտ պարտավորությունների մոտեցումը: Այնուամենայնիվ, ստացված արտանետման իրավունքները կարող են ճանաչվել նաև որպես ոչ նյութական ակտիվներ իրական արժեքով՝ արտահայտված ըստ ՀՀՄՍ 38-ի պահանջվող բոլոր բացահայտումներով:

### (Ժբ) Հարկեր

#### (i) Ընթացիկ շահութահարկ

ՀՀՄՍ 12.46

Ընթացիկ ժամանակաշրջանի շահութահարկի ընթացիկ հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են այն գումարով, որն ակնկալվում է ստանալ կամ վճարել հարկային մարմիններին: Հարկերի դրույթների և հարկերի գումարների հաշվարկման համար օգտագործվող օրենքները, այն օրենքներն են, որոնք կիրառվել կամ սահմանվել են հաշվետու ամսաթվի դրությամբ այն երկրներում, որտեղ Խումբը գործում և առաջացնում է հարկվող շահույթ:

ՀՀՄՍ  
12.61((բ))

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

ՀՀՄՍ 1.10(ե)

### (Ժբ) Հարկեր (շարունակություն)

Սեփական կապիտալի հոդվածներում կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ուղղակիորեն ճանաչված հոդվածներին վերաբերող ընթացիկ շահութահարկը ճանաչվում է համապատասխանաբար սեփական կապիտալում կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում, և ոչ թե շահույթում կամ վնասում: Ղեկավարությունը ժամանակ առ ժամանակ գնահատում է հարկային հաշվետվությունները ըստ այն իրավիճակների, որտեղ կիրառվող հարկային կարգավորումները հանդիսանում են մեկնաբանության առարկա և անհրաժեշտության դեպքում սահմանում է պահուստներ:

### (ii) Հետաձգված շահութահարկ

Հետաձգված հարկը հաշվառվում է հաշվեկշռի մեթոդով հաշվետու ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների հարկային բազաների և դրանց ֆինանսական հաշվետվությունների նպատակով հաշվեկշռային արժեքների ժամանակավոր տարբերությունների հիման վրա:

ՀՀՄՍ 12.15

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, բացառությամբ՝

ՀՀՄՍ 12.22(գ)

- ▶ երբ հետաձգված հարկային պարտավորությունը առաջանում է գույքի սկզբնական ճանաչումից, կամ ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող գործարքներում ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչումից, երբ գործարքի ժամանակ չկա ազդեցություն ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի վրա,
- ▶ համատեղ ձեռնարկումներում, դուստր և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների հետ կապված հարկվող ժամանակավոր տարբերություններ, որտեղ ժամանակավոր տարբերությունների հակադարձման ժամանակաշրջանը կարող է վերահսկվել և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունները չեն հակադարձվի մոտ ապագայում:

ՀՀՄՍ 12.39

ՀՀՄՍ 12.34

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների, տեղափոխված չօգտագործված հարկային զեղչերի և չօգտագործված հարկային վնասների համար այնքանով, որքանով հավանական է, որ կլինի հարկվող շահույթ, որի դիմաց այդ նվազեցվող ժամանակավոր տարբերությունները և տեղափոխված չօգտագործված հարկային զեղչերը և չօգտագործված հարկային վնասները կկարողանան օգտագործվել, բացառությամբ հետևյալ դեպքերի՝

ՀՀՄՍ 12.24

- ▶ երբ նվազեցվող ժամանակավոր տարբերություններին վերաբերող հետաձգված հարկային ակտիվը առաջանում է ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող գործարքի արդյունքում սկզբնապես ճանաչված ակտիվից կամ պարտավորությունից և գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ հարկվող շահույթի կամ վնասի վրա,
- ▶ համատեղ ձեռնարկումներում, դուստր և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների նվազեցվող ժամանակավոր տարբերությունների հետ կապված հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են այնքանով, որքանով հավանական է, որ ժամանակավոր տարբերությունները կհակադարձվեն մոտ ապագայում և կլինի հարկվող շահույթ, որի դիմաց հնարավոր կլինի օգտագործել ժամանակավոր տարբերությունները:

ՀՀՄՍ 12.44

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում է այնքանով, որքանով այլևս հավանական չէ, որ բավարար հարկվող շահույթ կլինի, որի դիմաց կօգտագործվի հետաձգված հարկային ակտիվը: Չճանաչված հետաձգված հարկային ակտիվների գնահատումները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճանաչվում այնքանով, որքանով հավանական է, որ ապագա հարկվող շահույթը թույլ կտա վերականգնել հետաձգված հարկային ակտիվը:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են այն հարկային դրույքաչափերով, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն այն տարում, երբ ակտիվները կիրացվեն կամ պարտավորությունները կմարվեն՝ հիմնվելով հաշվետու ամսաթվի դրությամբ կիրառված կամ օրենքով սահմանված հարկային դրույքաչափերի (և հարկային օրենքների) վրա:

ՀՀՄՍ 12.47

ՀՀՄՍ 12.74

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե կա իրավաբանորեն ամրագրված իրավունք ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների նկատմամբ հաշվանցելու, և հետաձգված հարկերը վերաբերում են միևնույն հարկվող կազմակերպությանը և հարկային մարմիններին:



# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

ՀՀՄՍ 1.10(ե)

### (Ժբ) Հարկեր (շարունակություն)

Որպես ձեռնարկատիրական գործունեության միավորման մաս ձեռքբերված հարկային արտոնությունները, որոնք այդ ամսաթվի դրությամբ չեն բավարարում առանձին ճանաչման չափանիշներին, կճանաչվեն հետագայում, եթե նոր տեղեկատվությունը փաստերի և իրողությունների վերաբերյալ փոխվի: Ճշգրտումը կդիտվի նվազեցում գույքի վրա (քանի դեռ այն չի գերազանցում գույքի վրա), եթե այն առաջացել է չափման ժամանակաշրջանում, կամ շահույթում կամ վնասում:

ՀՀՄՍ 12.68

### (iii) Ռոյալթիներ, ռեսուրսների վարձավճարների գծով հարկ և հասույթի վրա հիմնված հարկեր

ՀՀՄՍ 12.2

Բացի շահութահարկից Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունները նաև ներառում են ճանաչում են որպես շահութահարկ զուտ շահույթի գծով այլ հարկերը, որոնք հիմնված են արտադրության վրա:

Ռոյալթիները, ռեսուրսների վարձավճարների գծով հարկերը և հասույթի վրա հիմնված հարկերը հաշվառվում են ըստ ՀՀՄՍ 12-ի, երբ համապատասխանում են շահութահարկի բնութագրիչներին: Վերջինս տեղի է ունենում, երբ պետական մարմնի կողմից հարկերը գանձվում են հիմնվելով հարկվող շահույթի վրա, այլ ոչ արտադրանքի ծավալի վրա կամ որպես տոկոս հասույթից՝ ժամանակավոր տարբերությունների ճշգրտումից հետո: Նման համաձայնությունների համար ընթացիկ և հետագա վճարված շահութահարկը հաշվարկվում է նույն հիմքերով, ինչ վերը նշված հարկման այլ ձևերի համար: Ռոյալթիների գծով առաջ եկող պարտավորությունները, որոնք չեն բավարարում այս չափանիշներին ճանաչվում են որպես ընթացիկ պահուստներ և ներառվում են վաճառքի ինքնարժեքի մեջ: Ենթադրվում է, որ «Գույք մայնինգ» ընկերության կողմից վճարվելիք ռոյալթիները և ռեսուրսների վարձավճարների գծով հարկերը բավարարում են շահութահարկի մաս համարվելու չափանիշին:

### Մեկնաբանություն

Ողջ աշխարհում հանքային արդյունաբերության ոլորտը ենթակա է տարբեր ֆիսկալ ռեժիմների: Այս ֆիսկալ ռեժիմները կարող են ներառել ռոյալթիները, արտադրության հարկերը, շահույթի գծով հարկերը և այլն: Հաճախ խնդիր է առաջանում որոշելու, թե այս ֆիսկալ ռեժիմներից, որոնք են հանդիսանում շահույթի գծով հարկեր և, հետևաբար, ենթակա են հաշվառման համաձայն ՀՀՄՍ 12-ի, և որոնք չեն հանդիսանում շահույթի գծով հարկեր և, հետևաբար, դուրս են մնում ՀՀՄՍ 12-ի շրջանակից: Սովորաբար պահանջվում է, որ վերջինս հաշվի առնվի յուրաքանչյուր դեպքի համար առանձին:

### (iv) Վաճառքի հարկ (Ավելացված արժեքի հարկ)

ՀՀՄՍ 18.8

Հասույթը, Թախսերը և ակտիվները ճանաչվում են զուտ վաճառքի հարկից (ԱԱՀ-ից)՝ բացառությամբ հետևյալ դեպքերի.

- ▶ երբ վաճառքի հարկը (ԱԱՀ-ն) առաջացել է այնպիսի ակտիվների կամ ծառայությունների գնումից, որի գծով այն չի հատուցվում հարկային մարմինների կողմից. այս դեպքում վաճառքի հարկը (ԱԱՀ-ն) ճանաչվում է որպես ակտիվի ձեռքբերման ինքնարժեքի մաս կամ որպես Թախսային հոդվածի մաս համապատասխանաբար,
- ▶ դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, որոնք ներկայացված են վաճառքի հարկը (ԱԱՀ-ն) ներառյալ:

Հարկային մարմիններից հատուցվող կամ պարտավորություն հանդիսացող վաճառքի հարկի (ԱԱՀ-ի) գծով գումարները ներառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես դեբիտորական կամ կրեդիտորական պարտք:

### (Ժգ) Հասույթի ճանաչում

Հասույթը ճանաչվում է այն չափով, որքանով հավանական է, որ ապագա տնտեսական օգուտներ կհոսեն դեպի Խումբ, և այդ հասույթը կարելի է արժանահավատորեն չափել: Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով սահմանված զեղչերը, զիջումները և հարկերն ու տուրքերը: Խումբն իր հասույթի գծով գործարքները գնահատում է որոշակի չափանիշներով՝ որոշելու, արդյոք, այն հանդես է գալիս որպես պրինցիպալ կամ գործակալ: Խումբը եզրակացրել է, որ այն հանդես է գալիս որպես պրինցիպալ հասույթի հետ կապված իր բոլոր գործարքներում:

ՀՀՄՍ  
18.35(ա)

Ապրանքների վաճառքից հասույթը ճանաչվում է, երբ գնորդին են փոխանցվում ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատուցման նշանակալի մասը՝ սովորաբար գնորդին ապրանքների սեփականության փոխանցման պահին է: Հիմնականում հասույթը ճանաչվում է, երբ ապրանքը ֆիզիկապես տեղափոխվում է նավ, գնացք, փոխադրողի կամ այլ մատակարարողի: Հասույթը հաշվարկվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով:

ՀՀՄՍ 18.14  
ՀՀՄՍ 18.20  
ՀՀՄՍ 18.9

Հետևյալ չափանիշները վերաբերում են նաև հասույթի այլ առանձին գործարքներին՝



# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

ՀՀՄՍ 1.10(Ե)

### (Ժգ) Հասույթի ճանաչում (շարունակություն)

#### (i) Ոսկու ձուլակտորների վաճառք

Ոսկու ձուլակտորների վաճառքից հասույթը պետք է ճանաչվի, երբ գնորդին են փոխանցվում ապրանքների սեփականության հետ կապված նշանակալի ռիսկերը և հատույցները և վաճառքի գները հայտնի են կամ կարող են հավաստիորեն չափվել: Վերջինս սովորաբար տեղի է ունենում, երբ ոսկին կրեդիտագրվում է հաճախորդի՝ մետաղի հաշվին:

#### (ii) Ոսկու և պղնձի խտանյութի վաճառք

Խմբի՝ հանաձոյի ոսկու և պղնձի պարունակության (մետաղի խտանյութի) վաճառքի պայմանագրի պայմանները թույլ են տալիս գների ճշգրտումներ՝ հիմնված հաճախորդի կողմից մետաղի խտանյութի վերջնական պարունակությունը պարզելու համար վերջնական փորձարկման արդյունքների վրա: Այս ապրանքների վաճառքից հասույթի ճանաչումը հիմնված է վերջերս խտանյութում մետաղի պարունակության գնահատման (հիմնված՝ սկզբնական փորձարկման արդյունքների վրա) և փոխանցման ամսաթվի դրությամբ սփոթ գների վրա՝ վերջնական որոշման հետագա ճշգրտմամբ, որը ներկայացվում է որպես «Այլ եկամտի» մաս:

Երրորդ անձանց հետ՝ մետաղ պարունակող խտանյութի վաճառքի պայմանագրի պայմանները ներառում են նախնական գնագոյացման համաձայնություններ, որտեղ մետաղ խտանյութի հանաձոյի վաճառքի գինը հիմնված է հաճախորդին մատակարարելուց հետո նշված ամսաթվի դրությամբ (գնանշման ժամանակահատվածը) շուկայում գերիշխող սփոթ գների վրա: Վաճառքի գնի ճշգրտումները ի հայտ են գալիս գնանշված շուկայական գնի փոփոխությունների արդյունքում մինչև վերջնական մարման ամսաթիվը: Նախնական հաշվի ներկայացման և վերջնական մարման միջև ընկած ժամանակահատվածը կարող է մեկ ամսից մինչև վեց ամիս լինել:

Մետաղ պարունակող խտանյութի նախնական գնանշման բնութագրիչներով վաճառքի պայմանագրերը ենթադրվում է, որ ներառում են պարունակվող ածանցյալ գործիք, որը պետք է անջատվի հիմնական պայմանագրից հաշվապահական հաշվառման նկատառումներով: Հիմնական պայմանագիրը վերաբերում է մետաղ պարունակող խտանյութերի վաճառքին և պարունակվող ածանցյալ գործիքը հանդիսանում է ֆորվարդային պայմանագիրը, որի համար նախնական վաճառքը հետագայում ճշգրտվում է: Այսպիսով, հեջի հաշվառման պահանջներին չհամապատասխանող պարունակվող ածանցյալ գործիքը ճանաչվում է իրական արժեքով, որի հետագա փոփոխությունները մինչև վերջնական մարումը յուրաքանչյուր ժամանակաշրջանում ճանաչվում են շահույթում կամ վնասում, և ներկայացվում են որպես այլ եկամուտ: Գնանշման ընթացքում և մինչև վերջնական մարումը իրական արժեքի փոփոխությունները հաշվարկվում են ոսկու և պղնձի ֆորվարդային շուկայի գները հաշվի առնելով:

#### (iii) Տոկոսային եկամուտ

Ամրոտիզացված արժեքով չափվող բոլոր ֆինանսական գործիքների և վաճառքի համար մատչելի դասակարգված տոկոսային ֆինանսական ակտիվների տոկոսային եկամուտը կամ ծախսը հաշվառվում է օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքը՝ դրույք, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ, համապատասխան դեպքերում, ավելի կարճ ժամանակահատվածի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները գեղչում է ճշգրիտ մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքը: Տոկոսային եկամուտը ներառվում է շահույթի կամ վնասի ֆինանսական եկամուտներում:

ՀՀՄՍ  
18.30(ա)

## Մեկնաբանություն

### Ոսկու ձուլակտորների վաճառքի ֆորվարդային պայմանագրեր

Հանքարդյունաբերության ոլորտում ընկերությունները հաճախ կազմում են հեջավորման համաձայնություններ, ինչպիսիք են ֆորվարդային պայմանագրերը՝ ապրանքների գների ակնկալումների ռիսկին ենթարկվածության կառավարման համար: Ոսկու ձուլակտորների վաճառքի ֆորվարդային պայմանագրերով կատարված վաճառքը կարող է հաշվառվել որպես սովորական վաճառքի համաձայնություններ (կատարման ենթակա պայմանագրեր), եթե այն համապատասխանում է ՀՀՄՍ 39-ի 5-րդ պարագրաֆին: Սա ներառում է այն դեպքում, երբ ոսկե ձուլակտորների վաճառքի ֆորվարդների գծով պարտավորությունները կատարվում են ոսկե ձուլակտորների արտադրությունից ֆիզիկական մատակարարման միջոցով:

### Պայմանական գնով պայմանագրեր

Որոշ ապրանքների վաճառքի պայմանագրերը սովորաբար թույլ են տալիս մետաղ պարունակող խտանյութի փոխադրման ժամանակ պայմանական գնանշում՝ որոշակի ապագա ժամանակաշրջանի շուկայական գնի վրա հիմնված վերջնական գնանշմամբ: Վերջնական գինը կարող է հիմնված լինել հետագա ժամանակաշրջանի (գնանշման ժամանակաշրջան) միջին գնի, մատակարարումից հետո ֆիքսված ամսաթվի գնի, կամ հալեցնողի և զտողի կողմից հետագայում ստացված գումարի վրա:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

ՀՀՍՄ 1.10(ե)

### (Ժգ) Հասույթի ճանաչում (շարունակություն)

#### Մեկնաբանություն (շարունակություն)

Չեղյալ չհամարվող պայմանագրերում գների ճշգրտման բնութագրիչները, որոնք հիմնված են փոխադրումից կամ առաքումից անմիջապես հետո ընկած ժամանակահատվածի գնանշված շուկայական գների վրա, համարվում են պարունակվող ածանցյալ գործիքներ, որոնք պետք է առանձնացվեն ըստ ՀՀՍՄ 39-ի՝ պայմանագրի կնքման ֆորվարդային գնի և սփոթ գնի սերտորեն կապված չլինելու պատճառով: Ապագա ժամանակաշրջանում մետաղ պարունակող խտանյութի վաճառքի ոչ ֆինանսական պայմանագիրը կդիտարկվի որպես հիմնական պայմանագիր, մինչդեռ առաքումից/փոխադրումից մինչև վերջնական մարումը ընկած ժամանակահատվածի գնի տատանումների ռիսկին ենթարկվածությունը կդիտարկվի որպես պարունակվող ածանցյալ գործիք:

Նախքան առաքումը, հիմնական պայմանագիրը հանդիսանում է ապրանքների վաճառքի պայմանագիրը: Առաքումից հետո, երբ վաճառքն արդեն ճանաչվում է, հիմնական պայմանագիր է հանդիսանում առևտրային դեբիտորական պարտքը: Գոյություն ունի համոզիչ փաստարկ, որ գնի ճշգրտման բնութագրիչը սերտորեն կապված է ապրանքի մատակարարման պայմանագրի հետ, սակայն՝ ոչ դեբիտորական պարտքի: Հետևաբար, պարտադիր չէ մինչև առաքումը առանձնացնել պարունակվող ածանցյալ գործիքը: Սկզբնական ճանաչման ժամանակ պարունակվող ածանցյալ գործիքի իրական արժեքը հավասար կլինի գրոյի, բայց հետագայում գործիքի իրական արժեքը կփոխվի պայմանագրային գնին և շուկայի ֆորվարդային դրույքին անդրադառնալով: Պարունակվող ածանցյալ գործիքը կճանաչվի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես ֆինանսական գործիք:

Պարունակվող ածանցյալ գործիքի իրական արժեքի փոփոխությունները պետք է ճանաչվեն տվյալ ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում: Պարունակվող ածանցյալ գործիքների գծով օգուտները և վնասները կարող են ներկայացվել այլ ածանցյալ գործիքների գծով օգուտների և վնասների հետ կամ որպես այլ եկամուտ: Ներկայումս գոյություն չունի այս օգուտների և վնասների դասակարգման վերաբերյալ վերջնական ուղեցույց: Գործնականում, շատ ընկերություններ ներառում են այդ օգուտները և վնասները իրենց իրացումից հասույթի մեջ: Անկախ կազմակերպության որդեգրած քաղաքականությունից կարևոր է, որպեսզի նման օգուտների և վնասների վերաբերյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը բացահայտվի, ներառյալ դրանց՝ շահույթում կամ վնասում դասակարգման տողը:

Երբ պարունակվող ածանցյալ գործիքը առանձնացվում է հիմնական պայմանագրից, հիմնական պայմանագիրը կհամապատասխանի հասույթի ճանաչման չափանիշին (այսինքն՝ հասույթը կարող է հավաստիորեն չափվել) մետաղ պարունակող խտանյութի առաքման ամսաթվին (օրինակ՝ փոխանցվում են նավի վրա):

Հանքարդյունաբերության ոլորտում ռիսկերի և հատույցի փոխանցումը կարող է կախված լինել տարբեր փոփոխուն իրադարձություններից՝ ըստ համապատասխան պայմանագրերի պայմանների: Նման իրադարձությունների օրինակ է հանդիսանում այն պահը, երբ ապրանքները բեռնվում են նավերի վրա (այսինքն՝ երբ ապրանքները հատում են նավի սահմանը), այն պահը, երբ ապրանքները ֆիզիկապես ստացվում են հալեցնողի կամ գտողի կողմից, կամ այն պահը, երբ ոսկու ձուլակտորը փոխանցվում է հանքարդյունահանող ընկերության մետաղի հաշվից:

#### Հասույթի ճանաչումը արդյունահանման ավարտին

Որոշ սահմանափակ դեպքերում հանքարդյունահանող ընկերություններից որոշները կարող են ի վիճակի լինել ճանաչել հասույթը ապրանքների արտադրության ավարտին: Կազմակերպության, ապրանքների արտադրման և առաքման կայուն պարտավորվածություն ունենալու դեպքում, պետք է որոշված լիներ վաճառքի գինը և պետք է կատարված լինեին վաճառքի համար անհրաժեշտ ծախսումները: Հետևաբար, եթե առաքման ծախսումները և անհուսալի պարտքերի ռիսկը կարող են բավարար կերպով չափվել, ապա հասույթը կարող է ճանաչվել այդ հիմունքով:

Շատ քիչ ճյուղերում է, որ հասույթը կարող է ճանաչվել արտադրության ավարտին՝ անկախ վաճառքի պայմանագրի առկայությունից: Հանքարդյունաբերող ընկերությունների կողմից նման պրակտիկան կիրառվում է միայն հետևյալ չափանիշների բավարարման դեպքում՝

- ▶ Հանքերն արդյունահանվել են
- ▶ Վաճառքը երաշխավորված է ֆորվարդային պայմանագրով կամ պետական երաշխիքով, կամ տվյալ ապրանքի համար գոյություն ունի ակտիվ շուկա և չվաճառելու ռիսկը չնչին է
- ▶ Շուկայական գինը որոշելի է և կայուն

Պաշարները իրական արժեքով հաշվառելու պրակտիկան տարածված չէ հանքարդյունաբերության ոլորտում և հիմնականում կիրառվում է սպեկուլյատիվ առևտրով զբաղվող ընկերությունների կողմից:

ՀՀՍՄ 2-ի սկզբնական արժեքի սկզբունքները պարտադիր կերպով չեն տարածվում արդյունահանողների կողմից պահվող պաշարների վրա, եթե վերջիններս չափվում են իրացման զուտ արժեքով ոլորտում արդեն տարածված պրակտիկային համապատասխան: Այս ազատումը կիրառելու համար իրացման զուտ արժեքի փոփոխությունները պետք է ճանաչվեն շահույթում կամ վնասում նման փոփոխության ի հայտ գալու ամսաթվի դրությամբ: Կարևոր է նկատել, որ այս մեթոդով պաշարների գնահատումը թույլատրելի է միայն ոլորտում լայնորեն տարածված պրակտիկային համապատասխանելու դեպքում: Բացի այդ, հաշվառման այս մեթոդը հիմնականում ընդունելի է միայն վաճառքը հեջավորող հանքարդյունահանողների համար, քանի որ այն հանքարդյունահանողները, որոնք չեն հեջավորում իրենց վաճառքը, ենթակա են գնային ռիսկի, որը չի բավարարում կայուն շուկայական գնի չափանիշին ապրանքների մեծ մասի գների անկայունության պայմաններում:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ (շարունակություն)

## 2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր ՀՀՍՄ 1.10(ե)

### (Ժդ) Փոխառության ծախսումներ

Այն ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը ուղղակիորեն վերաբերող փոխառության ծախսումները, որին անհրաժեշտ է ժամանակի մի զգալի հատված, որպեսզի այն պատրաստ լինի ըստ նշանակության օգտագործման կամ վաճառքի համար (որակավորվող ակտիվ), կապիտալացվում են որպես համապատասխան ակտիվների արժեքի մի մաս: Փոխառության ծախսումները տոկոսների վճարման և այլ ծախսումներն են, որոնք կազմակերպությունը կատարում է՝ կապված փոխառու միջոցների ստացման հետ: ՀՀՍՄ 23.8  
ՀՀՍՄ 23.12

Երբ կազմակերպությունը միջոցները բացառապես փոխ է առնում որևէ ծրագրի ֆինանսավորման համար, կապիտալացված գումարը ներկայացնում է փաստացի կրած փոխառության ծախսումները: Երբ բացառապես որևէ ծրագրի ֆինանսավորման համար փոխառված միջոցների մնացորդը կարճ ժամկետներով ազատ է, ապա նման ժամանակավոր ներդրումից առաջ եկած եկամուտը նույնպես կապիտալացվում է և նվազեցվում կապիտալացված ընդհանուր փոխառության ծախսումներից: Երբ ծրագրի ֆինանսավորման համար փոխառված միջոցները կազմում են ընդհանուր նպատակով փոխառության մասը, ապա կապիտալացված գումարը հաշվարկվում է օգտագործելով տվյալ ժամանակաշրջանի խմբի համապատասխան ընդհանուր նպատակով փոխառությունների միջին կշռված դրույքները: ՀՀՍՄ 23.8  
ՀՀՍՄ 23.14

Բոլոր այլ փոխառությունների ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում կատարվում են:

Չնայած հետախուզման և գնահատման ակտիվները կարող են որակավորվող լինել, դրանք սովորաբար չեն համապատասխանում «հավանական տնտեսական օգուտների» թեստին և նաև հազվադեպ են ֆինանսավորվում պարտքի հաշվին: Հետևաբար, համապատասխան փոխառության ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում կատարվում են:

### Մեկնաբանություն

Ըստ ՀՀՍՄ 23-ի փոխառության ծախսումները ներառում են փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են արտարժույթով փոխառություններից՝ այնքանով, որքանով դրանք դիտվում են որպես տոկոսների գծով ծախսումների ճշգրտում: Խումբը կներառի նաև անմիջականորեն վերագրելի փոխառությունների գծով արտարժույթային տարբերությունները որպես կապիտալացման համար տոկոսների գծով ծախսումներ, եթե գումարը նշանակալի է: Բացի այդ, հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կընդարձակվի խմբի՝ արտարժույթային տարբերությունների որոշման մոտեցումը ներառելու համար:

Մեկնաբանությունների խորհուրդը եզրակացրել է, որ զեռչի հետադարձումները փոխառության ծախսում չեն, ինչպես սահմանված է ՀՀՍՄ 23 «Փոխառության ծախսումներ» ստանդարտում, և հետևաբար չեն կարող կապիտալացվել ըստ այդ ստանդարտի: ՀՀՍՄ 1.301-41.8

### (Ժե) Թոշակային հատուցումների գծով պարտավորություններ

Խումբը կիրառում է սահմանված հատուցումների կենսաթոշակային պլան, ինչը պահանջում է որևէ առանձին կառավարվող ֆոնդին հատկացումներ կատարել: Սահմանված հատուցումների պլանի համաձայն հատուցումների տրամադրումը որոշվում է առանձին՝ օգտագործելով կանխատեսվող պայմանական միավորի գնահատման մեթոդը: Ակտուարային օգուտները և վնասները ճանաչվում են որպես ծախս կամ եկամուտ, երբ նախորդ հաշվետու տարվա վերջի զուտ ընդհանուր չճանաչված ակտուարային օգուտները կամ վնասները գերազանցում են սահմանված հատուցման գծով պարտավորության և պլանի ակտիվների իրական արժեքի առավելագույնի 10%-ը տվյալ ամսաթվի դրությամբ: Այս օգուտները և վնասները ճանաչվում են պլանին մասնակցող աշխատողների ակնկալվող միջին մնացած աշխատանքային կյանքի տևողության ընթացքում: ՀՀՍՄ 19.120Ա(բ)  
ՀՀՍՄ 19.64  
ՀՀՍՄ 12.120Ա(ա)  
ՀՀՍՄ 19.92  
ՀՀՍՄ 19.93

Անցյալ ծառայության արժեքները ճանաչվում են որպես ծախս գծային մեթոդով մինչև երաշխավորված դառնալը մնացած միջին ժամանակահատվածի ընթացքում: Եթե թոշակային պլանի ներդրման կամ փոփոխության պահին փոխհատուցումները դառնում են երաշխավորված, ապա անցած ծառայության արժեքը ճանաչվում է միանգամից: ՀՀՍՄ 19.54  
ՀՀՍՄ 19.58

Սահմանված հատուցման ակտիվը կամ պարտավորությունը ներառում է սահմանված հատուցման պարտավորության ներկա արժեքը (օգտագործելով՝ բարձր կարգի կորպորատիվ պարտատոմսերի վրա հիմնված գեղչադրույքը)՝ գումարած ցանկացած ակտուարային օգուտները (հանած ցանկացած վնասները), որոնք չեն ճանաչվել որպես վերը նշվածի արդյունք՝ հանած դեռ չճանաչված անցյալ ծառայության արժեքը և պլանի ակտիվների իրական արժեքը, որոնցով պետք է ուղղակիորեն մարվեն պարտավորությունները: Զուրաբանչյուր ակտիվի արժեքը սահմանափակվում է դեռ չճանաչված անցյալ ծառայությունների արժեքով և պլանի ֆոնդի փոխհատուցման տեսքով հասանելի կամ պլանի ապագա հատկացումների նվազմամբ ցանկացած տնտեսական օգուտների ներկա արժեքով: ՀՀՍՄ 19.7  
ՀՀՍՄ 19.58Ա

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

ՀՀՄՍ 1.10(ե)

### (Ժե) Թոշակային հատուցումների գծով պարտավորություններ (շարունակություն)

#### Մեկնաբանություն

Խուճաբ ճանաչում է զուտ ընդհանուր չճանաչված ակտուարային օգուտները և վնասները, որոնք գերազանցում են սահմանված հատուցման գծով պարտավորությունից և պլանի ակտիվների իրական արժեքից առավելագույնի 10%-ը՝ աշխատողների մնացած աշխատանքային տևողության ընթացքում, համաձայն ՀՀՄՍ 19.93-ի: Սա երբեմն դիտարկվում է որպես «միջանցքի մոտեցում»:

Նշենք նաև, որ ՀՀՄՍ 19-ը վերջերս փոփոխվել էր: Փոփոխությունները ներառում են որոշակի նշանակալի փոփոխություններ, ինչպիսիք են՝ միջանցքի մեխանիզմի և պլանի ակտիվների գծով ակնկալվող եկամուտների վերացումը: Փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2013թ. հունվարի 1-ից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

### (Ժզ) Մակաբացման գծով հետաձգված ծախսումներ

Մինչ արդյունահանումը հանքի բաց մշակման ժամանակ կատարված մակաբացման գծով ծախսումները կապիտալացվում են հանքի կառուցման ծախսումների կազմում և հետագայում ամորտիզացվում են հանքի գործարկման ընթացքում արդյունահանման ծավալին համամասնորեն:

Եթե հանքը գործում է որպես մի քանի առանձին հանքահորեր, որոնք ներկայացվում են որպես առանձին գործառնություններ հանքի պլանավորման համար, մակաբացման գծով ծախսումները հաշվառվում են առանձին՝ հիմնվելով յուրաքանչյուր հանքահորի հանքաքարի ծավալի վրա: Եթե, այնուամենայնիվ, այդ հանքահորերը մեծապես ինտեգրված են ընդհանուր հանքի պլանավորման տեսակետից, այդ դեպքում երկրորդ և հաջորդող հանքահորերը մակաբացման հետաձգված ծախսումների հաշվառման նպատակով դիտարկվում են որպես առաջին հանքահորի ավելացում: Այս դեպքերում երկրորդ և հաջորդող հանքահորերի նախնական մակաբացման (հանքայնությամբ ծածկող ապարների և թափոնների հեռացման) ծախսումները դիտվում են որպես ընդհանուր գործընթացի արտադրական փուլին վերագրվող մակաբացման ծախսումներ:

Մակաբացման ծախսումները, որոնք առաջանում են հաջորդաբար արտադրական գործունեության փուլերում, հետաձգվում են այն գործառնությունների համար, որոնք առավել հարմար հիմունք կհանդիսանան ծախսերը համապատասխան տնտեսական օգուտների հետ հաշվառելու համար և երբ ազդեցությունը էական է: Սա հիմնականում լինում է այն դեպքում, երբ մակաբացման ծախսումները տատանվում են հանքի գործունեության ընթացքում: Այդ հետաձգված ծախսումների հաշվարկը կախված է մակաբացման գործակցից՝ հանքի գործունեության ընթացքում ակնկալվող ընդհանուր թափոնը բաժանելով կա՛մ հանքի գործունեության ընթացքում ակնկալվող արդյունահանվող հանքաքարի ծավալին, կա՛մ հանքաքարում պարունակվող հանածոյի ակնկալվող ծավալին: Ժամանակաշրջանում առաջացած մակաբացման ծախսումները հետաձգվում են այն չափով, որքանով ընթացիկ ժամանակաշրջանի գործակիցը գերազանցում է հանքի կյանքի միջին մակաբացման գործակիցը: Այս հետաձգված ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում, այն չափով, որքանով հաջորդող ժամանակաշրջանների ընթացիկ գործակիցը պակաս է հանքի (հանքահորի) կյանքի միջին մակաբացման գործակիցից: Իսկ հանքի (հանքահորի) կյանքի միջին գործակիցը հիմնված է հանքի (հանքահորի) տնտեսապես վերականգնվող հանածոյի պաշարների վրա: Փոփոխությունները հաշվառվում են առաջընթաց փոփոխության ամսաթվից:

Հետաձգված մակաբացման ծախսումները ընդգրկվում են «Հանքեր» հաշվում: Դրանք կազմում են ընդհանուր ներդրման մաս համապատասխան դրամաստեղծ միավորներում, որոնք էլ դիտարկվում են արժեզրկման համար, երբ դեպքերը կամ հանգամանքների փոփոխությունները վկայում են, որ հաշվեկշռային արժեքը կարող է չփոխհատուցվել:

#### Մեկնաբանություն

##### Մակաբացման գծով հետաձգված ծախսումներ

Բաց հանքի շահագործման աշխատանքների գծով գործառնությունների ժամանակ անհրաժեշտ է հեռացնել հանքայնությամբ ծածկող ապարները և այլ թափոնները, որպեսզի հասանելի լինի հանքաքարը, որից էլ այլ հանածոները կարող են առանձնացվել: Ընդհանուր առմամբ ընդունված է, որ այդ հանքայնությամբ ծածկող ապարների և թափոնների հեռացման ծախսումները (մակաբացման ծախսումներ) հանքի մշակման ժամանակ (մինչև արդյունահանումը սկսելը) պետք է կապիտալացվեն որպես ընդհանուր ներդրման մաս հանքի կառուցման համար: «Վերոնշյալ նպատակներից ելնելով»՝ «հանքը» պետք է դիտվի որպես ակտիվ, որն առանձին է դասվում «հանածոների իրավունքներ և հանածոների պաշարներ» ակտիվից, որը չի ներառվում ՀՀՄՍ 16-ի գործողության ոլորտում:

Մինչ ՖՀՄՄ 20 «Արդյունահանման փուլում հանքի բաց մշակման մակաբացման ծախսումներ» մեկնաբանության հրապարակումը, գոյություն ունեցող ընդհանուր համաձայնություն արդյունահանման փուլի ընթացքում մակաբացման ծախսումների վերաբերյալ: Ըստ ՖՀՄՄ-ների պարզ չէր, թե արդյոք այս մակաբացման ծախսումները պետք է դիտարկվեին որպես պաշարների արժեքի մաս ըստ ՀՀՄՍ 2-ի, կապիտալացվեն որպես ակտիվի մաս կամ դիտարկվեին որպես ժամանակաշրջանի ծախսեր: Տվյալ խնդիրը դիտարկման դրվեց ՖՀՄՍ մեկնաբանությունների կոմիտեի կողմից և ենթադրվում էր, որ ՖՀՄՄ 4-ն պետք է թողարկվեր 2011թ. հոկտեմբերին (տե՛ս ստորև լրացուցիչ տվյալների համար):

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

ՀՀՄՍ 1.10(Ե)

### (Ժգ) Մակաբացման գծով հետաձգված ծախսումներ (շարունակություն)

#### Մեկնաբանություն (շարունակություն)

Մինչ ֆՀՄՄԿ 20-ի հրապարակումը, օգտագործվում էին հետևյալ երեք մոտեցումները՝

- ▶ Մակաբացման ծախսումների գրանցում որպես ծախս այն ժամանակ, երբ դրանք տեղի են ունենում
- ▶ Մակաբացման ծախսումների կապիտալացում որպես պաշարների արժեքի մաս
- ▶ Մակաբացման ծախսումների հետաձգում

Ունենալով այս ծախսումների դասակարգման տարբեր եղանակներ՝ կարևոր է, որ ընկերությունները բացահայտեն.

- ▶ Մակաբացման ծախսումների հաշվապահական հաշվառման քաղաքականությունը
- ▶ Հետաձգված ծախսումների ընդհանուր գումարը
- ▶ Ֆինանսական վիճակի մասին հաշվետվության այն հատվածը, որտեղ այդ ծախսումները ճանաչվում են:

#### Մակաբացման ծախսումների ծախսագրումը

Որոշ հանքարդյունահանման գործընթացներում մակաբացման գործակիցը, որը թափոնների և արդյունահանված հանածոյի հարաբերությունն է, հիմնականում մնում է հաստատուն հանքի շահագործման ընթացքում, ինչը պայմանավորված է հանքային պաշարների ֆիզիկական բնութագրերով: Մասնավորապես, երբ ձեռնարկությունը օգտագործում է արդյունահանման այնպիսի եղանակ, երբ միայն մակերեսն է առանձնացվում, նախնական մակաբացումը մեծ չի լինի և մի ժամանակաշրջանից մյուսը տատանում է էական չի լինի: Ընդհանուր առմամբ ընդունելի է համարվում ներառել այն ընդհանուր արտադրական ծախսումների մեջ ծախսումներն առաջանալիս: Այս հարցը առավել լավ նկարագրված է EIC 160-ում Կանադական կոմիտեի կողմից, որը նշում է, որ մակաբացման ծախսումները պետք է կապիտալացվեն, միայն եթե դրանք նպաստում են հանքի գործունեության բարելավմանը:

#### Մակաբացման ծախսումների պաշարներում կապիտալացումը

ԱՄՆ ՀՀՄՍ 930-330-25-1 – ի կիրառումը, որը նախկինում վերաբերում էր EITF 04-6-ի Մակաբացման ծախսումների հաշվառմանը արդյունահանման գործունեության ժամանակ, որի կիրառումը թույլատրված է ՀՀՄՍ 8-ով, ընդունվել է մի շարք ընկերությունների կողմից, որոնք աշխատում են ֆՀՄՍ-ներով, մասնավորապես այն ընկերությունների կողմից, որոնք ներկայացնում են ֆինանսական տեղեկատվություն նաև ԱՄՆ ՀՀՄՍ-ի համաձայն: 930-330-25-1 – ը նշում է, որ մակաբացման ծախսումները, որոնք կատարվել են հանքի արդյունահանման փուլի ընթացքում փոփոխուն արտադրական ծախսումներ են, որոնք պետք է ընդգրկվեն պաշարների ինքնարժեքի մեջ այն ժամանակաշրջանում, երբ այդ դուրս բերման աշխատանքների գծով ծախսումները կատարվել են:

Այս կետը կարող է բերել անկայունության՝ մակաբացման ծախսումների հաշվառման ժամանակ այն հանքերում, որտեղ էական տատանում է լինում թափոնի և արդյունահանված հանքաքարի հարաբերությունում: Փաստարկվում է, որ այս եկամտների անկայունությունը միայն արտացոլում է իրական անկայունությունը գործառնական արդյունքներում: Այնուամենայնիվ, կարելի է վիճել, որ մակաբացման ծախսումները, որոնք կատարվում են մի ժամանակաշրջանում, պարտադիր չէ, որ վերաբերեն հանածոյի արտադրությանը տվյալ ժամանակաշրջանում: Օրինակ՝ կարող են լինել լավ գործառնական հիմնավորումներ, հանքայնությամբ ծածկող ապարների մակաբացումը արտադրությունից բավականին վաղ իրականացնելու համար:

#### Արտադրական ծախսումների հետաձգումը ապագա արտադրությանը համապատասխանեցնելու համար

Որոշ հանքարդյունաբերական գործընթացներում, մակաբացման ծախսումները կարող են մեծապես տարբերվել տարբեր ժամանակաշրջաններում՝ կախված հանքայնությամբ ծածկող ապարների շերտի խտությունից, հանքամարմնի ֆիզիկական հատկություններից և ձևից և գործառնական պահանջներից, որոնք նշում են, թե երբ հանքայնությամբ ծածկող ապարները կարող են հեռացվել: Երբ մակաբացման ծախսումները մեծապես տարբեր են տարբեր ժամանակաշրջաններում, կազմակերպությունները սովորաբար հետաձգում և կապիտալացնում են գերազանցող մակաբացման ծախսումները (և այն ծախսումները, որոնք չեն վերաբերում ընթացիկ ժամանակաշրջանին) և բաշխում են այդ ծախսումները հետագա տարիներին իրականացված արտադրություններում: Գործնականում կիրառվող երկու մոտեցում կա մակաբացման ծախսումների հետաձգվող մասը որոշելու համար՝ առանձնահատուկ որոշակիացման եղանակ և միջին մակաբացման գործակցի եղանակ:

#### 1) Առանձնահատուկ որոշակիացման եղանակ

Առանձնահատուկ որոշակիացման եղանակի համաձայն յուրաքանչյուր փուլի մակաբացման ծախսումները վերագրվում են այն հանքաքարի քանակի վրա, որը դարձել է հասանելի: Յուրաքանչյուր փուլի մակաբացման ծախսումները կապիտալացվում են և ամորտիզացվում, երբ դրա հետ կապված հանքաքարը արդյունահանվում է: Այս մոտեցման որոշակի արտացոլում կա ՀՀՄՍ 2-ում և ՀՀՄՍ16 –ում, բայց դրանք սովորաբար համարվում են ծանր հաշվետարության տեսանկյունից և տարածված չեն: ֆՀՄՄԿ 20-ը մեծապես խրախուսում է այս մեթոդի օգտագործումը:

#### 2) Միջին մակաբացման գործակցի եղանակ

Միջին մակաբացման գործակցի եղանակը պահանջում է համեմատել ներկա ժամանակաշրջանի «հանքայնությամբ ծածկող ապարի և արդյունահանված հանքաքարի հարաբերությունը» գործակիցը հանքի ակնկալվող օգտակար գործունեության տարիների համար գնահատված ակնկալվող միջին գործակցի հետ, որը որոշվում է հանքի շահագործման պլանին համապատասխան: Գերազանցող մակաբացման ծախսումները հետաձգվում են, երբ փաստացի մակաբացման գործակիցը գերազանցում է միջին մակաբացման գործակցին: Հետաձգված մակաբացման ծախսումները ծախսագրվում են հակառակ իրավիճակում: Այս մեթոդի օգտագործման արդյունավետությունը կախված է հանգամանքներից:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

ՀՀՄՍ 1.10(ե)

### (Ժգ) Մակաբացման գծով հետաձգված ծախսումներ (շարունակություն)

#### Մեկնաբանություն (շարունակություն)

**Աստիճանաբար աճող մակաբացման գործակից** - այս դեպքում միջին մակաբացման գործակից եղանակը կիրառելի չէ, քանի որ այն կհանգեցնի մակաբացման ծախսումի գծով պարտավորության ճանաչմանը: Հանքում ներդրումները շարունակելու իրավական կամ կառուցողական պարտականության բացակայության դեպքում կազմակերպությունը չպետք է ճանաչի պարտավորություն: Այս դեպքում վերևում քննարկված մեթոդներից որևէ մեկը առավել նպատակահարմար կլինի:

**Աստիճանաբար նվազող մակաբացման գործակից** - չնայած քիչ է հավանական, որ այս իրավիճակը լինի իրական կյանքում (սովորաբար հանքարդյունահանման գործընթացները սկսվում են այն պահից, երբ մակաբացման գործակիցը ամենանպաստավորն է), այդ դեպքում միջին մակաբացման գործակից եղանակը կիրառելի է:

**Հաստատուն կամ կայուն մակաբացման գործակից** - այս դեպքում միջին մակաբացման գործակից մոտեցումը համարվում է ընդունելի, բայց մեթոդի արդյունքը կմոտարկի վերևում քննարկված այլ մեթոդների արդյունքները:

Վերջին իրավիճակը, որը խմբավորում է վերոնշյալ եղանակների տարրերը, կլինի երբ մակաբացման գործակիցը տատանվում է, քանի որ հանքային պաշարների խորությունը տատանվում է: Այս դեպքում կազմակերպությունը պետք է կատարի դատողություններ համապատասխան հաշվապահական հաշվառման քաղաքականությունն ընտրելիս: Այն կազմակերպությունը, որն օգտագործում է միջին մակաբացման եղանակը, պետք է պարբերաբար գնահատի օգտագործված մեթոդի համապատասխանությունը: Օրինակ՝ անսպասելի սխալ արդյունահանումը չպետք է կապիտալացվի և հետագայում տարածվի ապագա արտադրությունների վրա, այլ պետք է ճանաչվի որպես ժամանակաշրջանի ծախս:

Չնայած միջին մակաբացման եղանակը կատարյալ չէ, շատ հանքարդյունաբերական կազմակերպություններ կարծում են, որ այն ապահովում է առավել տեղին և արժանահավատ տեղեկատվություն իրենց ֆինանսական վիճակի և ֆինանսական արդյունքների մասին, քան այլընտրանքային մեթոդները:

#### **ՖՀՄՄԿ մեկնաբանություն 20 – «Արդյունահանման փուլում հանքի բաց մշակման մակաբացման ծախսումներ»**

Սպասվում է, որ ՖՀՄՄ մեկնաբանությունների կոմիտեն (Մեկնաբանությունների կոմիտե) կիրապարակի ՖՀՄՄԿ 20 (Մեկնաբանությունը) 2011թ. հոկտեմբերին: Ստորև բերվում է Մեկնաբանության մեր ընկալման ամփոփ նկարագիրը:

Մեկնաբանությունը դիտարկում է մակաբացման տարբեր տեսակի ծախսումներ, որոնք առաջանում են հանքերի բաց մշակման գործառնություններում: Այս ծախսումները բաժանվում են հանքի մշակման ժամանակ կատարված (այսինքն՝ մինչ արտադրությունը) և արտադրության փուլում կատարված ծախսումների: Սովորաբար այն ծախսումները, որոնք կատարվել են հանքի մշակման փուլում, կապիտալացվում են որպես հանքի կառուցման, մշակման և շինարարության ծախսումների մաս համաձայն ՀՀՄՍ 16-ի սկզբունքների: Ի վերջո, այս ծախսումները մշակվում կամ ամորտիզացվում են պարբերաբար, սովորաբար արտադրության միավորի մեթոդի կիրառմամբ, երբ արտադրությունը սկսվում է: Հանքի մշակման փուլում կատարված մակաբացման ծախսումները Մեկնաբանության կողմից չեն դիտարկվում: Մեկնաբանությունների խորհուրդը եզրակացրել է, որ գործնականում այս ծախսումների հաշվառման ժամանակ ի հայտ են եկել փոքր շեղումներ:

Չնայած «արտադրության փուլ» տերմինի կարևորությանը, այն սահմանված չէ ո՛չ Մեկնաբանության, ո՛չ այլ ՖՀՄՄ-ների մեջ: Արտադրության փուլի սկսելու որոշումը ոչ միայն ազդում է մակաբացման ծախսումների վրա, այլև արդյունահանման ոլորտի՝ հաշվապահական հաշվառման բազմաթիվ այլ խնդիրների վրա: Վերջինս ներառում է այլ ծախսումների կապիտալացման դադարեցմանը՝ ներառյալ փոխառության ծախսումների, մշակածության/ամորտիզացիայի հաշվարկ սկսելուն, և մինչ արտադրությունը որոշակի հաստիքների հաշվառմանը:

#### **Գործողության ոլորտը**

Մեկնաբանությունը վերաբերում է բոլոր թափոնների դուրս բերման (մակաբացման) ծախսումներին, որոնք տեղի են ունենում բաց հանքերի արտադրության ընթացքում (արտադրության մակաբացման ծախսումներ): Մեկնաբանության գործողության ոլորտը սահմանափակվում է միայն բաց հանքերի արդյունահանմամբ և չի վերաբերում ստորգետնյա հանքերի արդյունահանմանը:

Բացի այդ, Մեկնաբանությունների խորհուրդը, Մեկնաբանության գործողության ոլորտը սահմանելիս, որոշել է չդիտարկել նավթի և բնական գազի արդյունահանումը՝ ներառյալ այն հարցը, թե արդյոք նավթային ավազի դուրս բերումը վերաբերում է բաց հանքերի արդյունահանման գործունեությանը:

Այնուհետև, մեկնաբանությունը ենթադրում է, որ արտադրության ընթացքում ձեռնարկված մակաբացման գործունեությունը կարող է բերել հետևյալ երկու օգուտները՝ առաջինը՝ պաշարների արտադրությունը, իսկ երկրորդը՝ ապագայում արդյունահանվող հանքաքարի բարելավված մուտքը: Երբ օգուտները ստացվում են արտադրված պաշարների տեսքով, արտադրության մակաբացման գծով ծախսումները հաշվառվում են համաձայն ՀՀՄՍ 2 «Պաշարներ» ստանդարտի: Երբ օգուտը ապագայում արդյունահանվող հանքաքարի բարելավված մուտքն է, այս ծախսումները պետք է ճանաչվեն որպես ոչ ընթացիկ ակտիվ, եթե անհրաժեշտ չափանիշները բավարարվում են (տե՛ս ստորև): Մեկնաբանությունը այդ ոչ ընթացիկ ակտիվին կոչում է որպես «մակաբացման գործունեության ակտիվ»:

#### **Մակաբացման գործունեության ակտիվի ճանաչման չափանիշը**

ՖՀՄՄԿ 20 սահմանում է, որ կազմակերպությունը պետք է ճանաչի մակաբացման գործունեության ակտիվ միայն հետևյալ բոլոր չափանիշների բավարարման դեպքում՝

- ▶ Հավանական է, որ մակաբացման գործունեության հետ կապված ապագա տնտեսական օգուտը (բարելավված մուտք դեպի հանքամարմին) կհոսի կազմակերպություն,
- ▶ Կազմակերպությունը կարող է որոշել հանքամարմնի բաղադրիչը, որին մուտքը բարելավվել էր,
- ▶ Հանքամարմնին բարելավված մուտքի ծախսումները կարող են արժանահավատորեն չափվել:



# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

ՀՀՄՄ 1.10(Ե)

### (Ժգ) Մակաբացման գծով հետաձգված ծախսումներ (շարունակություն)

#### Մեկնաբանություն (շարունակություն)

Առանձին ակտիվ հանդիսանալու փոխարեն մակաբացման գործունեության ակտիվը պետք է հաշվառվի որպես գոյություն ունեցող ակտիվի ավելացում կամ՝ կատարելագործում: Սա նշանակում է, որ մակաբացման գործունեության ակտիվը հաշվառվում է որպես գոյություն ունեցող ակտիվի մաս: ՖՀՄՄ 20-ը չի նշում, թե արդյոք մակաբացման գործունեության ակտիվը պետք է համարվի նյութական թե՛ ոչ նյութական ակտիվ: Փոխարենը այն պարզապես սահմանում է, որ այս ակտիվը պետք է դասակարգվի որպես նյութական կամ ոչ նյութական ակտիվ կախված գոյություն ունեցող ակտիվի բնույթից, որի մասն է կազմում, հետևաբար, դասակարգումը կախված է կազմակերպության կողմից հանքերը որպես նյութական կամ ոչ նյութական ակտիվ դասակարգելուց:

Մեկնաբանությունը դիտարկում է, որ մակաբացման գործունեության ակտիվը կարող է ավելացնել կամ բարելավել գոյություն ունեցող մի շարք այնպիսի ակտիվներ, ինչպիսիք են՝ հանքային սեփականությունը (հողը), օգտակար հանածոների հանքավայրը, հանքաքարի արդյունահանման ոչ նյութական ակտիվի իրավունքը կամ հանքի մշակման ժամանակ առաջացած ակտիվը: Կազմակերպությունները, շատ դեպքերում, դասակարգում են իրենց արտադրող հանքի ակտիվները որպես նյութական ակտիվներ, հետևաբար հավանական է, որ մակաբացման գործունեության ակտիվները նույնպես կդասակարգվեն որպես նյութական ակտիվներ:

Այն կազմակերպությունները, որոնք ներկայումս իրենց կապիտալացված մակաբացման ծախսումները ներկայացնում են որպես հանքային ակտիվներից կամ իրավունքներից առանձին ակտիվ, օրինակ՝ երբ այդ ծախսումները ներկայացվում են որպես այլ ընթացիկ կամ ոչ ընթացիկ ակտիվների մաս, ՖՀՄՄ 20-ի որոշումներից հետո, նման գումարները կարիք կունենան ներկայացնել որպես հանքերին վերաբերող ակտիվի մաս (կամ նյութական կամ ոչ նյութական), որը կներկայացվի ոչ ընթացիկ ակտիվներում:

#### Սկզբնական ճանաչումը

Մակաբացման գործունեության ակտիվը սկզբնապես պետք է չափվի սկզբնական արժեքով: Սկզբնական արժեքը իրենից ներկայացնում է ամփոփապես մակաբացման գործունեության իրականացման համար անհրաժեշտ կուտակված ծախսումները, որոնք բարելավում են հանքաքարի որոշված բաղադրիչը՝ գումարած ուղղակիորեն վերագրելի վերադիր ծախսումների: ՖՀՄՄ 20-ի Եզրակացությունների հիմքում Մեկնաբանությունների խորհրդի կարծիքով որպես ուղղակիորեն վերագրելի վերադիր ծախսումների օրինակներ կներառվեն այնպիսի ծախսումներ, ինչպիսիք են հանքի տվյալ բաղադրիչը հսկող ղեկավարի աշխատավարձի գծով ծախսումները, և այն սարքավորման վարձավճարի բաշխումը, որը վարձակալվել էր հատուկ մակաբացման գործունեության իրականացման համար:

Ըստ մեկնաբանության՝ որոշ կողմնակի գործառնություններ կարող են տեղի ունենալ արտադրության ընթացքում մակաբացման գործընթացին զուգահեռ, որոնք սակայն անհրաժեշտ չեն արտադրական փուլում մակաբացման գործընթացի՝ ըստ պլանավորվածի շարունակման համար: Այս կողմնակի գործառնությունների հետ կապված ծախսումները չեն ներառվում մակաբացման գործունեության ակտիվի արժեքի մեջ: Օրինակ՝ մուտքի թեքահարթակի կառուցում, որտեղ տեղի է ունենում արտադրության մակաբացման գործընթացը: Այս օժանդակ ծախսումները պետք է ճանաչվեն որպես ակտիվ կամ ծախսագրվեն ըստ այլ ՖՀՄՄ-ների:

#### Պաշարների և մակաբացման գործունեության ակտիվի միջև ծախսումների բաշխում

Ըստ Մեկնաբանության՝ երբ պաշարների արդյունահանման գործընթացը և հանքամարմին մուտքի (որը հետագայում արդյունահանվելու է) բարելավումը տեղի են ունենում միաժամանակ, դժվար է լինում գործնականում առանձնացնել արդյունահանված պաշարների ծախսումները և մակաբացման գործունեության ծախսումները: Տվյալ դեպքում, Մեկնաբանությունը թույլ է տալիս, որպեսզի կազմակերպությունը օգտագործի այնպիսի բաշխման մոտեցում, որը հիմնված է արտադրության համապատասխան չափանիշի վրա:

Արտադրության չափումը հաշվարկվում է հանքամարմնի հայտնաբերված մասի համար: Այն ներառում է հանքամարմնի այդ տարրի համար արտադրության սպասված մակարդակի և արտադրության փաստացի մակարդակի համեմատությունը՝ որոշելու համար, երբ լրացուցիչ գործառնությունը կարող է ստեղծել ապագա օգուտներ: Ակնկալվող արտադրության մակարդակը և համապատասխան ծախսումները կազմում են արտադրված պաշարների ինքնարժեքի մաս: Փաստացի արտադրության մակարդակի գերազանցումը սպասվողից (ներառյալ՝ համապատասխան ծախսումները) կարող են դիտարկվել որպես մակաբացման գործունեության ակտիվ: Կարևոր է նկատել, որ երբ փաստացի մակաբացման մակարդակը գերազանցում է որոշված տարրի սպասվելիք մակաբացման մակարդակին, այն մեխանիկորեն չի ճանաչվում որպես մակաբացման գործունեության ակտիվ:

Բաշխման համապատասխան բազան որոշելիս՝ Մեկնաբանությունը ապահովում է (ոչ սպառիչ) որոշ հնարավոր չափանիշների ցուցակ, որոնք կարելի է օգտագործել: Այն ներառում է՝

- ▶ Արտադրված պաշարների ինքնարժեքը համեմատած սպասվող ինքնարժեքի
- ▶ Դուրս բերված թափոնների ծավալը համեմատած սպասվող ծավալի՝ հանքաքարի արտադրության տվյալ մակարդակի պայմաններում
- ▶ Արդյունահանված հանքաքարի հանքային պարունակությունը համեմատած ակնկալվող հանքային պարունակության հետ՝ հանքաքարի արդյունահանման տրված մակարդակի պայմաններում

Չնայած որ այս ցուցակը սպառիչ չէ՝ Մեկնաբանությունների կոմիտեն հստակացնում է, որ վաճառքը կամ համեմատական վաճառքը որպես բաշխման հիմք օգտագործելը ընդունելի չէ:

Պետք է նշել, որ թեև Մեկնաբանությունում ներառված բաշխման մոտեցումները նման են հանքի կյանքի ընթացքում միջին մակաբացման գործակցի մեթոդին, որն այսօր օգտագործվում է շատերի կողմից, կան նաև տարբերություններ:

Հիմնական տարբերությունը այն է, որ այն մակարդակը, որում արտադրության սպասվելիք մակարդակը պետք է որոշվի չի կարող լինել հանքամարմնի ամբողջությամբ: Ընդհակառակը՝ այն պետք է որոշվի հանքամարմնի յուրաքանչյուր տարրի համար առանձին: Տե՛ս ստորև հանքամարմնի տարրերի որոշման հետագա քննարկման համար:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

ՀՀՄՍ 1.10(ե)

### (Ժգ) Մակաբացման գծով հետաձգված ծախսումներ (շարունակություն)

#### Մեկնաբանություն (շարունակություն)

##### Հանքամարմնի տարրերի որոշումը

Կարևորագույն քայլերից մեկը, որը պետք է կատարի կազմակերպությունը այս նոր մեկնաբանությունը կիրառելիս՝ դա հանքամարմնի տարրերի որոշումն է: Այն պարտադիր է հետևյալ պատճառներով՝

- ▶ Արտադրության մակաբացման ծախսումները կարող են կապիտալացվել որպես ակտիվ, միայն եթե հանքամարմնի տարրը, որի համար մուտքը բարելավվում է, կարող է որոշվել
- ▶ Մակաբացման ծախսումները պաշարների և մակաբացման ակտիվի միջև բաշխելու համար կազմակերպությունը պետք է որոշի արտադրության ակնկալվող մակարդակը հանքամարմնի յուրաքանչյուր տարրի համար
- ▶ Մակաբացման գործունեության ակտիվը պետք է մաշվի կամ ամորտիզացվի սխեմատիկ հիմունքով այն հանքամարմնի որոշված տարրի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, որն ավելի հասանելի է դառնում որպես մակաբացման աշխատանքների արդյունք:

Չնայած այս գնահատման կարևորությանը՝ Մեկնաբանության շրջանակներում սահմանափակ ուղեցույց է ապահովվում տարրերի որոշման վերաբերյալ: Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ Մեկնաբանությունների կոմիտեն ակնկալում է, (հիմնականում), որ տարրը դիտարկվի որպես հանքամարմնի ամբողջություն: Այս տեսակետը պաշտպանվում է ՖՀՄՍԿ 20-ի մի շարք բաժիններում:

- ▶ Փոխհամաձայնության հիմունքները բացատրում են, որ «տարրը» վերաբերում է հանքամարմնի յուրահատուկ ծավալին, որի ապագա հասանելիությունը բարելավվել է մակաբացման աշխատանքների շնորհիվ; հանքամարմնի որոշված տարրը հիմնականում կլինի ամբողջ հանքամարմնի ենթաբազմություն; և հանքը կարող է ունենալ մի շարք բաղադրիչներ, որոնք որոշվել են հանքի պլանավորման ընթացքում:
- ▶ Մաշվածության կամ ամորտիզացիայի պահանջները սահմանում են, որ հանքամարմնի որոշված օգտակար ծառայության ժամկետը, որն օգտագործվում է մակաբացման գործունեության ակտիվն ամորտիզացնելու համար, կտարբերվի, հանքն ինքնին և հանքի գործողության ընթացքում օգտագործվող ակտիվները ամորտիզացնելու համար օգտագործվող օգտակար ծառայության ժամկետից, բացառությամբ՝ երբ մակաբացման աշխատանքները ապահովում են ամբողջ հանքամարմնի հասանելիության բարելավումը:

Հանքամարմնի տարրերը որոշելիս կապահանջվի էական դատողություններ, և դա մեր եզրակացությունն է, որ Մեկնաբանությունների կոմիտեի որոշումը չորսամսյալ մանրամասն ուղեցույց այն մասին, թե որն է համարվում որոշված տարր և ինչպես այն պետք է որոշվի, կանխատեսված էր: Կազմակերպություններից նման որոշում կատարելու պահանջը՝ հիմնված իրենց հանքերի պլաններից, Մեկնաբանությունների կոմիտեի մոտեցումն էր, ենթադրելով, որ ոչ մի հանք մյուսին նման չէ: Հետևաբար, փորձելով մանրամասն ուղեցույց/հատուկ կանոններ տրամադրել հանքամարմնի տարրերի որոշման վերաբերյալ, Կոմիտեն կարող է ներկայացնել չաշխատող մոդել:

Տրված պայմաններում, ակնհայտ է, որ Մեկնաբանությունների կոմիտեն չի ակնկալում, որ կազմակերպությունները կորոշեն հանքամարմնի տարրերը, որոնք արդեն ներառված չեն իրենց՝ հանքի պլաններում: Ասվածից հետևում է, որ որոշ հանքի պլանների բնույթից կախված, սա այդքան հեշտ իրագործելի առաջադրանք չէ, և բավական դժվար կլինի ավելի բարդ կառուցվածքով հանքերի համար: Բացի այդ, կազմակերպության մոտեցումը տարբեր պոտենցիալ տարրերի նկատմամբ կարող է տարբերվել կազմակերպությունների միջև և որպես այդպիսին միևնույն կազմակերպության տարբեր հանքերի միջև:

##### Հետագա չափումը

ՖՀՄՍԿ 20-ը կապահանջի, որ սկզբնական ճանաչումից մակաբացման գործունեության ակտիվը պետք է չափվի կամ՝ սկզբնական արժեքով կամ՝ վերագնահատված արժեքով՝ հանած մաշվածությունը կամ ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները, նույն կերպ, ինչ այն ակտիվը, որի մասն է հանդիսանում այն: Մակաբացման գործունեության ակտիվը պետք է մաշվի կամ ամորտիզացվի պարբերաբար հիմունքով, որոշված այն հանքամարմնի տարրի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, որն ավելի հասանելի է դառնում մակաբացման աշխատանքների արդյունքում:

Մեկնաբանությունը պահանջում է արտադրության միավորի մեթոդի կիրառումը, քանի դեռ այլ մեթոդը չի լինի ավելի տեղին: Ինչպես նշված էր ավելի վաղ, Մեկնաբանությունների կոմիտեն նշել է, որ որոշված տարրի օգտակար ծառայության ժամկետը, որը կիրառվում է մակաբացման գործունեության ակտիվի մաշվածության կամ ամորտիզացիայի հաշվարկման ժամանակ, կտարբերվի հանքի և հանքի գործողության ընթացքում օգտագործվող ակտիվների ամորտիզացման համար կիրառվող օգտակար ծառայության ժամկետից, եթե մակաբացման աշխատանքները չեն ապահովում բարելավված մուտք ամբողջ հանքի համար:

##### Ուժի մեջ մտնելը և անցումը

ՖՀՄՍԿ 20-ը ուժի մեջ է մտնում 2013թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող ժամանակաշրջանների համար: Ավելի վաղ կիրառումը թույլատրվում է: Եթե կազմակերպությունը կիրառում է այս Մեկնաբանությունը ավելի վաղ ժամանակաշրջանների համար, այն պետք է բացահայտի այդ փաստը:

Մեկնաբանությունը պետք է կիրառվի առաջընթաց արտադրության մակաբացման ծախսումների նկատմամբ ներկայացվող ամենավաղ ժամանակաշրջանի սկզբից: Բազմաթիվ կազմակերպությունների համար դա նշանակում է, որ նրանք պետք է սկսեն ՖՀՄՍԿ 20-ի ազդեցությանը հետևել 2012թ. հունվարի 1-ից:

Եթե կազմակերպությունը նշված ամենավաղ ժամանակաշրջանի սկզբին ունի մակաբացման գործառնությունների ակտիվների մնացորդներ, որոնք առաջացել են արդյունահանման ընթացքում իրականացված մակաբացման աշխատանքների արդյունքում, ապա այն պետք է վերադասակարգի այդ ակտիվը որպես այն ակտիվի մաս, որին վերաբերում են այդ մակաբացման աշխատանքները՝ այնքանով, որքանով առկա է հանքամարմնի որոշված տարր: Նման մնացորդները պետք է ամորտիզացվեն այն հանքամարմնի որոշված տարրի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, որին վերաբերում է յուրաքանչյուր ակտիվի մնացորդը:



# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի ամփոփ նկարագիր (շարունակություն)

ՀՀՄՄ 1.10(ե)

### (Ժգ) Մակաբացման գծով հետաձգված Թախսումներ (շարունակություն)

#### Մեկնաբանություն (շարունակություն)

Երբ կազմակերպությունը չի կարող որոշել գոյություն ունեցող ակտիվի մնացորդին վերաբերող հանքամարմնի տարրը, ապա ակտիվը պետք է ճանաչվի սկզբնական չբաշխված շահույթում՝ ներկայացվող ամենավաղ ժամանակաշրջանի սկզբին:

Քանի որ ՀՀՄՄ 20-ը ակնկալվում է, որ կբերվի վերջնական տեսքի միայն 2011թ. հոկտեմբերին և «Գուդ մայնինգ»-ը հիմնված է 2011թ. սեպտեմբերի 30-ին հրապարակված ստանդարտների և մեկնաբանությունների վրա, ՀՀՄՄ 20-ի ազդեցությունը և համապատասխան ցուցադրական բացահայտումները չեն ներառվել «Գուդ մայնինգի» այս տարբերակում: Ընդհակառակը, մենք պլանավորում ենք հրապարակել «Գուդ մայնինգի» փոփոխությունը հետագա ամիսներին ՀՀՄՄ 20-ի որդեգրմանը վերաբերող ցուցադրական բացահայտումներ ապահովելու համար և վերջինիս ազդեցությունը ֆինանսական վիճակի և արդյունքների մասին հաշվետվության վրա: Մենք կիրառարկենք տվյալ ուղեցույցը ՀՀՄՄ 20-ի հրապարակումից հետո և կազմակերպությունները և «Էրսթ ընդ Յանգ» ընկերության մասնագետները կունենան բավական ժամանակ գործնական հետևանքները վերլուծելու համար:

## 2.5 Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ

Ստորև բերված են այն ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք թողարկվել են, բայց դեռ ուժի մեջ չեն մտել մինչ Խմբի՝ ֆինանսական հաշվետվությունների հրապարակումը: Այստեղ ներկայացված են այն հրապարակված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք Խումբը կարծում է եական ազդեցություն կունենան կազմակերպության բացահայտումների, ֆինանսական վիճակի կամ արդյունքների վրա՝ ապագայում կիրառվելու դեպքում: Խումբը պատրաստվում է որդեգրել այս ստանդարտները և մեկնաբանությունները (որտեղ կիրառելի են), երբ վերջիններս մտնեն ուժի մեջ:

ՀՀՄՄ 8.30

ՀՀՄՄ 8.31(դ)

#### Մեկնաբանություն

Կազմակերպությունը պետք է բացահայտի միայն այն թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք վերաբերում են կազմակերպությանը: Եթե նոր ստանդարտը կամ մեկնաբանությունը կիրառելի չէ, այն կարող է չբացահայտվել: Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած այլ ստանդարտների վերաբերյալ տեղեկատվության համար տե՛ս հաջորդ Մեկնաբանությունը:

Նշում. Տվյալ ցուցակը ընդգրկում է միայն 2011թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ թողարկված ստանդարտները և մեկնաբանությունները: Կազմակերպությունները պետք է որոշեն այս ամսաթվից հետո ստանդարտների և մեկնաբանությունների թողարկված լինելը:

## ՀՀՄՄ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» - Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների տարրերը

ՀՀՄՄ 1-ի փոփոխությունները այլ կերպ են խմբավորում այլ համապարփակ ֆինանսական արդյունքների տարրերը: Այն տարրերը, որոնք կարող են վերադասակարգվել (կամ «դուրս գրվել») շահույթ կամ վնաս ապագա ժամանակաշրջանում (օրինակ՝ ապաճանաչման կամ մարման ժամանակ) կներկայացվեն առանձին այն տարրերից, որոնք երբեք չեն վերադասակարգվի: Փոփոխությունը վերաբերում է միայն հաշվետվությունների ներկայացմանը, հետևաբար, ազդեցություն չունի Խմբի ֆինանսական վիճակի կամ արդյունքների վրա:

ՀՀՄՄ 1 փոփոխությունը ուժի մեջ է մտնում 2012թ. հուլիսի 1-ից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

## ՀՀՄՄ 19 «Աշխատակիցների հատուցումներ» - ճանաչումը և բացահայտումը – Սահմանված հատուցումների պլաններ

ՀՀՄՄ-ն հրապարակել է մի շարք փոփոխություններ ՀՀՄՄ 19-ում: Վերջիններս ներառում են այնպիսի հիմնադիր փոփոխություններ, ինչպիսիք են միջանցքի մեխանիզմի և պլանի ակտիվների ակնկալվող եկամտաբերության կոնցեպտի հեռացումը, և պարզաբանումներ և վերաձևակերպումներ:

Փոփոխությունը ուժի մեջ է մտնում 2013թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, ընդ որում ավելի վաղ կիրառումը թույլատրվում է:

Խումբն այժմ գնահատում է այս փոփոխությունների ամբողջ ազդեցությունը: Ազդեցություններից մեկը կլինի Խմբի կողմից այժմ կիրառվող միջանցքի մոտեցման հեռացումը:

## ՀՀՄՄ 27 «Առանձին ֆինանսական հաշվետվություններ» (2011 թ. վերանայված)

Որպես նոր ՀՀՄՄ 10-ի և ՀՀՄՄ 12-ի (տե՛ս ստորև) հետևանք, ՀՀՄՄ 27-ի գործողության ոլորտը սահմանափակվում է առանձին ֆինանսական հաշվետվություններում դուստր կազմակերպությունների, համատեղ ձեռնարկումների և ասոցիացված կազմակերպությունների հաշվառմամբ: Խումբը չի ներկայացնում առանձին ֆինանսական հաշվետվություններ:

Փոփոխությունը ուժի մեջ է մտնում 2013թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 2.5 Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ (շարունակություն)

### **ՀՀՄՍ 28 «Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում» (2011թ. վերանայված)**

Որպես նոր ՀՀՄՍ 11-ի և ՀՀՄՍ 12-ի (տե՛ս ստորև) հետևանք, ՀՀՄՍ 28-ը վերանվանվել է ՀՀՄՍ 28 «Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում», և նկարագրում է բացի ասոցիացված կազմակերպություններում, նաև համատեղ ձեռնարկումներում ներդրումների նկատմամբ բաժնեմասնակցության մեթոդի կիրառումը:

Փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2013թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

### **ՀՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ՝ դասակարգում և չափում»**

Թողարկված ՀՀՄՍ 9-ը արտացոլում է ՀՀՄՍ 39-ի փոխարինման՝ ՀՀՄՍ-ի աշխատանքի առաջին փուլը և վերաբերում է ՀՀՄՍ 39-ում սահմանված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դասակարգմանը և չափմանը:

Ստանդարտը ներկայումս կիրառելի է 2013թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Այնուամենայնիվ, առաջարկվել է փոփոխել նշված պարտադիր կիրառման ժամկետը 2015թ. հունվարի 1-ով:

Հետագայում, ՀՀՄՍ-ն կդիտարկի նաև հեջավորման հաշվառումը և ֆինանսական ակտիվների արժեզրկումը: ՀՀՄՍ 9-ի առաջին փուլի որդեգրումը կազդի խմբի ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման վրա, սակայն, ըստ էության, ոչ մի ազդեցություն չի ունենա ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման վրա: Խումբը կորոշի տվյալ փոփոխության ազդեցությունը ՀՀՄՍ 9-ի այլ փուլերի ազդեցության հետ միասին, երբ վերջիններս հրապարակվեն՝ համապարփակ նկարագիր ներկայացնելու համար:

### **ՀՀՄՍ 10 «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ», ՀՀՄՍ 11 «Համատեղ գործունեության համաձայնություններ», և ՀՀՄՍ 12 «Այլ կազմակերպություններում մասնակցության բացահայտում»**

2011թ. մայիսին ՀՀՄՍ-ն հրապարակեց ՀՀՄՍ 10 «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ», ՀՀՄՍ 11 «Համատեղ գործունեության համաձայնություններ» և ՀՀՄՍ 12 «Այլ կազմակերպություններում մասնակցության բացահայտում» ստանդարտները:

ՀՀՄՍ 10-ը ներկայացնում է մեկ համախմբման մոդել, որը բոլոր կազմակերպությունների համար դիտարկում է վերահսկողությունը որպես համախմբման հիմք: ՀՀՄՍ 10-ը փոխարինում է ՀՀՄՍ 27 «Համախմբված և առանձին ֆինանսական հաշվետվություններ» և ՄՄԿ Մեկնաբանություն 12 «Համախմբում. Հատուկ նշանակության կազմակերպություններ» ստանդարտներին:

ՀՀՄՍ 11-ը սահմանում է համատեղ գործունեության համաձայնությունների կողմերի ֆինանսական հաշվետվությունների սկզբունքները: ՀՀՄՍ 11-ը փոխարինում է ՀՀՄՍ 31 «Մասնակցություն համատեղ ձեռնարկումներում» և ՄՄԿ Մեկնաբանություն 13 «Համատեղ վերահսկող կազմակերպություններ. Ձեռնարկողների ոչ դրամային ներդրումներ» ստանդարտները և դադարեցնում դրանց ուժի մեջ լինելը:

ՀՀՄՍ 12-ը ընդհանրացնում, բարելավում և փոխարինում է դուստր կազմակերպությունների, համատեղ գործունեության համաձայնությունների, ասոցիացված կազմակերպությունների և չհամախմբված կառուցվածքային կազմակերպությունների բացահայտումների պահանջները: Որպես այս նոր ՀՀՄՍ-ների արդյունք, ՀՀՄՍ-ն նաև փոփոխել է վերանվանել է ՀՀՄՍ 27-ը «Առանձին ֆինանսական հաշվետվություններ» և ՀՀՄՍ 28-ը «Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում»: Նոր պահանջները ուժի մեջ են մտնում 2013թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, ընդ որում վաղ կիրառումը թույլատրվում է:

Խումբը դիտարկում է, թե ինչ ազդեցություն կունենան այս նոր ստանդարտները իր ֆինանսական վիճակի և/կամ արդյունքների, բացահայտումների և սահմանված հաշվապահական հաշվառման քաղաքականության վրա:

### **ՀՀՄՍ 13 «Իրական արժեքի չափում»**

2011թ. մայիսին ՀՀՄՍ-ն հրապարակեց ՀՀՄՍ 13-ը: ՀՀՄՍ 13-ը առանձին ՀՀՄՍ-ներով սահմանում է իրական արժեքը, ինչպես նաև իրական արժեքի որոշման հիմունքները և պահանջում է իրական արժեքի չափմանը վերաբերող բացահայտումներ: ՀՀՄՍ 13-ը կիրառելի է, երբ այլ ՀՀՄՍ-ները պահանջում կամ թույլ են տալիս իրական արժեքով չափում: Այն չի ներկայացնում որևէ ակտիվը կամ պարտավորությունը իրական արժեքով չափելու նոր պահանջներ, փոխում այն ինչ չափվել էր ըստ ՀՀՄՍ-ների իրական արժեքով կամ, դիտարկում, թե ինչպես ներկայացնել իրական արժեքի փոփոխությունները: Նոր պահանջները ուժի մեջ են մտնում 2013թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար, ընդ որում վաղ կիրառումը թույլատրվում է:

Խումբը դիտարկում է, թե ինչ ազդեցություն կունենան այս նոր ստանդարտը իր ֆինանսական վիճակի և/կամ արդյունքների, բացահայտումների և սահմանված հաշվապահական հաշվառման քաղաքականության վրա:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 2.5 Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ (շարունակություն)

### ՖՀՄՍ-ների բարեփոխումներ (2011թ. հունիսին թողարկված)

2011թ. հունիսին ՀՀՄՍԽ-ն հանրային մեկնաբանության համար հրապարակեց հինգ ՖՀՄՍ ստանդարտների առաջարկված փոփոխությունների նախագիծ հասարակական քննարկման և առաջարկված փոփոխությունների նախնական ծրագիր որպես իր «Տարեկան բարեփոխումների» ծրագրի մի մաս: Փոփոխությունները բերված են ստորև՝

- ▶ ՖՀՄՍ 1 «ՖՀՄՍ առաջին անգամ որդեգրում»
- ▶ ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»
- ▶ ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ»
- ▶ ՀՀՄՍ 32 «Ֆինանսական գործիքներ. ներկայացում»
- ▶ ՀՀՄՍ 34 «Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ»

Այնուամենայնիվ, Խումբը չի ակնկալում, որ տվյալ փոփոխությունների որդեգրումը որևէ ազդեցություն կունենա իր ֆինանսական վիճակի կամ արդյունքների վրա:

### Մեկնաբանություն

ՀՀՄՍ 8.30-ը պահանջում է, որպեսզի կազմակերպությունը բացահայտի այն ստանդարտները, որոնք թողարկվել են, բայց դեռ ուժի մեջ չեն մտել և ապահովի հայտնի կամ հավաստիորեն չափելի տեղեկատվություն, որպեսզի օգտագործողները կարողանան գնահատել նման ստանդարտների կիրառումը կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ: Հետևաբար, Խումբը նշել է այն ստանդարտներն ու մեկնաբանությունները, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել, սակայն որոնք ակնկալվում է, որ կազդեն և՛ նրա հաշվապահական հաշվառման քաղաքականության, և՛ ֆինանսական վիճակի կամ արդյունքների վրա (այսինքն՝ չնշելով այն ստանդարտները, փոփոխությունները և/կամ մեկնաբանությունները, որոնք ընդհանրապես ազդեցություն չեն ունենում նշվածների վրա, օրինակ՝ ՖՀՄՍ 1 կամ ՀՀՄՍ 34):

Հարկ է նշել, որ ՖՀՄՍ 20-ը հրապարակվել էր 2011թ. սեպտեմբերի 30-ից հետո: Այնուամենայնիվ, կազմակերպությունները, որոնք իրենց հաշվետվությունները պատրաստում են ՖՀՄՍ 4-ի հրապարակումից հետո, պետք է բացահայտեն այս նոր մեկնաբանությունը որպես թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտների և մեկնաբանությունների մաս:

### Այլ թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի չեն «Գուլ մայնինգին»

- ▶ ՖՀՄՍ 1 «ՖՀՄՍ առաջին անգամ որդեգրում» (փոփոխություն). *խիստ գերտղած և առաջին անգամ որդեգրողների համար ֆիքսված ժամկետների վերացում*
- ▶ ՖՀՄՍ 7 «Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ» (փոփոխություն). ֆինանսական ակտիվների ապաճանաչմանը վերաբերող բացահայտման նոր (կատարելագործված) պահանջներ: Ուժի մեջ են մտնում 2011թ. հունիսի 1-ից
- ▶ ՀՀՄՍ 12 «Շահութահարկեր» (փոփոխություն). հետաձգված հարկեր. հիմքում գտնվող ակտիվների վերականգնում

Լրացուցիչ տեղեկատվության համար տե՛ս «Գուլ գրուլի (Ինթերնեշլ) Լիմիթեդ» 2011թ. ցուցադրական ֆինանսական հաշվետվությունները:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 3. Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ, ձեռքբերումներ

«Գուդ մայնինգ»-ը ձեռք է բերել «Օազիս միներալ ռեսուրսես» («Օազիս») ՍՊԸ-ի բաժնետոմսերի 100%-ը, որը 2010թ.-ի նոյեմբերի 1-ի դրությամբ ուներ որոշակի ոսկու ուսումնասիրության և մշակման լիցենզիաներ: Այս գնման հետ մեկտեղ փոխանցվեցին նաև ուսումնասիրությունների համար կատարվող նշանակալի ծախսերը:

\$ՀՄՄ 3.59  
\$ՀՄՄ 3.Բ64(ա),  
\$ՀՄՄ 3.Բ64(բ),  
\$ՀՄՄ 3.Բ64(դ)

«Օազիս»-ի որոշելի ակտիվների և պարտավորությունների ձեռքբերման օրվա դրությամբ իրական արժեքները հետևյալն են՝

	<b>Իրական արժեքը ձեռքբերման ամսաթվին</b>	<b>Հաշվեկշռային արժեք</b>	
	<b>մլն. ԱՄՆ դոլար</b>	<b>մլն. ԱՄՆ դոլար</b>	
<b>Ակտիվներ</b>			
Հետախուզման և գնահատման ակտիվներ	72	61	
Հանքի մշակման ծախսումներ	487	358	
Այլ հիմնական միջոցներ	29	20	
Պաշարներ	1	8	
Այլ ընթացիկ ակտիվներ	39	37	
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	96	96	
	<b>724</b>	<b>580</b>	
<b>Պարտավորություններ</b>			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	(52)	(52)	
Անբարենպաստ գործառնական վարձակալության գծով պահուստ	(10)	-	
Հետաձգված հարկային պարտավորություններ	(42)	(17)	
Պահուստներ	(65)	(65)	
Երկարաժամկետ պարտավորություններ	(57)	(57)	
	<b>(226)</b>	<b>(191)</b>	
<b>Ընդհանուր որոշելի զուտ ակտիվներ իրական արժեքով</b>	<b>498</b>		
Ձեռքբերման պահին ծագող գուդվիլ (Ծան. 14)	37		
Ընդամենը փոխանցված հատուցում	<b>535</b>		\$ՀՄՄ 3.Բ64(գ)
<b>Տրամադրված հատուցման իրական արժեքը ձեռքբերման ամսաթվի դրությամբ</b>			
Վճարված դրամական միջոցներ	535		
<b>Փոխանցված հատուցում</b>	<b>535</b>		
<b>Ձեռքբերման համար կատարված ուղղակի ծախսումներ</b>	<b>15</b>		
<b>Ձեռքբերման համար կատարված է դրամական միջոցի հետևյալ արտահոսքը</b>			
Դուստր կազմակերպության հետ ձեռքբերված զուտ դրամական միջոցներ	96		ՀՀՄՄ 7.40(գ)
Վճարված դրամական միջոցներ	(535)		
<b>Դրամական միջոցների զուտ արտահոսք</b>	<b>(439)</b>		

Ստացված իրական արժեքները պայմանական են ձեռքբերման գործընթացի բարդության, ինչպես նաև հանքարդյունաբերությանը հատուկ անորոշության, մասնավորապես, ոչ նյութական հետախուզման և գնահատման ակտիվների գնահատման անորոշ բնույթի պատճառով: Ձեռքբերված ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի վերանայումը ամբողջական կլինի ձեռքբերման ամսաթվից հետո 12 ամսից ոչ ուշ:

\$ՀՄՄ  
3.Բ67(ա)(i),(ii)

Ձեռքբերման ամսաթվից սկսած «Օազիսը» խմբին բերել է 75 մլն.դոլարի հասույթ և 25 մլն.դոլարի եկամուտ: Եթե «Օազիսի» ձեռքբերումը ավարտվեր ֆինանսական տարվա առաջին օրը, ապա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը կներառեր համապատասխանաբար 360 մլն.դոլար և 120 մլն.դոլար հասույթ և եկամուտ:

\$ՀՄՄ  
3.Բ64(գ) (i),  
(ii)  
\$ՀՄՄ 3.Բ28-  
29

Անբարենպաստ գործառնական վարձակալության գծով պահուստը ճանաչվել է «Օազիս»-ի ձեռքբերման ժամանակ: Այն ճանաչվել է, քանի որ վարձակալական վճարները «Օազիս»-ի գործառնական վարձակալության գծով էականորեն բարձր էին, քան ձեռքբերման ժամանակ շուկայական դրույթները: Պահուստը հաշվարկվել է՝ շուկայական և վճարված դրույթների միջև տարբերության հիման վրա:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ (շարունակություն)

## 3. Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ, ձեռքբերումներ (շարունակություն)

Գուդվիլն առաջացել է հիմնականում հետևյալ պատճառներով.

ՖՀՄՍ 3.Բ64(ե)  
ՖՀՄՍ 3.Բ64(ի)

- 1) Անընդհատությամբ պայմանավորված մեր հնարավորությունը պահպանել և ավելացնել մեր գործունեությունը՝ ավելացնելով հանքաքարի պաշարները և հանածոները նոր հայտնաբերումներով,
- 2) Հնարավորություն օգտվել յուրահատուկ սիներգիզմից, որն առաջանում է գործունեության տարածքում և՛ առկա, և՛ ձեռքբերված հանքերից,
- 3) Հաշվարկված հետաձգված հարկային պարտավորությունների և ակտիվների պարտադիր ճանաչմամբ, որպես ձեռքբերված ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի և դրանց հարկային բազաների տարբերության հարկային արդյունք:

15 մլն. ԱՄՆ դոլարի գործարքի ծախսումները ծախսագրվել են և ներառվել այլ ծախսերում:

### Մեկնաբանություն

Տե՛ս ձեռնարկատիրական գործունեության միավորումների և գուդվիլի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը Ծանոթագրություն 2.4 (գ) կետում մեկնաբանությունների համար:

## 4. Համատեղ ձեռնարկումներում մասնակցություններ

### Համատեղ վերահսկվող ակտիվներում մասնակցություն

ՀՀՄՍ 31.56

#### Համատեղ վերահսկվող ակտիվներ

«Գուդ մայնինգը» մյուս մասնակիցների հետ համատեղ միասին ունի հետախուզական և արտադրական որոշակի ակտիվներ: Իր մասնաբաժինը կազմում է 25%:

#### Հանքում մասնաբաժնի տրամադրման համաձայնություններ

ՀՀՄՍ 31.15

«Գուդ մայնինգը» «Ռեդ Քոփեր» ՍՊԸ-ի հետ Կուպրում հետախուզման տարածքում հետախուզական գործունեության հետ կապված ծախսումների և ռիսկերի բաժանման մասին պայմանագիր է կնքել: «Ռեդ Քոփեր» ՍՊԸ -ն 23 մլն.ԱՄՆ դոլար ներդրեց և դրա դիմաց ստացավ հանքում 20% գործառնական բաժին: «Ռեդ Քոփեր» ՍՊԸ-ն հետագայում կշարունակի տրամադրել գործառնական ծախսերի և կապիտալ ծախսումների 20%-ը, իսկ «Գուդ մայնինգը» նշանակված է որպես օպերատոր:

Խմբի համատեղ վերահսկվող ակտիվների և գործառնությունների ֆինանսական հաշվետվության տեղեկատվությունը ամփոփ ներկայացված է ստորև.

	<b>2011թ.</b>	<b>2010թ.</b>	
	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	
<b>Ոչ ընթացիկ ակտիվներ</b>			
Հետախուզման և գնահատման ակտիվներ	48	55	ՀՀՄՍ 31.21
Հանքեր	229	206	
Այլ հիմնական միջոցներ	1	2	
	<b>278</b>	<b>263</b>	
<b>Ընթացիկ ակտիվներ</b>			
Դեբիտորական պարտք	19	20	
Պաշարներ	1	-	
Ֆինանսական ակտիվներ	14	21	
	<b>34</b>	<b>41</b>	

Խմբի համախառն պարտավորվածությունները համատեղ վերահսկվող ակտիվներում հետևյալն է.

ՀՀՄՍ 31.55

	<b>2011թ.</b>	<b>2010թ.</b>	
	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	
Կապիտալ	20	30	
Հետախուզման և այլ պարտավորվածություններ	48	51	

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 4. Համատեղ ձեռնարկումներում մասնակցություններ (շարունակություն)

### Համատեղ վերահսկվող միավորներում մասնակցություններ

ՀՀՄՍ 31.56

«Գուդ մայնինգը» ունի «Գոլդմոբ» ՍՊԸ-ի համատեղ վերահսկվող միավորումում 50% բաժնեմաս, որի հիմնական գործունեություններն են ոսկու արտադրությունը և հանքային հետախուզումները: Այս համատեղ վերահսկվող կազմակերպությունում մասնակցությունը հաշվառվում է բաժնեմասնակցության մեթոդով:

Համատեղ վերահսկվող միավորի ֆինանսական հաշվետվության տեղեկատվությունը ամփոփի ներկայացված է ստորև.

	<b>2011թ.</b>	<b>2010թ.</b>
	<b>մլն. ԱՄՆ դոլար</b>	<b>մլն. ԱՄՆ դոլար</b>
Վաճառքից և այլ գործառնական հասույթ	120	154
Ֆինանսական ծախսեր	1	-
Շահույթ մինչև հարկումը	26	38
Հարկում	10	13
<b>Հաշվետու տարվա շահույթ</b>	<b>16</b>	<b>25</b>
Ոչ ընթացիկ ակտիվներ	143	103
Ընթացիկ ակտիվներ	71	64
<b>Ընդամենը ակտիվներ</b>	<b>214</b>	<b>167</b>
Ընթացիկ պարտավորություններ	46	30
Ոչ ընթացիկ պարտավորություններ	54	39
<b>Ընդամենը պարտավորություններ</b>	<b>100</b>	<b>69</b>

### Մեկնաբանություն

Տե՛ս Ծանոթագրություն 2.4(դ)(iii) հանքի մասնաբաժնի փոխանցումների համաձայնագրերի հաշվառման վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար:

## 5. Գործառնական սեզմենտներ

«Գուդ մայնինգի» բոլոր ակտիվները և գործարքները տեղի են ունենում Մետալվիլում: Կառավարչական նկատառումներով Խումբը կազմված է բիզնես միավորներից՝ կապված իրենց արտադրանքից և գործունեությունից, և ունի 3 հաշվետու գործառնական սեզմենտներ, որոնք հետևյալն են՝

ՖՀՄՍ 8.22(ա)  
ՖՀՄՍ 8.22(բ)

- ▶ Ոսկու սեզմենտը մշակում և արդյունահանում է ոսկի, որն ամբողջովին վաճառվում է որպես ոսկու ձուլակտոր և ոսկու խտանյութ,
- ▶ Պղնձի սեզմենտը մշակում և արդյունահանում է պղինձ, որը վաճառվում է որպես պղնձի խտանյութ,
- ▶ Հետախուզական սեզմենտը իրականացնում է հետախուզման և գնահատման գործունեություն:

ՖՀՄՍ 8.28(բ)

Ռեսուրսների տեղաբաշխման և արտադրողականության (արդյունավետության) գնահատման վերաբերյալ որոշումների կայացման նպատակով կառավարիչները գործառնական սեզմենտների գործառնական արդյունքները առանձին են դիտարկում: Սեզմենտի գործունեության արդյունքները գնահատվում են՝ հիմնվելով գործառնական շահույթի կամ վնասի վրա և չափվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում գործառնական շահույթին կամ վնասին հետևողականորեն: Այնուամենայնիվ, Խմբի ֆինանսական գործառնությունները (ներառում են ֆինանսական ծախսերը և եկամուտները) և շահութահարկերը ընդհանուր են կառավարվում և չեն վերագրվում գործառնական սեզմենտներին:

ՖՀՄՍ 8.27(ա)

Գործառնական սեզմենտների միջև ներքին փոխանցումների գները համապատասխանում են շուկայական պայմաններին, ինչպես երրորդ կողմերի հետ գործարքներում:

Խմբի կողմից կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունները ներքին հաշվետու սեզմենտներում նույնն են, ինչ նախատեսված է ֆինանսական հաշվետվությունների համար ըստ Ծան. 2.4 նշվածների:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 5. Գործառնական սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն (շարունակություն)

Տարվա վերջի դրությամբ 2011թ. դեկտեմբերի 31	Ռուսի		Չեռախուզման տարածքներ		Ճշգրտումներ և փոխբացառում ներ		Համախմբված	
	մլն. ԱՄՆ դոլար	Պոլին	մլն. ԱՄՆ դոլար	Պոլին	մլն. ԱՄՆ դոլար	Պոլին	մլն. ԱՄՆ դոլար	Պոլին
<b>Հասույթ</b>								
Արտաքին հաճախորդներ	2,871	957	–	–	–	–	3,828	ՖՀՄՄ 8.23(ա)
Միջսեգմենտային	100	–	–	–	(100)	–	–	ՖՀՄՄ 8.23(բ)
<b>Ընդամենը հասույթ</b>	<b>2,971</b>	<b>957</b>	<b>–</b>	<b>–</b>	<b>(100)</b>	<b>–</b>	<b>3,828</b>	
<b>Արդյունքներ</b>								
Մաշվածություն և անորոշիվացիա	(455)	(186)	–	–	(1) <sup>1</sup>	–	(642)	ՖՀՄՄ 8.23(ե)
Գուդվիլի արժեզրկում	(15)	–	–	–	–	–	(15)	ՖՀՄՄ 8.23(թ)
Հանքերի արժեզրկում	(33)	–	–	–	–	–	(33)	ՖՀՄՄ 8.23(թ)
Հեռախուզման և գնահատման ակտիվների արժեզրկում	–	–	(5)	–	–	–	(5)	ՖՀՄՄ 8.23(թ)
Նախկինում արժեզրկված հետախուզման և գնահատման ակտիվների հակադարձում	–	–	16	–	–	–	16	ՖՀՄՄ 8.23(թ)
Դուրս գրված հետախուզման և գնահատման ակտիվներ	–	–	(90)	–	–	–	(90)	ՖՀՄՄ 8.23(զ)
Հանքերի վաճառքից օգուտ	39	–	–	–	–	–	39	ՖՀՄՄ 8.23(զ)
Հիմնական միջոցների վաճառքից օգուտ	11	–	–	–	–	–	11	ՖՀՄՄ 8.23(զ)
Հեռախուզման և գնահատման ակտիվների վաճառքից օգուտ	–	–	1	–	–	–	1	
Համատեղ ձեռնարկման զուտ շահույթի մասնաբաժին	26	–	(10)	–	–	–	16	ՖՀՄՄ 8.23(է)
<b>Շահույթ մինչ հարկումը</b>	<b>1,510</b>	<b>525</b>	<b>(81)</b>	<b>–</b>	<b>(70)<sup>2</sup></b>	<b>–</b>	<b>1,884</b>	ՖՀՄՄ 8.28(բ)
Շահութահարկի գծով ծախս	–	–	–	–	–	–	(797)	
<b>Տարվա զուտ շահույթ</b>							<b>1,087</b>	
<b>Գործառնական ակտիվներ</b>	<b>4,477</b>	<b>2,091</b>	<b>759</b>	<b>–</b>	<b>94<sup>3</sup></b>	<b>–</b>	<b>7,421</b>	ՖՀՄՄ 8.23
<b>Գործառնական պարտավորություններ</b>	<b>818</b>	<b>343</b>	<b>57</b>	<b>–</b>	<b>1,447<sup>4</sup></b>	<b>–</b>	<b>2,665</b>	ՖՀՄՄ 8.23
<b>Այլ բացահայտումներ</b>								
Ներդրում համատեղ ձեռնարկումներում	114	–	–	–	–	–	114	ՖՀՄՄ 8.24(ա)
Կապիտալ ծախսումներ <sup>5</sup>	450	1,369	430	–	46	–	2,295	ՖՀՄՄ 8.24(բ)

1. Իրենից ներկայացնում է այլ ոչ նյութական ակտիվների մաշվածություն: ՖՀՄՄ 8.28
2. Յուրաքանչյուր գործառնական սեգմենտի շահույթը չի ներառում ֆինանսական եկամուտը (24 մլն. ԱՄՆ դոլար) և ֆինանսական ծախսերը (94 մլն. ԱՄՆ դոլար):
3. Սեգմենտի ակտիվները չեն ներառում հետաձգված հարկերը (83 մլն. ԱՄՆ դոլար) և այլ ոչ նյութական ակտիվները (11 մլն. ԱՄՆ դոլար), քանի որ այդ ակտիվները կառավարվում են խմբի հիմունքով/մակարդակով:
4. Սեգմենտի պարտավորությունները չեն ներառում հետաձգված հարկերը (468 մլն. ԱՄՆ դոլար), ընթացիկ վճարվելիք հարկերը (365 մլն. ԱՄՆ դոլար) և տոկոսային վարկերն ու փոխառությունները (614 մլն. ԱՄՆ դոլար), քանի որ այդ պարտավորությունները կառավարվում են խմբի հիմունքով/մակարդակով:
5. Կապիտալ ծախսումները կազմված են հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների, հանքերի և հետախուզման ու գնահատման ակտիվների ավելացումներից՝ ներառելով դուստր ձեռնարկությունների ձեռքբերումից առաջացածները:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ (շարունակություն)

## 5. Գործառնական սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն (շարունակություն)

Տարվա վերջի դրությամբ 2010թ. դեկտեմբերի 31	ճշգրտումներ և փոխբացառում ներ					Համախմբված մլն. ԱՄՆ դոլար	
	Ոսկի մլն. ԱՄՆ դոլար	Պղինձ մլն. ԱՄՆ դոլար	Հետախուզման տարածքներ մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար		
<b>Հասույթ</b>							
Արտաքին հաճախորդներ	2,039	878	–	–	2,917		\$ՀՄՍ 8.23(ա)
Միջսեգմենտային	125	–	–	(125)	–		\$ՀՄՍ 8.23(բ)
<b>Ընդամենը հասույթ</b>	<b>2,164</b>	<b>878</b>	<b>–</b>	<b>(125)</b>	<b>2,917</b>		
<b>Արդյունքներ</b>							
Մաշվածություն և ամորտիզացիա	(129)	(164)	–	–	(293)		\$ՀՄՍ 8.23(ե)
Գուղվիլի արժեզրկում	–	–	–	–	–		\$ՀՄՍ 8.23(թ)
Հանքերի արժեզրկում	(9)	–	–	–	(9)		\$ՀՄՍ 8.23(թ)
Հետախուզման և գնահատման ակտիվների արժեզրկում	–	–	(6)	–	(6)		\$ՀՄՍ 8.23(թ)
Նախկինում արժեզրկված հետախուզման և գնահատման ակտիվների հակադարձում	–	–	–	–	–		\$ՀՄՍ 8.23(թ)
Դուրս գրված հետախուզման և գնահատման ակտիվներ	–	–	(75)	–	(75)		\$ՀՄՍ 8.23(զ)
Հանքերի վաճառքից օգուտ	58	–	–	–	58		\$ՀՄՍ 8.23(զ)
Հիմնական միջոցների վաճառքից օգուտ	(11)	–	–	–	(11)		\$ՀՄՍ 8.23(զ)
Հետախուզման և գնահատման ակտիվների վաճառքից օգուտ	–	–	–	–	–		
Համատեղ ձեռնարկման զուտ շահույթի մասնաբաժին	29	–	(4)	–	25		\$ՀՄՍ 8.23(է)
<b>Շահույթ մինչ հարկումը</b>	<b>1,275</b>	<b>279</b>	<b>(90)</b>	<b>(15)<sup>1</sup></b>	<b>1,449</b>		\$ՀՄՍ 8.28(բ)
Շահութահարկի գծով ծախս					(529)		
<b>Տարվա զուտ շահույթ</b>					<b>920</b>		
<b>Գործառնական ակտիվներ</b>	<b>3,754</b>	<b>1,543</b>	<b>501</b>	<b>64<sup>2</sup></b>	<b>5,862</b>		\$ՀՄՍ 8.23
<b>Գործառնական պարտավորություններ</b>	<b>775</b>	<b>101</b>	<b>49</b>	<b>918<sup>3</sup></b>	<b>1,843</b>		\$ՀՄՍ 8.23
<b>Այլ բացահայտումներ</b>							
Ներդրում համատեղ ձեռնարկումներում	98	–	–	–	98		\$ՀՄՍ 8.24(ա)
Կապիտալ ծախսումներ <sup>4</sup>	712	889	293	4	1,898		\$ՀՄՍ 8.24(բ) \$ՀՄՍ 8.28

1. Յուրաքանչյուր գործառնական սեգմենտի շահույթը չի ներառում ֆինանսական եկամուտը (25 մլն. ԱՄՆ դոլար) և ֆինանսական ծախսերը (40 մլն. ԱՄՆ դոլար):
2. Սեգմենտի ակտիվները չեն ներառում հետաձգված հարկերը (57 մլն. ԱՄՆ դոլար) և այլ ոչ նյութական ակտիվները (7 մլն. ԱՄՆ դոլար), քանի որ այդ ակտիվները կառավարվում են խմբի հիմունքով/մակարդակով:
3. Սեգմենտի պարտավորությունները չեն ներառում հետաձգված հարկերը (386 մլն. ԱՄՆ դոլար), ընթացիկ վճարվելիք հարկերը (166 մլն. ԱՄՆ դոլար) և տոկոսային վարկերը և փոխառությունները (366 մլն. ԱՄՆ դոլար), քանի որ այդ պարտավորությունները կառավարվում են խմբի հիմունքով/մակարդակով:
4. Կապիտալ ծախսումները կազմված են հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների, հանքերի և հետախուզման և գնահատման ակտիվների ավելացումներով՝ ներառելով դուստր ձեռնարկությունների ձեռքբերումից առաջացածները:



# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 5. Գործառնական սեզմենտների վերաբերյալ տեղեկատվություն (շարունակություն)

### Աշխարհագրական տեղեկատվություն

ՖՀՄՍ 8.33(ա)

Խմբի ընկերությունները գտնվում են միայն մեկ վայրում՝ Մելաթվիլում:

ՖՀՄՍ 8.33(բ)

Մեկ հաճախորդից ստացված հասույթը կազմել է 1.10 մլն. դոլար (2010թ.՝ 1.25 մլն. դոլար), որն առաջացել է ոսկու սեզմենտի կողմից իրականացված վաճառքից:

ՖՀՄՍ 8.34

Արտաքին հաճախորդից ստացված հասույթը կախված է հաճախորդի գտնվելու վայրից:

ՖՀՄՍ 8.33(ա)

	<b>2011թ.</b>	<b>2010թ.</b>
	<b>մլն. ԱՄՆ դոլար</b>	<b>մլն. ԱՄՆ դոլար</b>
Մեթալվիլ	3,000	2,500
Գոլդվիլ	828	417
Համախմբված համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ընդհանուր հասույթ	<b>3,828</b>	<b>2,917</b>

### Մեկնաբանություն

Տոկոսային եկամուտները և ծախսերը չեն բացահայտվել ըստ սեզմենտի, քանի որ դրանք ընդհանուր են կառավարվում և չեն ներկայացվում գործառնական սեզմենտի մակարդակով գործառնական որոշումներ կայացնող ղեկավարներին: Գործառնական սեզմենտի ակտիվների ու պարտավորությունների բացահայտումը անհրաժեշտ է միայն, երբ որոշ հաշվարկներ են տրամադրված գործառնական որոշումներ կայացնող ղեկավարներին: «Գուդ մայնինգը» գործառնական որոշումներ կայացնող ղեկավարներին տրամադրում է գործառնական ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն: Մասնավորապես գործընթացները (օրինակ՝ հարկերը), որոնք այլ ցուցանիշների հետ ներառված են «ճշգրտումներ և փոխբացատրում» բաժնում, իրենցից առանձին գործառնական սեզմենտ չեն ներկայացնում:

«Գուդ մայնինգի» ներքին հաշվետվությունը տարվում է ըստ ՖՀՄՍ-ների: Սեզմենտի արտացոլումները ավելի ընդարձակ կարող էին լինել, եթե ներքին հաշվետվությունները պատրաստվեին ոչ ՖՀՄՍ-ներով: Այդ դեպքում, ներքին հաշվետվությունները պետք է համապատասխանեցվեին արտաքինին:

#### ՖՀՄՍ 8-ի կիրառումը հետախուզական ձեռնարկություններում

ՖՀՄՍ-ները չեն սահմանում գործառնական սեզմենտների կիրառումը հետախուզական ձեռնարկություններում կամ, արդյոք, հետախուզման գոյքը համապատասխանում է ՖՀՄՍ 8-ում սահմանված գործառնական սեզմենտին թե՛ ոչ:

Ըստ մեզ՝ հետախուզման գոյքը կարող է համապատասխանել ՖՀՄՍ 8-ում գործառնական սեզմենտի սահմանմանը: Այն մակարդակը, որին գործառնական սեզմենտը կարող է միավորվել, կախված կլինի այն հանգամանքից, թե արդյոք ՖՀՄՍ 8.12-ում նշված չափանիշները ինքնատու են բավարարված: Գործառնական որոշումներ կայացնող ղեկավարը (ղեկավարները) պատասխանատու է ռեսուրսների տեղաբաշխման և գործառնական արդյունքների գնահատման համար, որը հանքային հետախուզական կազմակերպությունների դեպքում պարունակում է նշանակալի որոշումներ՝ կապված առկա դրամական միջոցների օգտագործման հետ (այսինքն՝ որ նպատակակետը, ինչ տեսակ հետախուզում), և ինչպես ֆինանսավորել այդ ծախսումները (սեփական կապիտալ, համատեղ ձեռնարկում, հանքի մասնաբաժնի փոխանցման համաձայնություն, և այլն):

Ընդհանուր առմամբ գործառնական որոշումներ կայացնող ղեկավարներին տրամադրված տեղեկատվությունը դրամական միջոցների ծախսումն է և հետախուզման արդյունքները (օրինակ՝ հորատումները, հանածոյի պաշարները, ռեսուրսները և այլն):

Այն մակարդակը, որում այդ տեղեկատվությունը պատրաստվել կամ ընդհանրացվել է, կարող է մեծամասամբ կախված լինել, կազմակերպության չափից և այլ գործոններից: Օրինակ՝ գործառնական որոշումների ընդունման ղեկավարը կարող է ստանալ վերը նշված տեղեկատվությունը հետևյալի համար՝

- ▶ Յուրաքանչյուր առանձին թիրախային միջավայր (հանքի տարածքում կամ հանքամարմնի մեջ)
- ▶ Յուրաքանչյուր առանձին սահմանած հանքամարմնի կամ հանքային տարածք (սեփականության կամ վարձակալած տարածքում)
- ▶ Յուրաքանչյուր սեփականություն կամ վարձակալած տարածք
- ▶ Յուրաքանչյուր երկրաբանական կառուցվածք (որը կարող է ընդլայնել որոշ վարձակալած տարածքներ կամ սեփականություններ, սակայն մի աշխարհագրական շրջանի տարածքում)
- ▶ Յուրաքանչյուր աշխարհագրական շրջան (ինչպես օրինակ՝ երկիր, պետություն, մարզ)

Այն մակարդակը, որով տեղեկատվությունը ստացվում է գործառնական որոշումներ կայացնող ղեկավարների կողմից որոշիչ է այն մակարդակի համար, որում գործառնական սեզմենտները գոյություն ունեն հանքարդյունաբերական և հետախուզական կազմակերպությունների համար:

«Գուդ մայնինգ» ընկերության բացահայտումները արտացոլում են «հետախուզման վայրերը» որպես հաշվետու սեզմենտ: Այս ենթադրյալ կազմակերպության կողմից կատարված ենթադրությունները հետևյալն են՝

- ▶ «Գուդ մայնինգը» ունի հետախուզման երեք տարածք՝ Կուպրուոն, որը պղնձի հետախուզման տարածք է, և Աուրուոն ու Օրոն, որոնք ոսկու հետախուզման տարածքներ են:
- ▶ Հետախուզման տարածքների գործառնական արդյունքները վերանայվում են «Գուդ մայնինգի» գործառնական որոշումներ կայացնող ղեկավարների կողմից և ամեն հետախուզման տարածք առանձին գործառնական սեզմենտ է:
- ▶ Հետախուզման տարածքները բավարարում են ՖՀՄՍ 8-ի սեզմենտների միավորման չափանիշը, քանի որ դրանք գտնվում են մեկ աշխարհագրական վայր Մեթալվիլում, և քանի որ հետազոտումը ոսկու և պղնձի համար է, սահմանված էր, որ «Գուդ մայնինգի» հանքարդյունահանման և գործառնական ծախսումների առումով դրանք ունեն միատեսակ տնտեսական բնութագրեր:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ (շարունակություն)

## 6. Գործառնական (վնաս)/օգուտ

Գործառնական շահույթը որոշվում է հետևյալը կրեդիտագրելուց/(դեբետագրելուց) հետո՝

	2011թ.		2010թ.	
	մլն. ԱՄՆ դոլար		մլն. ԱՄՆ դոլար	
Հանքերի մաշվածություն	(634)		(285)	ՀՀՄՍ 1.104
Հիմնական միջոցների մաշվածություն	(7)		(8)	ՀՀՄՍ 1.104
Այլ ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	(1)		–	ՀՀՄՍ 38.118(ե)(vi)
<b>Ընդամենը ամորտիզացիա և մաշվածություն</b>	<b>(642)</b>		<b>(293)</b>	
Սխառնությունների հատուցման գծով ծախս	(158)		(161)	ՀՀՄՍ 1.104
Հանքերի արժեզրկում	6.1 (33)		(9)	ՀՀՄՍ 36.126(ա)
Հանքերի վաճառքից օգուտ	39		58	ՀՀՄՍ 1.98
Հիմնական միջոցների վաճառքից օգուտ/(վնաս)	11		(11)	ՀՀՄՍ 1.98
Մինչ լիցենզավորումը կրած ծախսումներ	6.3 (13)		(9)	ՖՀՄՍ 6.23, ՀՀՄՍ 36.126(բ)
Հետախուզման և գնահատման ակտիվների արժեզրկում	(5)		(6)	ՖՀՄՍ 6.23, ՀՀՄՍ 36.126(բ)
Նախկինում արժեզրկված հետախուզման և գնահատման ակտիվների հակադարձում	6.2 16		–	ՖՀՄՍ 6.23, ՀՀՄՍ 36.126(բ)
Դուրս գրված հետախուզման և գնահատման ծախսումներ	(90)		(75)	ՀՀՄՍ 38.54
Հետախուզման և գնահատման ակտիվների վաճառքից օգուտ	6.4 1		–	ՀՀՄՍ 1.98
Գործառնական վարձակալության վճարներ	(43)		(20)	ՀՀՄՍ 17.35(գ)
Դուրս գրված պաշարների ինքնարժեք	(1,171)		(829)	ՀՀՄՍ 2.36(դ)
Հիմնական պահպանման ծախսումները՝ ծախսագրված	(12)		(11)	
Փոխարժեքի տատանումներից օգուտ/(վնաս)	4		(2)	ՀՀՄՍ 21.52(ա)
Վճարված ռոյալթիներ	(182)		(181)	

### 6.1 Սովորեն հանքի արժեզրկում

Որպես ակտիվների հաշվեկշռային արժեքների տարեկան արժեզրկման վերանայում 33 մլն.ԱՄՆ դոլար նվազեցում գրանցվել է Սովորեն հանքին: Տարվա ընթացքում Խումբը դիտարկել է համապատասխան դրամաստեղծ միավորի արժեզրկումը: Այդ վերանայումը պարզ է դարձրել, որ հանքի առևտրային կենսունակությունը զգալիորեն նվազել է, ինչի հետևանքով այդ վնասը գրանցվել է ֆինանսական արդյունքներում:

Տե՛ս Ծանոթագրություն 15-ի մանրամասները այն դրույթների նկարագրման համար, որոնք օգտագործվել են վնասների հաշվարկման ժամանակ: Այդ վնասն ընդգրկվել է շահույթի կամ վնասի այլ ծախսերում:

### 6.2 Նախկինում արժեզրկված ու հետախուզման և գնահատման ակտիվների արժեզրկման հակադարձում

Խումբը հակադարձել է նախկինում գրանցված արժեզրկման որոշ մասը, որը կապված է Աուրում ոսկու հանքի հետ: Այս հակադարձումը առաջացել է ակտիվի փոխհատուցվող գումարի որոշման հաշվարկներում օգտագործվող ենթադրությունների դրական փոփոխություններից: Գրանցված արժեզրկման հակադարձումը ներկայացվում է այլ ծախսերում:

ՀՀՄՍ 36.130

### 6.3 Նախալիցենզավորման ծախսումներ

Նախալիցենզավորման ծախսումները վերաբերում են Լիֆ և Կրոուն լիցենզիայի տարածքներին, որտեղ «Գուդ մայնինգ» ընկերությունը կատարել է նախնական ծախսումներ, բայց Մետալվիլի կառավարության կողմից որևէ իրավունք դեռ չի շնորհվել: Այս ծախսումները ծախսագրվել են տեղի ունենալիս:

ՀՀՄՍ 36.130

### 6.4 Հետախուզման և գնահատման ակտիվների վաճառքից օգուտ

Խումբն ունի հանքի մասնաբաժնի փոխանցման համաձայնության «Ռեդ Քուփեր» կազմակերպության հետ՝ կիսելու Կուպրում տարածքում հետախուզման գործառնությանը վերագրվող ծախսումները և ռիսկերը՝ ինչպես նշված է Ծան. 4-ում: Որպես հանքի մասնաբաժնի տրամադրման համաձայնության մաս «Ռեդ Քուփեր» փոխանցել է 23 մլն.ԱՄՆ դոլար, որը համաձայն 2.4 (դ) (iii) կետում նկարագրված քաղաքականության կրեդիտագրվել է հետախուզման և գնահատման ակտիվին, որը 22 մլն.ԱՄՆ դոլար էր: Գերազանցող միլիոն ԱՄՆ դոլարը ճանաչվել է որպես հետախուզման և գնահատման ակտիվի օտարումից օգուտ:

Բոլոր մնացած օգուտները և վնասները ներկա և նախորդող տարիների համար ստացվել են շարունակական գործունեությունից:

## Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

### 7. Հասույթ

	<b>2011թ.</b>	<b>2010թ.</b>	
	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	ՀՀՄՍ 18.35(բ)
<b>Վաճառքից հասույթ</b>			
Ոսկի	2,871	2,039	
Պրիմս	957	878	
<b>Ընդամենը վաճառքից գործառնական հասույթ</b>	<b>3,828</b>	<b>2,917</b>	
<b>Տոկոսային եկամուտ</b>	<b>24</b>	<b>25</b>	ՀՀՄՍ 1.82(ա) ՖՀՄՍ 7.20(բ)

### 8. Շահութահարկ

2011 և 2010 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շահութահարկի գծով ծախսերի հիմնական տարրերը հետևյալն են. ՀՀՄՍ 12.79

	<b>2011թ.</b>	<b>2010թ.</b>	
	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	
<b>Համապարփակ ֆինանսական արդյունքների համախմբված հաշվետվություն</b>			
<b>Շահութահարկի գծով ծախս</b>			
Ընթացիկ շահութահարկ`			
Ընթացիկ շահութահարկի գծով հաշվարկված վճար	703	639	ՀՀՄՍ 12.80(ա)
Նախորդ տարիների ընթացիկ շահութահարկի ճշգրտումներ	81	(78)	ՀՀՄՍ 12.80(բ)
Հետաձգված շահութահարկ`			
Ժամանակավոր տարբերությունների հակադարձմանը և ձևավորմանը վերաբերող	(30)	(78)	ՀՀՄՍ 12.80(գ)
<b>Շահութահարկի գծով ծախս</b>	<b>754</b>	<b>483</b>	
<b>Հանաձոնների վարձակալության գծով հարկային ծախսեր</b>			
Ընթացիկ հարկ`			
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	69	57	ՀՀՄՍ 12.80(ա)
Հետաձգված հարկ`			
Ժամանակավոր տարբերությունների հակադարձմանը և ձևավորմանը վերաբերող	(26)	(11)	ՀՀՄՍ 12.80(գ)
<b>Հանաձոնների վարձակալության գծով հարկային ծախսեր</b>	<b>43</b>	<b>46</b>	
<b>Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացված ընդամենը հարկերի գծով ծախս</b>	<b>797</b>	<b>529</b>	

Հարկերի գծով ծախսի և հաշվապահական շահույթի Մետալվիլում կիրառվող 2011 և 2010թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հարկի դրույքաչափով բազմապատկման արդյունքի ճշգրտումը ունի հետևյալ տեսքը` ՀՀՄՍ 12.81(գ)  
(i)

	<b>2011թ.</b>	<b>2010թ.</b>
	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար
<b>Մինչ հարկումը հաշվապահական շահույթ</b>	1,884	1,449
Ըստ օրենսդրության սահմանված Մետալվիլի շահութահարկի 30% դրույքաչափով (2010 թ.՝ 30%)	565	435
Հետախուզման և գնահատման պահուստ	(5)	-
Նախկինում չճանաչված հարկային վնասներից օգուտ	(5)	-
Չնվազեցվող ծախսեր	118	126
Նախորդ տարիների հարկային ծախսերի ճշգրտում	81	(78)
<b>Ըստ շահութահարկի արդյունավետ դրույքաչափի 42% (2010թ.՝ 37%)</b>	<b>754</b>	<b>483</b>
Ռեսուրսների վարձակալման հարկերի գծով ծախս	43	46
<b>Համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված ընդամենը հարկերի գծով ծախս</b>	<b>797</b>	<b>529</b>

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 8. Շահութահարկ (շարունակություն)

Հետաձգված շահութահարկ

Դեկտեմբերի 31-ին հետաձգված շահութահարկը վերաբերում է հետևյալ հոդվածներին՝

	Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն		Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն		
	2011թ.	2010թ.	2011թ.	2010թ.	
	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	
<b>Շահութահարկի գծով</b>					
<b>Հետաձգված հարկային պարտավորություններ</b>					
Արագացված անորոշիզացիա հարկման նպատակով	(111)	(146)	35	(18)	ՀՀՄՍ 12.81(Է)(i)
Հետախուզման և գնահատման ակտիվներ	(77)	(21)	(56)	2	
Հանքեր	(189)	(157)	(32)	(8)	
	<u>(377)</u>	<u>(324)</u>			
<b>Հետաձգված հարկային ակտիվներ</b>					
Կենսաթոշակային պլանի դեֆիցիտ	1	1	–	(6)	ՀՀՄՍ 2.81(Է)(ii)
Ապագա հարկվող շահույթի դիմաց հաշվանցման ենթակա վնասներ	79	56	23	(48)	
	<u>80</u>	<u>57</u>			
<b>Հետաձգված շահութահարկի գծով եկամուտ/(ծախս)</b>			<b>(30)</b>	<b>(78)</b>	
<b>Շահութահարկին վերաբերող (զուտ) հետաձգված հարկային պարտավորություններ</b>	<b>(297)</b>	<b>(267)</b>			
<b>Ռեսուրսների վարձակալմանը վերաբերող հարկերի գծով</b>					
<b>Հետաձգված հարկային պարտավորություններ</b>					
Հետախուզման և գնահատման ակտիվներ	(37)	(22)	(15)	6	
Հանքեր	(54)	(40)	(14)	(17)	
	<u>(91)</u>	<u>(62)</u>			
<b>Հետաձգված հարկային ակտիվներ</b>					
Այլ	3	–	3	–	
	<u>3</u>	<u>–</u>			
<b>Հետաձգված հարկերի գծով եկամուտ/(ծախս)</b>			<b>(26)</b>	<b>(11)</b>	
<b>Ռեսուրսների վարձակալմանը վերաբերող հարկերի գծով զուտ հետաձգված հարկային պարտավորություններ</b>	<b>(88)</b>	<b>(62)</b>			
<b>Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում արտահայտված՝</b>					
Հետաձգված հարկային ակտիվներ	83	57			
Հետաձգված հարկային պարտավորություններ	(468)	(386)			
<b>Զուտ հետաձգված հարկային պարտավորություններ</b>	<b>(385)</b>	<b>(329)</b>			

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ (շարունակություն)

## 8. Շահութահարկ (շարունակություն)

Հետաձգված հարկային ակտիվները գնահատվում են որպես չօգտագործված հարկային վնասների և չօգտագործված հարկային զեղչերի փոխանցում, այն չափով, որով հավանական է հարկվող շահույթները կլինեն, որոնցից չօգտագործված հարկային վնասներն ու զեղչերը կարող են նվազեցվել:

ՀՀՄՍ 12.81(ե)

Խումբը չի ճանաչել հարկային վնասներ 533 մլն.ԱՄՆ դոլարի չափով (2010թ.՝ 550 մլն.ԱՄՆ դոլար), որոնք ենթակա են փոխանցման այդ վնասներն առաջացնող դուստր ընկերությունների ապագա հարկվող շահույթներից նվազեցման համար: Այնուամենայնիվ, այս կորուստները վերաբերում են այն դուստր ընկերություններին, որոնք ունեն կորուստների պատմություն և չեն կարող օգտագործվել Խմբում այլ հարկվող շահույթից նվազեցման համար:

ՀՀՄՍ 12.81(ե)

Դուստր կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում ներդրումների հետ կապված առաջացած ժամանակավոր տարբերությունները, որոնց համար հետաձգված հարկային պարտավորությունը չի ճանաչվում, կազմում է ընդհանուր 58 մլն.ԱՄՆ դոլար (2010թ.՝ 94 մլն.ԱՄՆ դոլար):

ՀՀՄՍ 12.81(զ)

Հետաձգված հարկային ակտիվ չի ճանաչվել շրջակա միջավայրի վերականգնման պահուստներով (տե՛ս հաշվապահական հաշվառման քաղաքականության 2.4 (Ժա) (ii) կետը հետագա մանրամասների համար):

## Մեկնաբանություն

### Հանաձոնների վարձակալության հարկերի բացահայտում

Շահութահարկի բացահայտումը «Գուդ մայնինգում» նկարագրում է հանաձոնների վարձակալության հարկ, որը բավարարում է բոլոր պայմաններին, որպեսզի ճանաչվի շահութահարկ ՀՀՄՍ 12 «Շահութահարկեր» ստանդարտի համաձայն: Երբ հանաձոնի վարձակալության հարկը պետք է դասակարգվի որպես շահութահարկ ֆինանսական հաշվետվություններում, այն պետք է գրանցվի որպես «զծից ներքև» հարկային ծախս (այսինքն՝ ընկերության ընթացիկ շահութահարկի նման) և անհրաժեշտ է հարկերի վրա ազդող հաշվապահություն (ներառյալ՝ հետաձգված հարկերի մնացորդները և դրանց բացահայտումները):

Հանաձոնի վարձակալության հարկի դասակարգումը որպես արտադրության կամ շահույթի վրա հիմնված հարկ շատ հաճախ ակնհայտ չէ: Աշխարհում կան հանաձոնի վարձակալության հարկերի բազմաթիվ տեսակներ, որոնց մի մասը բացահայտորեն շահութահարկ չեն, մինչդեռ դրանց մի մասը ունի շահութահարկի բնութագրիչներ: Որպեսզի որոշվի, արդյոք, որոշակի արտադրական հարկը բավարարում է ՀՀՄՍ 12 ստանդարտի շահութահարկի պահանջին, կազմակերպությունը պետք է գնահատի, արդյոք, հարկը հիմնված կամ բավականաչափ կապված է տվյալ ժամանակաշրջանի գուտ շահույթին: Եթե այն չի բավարարում շահութահարկի սահմանմանը, կազմակերպությունը պետք է մշակի հաշվապահական քաղաքականությունը ՀՀՄՍ 8-ի հիերարխիայի համաձայն:

Գործնականում բավականին խառնաշփոթ է, քանի որ որոշ կազմակերպություններ կարող են հանաձոնի վարձակալության հարկը դասակարգել ՀՀՄՍ 12 –ի համաձայն շահութահարկ, իսկ մյուսները կարող են այն դասակարգել այդ ստանդարտի շրջանակներից դուրս: «Գուդ մայնինգի» բացահայտումը ցույց է տալիս, որ հանաձոնի վարձակալության հարկը միշտ կիրառվել է, ուստի չի ցուցադրում սկզբնական ճանաչման հետ կապված բացահայտումները:

## 9. Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ

Բազային մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթները հաշվարկվում են զուտ շահույթը տարվա համար բաժանելով տվյալ տարվա ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի միջին կշռված քանակին:

Բազային և նոսրացված մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթները նույնն են, քանի որ չկան գործիքներ, որոնք կունենան նոսրացնող ազդեցություն շահույթների վրա:

ՀՀՄՍ  
33.70(զ)

	2011թ.	2010թ.	
Սովորական բաժնետոմսեր տիրապետողներին վերագրվող զուտ շահույթ (մլն. ԱՄՆ դոլար)	1,087	920	ՀՀՄՍ 33.70(ա)
Սովորական բաժնետոմսերի միջին կշռված քանակ (բաժնետոմսերի թիվը՝ մլն.)	1,564	958	ՀՀՄՍ 33.70(բ)
Սովորական բաժնետոմսին բաժին ընկնող բազային և նոսրացված շահույթներ (ԱՄՆ դոլար)	0.70	0.96	ՀՀՄՍ 33.66

Այլ գործարքներ չկան, որոնք ընդգրկում են սովորական բաժնետոմսերը կամ պոտենցիալ սովորական բաժնետոմսերը հաշվետու օրվա և ֆինանսական հաշվետվությունների ավարտման ամսաթվի միջև:

ՀՀՄՍ  
33.70(դ)

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ (շարունակություն)

## 10. Առաջարկված և վճարված շահաբաժիններ

	2011թ. մլն. ԱՄՆ դոլար	2010թ. մլն. ԱՄՆ դոլար	
Տարվա ընթացքում հայտարարված և վճարված՝			
Ընթացիկ ժամանակաշրջանի միջանկյալ շահաբաժիններ	245	100	
Նախորդ ժամանակաշրջանի վերջնական շահաբաժիններ	105	40	
<b>Տարվա ընթացքում վճարված ընդամենը շահաբաժիններ</b>	<b>350</b>	<b>140</b>	ՀՀՄՍ 1.107
	<b>2011թ.</b>	<b>2010թ.</b>	
Սովորական բաժնետոմսերի միջին կշռված թիվը (բաժնետոմսերի թիվը՝ մլն.)	1,564	958	
<b>Սովորական բաժնետոմսին բաժին ընկնող շահաբաժին (մեկ բաժնետոմսի դիմաց ցենտերով)</b>	<b>22.4</b>	<b>14.6</b>	ՀՀՄՍ 1.107
Վերջնական շահաբաժիններ՝ առաջարկված հաստատման համար բաժնետերերի ամենամյա ժողովի ժամանակ (որպես պարտավորություն չճանաչված 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ) - 0.15 ԱՄՆ դոլար մեկ բաժնետոմսի դիմաց (2010թ.՝ 0.11 ԱՄՆ դոլար մեկ բաժնետոմսի դիմաց) (մլն. ԱՄՆ դոլար)	235	105	ՀՀՄՍ 1.137(ա)

## 11. Հետախուզման և գնահատման ակտիվներ

	մլն. ԱՄՆ դոլար	
<b>2010թ. հունվարի 1-ի դրությամբ սկզբնական արժեքը</b>	<b>361</b>	\$ՀՄՍ 6.23 \$ՀՄՍ 6.24(բ) \$ՀՄՍ 6.25
Ավելացումներ	293	
Անարդյունք հետախուզման ծախսումների դուրս գրում	(75)	
Վերադասակարգում «Կառուցման փուլում գտնվող հանքերի» դաս	(55)	
<b>2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սկզբնական արժեքը</b>	<b>524</b>	
Ավելացումներ	358	
«Օազիս» ընկերության հետախուզման պոտենցիալով հողատարածքի ձեռքբերում	24	
«Օազիս» ընկերության օգտակար հանածոների ձեռքբերում	48	
«Կուպրում»-ին հանքի մասնաբաժնի տրամադրում	(22)	
Անարդյունք հետախուզման ծախսումների դուրս գրում	(90)	
Վերադասակարգում «Կառուցման փուլում գտնվող հանքերի» դաս	(71)	
<b>2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սկզբնական արժեքը</b>	<b>771</b>	
<b>2010թ. հունվարի 1-ի դրությամբ արժեզրկման պահուստ</b>	<b>(17)</b>	
Տարվա ընթացքում հաշվեզրկված արժեզրկում	(6)	
Ավելի վաղ հաշվեզրկված արժեզրկման հակադարձում	-	
<b>2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արժեզրկման պահուստ</b>	<b>(23)</b>	
Տարվա ընթացքում հաշվեզրկված արժեզրկում	(5)	
Ավելի վաղ հաշվեզրկված արժեզրկման հակադարձում	16	
<b>2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արժեզրկման պահուստ</b>	<b>(12)</b>	
<b>2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ զուտ հաշվեկշռային արժեք</b>	<b>501</b>	
<b>2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ զուտ հաշվեկշռային արժեք</b>	<b>759</b>	

Հետախուզման և գնահատման ծախսումները, որոնք անմիջապես ճանաչվել են որպես այլ ծախսեր շահույթում կամ վնասում համաձայն 2.4 (դ) կետի, կազմում են 35 մլն. ԱՄՆ դոլար (2010թ.՝ 23 մլն. ԱՄՆ դոլար):

### Մեկնաբանություն

#### Այն մակարդակի որոշումը, որտեղ հետախուզման և գնահատման ակտիվները գնահատվում են արժեզրկման համար

ՀՀՄՍ-ն որոշել է, որ հետախուզման և գնահատման ակտիվները հատուկ դրամաստեղծ միավորումում ներկայացման փոխարեն, թույլատրվում է միավորել դրամաստեղծ միավորները ՀՀՄՍ 36-ի գույքի արժեզրկման մոտեցմանը նման: Հետևաբար, կազմակերպությունը պետք է ունենա հաշվապահական հաշվառման քաղաքականություն հետախուզման և գնահատման ակտիվները դրամաստեղծ միավորներին կամ դրամաստեղծ միավորների խմբերին բաշխելու համար՝ արժեզրկումից կորուստները ստուգելու նպատակով: ՖՀՄՍ 6-ը պահանջում է, որ դրամաստեղծ միավորը կամ դրամաստեղծ միավորների խումբը, որին հետախուզման կամ գնահատման ակտիվները բաշխվում են չպետք է մեծ լինի գործառնական սեզմենտից՝ որոշված համաձայն ՖՀՄՍ 8 «Գործառնական սեզմենտներ» ստանդարտի:

Այսպիսով, կազմակերպության կողմից որոշված մակարդակը հետախուզման և գնահատման ակտիվների արժեզրկման ստուգման համար կարող է լինել մեկ կամ մի քանի դրամաստեղծ միավորներ:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ (շարունակություն)

## 11. Հետախուզման և գնահատման ակտիվներ (շարունակություն)

### Արժեզրկումից կորուստների հակադարձում

Ցանկացած արժեզրկումից կորուստ հետախուզման և գնահատման ակտիվների գծով, որը ճանաչվել է ՖՀՄՍ 6-ի համաձայն, պետք է հետ հակադարձվի, երբ բավարարված են ՀՀՄՍ 36-ի 109-ից 123 պարագրաֆների պահանջները: Գույքի կից բացի այլ ակտիվների նախկինում ճանաչված արժեզրկումները պետք է հակադարձվեն հաջորդ ժամանակաշրջաններում այն և միայն այն դեպքում, երբ վերջին արժեզրկումից հետո առկա է փոփոխություն ակտիվի փոխհատուցվող գումարը որոշելու գնահատումներում՝ վերականգնելիությունը հաշվարկելու համար: Եթե դա այդպես է, ուրեմն ակտիվի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև դրա փոխհատուցվող գումարը: Այնուամենայնիվ, այդպիսի հակադարձումը չպետք է գերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի (նաշվածությունից ու ամորտիզացիայից զուտ), եթե նախկինում ակտիվի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Որոշ դեպքերում, երբ կազմակերպությունը ճանաչում է հետախուզման և գնահատման ակտիվների արժեզրկում, այն նաև պետք է ապաճանաչի ակտիվը, եթե ապագայում տնտեսական օգուտներ այլևս չեն ակնկալվում:

## 12. Հանքեր

	Կառուցման փուլում գտնվող հանքեր		Հետաձգված մակաբացման ծախսումներ		ՀՀՄՍ 1.78(ա)
	մլն. ԱՄՆ դոլար	Գործող հանքեր մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	Ընդամենը մլն. ԱՄՆ դոլար	ՀՀՄՍ 16.73(ե) ՀՀՄՍ 16.73(դ)
<b>2010թ. հունվարի 1-ի դրությամբ սկզբնական արժեքը</b>	<b>559</b>	<b>2,796</b>	<b>373</b>	<b>3,728</b>	
Ավելացումներ	1,299	–	270	1,569	
Փոխանցում հետախուզման և գնահատման ակտիվների դասից	55	–	–	55	
Շրջակա միջավայրի վերականգնման պահուստի փոփոխություն	27	152	–	179	
Դուրսգրումներ	–	(115)	–	(115)	
Շահույթ/վնասում ճանաչված հետաձգված մակաբացման ծախսումներ	–	–	(140)	(140)	
Փոխանցումներ	(1,102)	1,102	–	–	
<b>2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սկզբնական արժեքը</b>	<b>838</b>	<b>3,935</b>	<b>503</b>	<b>5,276</b>	
Ավելացումներ	1,096	–	206	1,302	
«Օազիս» ընկերության ձեռքբերում	–	487	–	487	
Փոխանցում հետախուզման և գնահատման ակտիվների դասից	71	–	–	71	
Շրջակա միջավայրի վերականգնման պահուստի փոփոխություն	35	195	–	230	
Դուրսգրումներ	–	(72)	–	(72)	
Շահույթ/վնասում ճանաչված հետաձգված մակաբացման ծախսումներ	–	–	(160)	(160)	
Փոխանցումներ	(876)	876	–	–	
<b>2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սկզբնական արժեքը</b>	<b>1,164</b>	<b>5,421</b>	<b>549</b>	<b>7,134</b>	
<b>Մաշվածություն և սպառում 2010թ. հունվարի 1-ի դրությամբ</b>	<b>–</b>	<b>(1,339)</b>	<b>–</b>	<b>(1,339)</b>	ՀՀՄՍ 16.73(դ)
Տարվա ընթացքում հաշվեզրկված	–	(285)	–	(285)	
Արժեզրկման պահուստ	(1)	(8)	–	(9)	
Դուրսգրում	–	63	–	63	
<b>Մաշվածություն և սպառում 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>(1)</b>	<b>(1,569)</b>	<b>–</b>	<b>(1,570)</b>	
Տարվա ընթացքում հաշվեզրկված	–	(634)	–	(634)	
Արժեզրկման պահուստ	(5)	(28)	–	(33)	
Դուրսգրում	–	46	–	46	
<b>Մաշվածություն և սպառում 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>(6)</b>	<b>(2,185)</b>	<b>–</b>	<b>(2,191)</b>	
<b>Զուտ հաշվեկշռային արժեքը 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>837</b>	<b>2,366</b>	<b>503</b>	<b>3,706</b>	ՀՀՄՍ 16.73(դ)
<b>Զուտ հաշվեկշռային արժեքը 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>1,158</b>	<b>3,236</b>	<b>549</b>	<b>4,943</b>	



# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 12. Հանքեր (շարունակություն)

Ներկայումս մշակման փուլում գտնվող հանքերի գծով փոխառության ծախսումները, որոնք կապիտալացվել են «Կառուցման փուլում գտնվող հանքերի» կազմում, հաշվետու ժամանակաշրջանում կազմել են 10 մլն. ԱՄՆ դոլար (2010թ.՝ 1 մլն. ԱՄՆ դոլար)՝ 5.8% միջին կշռված տոկոսադրույքով (2010թ.՝ 5.7%)։

ՀՀՄՄ  
23.26(բ)

«Կառուցման փուլում գտնվող հանքերին» մաշվածություն չի հաշվարկվում մինչ կառուցման ավարտը: Սա կարևորվում է հանքային արտադրության պաշտոնական շահագործման հանձնման հետ կապված:

ՀՀՄՄ  
16.74(բ)

«Հանքի» արժեզրկման ստուգման մանրամասնությունների համար տե՛ս Ծանոթագրություն 15-ը:

### Մեկնաբանություն

#### Մակաբացման գծով հետաձգված ծախսումների ներկայացում

Ներկայումս \$ՀՀՄՄ-ները չեն կարգավորում, թե ֆինանսական վիճակի մասին հաշվետվության որ հոդվածում կազմակերպությունը պետք է ներկայացնի մակաբացման գծով հետաձգված ծախսումները: Գործնականում, բազմաթիվ խոշոր արդյունահանող ընկերություններ ճանաչում են մինչ արդյունահանումը մակաբացման գծով ծախսումները հիմնական միջոցներում: Արտադրական փուլում մակաբացման գծով հետաձգված ծախսումները հանքարդյունաբերության ոլորտում լայնորեն տարբերվում են և կարող են դասակարգվել արդյունահանված պաշարների, այլ ակտիվների կամ հանքերի կազմում: Արդյունահանող ընկերությունները հիմնականում արտադրական փուլի մակաբացման գծով ծախսումները դասակարգում են որպես արդյունահանված պաշարների ինքնարժեք կամ ընդգրկում են «Այլ ակտիվների» կամ «Կանխավճարների» կազմում:

Այն կազմակերպությունները, որոնք դասակարգում են մակաբացման գծով հետաձգված ծախսումները հիմնական միջոցներում, պետք է նաև համապատասխան դրամական հոսքերը ներկայացնեն որպես ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր: Եթե հետաձգված ծախսումները դասակարգվում են այլ կատեգորիայում (օրինակ՝ պաշարների կազմում), ապա դրամական հոսքերը պետք է դասակարգվեն որպես գործառնական գործունեությունից դրամական հոսքեր:

Ինչպես նշված էր, \$ՀՀՄՄ 20-ի հրապարակումը (հավանաբար 2011թ. հոկտեմբերին), որը ուժի մեջ կմտնի 2013թ. հունվարի 1-ից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար, կազմակերպություններից կպահանջի ներկայացնել մակաբացման գծով կապիտալացված ծախսումները (մակաբացման գործունեության ակտիվները) որպես համապատասխան հանքերի մաս (կա՛մ նյութական կա՛մ ոչ նյութական), որը կներկայացվի ոչ ընթացիկ ակտիվների կազմում: Հետևաբար, հնարավոր չի լինի նման մնացորդները ներկայացնել ֆինանսական վիճակի մասին հաշվետվության այլ բաժիններում, օրինակ՝ այլ ընթացիկ կամ ոչ ընթացիկ ակտիվներում:

## 13. Հիմնական միջոցներ

	<b>Հող և շենքեր որպես</b>			ՀՀՄՄ 1.78(ա)
	<b>սեփականություն</b>	<b>Սարքավորումներ</b>	<b>Ընդամենը</b>	
	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	ՀՀՄՄ 16.73(ե)
<b>Սկզբնական արժեք</b>				
<b>2010 թ. հունվարի 1-ի դրությամբ</b>	<b>87</b>	<b>220</b>	<b>307</b>	ՀՀՄՄ 16.73(դ)
Ավելացումներ	21	11	32	
Դուրսգրումներ	(10)	(50)	(60)	
<b>2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>98</b>	<b>181</b>	<b>279</b>	
Ավելացումներ	-	1	1	
«Օազիս» ընկերության ձեռքբերում	10	19	29	
Դուրսգրումներ	(4)	(9)	(13)	
<b>2011 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>104</b>	<b>192</b>	<b>296</b>	
<b>Մաշվածություն</b>				
<b>2010 թ. հունվարի 1-ի դրությամբ</b>	<b>(19)</b>	<b>(62)</b>	<b>(81)</b>	ՀՀՄՄ 16.73(դ)
Տարվա ընթացքում հաշվեգրված մաշվածություն	(5)	(3)	(8)	
Դուրսգրումներ	6	31	37	
<b>2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>(18)</b>	<b>(34)</b>	<b>(52)</b>	
Տարվա ընթացքում հաշվեգրված մաշվածություն	(2)	(5)	(7)	
Դուրսգրումներ	-	1	1	
<b>2011 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>(20)</b>	<b>(38)</b>	<b>(58)</b>	
<b>Զուտ հաշվեկշռային արժեք՝</b>				
<b>2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>80</b>	<b>147</b>	<b>227</b>	ՀՀՄՄ 16.73(դ)
<b>2011 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>84</b>	<b>154</b>	<b>238</b>	

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 13. Հիմնական միջոցներ (շարունակություն)

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սարքավորումների մեջ ներառվել էր կառուցման ընթացքում գտնվող արտադրական հզորությունների գծով 3 մլն. ԱՄՆ դոլարի ծախսումը (2010թ.՝ 46 մլն. ԱՄՆ դոլար): Այդ ծախսումը ներառում է հաշվետու ժամանակաշրջանում կապիտալացված փոխառության ծախսումներ, որոնք կազմում են 0.1 մլն. ԱՄՆ դոլար (2010թ.՝ 2.1 մլն. ԱՄՆ դոլար)՝ 5.8% միջին կշռված տոկոսադրույքով (2010թ.՝ 5.7%):

ՀՀՄՍ 16.74(բ)

## 14. Ոչ նյութական ակտիվներ

	Այլ ոչ նյութական ակտիվներ			ՀՀՄՍ 38.118(գ) ՀՀՄՍ 38.118(ե)
	Գուդվիլ մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	Ընդամենը մլն. ԱՄՆ դոլար	
<b>Սկզբնական արժեք</b>				
<b>2010 թ. հունվարի 1-ի դրությամբ</b>	20	4	24	
Ավելացումներ	-	4	4	
<b>2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>20</b>	<b>8</b>	<b>28</b>	
Ավելացումներ	-	5	5	
«Օազիս» ընկերության ձեռքբերում (Ծան. 3)	37	-	37	
<b>2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>57</b>	<b>13</b>	<b>70</b>	
<b>Ամորտիզացիա և արժեզրկում</b>				
<b>2010 թ. հունվարի 1-ի դրությամբ</b>	-	(1)	(1)	
Տարվա ընթացքում հաշվեզրկված	-	-	-	
<b>2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	-	<b>(1)</b>	<b>(1)</b>	
Տարվա ընթացքում հաշվեզրկված	-	(1)	(1)	
Արժեզրկում	(15)	-	(15)	
<b>2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>(15)</b>	<b>(2)</b>	<b>(17)</b>	
<b>Զուտ հաշվեկշռային արժեք՝</b>				
<b>2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>20</b>	<b>7</b>	<b>27</b>	
<b>2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>42</b>	<b>11</b>	<b>53</b>	

Գուդվիլը ի հայտ է գալիս հետևյալ գործոնների հետևանքով՝

- 1) Անընդհատությամբ պայմանավորված մեր հնարավորությունը պահպանել և ավելացնել մեր գործունեությունը՝ ավելացնելով հանքաքարի պաշարները և հանաձոները նոր հայտնաբերումներով,
- 2) Հնարավորություն՝ օգտվել յուրահատուկ սիներգիզմից, որն առաջանում է գործունեության տարածքում և՛ առկա, և՛ ձեռքբերված հանքերից,
- 3) Հաշվարկված հետաձգված հարկային պարտավորությունների և ակտիվների պարտադիր ճանաչմամբ, որպես ձեռքբերված ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի և դրանց հարկային բազաների տարբերության հարկային արդյունք:

## 15. Արժեզրկման կորուստներ

### Գուդվիլի արժեզրկման ստուգում

Գուդվիլը բաշխված է դրամաստեղծ միավորների վրա արժեզրկման ստուգման նպատակով: Հետևյալ դրամաստեղծ միավորները ընդգրկում են բաշխված գուդվիլից նշանակալի մաս՝ համեմատաբար խմբի համար ընդհանուր գուդվիլի հաշվեկշռային արժեքի հետ:

### Դրամաստեղծ միավոր

	2011թ.	2010թ.
	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար
«Սուվերեն» հանք	-	15
«Դոր» հանք	5	5
«Օազիս»	37	-

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ (շարունակություն)

## 15. Արժեզրկման կորուստներ (շարունակություն)

Գուդվիլի հաշվեկշռային արժեքը, որը բաշխված է Սուվերեն հանքին նվազել է մինչ իր փոխհատուցվող գումարը՝ 15 մլն. ԱՄՆ դոլարի արժեզրկման ճանաչմամբ: Խմբի տարեկան արժեզրկման կորուստների գնահատման ժամանակ բացահայտվել է, որ արդյունահանման ծախսումների հաշվարկներում փոփոխությունների հետևանքով գուդվիլի հաշվեկշռային արժեքը գերազանցում է դրա փոխհատուցվող գումարը:

Այն գուդվիլը, որն առաջանում է «Օագիսի» ձեռքբերման արդյունքում՝ 37 մլն. ԱՄՆ դոլար, ներկայացնում է պայմանական գումար, ինչի հետևանքով այն դեռևս չի բաշխվել դրամաստեղծ միավորների: Հետևաբար, 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գուդվիլը դեռևս որևէ արժեզրկման ստուգման առարկա չէ:

ՀՀՄՍ 36.133

### Մեկնաբանություն

Գուդվիլի արժեզրկման ստուգումներ չեն կարող իրականացվել նախքան այդ գուդվիլի բաշխումը դրամաստեղծ միավորին: Այնուամենայնիվ, մեր կարծիքով, եթե գուդվիլը ձեռք է բերվել ընթացիկ տարեկան ժամանակաշրջանում, բայց դեռ չի ստուգվել արժեզրկման համար, քանի որ դեռևս չի բաշխվել, այդպիսի գուդվիլը պետք է ստուգվի արժեզրկման համար մինչև տարեկան ժամանակաշրջանի ավարտը, որի ընթացքում այն բաշխվել է (այսինքն՝ մինչ 2012 թ. վերջը «Օագիսի» ձեռքբերման դեպքում):

### Արժեզրկման ստուգում այլ ոչ ընթացիկ ակտիվների համար

	2011թ. մլն. ԱՄՆ դոլար	2010թ. մլն. ԱՄՆ դոլար	
Արժեզրկումից կորուստներ			
Հետախուզման և գնահատման ակտիվներ	(5)	(6)	ՀՀՄՍ 36.126(ա)
Հանքեր	(33)	(9)	
Արժեզրկման հակադարձումներ			ՀՀՄՍ 36.126(բ)
Հետախուզման և գնահատման ակտիվներ	16	-	

2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում հետախուզման և գնահատման ակտիվների արժեզրկման գուտ հակադարձում է ճանաչվել: Հիմնական տարրը 16 մլն. ԱՄՆ դոլար (2010թ.՝ զրո) կրեդիտն է Աուրում հանքին վերաբերող նախկինում գրանցված կորուստների հակադարձման համար: Այս հակադարձումները առաջացել են ակտիվների փոխհատուցվող գումարների հաշվարկներում օգտագործվող կանխատեսումների՝ արժեզրկումները ճանաչելուց հետո տեղի ունեցած դրական փոփոխությունների հետևանքով: Սա մասնակիորեն հակադարձել է արժեզրկումից կորուստները մոտ 5 մլն. ԱՄՆ դոլարով (2010թ.՝ 6 մլն. ԱՄՆ դոլար): Հիմնական տարր՝ 3 մլն. ԱՄՆ դոլարը գրանցվել է հետախուզման և գնահատման ակտիվներում, որոնք վերաբերում են «Օրո» հետախուզվող տարածքին, որտեղ կատարվել է հորատում պաշարների գնահատման համար:

ՀՀՄՍ 36.130

Ընդհանուր արժեզրկումից կորուստ 33 մլն. ԱՄՆ դոլար (2010թ.՝ 9 մլն. ԱՄՆ դոլար) ճանաչվել է հանքերի գծով: Սրա հիմնական տարրը՝ 20 մլն. ԱՄՆ դոլար վերագրվում է Սուվերեն հանքին: Արժեզրկման ստուգման դրդապատճառը հիմնականում հանքային պլանի փոփոխություններն են՝ որպես արդյունք հետագա գեոտեխնիկական վերլուծության, որը հանգեցրել է սպասվածից ավելի շատ արդյունահանման ծախսումների կանխատեսմանը: Սա նաև բերում է լրացուցիչ հետագա վերականգնման ծախսումների, որոնք կառաջանան լրացուցիչ հանքանյութը ծածկող ապարների հեռացումից: Փոխհատուցվող գումարը հիմնվում է ղեկավարության կանխատեսած օգտագործման արժեքի վրա:

ՀՀՄՍ 36.130

Ակտիվի արժեզրկման անհրաժեշտությունը գնահատելիս դրա հաշվեկշռային արժեքը համեմատվում է փոխհատուցվող գումարի հետ: Փոխհատուցվող գումարը ակտիվի իրական արժեքից՝ հանած վաճառքի գծով ծախսումները և օգտագործվող արժեքից առավելագույնն է: Խմբի գործունեության բնույթից ելնելով ակտիվի իրական արժեքի մասին ինֆորմացիան շատ դժվար է որոշել, քանի որ չկան բանակցություններ պոտենցիալ գնորդների հետ կամ նման գործարքներ չեն իրականացվել: Հետևաբար, եթե հակառակը նշված չէ, փոխհատուցվող գումարը, որն օգտագործվում է արժեզրկման գնահատման համար, օգտագործման արժեքն է:

Օգտագործման արժեքի հաշվարկը առավել զգայուն է հետևյալ ենթադրությունների նկատմամբ.

ՀՀՄՍ 36.134

- ▶ Արտադրության ծավալներ
- ▶ Զեղչերի դրույթներ
- ▶ Մետաղների գներ
- ▶ Գործառնական ծախսումներ:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 15. Արժեզրկման կորուստներ (շարունակություն)

Հաշվարկված արտադրության ծավալները հիմնված են հանքի ողջ գործողության ժամանակաշրջանում գործունեության մանրամասն պլանի վրա և հաշվի են առնվել ղեկավարության երկարաժամկետ պլանավորման հաստատված հանքերի մշակման ծրագրերը: Հաշվարկվել է, որ եթե ամբողջ արտադրությունը կրճատվի 10%-ով գալիք 15 տարիների ընթացքում, դա բավարար չի լինի, որպեսզի առանձին դրամաստեղծ միավորների փոխհատուցվող գումարների այն մասը, որը գերազանցում է հաշվեկշռային արժեքները, կրճատվի մինչև 0: Հետևաբար, ղեկավարությունը հավաստիացնում է, որ արտադրության ենթադրության ոչ մի խելամիտ հավանական փոփոխություն չի հանգեցնի գուղվիլի և այլ ոչ ընթացիկ ակտիվների հաշվեկշռային արժեքների գերազանցմանը փոխհատուցվող գումարներին:

Խումբն, ընդհանուր առմամբ, հաշվարկում է օգտագործման արժեքը գեղչված դրամական հոսքերի մեթոդով: Ապագա դրամական հոսքերը ճշգրտվում են ակտիվներին բնորոշ ռիսկերով և գեղչվում են մինչև հարկումը 10% դրույքով (2010թ.՝ 10%): Զեղչման դրույքը հաշվարկվում է Խմբի հարկումից հետո կապիտալի միջին կշռված արժեքով: Ղեկավարությունը նաև հավաստիացնում է, որ ներկայումս չեն սպասվում խելամիտ հավանական փոփոխություններ գեղչման դրույքում, հաշվարկված ապագա ոսկու և պղնձի գներում և ապագա գործառնական ծախսումներում, որոնք կկրճատեն մինչև զրո Խմբի առանձին դրամաստեղծ միավորների փոխհատուցվող գումարների այն մասը, որը գերազանցում է հաշվեկշռային արժեքները:

## 16. Թոշակային հատուցումների գծով պարտավորություն

Խումբն ունի միջին աշխատավարձի հիման վրա սահմանված կենսաթոշակային սխեմա, որը ներառում է իր Մետալվիլում գտնվող բոլոր աշխատողներին: Մասհանումները կատարվում են առանձին կառավարվող հիմնադրամին:

ՀՀՄՍ  
19.120Ա(բ)

Շահույթի կամ վնասի «Այլ ծախսեր» տողում ճանաչված գումարները հետևյալն են՝

	<b>2011թ.</b>	<b>2010թ.</b>
	<b>մլն. ԱՄՆ</b>	<b>մլն. ԱՄՆ</b>
	<b>դոլար</b>	<b>դոլար</b>
Ընթացիկ ծառայությունների արժեք	17	20
Անցյալ ծառայությունների արժեք	1	1
Տոկոսային ծախսումներ հատուցումների պարտավորության գծով	3	3
Ակնկալվող հատույցը պլանի ակտիվների գծով	(9)	(9)
<b>Ընդամենը զուտ սահմանված հատուցումների թոշակային ծախսումներ</b>	<b>12</b>	<b>15</b>

ՀՀՄՍ  
19.120Ա(է)

Պլանի ակտիվների փաստացի հատուցումը 10 մլն. ԱՄՆ դոլար է (2010թ.՝ 10 մլն. ԱՄՆ դոլար):

ՀՀՄՍ 19.120Ա(զ)  
ՀՀՄՍ 19.120Ա(զ)

Հաշվետու ամսաթվին ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված գումարները հետևյալն են՝

	<b>2011թ.</b>	<b>2010թ.</b>
	<b>մլն. ԱՄՆ</b>	<b>մլն. ԱՄՆ</b>
	<b>դոլար</b>	<b>դոլար</b>
Սահմանված հատուցումների գծով պարտավորության ներկա արժեք	49	44
Պլանի ակտիվների իրական արժեք	(26)	(23)
<b>Զուտ սահմանված հատուցման պարտավորություններ</b>	<b>23</b>	<b>21</b>
Անցյալ ծառայության չճանաչված արժեք	(1)	(1)
<b>Ընդամենը զուտ սահմանված հատուցումների գծով պարտավորություն</b>	<b>22</b>	<b>20</b>

Սահմանված հատուցումների գծով պարտավորությունների ակնկալվող վերականգնումը կամ մարումը հետևյալն է՝

	<b>2011թ.</b>	<b>2010թ.</b>
	<b>մլն. ԱՄՆ դոլար</b>	<b>մլն. ԱՄՆ դոլար</b>
Ընթացիկ*	2	2
Ոչ ընթացիկ	20	18
<b>Զուտ սահմանված հատուցումների գծով պարտավորություն</b>	<b>22</b>	<b>20</b>

ՀՀՄՍ 19.109  
ՀՀՄՍ 19.110

\* Ակնկալվող վերականգնում կամ մարում հաշվետու ամսաթվից հետո 12 ամիսների ընթացքում:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 16. Թոշակային հատուցումների գծով պարտավորություն (շարունակություն)

Սահմանված հատուցումների գծով պարտավորությունների շարժը հետևյալն է՝

ՀՀՄՍ  
19.120Ա(գ)

	<b>2011թ.</b>	<b>2010թ.</b>
	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար
<b>Հունվարի 1-ի դրությամբ</b>	<b>44</b>	<b>36</b>
Ընթացիկ ծառայությունների արժեք	17	20
Անցյալ ծառայությունների արժեք	1	1
Տոկոսային ծախսումներ	3	3
Պլանի մասնակիցներից մասհանումներ	1	-
Վճարված հատուցումներ	(17)	(16)
<b>Դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>49</b>	<b>44</b>

Պլանի ակտիվների շարժը հետևյալն է՝

ՀՀՄՍ  
19.120Ա(ե)

	<b>2011թ.</b>	<b>2010թ.</b>
	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար
<b>Հունվարի 1-ի դրությամբ</b>	<b>23</b>	<b>18</b>
Ակնկալվող հատույց պլանի ակտիվների գծով	9	9
Գործատուի մասհանումներ	9	11
Պլանի մասնակիցներից մասհանումներ	1	-
Վճարված հատուցումներ	(17)	(16)
Ակտուարային օգուտներ և վնասներ	1	1
<b>Դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>26</b>	<b>23</b>

Խումբն ակնկալում է մասհանել 16 մլն. ԱՄՆ դոլար սահմանված հատուցումների պլանին 2010-2011թթ-ին.:

ՀՀՄՍ  
19.120Ա(զ)

Պլանի ակտիվների բաշխումը հաշվետու ամսաթվին հետևյալն է՝

ՀՀՄՍ 19.120Ա  
(զ)

	<b>2011թ.</b>	<b>2010թ.</b>
	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար
Պետական պարտատոմսեր	1	1
Բաժնային գործիքներ	24	21
Կորպորատիվ պարտատոմսեր	1	1
<b>Ընդամենը պլանի ակտիվներ</b>	<b>26</b>	<b>23</b>

Ակնկալվող շահութաբերությունը հետևյալն է՝

ՀՀՄՍ 19.120Ա  
(զբ)

	<b>2011թ.</b>	<b>2010թ.</b>
	%	%
Պետական պարտատոմսեր	4.1	4.0
Բաժնային գործիքներ	13.2	12.2
Կորպորատիվ պարտատոմսեր	4.5	4.3
Գույք	10.2	9.5
<b>Միջին շահութաբերություն</b>	<b>8.0</b>	<b>7.5</b>

Ընդհանուր շահութաբերությունը հիմնված է յուրաքանչյուր ակտիվի կատեգորիայի շահութաբերության և ընթացիկ ակտիվների տեղաբաշխումների հիման վրա:

Ակնկալվող շահութաբերությունը որոշվում է արտաքին խորհրդատվությամբ և հաշվի են առնում նաև ապագա շահութաբերության շուկայական ներկա ակնկալիքները:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 16. Թոշակային հատուցումների գծով պարտավորություն (շարունակություն)

Ակտուարային հիմնական ենթադրությունները, որոնք օգտագործվում են թոշակային հատուցումների պարտավորությունները որոշելու համար, հետևյալն են՝

ՀՀՄՍ  
19.120Ա(ժդ)

	2011թ. %	2010թ. %
Աշխատավարձի բարձրացման գործակից	4.5	4.0
Կենսաթոշակի բարձրացման գործակից	3.0	2.8
Գնաճի ենթադրություն	2.9	2.8
Զեղչման դրույքաչափ	6.5	6.4
Պլանի ակտիվների ակնկալվող շահութաբերություն	8.0	7.5

Զեղչման դրույքաչափը այն ենթադրությունն է, որն ունի ամենամեծ ազդեցություն պարտավորության արժեքի վրա: Այդ դրույքաչափի 1% ավելացումը կբերի 1 մլն.ԱՄՆ դոլարի չափով պարտավորության արժեքի նվազեցման:

Այս սխեմաների համար օգտագործվող աշխատանքից ազատվելուց հետո մահացության բազայի աղյուսակն է PM/FA92: Աշխատանքից ազատվելուց հետո մահացության բարելավումները թույլատրելի են զեղչման դրույքաչափը 20 բազային կետով նվազեցման միջոցով, ինչը համարվում է լավագույն գնահատում: Սակայն, հետագա երկարակետության բարելավումը ենթակա է զգալի անորոշության և այս ենթադրությունը սահմանելու համար պահանջվում են դատողություններ: Պահուստի 5 բազային կետով ավելացումը մինչև զեղչման դրույքաչափի 25 բազային կետով նվազեցմամբ կավելացնի պարտավորությունները 4 մլն.ԱՄՆ դոլարով:

	2011թ. մլն. ԱՄՆ դոլար	2010թ. մլն. ԱՄՆ դոլար	2008թ. մլն. ԱՄՆ դոլար	2007թ. մլն. ԱՄՆ դոլար	2006թ. մլն. ԱՄՆ դոլար	ՀՀՄՍ 19.120Ա(ժգ)
Սահմանված հատուցումների գծով պարտավորություններ	49	44	36	40	39	
Պլանի ակտիվներ	26	23	18	20	20	
Դեֆիցիտ	(23)	(21)	(18)	(20)	(19)	
Պլանի պարտավորությունների փորձի վրա հիմնված ճշգրտումներ	-	-	-	-	-	
Պլանի ակտիվների փորձի վրա հիմնված ճշգրտումներ	1	1	1	1	1	

## 17. Պաշարներ

	2011թ. մլն. ԱՄՆ դոլար	2010թ. մլն. ԱՄՆ դոլար	ՀՀՄՍ 2.36(բ)(գ)
Սկզբնական արժեքով			
Ոսկու ձուլակտորներ	9	7	
Պղնձի խտանյութ	29	33	
Արտադրության ցիկլում գտնվող մետաղ	28	21	
Հանքաքարի պաշարներ	15	12	
Հումք և նյութեր	12	15	
<b>Ընդամենը պաշարներ</b>	<b>93</b>	<b>88</b>	

## 18. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	2011թ. մլն. ԱՄՆ դոլար	2010թ. մլն. ԱՄՆ դոլար	ՀՀՄՍ 1.78 ՖՀՄՍ 7.6
Առևտրային դեբիտորական պարտքեր	537	548	
Այլ դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	48	51	
Համատեղ ձեռնարկման դեբիտորական պարտքեր	33	-	
	<b>618</b>	<b>599</b>	

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ (շարունակություն)

## 18. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր (շարունակություն)

Դեբիտորական պարտքերը ոչ տոկոսային են և սովորաբար ունեն 30-90 օր տևողությամբ ժամկետ:

Համատեղ ձեռնարկման դեբիտորական պարտքերը Խմբի համար ներառում են 29.7 մլն.ԱՄՆ դոլար (2010թ.՝ գրոյական մնացորդ) չմարված վճարման պարտականությունների դեբիտորական պարտքեր «Կուպրում համատեղ ձեռնարկման ռեդ կուպեր գործընկեր» սահմանափակ ընկերությունից: Ժամկետանց պարտքերը չեն համարվում արժեզրկված գործընկերոջ վճարունակության հիման վրա: Կազմակերպության ղեկավարությունը ներկա պահին զբաղվում է այս գումարի գանձման ուղղությամբ:

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վաճառքի գծով դեբիտորական պարտքերը 6.2 մլն.ԱՄՆ դոլար անվանական արժեքով (2010թ.՝ 6.1 մլն.ԱՄՆ դոլար) արժեզրկվել են և պահուստավորվել: Դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստի շարժը հետևյալն է՝

	2011թ. մլն. ԱՄՆ դոլար	2010թ. մլն. ԱՄՆ դոլար	\$ՀՄՄ 7.16
<b>Հունվարի 1-ի դրությամբ</b>	<b>6</b>	<b>5</b>	
Տարվա ընթացքում հաշվեզրկված	6	4	
Դուրս գրված գումարներ	(3)	(1)	
Չօգտագործված գումարների հակադարձում	(3)	(2)	
<b>Դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>6</b>	<b>6</b>	

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ժամկետանց, սակայն չարժեզրկված առևտրային դեբիտորական պարտքերի վերլուծությունն ունի հետևյալ տեսքը՝

	Ո՛չ ժամկետանց, ո՛չ արժեզրկված		Ժամկետանց, սակայն չարժեզրկված				
	Ընդամենը	արժեզրկված	30 օրից պակաս	30–ից 60 օր	60–ից 90 օր	90–ից 120 օր	120 օրից ավել
	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար
<b>2011թ.</b>	537	236	188	70	27	11	5
<b>2010թ.</b>	548	368	113	42	16	6	3

Առևտրային կամ այլ դեբիտորական պարտքի հատուցելիությունը որոշելիս, Խումբը կատարում է ռիսկերի վերլուծություն դեբիտորական պարտքի ժամկետի, տիպի և գործընկերոջ վճարունակության վերաբերյալ:

## 19. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	2011թ. մլն. ԱՄՆ դոլար	2010թ. մլն. ԱՄՆ դոլար
Դրամական միջոցներ բանկերում և դրամարկղում	76	111
Կարճաժամկետ ավանդներ	382	378
	<b>458</b>	<b>489</b>

Բանկում կանխիկ միջոցները դրված են լողացող տոկոսադրույքով, որը հիմնված է բանկի ավանդների օրական դրույքի վրա: Կարճաժամկետ ավանդները ներդրվում են տարբեր ժամկետներով սկսած մեկ օրից մինչև երեք ամիս՝ կախված Խմբի անհապաղ դրամական պահանջներից և վաստակում են տոկոսներ համապատասխան կարճաժամկետ ավանդի տոկոսադրույքով: Դրամական միջոցների և կարճաժամկետ ավանդների իրական արժեքը կազմում է 508 մլն.ԱՄՆ դոլար (2010թ.՝ 539 մլն.ԱՄՆ դոլար):

\$ՀՄՄ 7.34(ա)

\$ՀՄՄ 7.25

Խումբը իր կանխիկ մնացորդը ներդնում է որպես ավանդ միայն խոշոր, բարձր որակի վարկանիշ ունեցող բանկերում:



# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 19. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (շարունակություն)

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվության համար դրամական միջոցները և դրանց համարժեքները ղեկտեմբերի 31-ի դրությամբ կազմված են՝ ՀՀՄՍ 7.45

	<b>2011թ.</b>	<b>2010թ.</b>
	<b>մլն. ԱՄՆ</b>	<b>մլն. ԱՄՆ</b>
	<b>դոլար</b>	<b>դոլար</b>
Դրամական միջոցներ բանկերում և դրամարկղում	76	111
Կարճաժամկետ ավանդներ	382	378
	<b>458</b>	<b>489</b>
Բանկային օվերդրաֆտներ (Ծան. 21)	(8)	(51)
	<b>450</b>	<b>438</b>

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ խումբը ուներ 10.5 մլն.ԱՄՆ դոլարի չափով (2010թ.՝ 10.5 մլն.ԱՄՆ դոլար) չօգտագործված վարկային գիծ, որի բոլոր պայմանները բավարարված էին: ՀՀՄՍ 7.50

Խումբն ունի 50 մլն ԱՄՆ դոլարի սառեցված դրամական միջոցներ տեղական բանկերում որպես 2009թ. Պետական կանոնակարգի փոփոխության արդյունք, որը պահանջում է հանքի գործարկման ավարտին շրջական միջավայրի պահպանության համար ստեղծել պարտադիր դրամական պահուստ: Պահուստը նախատեսված չէ Խմբի ամենօրյա գործարքների ֆինանսավորման համար և, հետևաբար, չի ներառվել դրամական միջոցների և դրանց համարժեքների մեջ դրամական հոսքերի մասին հաշվետվության նկատառումներով: Այն բացահայտվել է որպես ոչ ընթացիկ ակտիվ:

### Մեկնաբանություն

Դրամական միջոցների և դրանց համարժեքների նշանակալի գումարների մնացորդները, որոնք մատչելի չեն Խմբի օգտագործման համար, պետք է բացահայտվեն կազմակերպության ղեկավարության մեկնաբանությունների հետ մեկտեղ նման սահմանափակման պատճառները բացատրելու համար [ՀՀՄՍ 7.48]: Օրինակ՝ այն դուստր կազմակերպության դրամական միջոցների կամ դրանց համարժեքների մնացորդները, որը գործում է մի երկրում, որտեղ արժույթային հսկողությունը կամ այլ օրենսդրական սահմանափակումներն անմատչելի են դարձնում մայր կազմակերպության կամ այլ դուստր կազմակերպությունների կողմից դրամական միջոցների ընդհանուր օգտագործումը [ՀՀՄՍ 7.49]:

Սահմանափակման էության գնահատումը անհրաժեշտ է՝ մնացորդի որպես դրամական միջոցների համարժեք համարվելու համար, քանի որ սահմանափակման արդյունքում ներդրումը դադարում է բարձր իրացվելի կամ ազատ փոխարկելի լինել: Օրինակ՝ երբ կազմակերպությունն իր վրա է վերցնում որոշակի կարճաժամկետ պարտավորությունների կատարման համար որպես ապահովություն դրամական միջոցների կամ ավանդների նվազագույն մակարդակի պահպանում՝ պայմանով, որ հատուկ տվյալ նպատակի համար ոչ մի գումարի նախատեսում պարտադրված չէ, նման մնացորդները կարող են դեռ դիտարկվել որպես դրամական միջոցների համարժեքներ՝ հանդիսանալով սահմանափակումների առարկա որպես կարճաժամկետ պարտավորվածությունների կատարման համար միջոցների կառավարման քաղաքականության բաղկացուցիչ մաս:

Այնուամենայնիվ, կարող է պահանջվել, որպեսզի կազմակերպությունը ֆորմալ կերպով դրամական միջոցներ մի կողմ դնի, օրինակ՝ կատարի ներդրում դեպոզիտային հաշվին, որպես յուրահատուկ ծրագրի կամ գործարքի մաս, ինչպիսին է գույքի ձեռքբերումը կամ կառուցումը: Նման դեպքերում, անհրաժեշտ է հաշվի առնել հաշվին վերաբերող հատուկ պայմանները և կազմակերպության ու գործընկերոջ նման հաշվին մուտքը՝ որոշելու համար թե արդյո՞ք ճիշտ է դասակարգել այս ավանդը որպես դրամական միջոցների համարժեք:

## 20. Թողարկված կապիտալ

### Կանոնադրական կապիտալ

	<b>2011թ.</b>	<b>2010թ.</b>
	<b>մլն. ԱՄՆ</b>	<b>մլն. ԱՄՆ</b>
	<b>դոլար</b>	<b>դոլար</b>
<b>Բաժնետիրական կապիտալ սովորական բաժնետոմսերի տեսքով</b>	1,564	1,564
<b>Թողարկված և ամբողջությամբ վճարված սովորական բաժնետոմսեր</b>	<b>Հազար</b>	<b>մլն. ԱՄՆ</b>
2010թ. հունվարի 1-ի դրությամբ	836,458	836
2010թ. նոյեմբերի 1-ին թողարկված և դրամական միջոցներով վճարված	727,975	728
2011թ. հունվարի 1-ի դրությամբ	1,564,433	1,564
<b>2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>1,564,433</b>	<b>1,564</b>

Ամբողջությամբ վճարված սովորական բաժնետոմսը տալիս է մեկ ձայնի իրավունք, ինչպես նաև շահաբաժնի ՀՀՄՍ 1.79(v)  
ստացման իրավունք:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ (շարունակություն)

## 21. Տոկոսային վարկեր և փոխառություններ

	Արդյունավետ տոկոսադրույք	Մարման ժամկետը	2011թ. մլն. ԱՄՆ դոլար	2010թ. մլն. ԱՄՆ դոլար	\$ՀՄՄ 7.6 \$ՀՄՄ 7.8(գ)
	%				
<b>Ընթացիկ</b>					
Բանկային օվերդրաֆտ	EURIBOR +1.0	Ցպահանջ	8	51	
Այլ վարկեր՝ 75 մլն. ԱՄՆ դոլար բանկային վարկի գիծ (2010թ.՝ 75 մլն. ԱՄՆ դոլար)	EURIBOR +0.5	2012թ. նոյեմբերի 1	74	–	
			<b>82</b>	<b>51</b>	
<b>Ոչ ընթացիկ</b>					
Պարտատոմսեր 10% դրույքաչափով 75 մլն ԱՄՆ դոլար բանկային վարկի գիծ (2010թ.՝ 75 մլն. ԱՄՆ դոլար)	10.2	2013-2020թթ.	108	77	
450 մլն ԱՄՆ դոլար բանկային վարկի գիծ (2010թ.՝ 450 մլն. ԱՄՆ դոլար)	EURIBOR +0.5	2012թ. նոյեմբերի 1	–	71	
	EURIBOR +1.0	2013թ. մարտի 31	424	167	
			<b>532</b>	<b>315</b>	

### Բանկային օվերդրաֆտ

Բանկային օվերդրաֆտները ապահովված են Խմբի բոլոր ակտիվներով:

\$ՀՄՄ 7.7

### 75 մլն. ԱՄՆ դոլար բանկային վարկ

Այս վարկը ամբողջովին ենթակա է մարման 2012թ. նոյեմբերի 1-ին:

### 10% պարտատոմսեր

10% պարտատոմսերը ենթակա են մարման հավասար տարեկան վճարումներով 35 մլն. ԱՄՆ դոլարի չափով սկսած 2013թ. հունվարի 1-ից:

### 450 մլն. ԱՄՆ դոլար բանկային վարկ

Այս վարկը ամբողջովին ենթակա է մարման 2013թ. մարտի 31-ին:

Ընդամենը տարեկան տոկոսային ծախսերը վարկերի, փոխառությունների և այլ պարտավորությունների նկատմամբ կազմել են 67 մլն. ԱՄՆ դոլար (2010թ.՝ 20 մլն. ԱՄՆ դոլար):

## 22. Պահուստներ

	Շրջակա միջավայրի վերականգնման պահուստ	Այլ	Ընդամենը	
	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	
<b>2011թ. հունվարի 1-ի դրությամբ</b>	<b>388</b>	<b>1</b>	<b>389</b>	\$ՀՄՄ 37.84(ա)
Դուստր կազմակերպության ձեռքբերում	8	20	28	
Տարվա ընթացքում առաջացած	230	–	230	\$ՀՄՄ 37.84(բ)
Չօգտագործված պահուստների հակադարձում	(1)	–	(1)	\$ՀՄՄ 37.84(դ)
Դուրսգրումներ	(32)	–	(32)	\$ՀՄՄ 37.84(զ)
Ջեղչի հետադարձում	27	–	27	\$ՀՄՄ 37.84(ե)
Օգտագործված	(2)	–	(2)	
<b>2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>618</b>	<b>21</b>	<b>639</b>	
Որոնցից՝				
Ընթացիկ 2011թ.	17	12	29	
Ոչ ընթացիկ 2011թ.	601	9	610	
	<b>618</b>	<b>21</b>	<b>639</b>	
Ընթացիկ 2010 թ.	15	1	16	
Ոչ ընթացիկ 2010 թ.	373	–	373	
	<b>388</b>	<b>1</b>	<b>389</b>	

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 22. Պահուստներ (շարունակություն)

ՀՀՄՍ 37.85

### Շրջակա միջավայրի վերականգնման պահուստ

Խումբը ստեղծում է հանքերի տարածքների և հարակից արտադրական շինությունների ապագա վերականգնման արժեքի լրիվ պահուստ գեղջման մեթոդով՝ հանքերի մշակման և արտադրական շինությունները տեղադրման և օգտագործման ժամանակաշրջաններում:

Վերականգնման պահուստը իրենից ներկայացնում է հանքերի տարածքների վերականգնման ծախսումների ներկա արժեքը, որոնք ակնկալվում է, որ տեղի կունենան մինչև 2026թ.: Այս պահուստները ստեղծվել են հիմնվելով Խմբի ներքին գնահատումների վրա: Ղեկավարությունը հիմնվելով ընթացիկ տնտեսական միջավայրի վրա կատարել է ենթադրություններ, որոնք ղեկավարության հավաստմամբ հանդիսանում են ողջամիտ ապագա պարտավորությունների գնահատման համար: Այս ենթադրությունները պարբերաբար վերանայվում են և ցանկացած զգալի փոփոխությունները հաշվի են առնվում:

Սակայն իրական վերականգնման ծախսումները վերջնականորեն կախված են լինելու ապագործարկման անհրաժեշտ աշխատանքների կատարման պահին շուկայական գներից: Ավելին, վերականգնման ժամկետները ամենայն հավանականությամբ կախված են այն բանից, թե երբ հանքավայրերը կդադարեն արտադրել տնտեսապես կենսունակ դրույքաչափերով: Սա իր հերթին կախված կլինի ապագա ոսկու և պղնձի գներից, որոնք բնույթով անորոշ են:

### Այլ պահուստներ

Այլ պահուստները հիմնականում բաղկացած են դատական ակտերի գծով, աշխատակիցներին հատուցումների և անբարենպաստ գործառնական վարձակալության պայմանագրի գծով պահուստներից: Այս պահուստները ներառում են գործունեության ընթացքում առաջ եկած պատահարի հետ կապված դատական պահանջների գնահատված ծախսումների համար պահուստ (հայցի ընդհանուր գումարը կազմում է 10 մլն ԱՄՆ դոլար):

ՀՀՄՍ 3.Բ28-29

Բացի այդ, գոյություն ունի անբարենպաստ գործառնական վարձակալության պայմանագրի գծով պահուստ: «Օազիս»-ի ձեռք բերումից (Ծան. 3) ստեղծվել է պահուստ, քանի որ «Օազիս»-ի գործառնական վարձակալության վարձակալական վճարները ձեռքբերման ժամանակ շատ ավելի բարձր էին, քան վարձակալության շուկայական գները: Պահուստը հաշվարկվել է շուկայական գնի և վճարված գումարի տարբերության հիման վրա:

### Մեկնաբանություն

ՀՀՄՍ 3-ը պահանջում է, որպեսզի ձեռք բերողը ճանաչի գործառնական վարձակալությունը, որտեղ ձեռք բերողը վարձակալն է, կամ որպես ոչ նյութական ակտիվներ կամ պարտավորություններ, եթե վարձակալության պայմանները բարենպաստ են (ակտիվ) կամ անբարենպաստ (պարտավորություն)՝ կախված շուկայական գներից և պայմաններից:

## 23. Կրեդիտորական պարտքեր և հաշվեգրված պարտավորություններ

	2011թ. մլն. ԱՄՆ դոլար	2010թ. մլն. ԱՄՆ դոլար	
Առևտրային կրեդիտորական պարտքեր	509	442	ՀՀՄՍ 1.69, ՀՀՄՍ 1.77
Այլ կրեդիտորական պարտքեր	26	20	
Կրեդիտորական պարտքեր և հաշվեգրված պարտավորություններ համատեղ ձեռնարկման գործընկերոջը	32	54	
	<b>567</b>	<b>516</b>	

Վերը նշված ֆինանսական պարտավորությունների պայմանները՝

ՀՀՄՍ 7.39

- ▶ Վաճառքի գծով կրեդիտորական պարտքերը տոկոս չեն կրում և սովորաբար մարվում են 60-օրյա ժամկետում
- ▶ Այլ կրեդիտորական պարտքերը տոկոս չեն կրում և ունեն վեց ամիս միջին ժամկետ

Համատեղ ձեռնարկման գործընկերոջ կրեդիտորական պարտքերը և հաշվեգրված պարտավորությունները հիմնականում կազմում են համատեղ ծախսումներ, որոնք վճարվել են համատեղ ձեռնարկման գործընկերոջ կողմից:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 24. Կապիտալ ներդրումների գծով պարտավորվածություններ և այլ պայմանական պարտավորություններ

### Գործառնական վարձակալության պարտավորվածություններ – Խումբը որպես վարձակալ

ՀՀՄՍ  
17.35(դ)(i)  
ՀՀՄՍ 17.35(դ)  
(ii)

Խումբը կնքել է շենքերի, փոխադրամիջոցների, տարբեր գործիքների և մեքենաների վարձակալության պայմանագրեր: Այս վարձակալությունների միջին ժամկետները հինգ տարի է (2010թ.՝ վեց տարի) երկարաձգելու պայմաններով վարձակալի ընտրությամբ, ինչի արդյունքում հնարավոր կլինի երկարացնել վարձակալության պայմանները՝ հիմք ընդունելով պայմանների նորացման ժամանակ շուկայում գործող գները:

Վարձակալությամբ վարձակալի համար չեն նախատեսվում առանձնահատուկ սահմանափակումներ: Ապագա նվազագույն վարձակալական վճարները չեղյալ չհամարվող գործառնական վարձակալությունների գծով դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են՝

	2011թ. մլն. ԱՄՆ դոլար	2010թ. մլն. ԱՄՆ դոլար	
Մեկ տարվա ընթացքում	50	17	ՀՀՄՍ 17.35(ա)(i)
Մեկ տարի հետո, բայց ոչ ավել, քան հինգ տարի	101	23	ՀՀՄՍ 17.35(ա)(ii)
Հինգ տարուց ավել	20	11	ՀՀՄՍ 17.35(ա)(iii)
	<b>171</b>	<b>51</b>	

### Կապիտալ ներդրումների գծով պարտավորվածություններ

Կապիտալ ներդրումների գծով պարտավորվածություններ (բացառությամբ՝ համատեղ ձեռնարկումներին վերաբերող)։

ՀՀՄՍ 16.74(գ)

	2011թ. մլն. ԱՄՆ դոլար	2010թ. մլն. ԱՄՆ դոլար
Պայմանագրային կապիտալ ծախսումներ՝ օգտակար հանածոների հետախուզում	248	169
Այլ պարտավորվածություններ	75	62

Համատեղ ձեռնարկումներին վերաբերող կապիտալ ներդրումների գծով պարտավորվածություններ.

	2011թ. մլն. ԱՄՆ դոլար	2010թ. մլն. ԱՄՆ դոլար	ՀՀՄՍ 31.55
Խմբի ստանձնած կապիտալ ներդրումների գծով պարտավորվածություններ	20	30	
Այլ ձեռնարկողների հետ միասին ստանձնած կապիտալ ներդրումների գծով պարտավորվածություններ («Գուդ մայնինգի» բաժինը)	39	16	

### Այլ պայմանագրային պարտականություններ

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կիրառելի գների վրա հիմնված Խումբն ունի 50 մլն. ԱՄՆ դոլարի առանց պայմանականության գնման պարտականություններ, որոնք հիմնականում ներառում են պղնձի խտանյութի ձեռք բերում (35 մլն. ԱՄՆ դոլար) և տեղափոխում (15 մլն. ԱՄՆ դոլար), որոնք էական են Խմբի բոլոր տարածաշրջաններում գործառնականությունների համար: Խմբի առանց պայմանականության գնման պարտականությունների որոշ մասը մարվել են գնված ապրանքի կամ ծառայության շուկայում գերակշռող գներով: Որոշ դեպքերում, փաստացի պարտականության չափը կարող է փոխվել՝ կախված ժամանակի ընթացքում շուկայի պայմաններից: Պղնձի խտանյութի գծով պարտականությունները նախատեսում են երրորդ անձանց պղնձի հանքեր շուկայական գներով նշված ծավալներով առաքումը: Տեղափոխման պարտականությունները միջօվկիանոսային ֆրախտի պայմանագրային գներն են: Խմբի առանց պայմանականության գնման պարտականությունների հետ կապված պարտավորվածությունները կազմում են 12 մլն. ԱՄՆ դոլար 2012թ. համար, 2013թ.՝ 8 մլն. ԱՄՆ դոլար, 2014թ.՝ 8 մլն. ԱՄՆ դոլար, 2015թ.՝ 5 մլն. ԱՄՆ դոլար և 2016թ.՝ 9 մլն. ԱՄՆ դոլար: 2010, 2009 և 2008թթ. ընթացքում Խումբն առանց պայմանականության կատարել է իր գնման նվազագույն պարտականությունները կամ բանակցել է այն դեպքերի համար, երբ դադարեցրել է առանց պայմանականության պարտականությունների համաձայնագրերը:

ՀՀՄՍ 37.86

### Պայմանական պարտավորություններ

2011թ. դեկտեմբերի 31-ին պայմանական պարտավորություններ գոյություն ունեին հետախուզական ծրագրերի կատարման երաշխիքների նկատմամբ, որոնք կազմում էին 79 մլն. ԱՄՆ դոլար (2010թ.՝ 85 մլն. ԱՄՆ դոլար): Պարտավորության գումարը անորոշ է՝ կապված Խմբի կատարման երաշխիքները կատարելու կարողության հետ և ծրագրի երկարաժամկետ բնույթի հետևանքով:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 25. Կապակցված կողմերի բացահայտումներ

ՀՀՄՍ 24.12

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են «Գուդ մայնինգ» և ստորև թվարկված իր դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները՝

	Հիմնադրման պետություն	% մասնակցություն կապիտալում		ՀՀՄՍ 24.14
		2011թ.	2010թ.	
«Օազիս» հանքային ռեսուրսներ սահմանափակ ընկերություն	Մետալվիլ	100	—	
«Գուդ մայնինգ» ընկերությունը Մետալվիլում վերջնական մայր վերահսկող կազմակերպությունն է, իսկ իմբի վերջնական մայր կազմակերպությունն է «ԷՄ ՍԻ» սահմանափակ ընկերությունը:				ՀՀՄՍ 1.138(գ) ՀՀՄՍ 24.12

### Մեկնաբանություն

ՀՀՄՍ 24-ը չի պահանջում դուստր կազմակերպությունների, համատեղ վերահսկվող կամ ասոցիացված կազմակերպությունների առանձին ցուցակի ներկայացում: ՀՀՄՍ 27.42(բ) կետը, այնուամենայնիվ, պահանջում է նշված տեղեկատվությունը կազմակերպության առանձին ֆինանսական հաշվետվությունների համար: Շատ դեպքերում, մայր կազմակերպության առանձին ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են որպես համախմբված ֆինանսական հաշվետվությունների մաս: Խումբը եզրակացրել է, որ այդ կազմակերպությունների ներկայացումը օգտակար կլինի համախմբված ֆինանսական հաշվետվություններ օգտագործողների համար:

**Համատեղ վերահսկվող կազմակերպություններ, որոնցում մայր կազմակերպությունը հանդիսանում է ձեռնարկող**

ՀՀՄՍ 24.18

### «Գոլդոնոբ Լիմիթեդ»

ՀՀՄՍ 24.14

Խումբն ունի 50% մասնակցություն «Գոլդոնոբ Լիմիթեդ»-ում (2010թ.՝ 50%)։ Տարվա ընթացքում Խումբը իրականացրել է կապակցված կողմերի հետ իր սովորական գործունեության հետ կապված հետևյալ գործարքները՝

մլն. ԱՄՆ դոլար	Վաճառք	Գնումներ	Այլ եկամուտ	Կրեդիտորական պարտքեր	Դեբիտորական պարտքեր	ՀՀՄՍ 24.18
<b>«Գոլդոնոբ Լիմիթեդ»</b>						
2011թ.	2	34	1	—	—	
2010թ.	—	57	—	—	—	

### Խմբի առանցքային կառավարչական անձնակազմի հատուցումներ

	2011թ. մլն. ԱՄՆ դոլար	2010թ. մլն. ԱՄՆ դոլար	ՀՀՄՍ 24.17(ա)
Կարճաժամկետ նպաստներ աշխատակիցներին	25	26	
Հետաշխատանքային և բժշկական հատուցումներ	6	6	ՀՀՄՍ 24.17(բ)
<b>Ընդամենը առանցքային կառավարչական անձնակազմին վճարված հատուցումներ</b>	<b>31</b>	<b>32</b>	

Այլ գործարքներ կապակցված կողմերի հետ տեղի չեն ունեցել

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություններ (շարունակություն)

## 26. Ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակները և քաղաքականությունները

Խմբի հիմնական ֆինանսական գործիքները կազմված են ֆինանսական պարտավորություններից և ֆինանսական ակտիվներից: Խմբի հիմնական ֆինանսական պարտավորությունները, բացառությամբ ածանցյալ պարտավորությունների, ներառում են կրեդիտորական պարտքերը, բանկային վարկերը, օվերդրաֆտները և պարտատոմսերը: Սույն ֆինանսական գործիքների հիմնական նպատակն է հանդիսանում կառավարել կարճաժամկետ դրամական միջոցների հոսքերը և ներգրավել ֆինանսական միջոցներ Խմբի կապիտալ ծախսումների ծրագրերի համար: Խումբն ունի տարբեր ֆինանսական ակտիվներ, ինչպիսիք են դեբիտորական պարտքերը, դրամական միջոցները և կարճաժամկետ ավանդները, որոնք առաջանում են ուղղակիորեն իր գործունեություններից:

ՖՀՄՄ 7.33

ՖՀՄՄ 7.33(ա),(բ)

### Ռիսկերին ենթարկվածությունը և հակադարձ գործառնությունները

Խումբը կառավարում է հիմնական ֆինանսական ռիսկերին իր ենթարկվածությունը Խմբի ֆինանսական ռիսկերի կառավարման քաղաքականության համապատասխան: Քաղաքականության նպատակն է Խմբի ապագա ֆինանսական ապահովությունը պահպանելով՝ նպաստել ֆինանսական նպատակակետային ցուցանիշների ապահովմանը:

Հիմնական ռիսկերը, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ Խմբի ֆինանսական ակտիվների, պարտավորությունների կամ ապագա դրամական միջոցների հոսքերի վրա, շուկայական ռիսկերն են, որոնք ներառում են ապրանքների գնային ռիսկը, դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքի ռիսկը, արտարժույթի ռիսկը, իրացվելիության ռիսկը և պարտքային ռիսկը:

Խմբի կառավարչական անձնակազմը վերահսկում է այդ ռիսկերի կառավարման գործընթացը: Ֆինանսական ռիսկերի կոմիտեն Խմբի կառավարչական անձնակազմին տրամադրում է խորհրդատվություն Խմբի ֆինանսական ռիսկերի և ֆինանսական ռիսկերի կարգավորման դրույթների վերաբերյալ: Ֆինանսական ռիսկերի կոմիտեն տրամադրում է Խմբի ղեկավարությանը հավաստիացում առ այն, որ Խմբի ֆինանսական ռիսկերի հետ կապված գործունեությունն իրականացվում է համապատասխան քաղաքականության և ընթացակարգերի համաձայն, իսկ ֆինանսական ռիսկերի որոշակիացումը, գնահատումը և կառավարումն իրականացվում է Խմբի քաղաքականության և իր վրա ռիսկ ընդունելու պատրաստակամության համաձայն: Ռիսկերի կառավարման նպատակով ածանցյալ գործիքների հետ բոլոր գործառնություններն իրականացվում են համապատասխան որակավորում և աշխատանքային փորձ ունեցող մասնագետների խմբի կողմից: Քաղաքականության համաձայն Խումբն ածանցյալ գործիքներով սպեկուլյատիվ նպատակներով գործարքներ չի իրականացնում:

Այս փուլում Խումբը դեռևս չի կիրառում հեջավորման որևէ մեթոդ:

Տնօրենների խորհուրդը վերլուծում և հաստատում է վերոնշյալ ռիսկերի կառավարման քաղաքականությունը, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև:

### Շուկայական ռիսկ

ՖՀՄՄ 7 App A

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի իրական արժեքների տատանումների ռիսկն է շուկայական գների փոփոխության հետևանքով: Շուկայական գինը ներառում է ռիսկի 3 տեսակ՝ ապրանքների գների փոփոխության ռիսկ, տոկոսադրույքի ռիսկ, արժույթային ռիսկ: Շուկայական ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքները ներառում են վարկերը և փոխառությունները, ավանդները, դեբիտորական պարտքերը, կրեդիտորական պարտքերը, հաշվեգրված պարտավորությունները և ածանցյալ ֆինանսական գործիքները:

Զգայունության վերլուծությունը պատրաստվել է այն ենթադրության հիման վրա, որ զուտ փոխառության գումարը, փոխառության և ածանցյալ գործիքների հաստատուն տոկոսադրույքների հարաբերությունը լողացող տոկոսադրույքներին, արտարժույթով արտահայտված ֆինանսական գործիքների մասնաբաժինը հանդիսանում են հաստատուն մեծություններ:

Վերլուծությունը չի ներառում շուկայում փոփոխական մեծությունների փոփոխության ազդեցությունը թոշակների և հետաշխատանքային հատուցումների գծով այլ պարտավորությունների և պահուստների հաշվեկշռային արժեքների վրա:

ՖՀՄՄ 7.40(բ)

Զգայունության վերլուծությունն իրականացնելիս կիրառվել են հետևյալ ենթադրությունները՝

- ▶ Ֆինանսական վիճակի մասին հաշվետվության զգայունությունը վերաբերում է ածանցյալ գործիքներին և եվրոյով արտահայտված դեբիտորական պարտքերին,
- ▶ Նախքան հարկումը շահույթի համապատասխան հոգվածի զգայունությունը համապատասխան շուկայական ռիսկերի ենթադրվող փոփոխությունների ազդեցությունն է: Վերլուծությունն իրականացվել է 2011 և 2010թթ. դրությամբ առկա ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հիման վրա,
- ▶ Սեփական կապիտալի վրա ազդեցությունը նույնն է, ինչ նախքան հարկումը շահույթի վրա ազդեցությունը:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 26. Ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակները և քաղաքականությունները (շարունակություն)

### Ապրանքների գների փոփոխության ռիսկ

ՖՀՄՄ 7.33

Խումբը ենթարկվում է իր կողմից արտադրվող օգտակար հանածոների ապրանքների գործող շուկայական գների փոփոխականության ռիսկին: Խմբի քաղաքականությունն է կառավարել տվյալ ռիսկերը հաճախորդների հետ պայմանագրի վրա հիմնված գների և ապրանքային ածանցյալ պայմանագրերի օգտագործման միջոցով, ինչպես նաև արտադրանքի 20%-ից մինչև 40%-ը պահել հաստատուն գներով:

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ապրանքների գների փոփոխությամբ պայմանավորված ածանցյալ ֆինանսական գործիքների իրական արժեքների տատանումների ազդեցությունը նախքան հարկումը շահույթի վրա: Սեփական կապիտալի վրա ազդեցությունը նույնն է՝ ինչ նախքան հարկումը շահույթի վրա ազդեցությունը, քանի որ տվյալ ածանցյալ ֆինանսական գործիքները չեն նախատեսվել որպես հեջավորման միջոցներ և դասակարգվել են որպես առևտրական նպատակներով պահվող:

Վերլուծությունը հիմնված է այն ենթադրության վրա, որ ոսկու և պղնձի գները փոխվել են 10%-ով՝ բոլոր այլ փոփոխականների հաստատուն լինելու պայմաններում: Ապրանքների գների ողջամտորեն հնարավոր փոփոխությունները որոշվել են վերջին երկու տարվա պատմական արժեքների վերանայմամբ և տնտեսական վերլուծաբանների կանխատեսումների հիման վրա:

	2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա նախքան հարկումը շահույթի վրա ազդեցություն ավելացում/ (նվազում)	2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա նախքան հարկումը շահույթի վրա ազդեցություն ավելացում/ (նվազում)	
	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	ՖՀՄՄ 7.40(ա)
<b>Ոսկու գների աճ/նվազում</b>			
70 ԱՄՆ դոլար/ունց. աճ (2010թ.՝ 60 ԱՄՆ դոլար/ունց.)	(2)	(1)	
70 ԱՄՆ դոլար/ունց. նվազում (2010թ.՝ 60 ԱՄՆ դոլար/ունց.)	2	1	
<b>Պղնձի/հանքաքարի գների աճ/նվազում</b>			
0.30 ԱՄՆ դոլար/ֆունտ աճ (2010թ.՝ 0.30 ԱՄՆ դոլար/ֆունտ)	(3)	(2)	
0.30 ԱՄՆ դոլար /ֆունտ նվազում(2010թ.՝ 0.30 ԱՄՆ դոլար/ֆունտ)	3	2	

### Ապրանքների փաստացի առաքման պայմանագրեր

Խումբն իր սովորական գործունեության ընթացքում կնքում է նաև ապրանքների փաստացի առաքման պայմանագրեր: Այս պայմանագրերը ածանցյալ պայմանագրեր չեն և չափվում են սկզբնական արժեքով (բացառությամբ՝ գնանշվող ժամանակահատվածի դրույթներով պայմանագրերի, որոնք հանգեցնում են պարունակվող ածանցյալ գործիքի ճանաչմանը (մանրամասն տեղեկատվության համար տե՛ս Ծան. 2.4(Ժգ)(ii)-ը):

### Տոկոսադրույքի ռիսկ

ՖՀՄՄ 7.33

Շուկայական տոկոսադրույքների փոփոխության ռիսկին հիմնականում ենթարկվում են Խմբի լրղացող տոկոսադրույքով երկարաժամկետ պարտավորությունները:

Խմբի քաղաքականությունն է կառավարել տոկոսային ծախսումները՝ հաստատուն և փոփոխական տոկոսադրույքներով պարտավորություններ օգտագործելով: Խմբի քաղաքականությունն է պահել իր փոխառությունների 10%-ից մինչև 45%-ը հաստատուն տոկոսադրույքով:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Խմբի լրղացող դրույքով փոխառությունների, դրամական միջոցների և դրանց համարժեքների միջոցով նախքան հարկումը շահույթի զգայունությունը՝ տոկոսադրույքի խելամտորեն հնարավոր փոփոխության նկատմամբ՝ հիմնված վերջին երկու տարվա պատմական դրույքների և տնտեսական վերլուծաբանների կանխատեսումների վրա, բոլոր այլ փոփոխականների հաստատուն լինելու պայմանի դեպքում: Ազդեցությունը սեփական կապիտալի վրա նույնն է, ինչ ազդեցությունը նախքան շահութահարկը շահույթի վրա:

	2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա նախքան հարկումը շահույթի վրա ազդեցություն ավելացում / (նվազում)	2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա նախքան հարկումը շահույթի վրա ազդեցություն ավելացում/ (նվազում)	
	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	ՖՀՄՄ 7.40(ա)
<b>Տոկոսադրույքի աճ / (նվազում)</b>			
+1.5%	-	(3)	
-1.0%	1	4	



# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 26. Ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակները և քաղաքականությունները (շարունակություն)

### Արտարժույթային ռիսկ

Խումբը ենթարկվում է գործարքային արժույթների ազդեցությանը: Այսպիսի ենթարկվածությունն առաջանում է ֆունկցիոնալ արժույթից տարբերվող արժույթներով կատարված գնումների և վաճառքների արդյունքում: Խումբը կառավարում է այս ռիսկը միևնույն արժույթով մուտքերն ու վճարումները համապատասխանեցնելով և վերահսկելով: Խմբի վաճառքների մոտավորապես 8%-ը գնանշված են ֆունկցիոնալ արժույթից տարբերվող արժույթով, մինչդեռ Խմբի անդամների ծախսումների 5%-ն է գնանշված ֆունկցիոնալ արժույթից տարբերվող արժույթներով:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Խմբի դրամային ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների փոփոխությամբ նախքան հարկումը շահույթի զգայունությունը եվրոյի փոխարժեքի խելամտորեն հնարավոր փոփոխության նկատմամբ, բոլոր այլ փոփոխականների հաստատուն լինելու պայմանի դեպքում: Սեփական կապիտալի վրա ազդեցությունը նույնն է, ինչ նախքան հարկումը շահույթի վրա ազդեցությունը:

Արտարժույթի փոխարժեքի աճ / (նվազում)	2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա նախքան հարկումը շահույթի վրա ազդեցություն ավելացում / (նվազում)	2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա նախքան հարկումը շահույթի վրա ազդեցություն ավելացում / (նվազում)	\$ՀՄՄ 7.40(ա)
	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	
+5%	2	1	
- 5%	(2)	(1)	

### Իրացվելիության ռիսկ

Խումբն իրականացնում է դրամական միջոցների դեֆիցիտի ռիսկի նկատմամբ վերահսկողություն՝ իր պարտքային վարկանիշի և առկա պարտավորությունների և այլ կրեդիտորական պարտքերի մարման ժամկետների նկատմամբ վերահսկողություն իրականացնելով:

Խմբի նպատակն է՝ պահպանել ֆինանսավորման շարունակականության և ճկունության միջև հավասարակշռություն՝ բանկային օվերդրաֆտների և բանկային վարկերի օգտագործման միջոցով: 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ 10.5 մլն. ԱՄՆ դոլար (2010թ.՝ 10.5 մլն. ԱՄՆ դոլար) չօգտագործված վարկային գծեր: Խմբի քաղաքականության համաձայն՝ 12 ամսվա ընթացքում մարվող փոխառու միջոցները պետք է կազմեն ոչ ավելի, քան ընդհանուր փոխառությունների 35%-ը: 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվություններում ներառված փոխառությունների հաշվեկշռային արժեքների հիման վրա հաշվարկված Խմբի փոխառությունների 13%-ը (2010թ.՝ 14%) պետք է մարվի մեկ տարվա ընթացքում:

Մետավիլ ներդրումային ծառայությունը փոփոխության չի ենթարկել Խմբի երկարաժամկետ B+ պարտքային վարկանիշը:

Ստորև ներկայացված աղյուսակում արտացոլված է Խմբի ֆինանսական պարտավորությունների մարման վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն՝ հիմնված չզեղված պայմանագրային վճարումների վրա:

2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարի	Ցպահանջ	1 տարուց պակաս	1-ից 2 տարի	2-ից 5 տարի	5 տարուց ավել	Ընդամենը	\$ՀՄՄ 7.39(ա) \$ՀՄՄ 7.Բ14
	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	
Տոկոսային վարկեր և փոխառություններ	8	76	459	73	96	712	
Կրեդիտորական պարտքեր և հաշվեգրված պարտավորություններ	26	541	-	-	-	567	
	<b>34</b>	<b>617</b>	<b>459</b>	<b>73</b>	<b>96</b>	<b>1,279</b>	
2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարի							
Տոկոսային վարկեր և փոխառություններ	51	-	169	35	181	436	
Կրեդիտորական պարտքեր և հաշվեգրված պարտավորություններ	20	496	-	-	-	516	
	<b>71</b>	<b>496</b>	<b>169</b>	<b>35</b>	<b>181</b>	<b>952</b>	

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 26. Ֆինանսական ռիսկերի կառավարման նպատակները և քաղաքականությունները (շարունակություն)

### Պարտքային ռիսկ

Խումբը համագործակցում է միայն ճանաչված և վարկունակ երրորդ անձանց հետ: Խմբի քաղաքականության համաձայն բոլոր այն հաճախորդները, ովքեր ցանկանում են ապառիկ պայմաններով գնումներ կատարել, ենթակա են պարտքային ռիսկի վավերացման ընթացակարգերի, որոնց մեջ մտնում է պարտքային վարկանիշի, կարճաժամկետ իրացվելիության և ֆինանսական վիճակի գնահատումը:

\$ՀՄՄ 7.33  
\$ՀՄՄ 7.36

Խումբն (անհրաժեշտության դեպքում) իր հաճախորդներից վերցնում է համապատասխան գրավ՝ որպես ձախողումից առաջացող ֆինանսական վնասների ռիսկը մեղմացնելու միջոց: Բացի այդ դեբիտորական պարտքերի մնացորդները շարունակաբար հսկվում են, որի հետևանքով Խումբը չի ենթարկվում անհուսալի պարտքերի նշանակալի ազդեցության:

Ինչ վերաբերում է պարտքային ռիսկին, որն առաջանում է Խմբի այլ ֆինանսական ակտիվներից, որոնք ներառում են դրամական միջոցները, կարճաժամկետ ներդրումները, գնանշվող ժամկետով ածանցյալ գործիքները և ածանցյալ ֆինանսական ակտիվները, Խմբի ենթարկվածությունը պարտքային ռիսկին բխում է գործընկերների ձախողումից, որտեղ առավելագույն ենթարկվածությունը հավասար է այդ գործիքների հաշվեկշռային արժեքին:

Խումբը սահմանափակում է այս ակտիվների գծով իր պարտքային ռիսկը՝ համագործակցելով միայն նվազագույնը A կամ համարժեք վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատությունների հետ:

Դեբիտորական պարտքերի ժամկետայնության վերլուծության վերաբերյալ տես Ծան. 18-ը:

### Կապիտալի կառավարում

Խմբի կապիտալի կառավարման հիմնական նպատակը Խմբի հուսալի վարկունակության կայունության և ֆինանսական ցուցանիշների համապատասխան մակարդակի պահպանումն է՝ Խմբի գործունեության աջակցության և բաժնետերերի շահույթը մաքսիմալացնելու նպատակով:

ՀՀՄՄ 1.134

Խումբը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և կատարում է ճշգրտումներ՝ տնտեսական պայմանների փոփոխություններին համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ կարգավորելու նպատակով Խումբը կարող է ճշգրտել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, վերադարձնել բաժնետերերին կապիտալը կամ թողարկել նոր բաժնետոմսեր:

ՀՀՄՄ  
1.135(ա)

2011 և 2010թթ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարիներին կապիտալի կառավարման նպատակներում, քաղաքականություններում կամ ընթացակարգերում փոփոխություններ չեն իրականացվել:

Խումբն իրականացնում է կապիտալի վերահսկողություն ֆինանսական լծակի գործակցի միջոցով, որը հաշվարկվում է որպես զուտ պարտավորությունների և ընդհանուր կապիտալի ու զուտ պարտավորությունների հանրագումարի հարաբերակցություն:

ՀՀՄՄ 1.135(դ)

Խմբի քաղաքականության համաձայն ֆինանսական լծակի գործակիցը պետք է պահպանել 5%-ից 20%-ի միջև: Խմբի զուտ պարտավորությունները ներառում են տոկոսային վարկերը և փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը՝ նվազեցված դրամական միջոցներով և կարճաժամկետ ավանդներով:

Խումբը չի ենթարկվում կապիտալի վերաբերյալ որևէ արտաքին պահանջների:

	<b>2011թ.</b>	<b>2010թ.</b>	
	<b>մլն. ԱՄՆ դոլար</b>	<b>մլն. ԱՄՆ դոլար</b>	
Տոկոսային վարկեր և փոխառություններ	614	366	
Կրեդիտորական պարտքեր և հաշվեգրված պարտավորություններ	567	516	
Նվազեցված՝ դրամական միջոցներով և կարճաժամկետ ավանդներով	(508)	(539)	
<b>Զուտ պարտավորություն</b>	<b>673</b>	<b>343</b>	
Սեփական կապիտալ	4,771	4,019	
<b>Կապիտալ և զուտ պարտավորություն</b>	<b>5,444</b>	<b>4,362</b>	
<b>Ֆինանսական լծակի գործակից</b>	<b>12%</b>	<b>8%</b>	

ՀՀՄՄ 1.135(բ)

### Մեկնաբանություն

Համաձայն ՀՀՄՄ 1.134-ի և ՀՀՄՄ 1.135-ի պահանջների կազմակերպությունները պետք է բացահայտեն կապիտալի կառավարման նպատակների, քաղաքականությունների և ընթացակարգերի վերաբերյալ քանակական և որակական տեղեկատվություն: «Գուդ մայնինգ»-ը բացահայտել է ֆինանսական լծակի գործակիցը, քանի որ սեփական կապիտալի վերահսկողության նպատակով Խումբն օգտագործում է այդ ցուցանիշը: Այնուամենայնիվ, այլ կազմակերպությունների համար կարող են օգտագործվել այլ չափանիշներ:

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 27. Ածանցյալներ և ֆինանսական գործիքներ

### Իրական արժեք

Ստորև ներկայացված են Խմբի ֆինանսական գործիքների համեմատությունը ըստ խմբերի, որոնց իրական և հաշվեկշռային արժեքները տարբերվում են: \$ՀՄՄ 7.25  
\$ՀՄՄ 7.26

	Ֆինանսական գործիքների դասակարգում	Հաշվեկշռային արժեք		Իրական արժեք		\$ՀՄՄ 7.8
		2011թ.	2010թ.	2011թ.	2010թ.	
		մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	
<b>Ֆինանսական պարտավորություններ</b>						
Տոկոսային վարկեր և փոխառություններ						
Հաստատուն տոկոսադրույքով փոխառություններ						
	Ամորտիզացված արժեք	108	77	111	81	

### Այլ ֆինանսական ակտիվներ

	2011թ. մլն. ԱՄՆ դոլար	2010թ. մլն. ԱՄՆ դոլար
Ածանցյալ ապրանքային պայմանագրեր	12	15
Գնանշվող ժամկետով ածանցյալ գործիքներ	10	5
	<b>22</b>	<b>20</b>

### Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Խումբը կնքել է հետևյալ ածանցյալ ապրանքային պայմանագրերը, որոնք չեն հանդիսանում հեջավորման գործիքներ: \$ՀՄՄ 7.22

Ոսկու ֆորվարդ պայմանագիր	Ֆինանսական գործիքների դասակարգում	Ժամկետ	Ունցիա	Միավորի գինը ԱՄՆ դոլար	2011թ. դեկտեմբերի 31 դրությամբ իրական արժեք
					մլն. ԱՄՆ դոլար
Ոսկու ֆորվարդ պայմանագրեր – ԱՄՆ դոլարով	Առևտրական նպատակներով պահվող	Մարման ժամկետ-2012թ. հունիս	30,000	800	5
Ոսկու ֆորվարդ պայմանագրեր – Ավստրալիական դոլարով	Առևտրական նպատակներով պահվող	Մարման ժամկետ-2012 թ. դեկտեմբեր	30,000	800	7
					<b>12</b>

Ոսկու ֆորվարդ պայմանագրեր	Ֆինանսական գործիքների դասակարգում	Ժամկետ	Ունցիա	Միավորի գինը ԱՄՆ դոլար	2010թ. դեկտեմբերի 31 դրությամբ իրական արժեք
					մլն. ԱՄՆ դոլար
Ոսկու ֆորվարդ պայմանագրեր – ԱՄՆ դոլարով	Առևտրական նպատակներով պահվող	Մարման ժամկետ-2012թ. հունիս	30,000	800	8
Ոսկու ֆորվարդ պայմանագրեր – Ավստրալիական դոլարով	Առևտրական նպատակներով պահվող	Մարման ժամկետ-2012թ. դեկտեմբեր	30,000	800	7
					<b>15</b>

# Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

## 27. Ածանցյալներ և ֆինանսական գործիքներ (շարունակություն)

Արդյունքում այս պայմանագրերից ստացված 12 մլն. ԱՄՆ դոլարի (2010թ.՝ 15 մլն. ԱՄՆ դոլար) իրական շուկայական արժեքը ճանաչվել է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես ածանցյալ ֆինանսական ակտիվներ: Տվյալ գումարները ժամկետանց կամ արժեզրկված չեն համարվում: Այս ֆինանսական ակտիվների հաշվետվության արժեքը համարվում է պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը և հումքն այս ռիսկը մեղմացնում է երկարատև, բարձր համբավ ունեցող կողմերի կամ գործընկերների հետ պայմանագրեր կնքելով:

\$ՀՄՄ 7.6

\$ՀՄՄ 7.36

\$ՀՄՄ  
7.20(ա)(i)

Այս ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխությունն 3 մլն. ԱՄՆ դոլար վնասը (2010թ.՝ 5 մլն. ԱՄՆ դոլար օգուտ) ճանաչվել է տարվա ընթացքում շահույթում կամ վնասում, որպես ածանցյալ ֆինանսական գործիքներից ստացված օգուտ կամ վնաս:

### Գնանշվող ժամկետով ածանցյալ գործիքներ

Գնանշվող ժամկետով ածանցյալ գործիքների իրական շուկայական արժեքը 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 10 մլն. ԱՄՆ դոլար (2010թ.՝ 5 մլն. ԱՄՆ դոլար): Այս ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխությունը՝ 5 մլն. ԱՄՆ դոլար օգուտը (2010թ.՝ 4 մլն. ԱՄՆ դոլար օգուտ) ճանաչվել է տարվա ընթացքում շահույթում կամ վնասում, որպես ածանցյալ ֆինանսական գործիքներից ստացված օգուտ:

ՀՀՄՄ 39.ԵՀ24

### Իրական արժեքի հիերարխիա

\$ՀՄՄ 7.27 Ա

Խումքն օգտագործում է հետևյալ հիերարխիան ֆինանսական գործիքների իրական արժեքի որոշման և բացահայտման համար, որոնք չափվում են իրական արժեքով՝ օգտագործելով գնահատման մեթոդներ:

**1 մակարդակ.** Ակտիվ շուկայում գնանշված (չճշգրտված) նույնատիպ ակտիվներ կամ պարտավորությունների արժեք

**2 մակարդակ.** Այլ մեթոդներ, որոնք համար բոլոր հաշվարկվող գումարի վրա նշանակալի ազդեցություն ունեցող ելակետային տվյալները ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են

**3 մակարդակ.** Մեթոդներ, որոնք օգտագործում են հաշվարկված իրական արժեքի վրա նշանակալի ազդեցություն ունեցող շուկայում ոչ դիտարկելի ելակետային տվյալներ:

\$ՀՄՄ 7. 27Բ (բ)  
(գ)

Բոլոր իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների համար օգտագործվում է 2-րդ մակարդակի գնահատման մեթոդը երկու տարվա ընթացքում:

Հաշվետու ժամանակաշրջանում այս մակարդակների միջև տեղափոխումներ տեղի չեն ունեցել:

### Մեկնաբանություններ

Գնանշվող ժամկետով պարունակվող ածանցյալ գործիքների իրական արժեքները որոշելիս գնահատման հիերարխիայի մակարդակը, որտեղ դասակարգվում են այս ֆինանսական գործիքները, կախված կլինի գնանշվող ժամկետով պարունակվող ածանցյալ գործիքների տեսակից և դրանց գնահատման ելակետային տվյալներից: Երբ առկա են ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկելի տվյալների վրա և ունեն նշանակալի ազդեցություն հաշվարկվող իրական արժեքի վրա, ապա այս գործիքները կբացահայտվեն որպես գնահատման 3-րդ մակարդակում:

«Գուդ մայնինգ» կողմից կատարված բացահայտումները բավարարում են \$ՀՄՄ 7-ի պահանջներին և հիմնված են այս պայմանական ընկերության վերաբերյալ կատարված մի շարք ենթադրությունների վրա: Սակայն վերջին տնտեսական պայմանների ներքո պարտքային և այլ ռիսկերին կազմակերպության պոտենցիալ ենթարկվածության վերաբերյալ որակական և քանակական բացահայտումները դառնում են առավելապես կարևոր ֆինանսական հաշվետվություններից օգտվողների համար:

Կազմակերպությունները պետք է կենտրոնանան ֆինանսական հաշվետվություններից արտաքին օգտվողների կարիքների վրա և ներառեն ողջամիտ բացահայտումներ, որոնք ներառում են լիարժեք և ամուր պատկերացում կազմակերպության գործունեության և հանդիպած ռիսկերի մասին (սա ներառում է այնպիսի տեղեկատվություն, որը ղեկավարությունը օգտագործում է ֆինանսական ռիսկերը կառավարելու համար), պարզապես եփվող կաթա/սշիքի վանդակը» բացահայտումներ ներառելու փոխարեն:

Անիրաժեշտության դեպքում կազմակերպությունները պետք է կատարեն հետևյալ բացահայտումները՝

- ▶ Պարտատերեր՝ խմբավորված ըստ գործընկերների վարկանիշի
- ▶ Մանրամասներ պարտքի համաձայնագրերի և ղեկավարության համապատասխանության հսկման վերաբերյալ
- ▶ Մանրամասն բացահայտում փոխառությունների դիմաց գրավադրված արժեթղթերի վերաբերյալ
- ▶ Հեջավորման գործարքների մանրամասն բացահայտում
- ▶ Ֆորվարդ վաճառքների պայմանագրերի վերաբերյալ բացահայտում, որոնք հաշվառվել են որպես նորմալ գնում/վաճառքի պայմանագրեր:

Հավելյալ \$ՀՄՄ 7-ի բացահայտումների համար տես «Գուդ գրուպի (Ինթերնեշլ) Լիմիթեդ 2011» և «Գուդ բանկ (Ինթերնեշլ) Լիմիթեդ 2011» «Էրնսթ ընդ Յանգ» ընկերության հրապարակումները:

## Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից Թանոթագրություններ (շարունակություն)

### 28. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

2012թ. հունվարի 20-ին Խումբը իրականացրեց իր հանաժների պաշարների տարեկան գնահատումը: Այդ գնահատումը արձանագրեց, որ Աուրում հանքի ընդհանուր պաշարները կազմում են 15 միլիոն ունցիա (նախորդ գնահատման համաձայն՝ 2010թ. դեկտեմբերին պաշարները եղել են 11 միլիոն ունցիա): Խումբը հավաստիացնում է, որ հանաժների պաշարների փոփոխությունը ՀՀՄՍ 8-ի համաձայն գնահատումներում կատարված փոփոխություն է և հետագա ազդեցությունը ակտիվների մաշվածության, ամորտիզացիայի և արժեզրկումների վրա հաշվառվում է առաջընթաց այն օրվանից, երբ նոր տեղեկատվությունը դարձել է հասանելի:

ՀՀՄՍ 10.21

ՀՀՄՍ 10.10

ՀՀՄՍ 10.12

Տնօրենները 2012թ. հունվարի 27-ին կայացրած հանդիպման ժամանակ, որոշել են 2012թ.-ի փետրվարի 20-ին կայանալիք բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովից առաջ ներկայացնել առաջարկ՝ 235 մլն. դոլար տրամադրել վերջնական շահաբաժին 2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար (15 ցենտ մեկ բաժնետոմսի համար) բոլոր այն սովորական բաժնետերերին, որոնք գրանցված են 2012թ. հունվարի 27-ի դրությամբ: Այս գումարը չի ճանաչվում որպես պարտավորություն 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

# Հավելված 1. ՖՀՄՍ-ների առաջին անգամ որդեգրում

## Մեկնաբանություն

Ֆինանսական հաշվետվություններին կից այս ծանոթագրությունը ցույց է տալիս, թե ինչպես կարող է կազմակերպությունը բացահայտել ՖՀՄՍ-ներին անցման ազդեցությունը: Ստորև բերված ցուցադրական բացահայտումները չպետք է դիտվեն ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվության, համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության, սեփական կապիտալում փոփոխությունների մասին ֆինանսական հաշվետվության կամ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության հետ միասին: Ցուցադրական բացահայտումը հիմնված է ՖՀՄՍ 1-ի (ընթացիկ տարբերակը 2011թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ) օրինակ 11-ի վրա: Բացահայտման ձև առաջարկելիս, այս տարբերակը չի ներկայացնում բոլոր ՀՀՄՍ տարբերությունները, որը կազմակերպությունը կարող է կարիք ունենա բացահայտելու (այսինքն, այն ՀՀՄՍ տարբերությունների ընդգրկուն ցուցակ չէ): Ընթերցողները պետք է դիտարկեն «Առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրող Գուդ (Ինթերնեշլ) Լիմիթեդ 2011թ»-ը ՖՀՄՍ-ներով պատրաստվող առաջին ֆինանսական հաշվետվություններին վերաբերող բացահայտումների տեսակների հետագա ցուցադրական օրինակների համար:

Բոլոր դեպքերում կազմակերպությունները պետք է համոզվեն, որ ՖՀՄՍ-ներին անցման բացահայտումը և տարբերությունների բացատրությունը համապատասխանում են կազմակերպության կողմից կատարված այլ հրապարակումներին, օրինակ՝ Անցման հաշվետվությանը կամ Միջանկյալ հաշվետվությանը:

*Շեղ գրված տարրերը ներկայացնում են ՖՀՄՍ ստանդարտները և ուղեցույցը, որոնք չեն ներառվել ՖՀՄՍ 1-ով այս ցուցադրական ՖՀՄՍ-ների առաջին անգամ որդեգրումը անցման ծանոթագրությունում:*

## Անցման բացատրությունը

**ՖՀՄՍ 1.28** *Եթե կազմակերպությունը նախկինում չի ներկայացրել ֆինանսական հաշվետվություններ, ապա ՖՀՄՍ-ներով պատրաստված առաջին հաշվետվություններում այդ փաստը պետք է բացահայտվի:*

**ՖՀՄՍ 1.23** Կազմակերպությունը պետք է բացատրի, թե ինչպես է ՀՀՄՍ-ից անցումը ՖՀՄՍ-ներին ազդել իր ֆինանսական վիճակի, արդյունքների և դրամական հոսքերի վրա:

**ՖՀՄՍ 1.27** ՀՀՄՍ 8-ը գործ չի ունենում հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների հետ, երբ կազմակերպությունը առաջին անգամ որդեգրում է ՖՀՄՍ-ներ: Հետևաբար, ՀՀՄՍ 8-ի պահանջները հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխության բացահայտման վերաբերյալ կիրառելի չեն կազմակերպության առաջին անգամ ՖՀՄՍ-ների համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ:

## ՖՀՄՍ-ները պատմական ամփոփագրերում

**ՖՀՄՍ 1.22** *Որոշ կազմակերպություններ ներկայացնում են ընտրված տվյալների պատմական ամփոփագրեր ժամանակաշրջանների համար, որոնք նախորդում են այն ժամանակաշրջանին, որի համար նրանք ներկայացնում են ՖՀՄՍ-ների համաձայն ամբողջական համադրելի տեղեկատվություն: Այս ՖՀՄՍ-ն չի պահանջում, որպեսզի տվյալ ամփոփագրերը համապատասխանեն ՖՀՄՍ-ների ճանաչման և չափման պահանջներին: Ավելին, որոշ կազմակերպություններ ներկայացնում են համադրելի տեղեկատվություն ըստ նախկին ՀՀՄՍ-ի, ինչպես նաև ՀՀՄՍ 1-ով պահանջվող համադրելի տեղեկատվությունը: Նախկին ՀՀՄՍ-ի համաձայն պատմական ամփոփագրերում կամ համադրելի տեղեկատվություն պարունակող ցանկացած ֆինանսական հաշվետվություններում կազմակերպությունը պետք է՝*

- ▶ *Նշի այն փաստը, որ ըստ նախկին ՀՀՄՍ-ի ներկայացվող տեղեկատվությունը պատրաստված չէ ՖՀՄՍ-ների համաձայն,*
- ▶ *Բացահայտի հիմնական ճշգրտումների բնույթը, որոնք կհամապատասխանեցնեն այն ՖՀՄՍ-ին: Կարիք չկա, որ կազմակերպությունը որոշի տվյալ ճշգրտումների գումարները:*

## Անցումը ՖՀՄՍ-ների

Մինչև 2010թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակաշրջանները, Խումբը պատրաստում էր իր ֆինանսական հաշվետվությունները համաձայն Մետալվիում համընդհանուր ընդունված հաշվապահական սկզբունքների (ՀՀՄՍ): 2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար այս ֆինանսական հաշվետվությունները առաջինն են, որ Խումբը պատրաստել է ՀՀՄՍ կողմից հրապարակված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Համապատասխանաբար, Խումբը պատրաստել է ֆինանսական հաշվետվություններ, որոնք համապատասխանում են հաշվապահական հաշվառման քաղաքականությունում նկարագրված 2011թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո ընկած ժամանակաշրջանների համար կիրառելի ՖՀՄՍ-ներին: Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, Խմբի սկզբնական ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պատրաստվել էր Խմբի՝ ՖՀՄՍ-ներին անցման ամսաթվին՝ 2010թ. հունվարի 1-ին: Սույն ծանոթագրությունը բացատրում է Խմբի կողմից կատարված հիմնական այն ճշգրտումները, որոնք կատարվել են ըստ ՀՀՄՍ-ի 2010թ. հունվարի 1-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության, և ըստ ՀՀՄՍ-ի 2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար նախկինում հրապարակված ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացումների համար: Խումբը որոշակիացրել է մի քանի ճշգրտումներ, որոնք չեն առաջանում նախկին ՀՀՄՍ-ի և ՖՀՄՍ-ի տարբերությունից և, հետևաբար, դասակարգված են որպես նախկինում կիրառվող ՀՀՄՍ-ի ճշգրտումներ, այլ ոչ ըստ ՖՀՄՍ-ների անցման վերադասակարգում կամ վերաչափում: Հետևաբար, այս ծանոթագրությունը նաև բացատրում է ըստ նախկին ՀՀՄՍ-ի Խմբի հիմնական ճշգրտումները, որոնք կատարվել են ֆինանսական վիճակի մասին 2010 թ.-ի հունվարի 1-ի դրությամբ հաշվետվությունը և 2010թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական հաշվետվությունները վերաներկայացնելիս:

# Հավելված 1. ՖՀՄՍ-ների առաջին անգամ որդեգրում (շարունակություն)

## Կիրառված ազատումներ

ՖՀՄՍ 1-ը թույլ է տալիս առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրողներին որոշակի ազատումներ առանձին ՖՀՄՍ-ների հետադարձ կիրառումից:

Խումբը կիրառել է հետևյալ ազատումները՝

- ▶ ՖՀՄՍ 3 «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ» չի կիրառվել դուստր ձեռնարկությունների ձեռք բերման կամ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում մասնաբաժնի նկատմամբ, որոնք տեղի են ունեցել մինչ 2010թ. հունվարի 1-ը:
- ▶ Խումբը ճանաչել է 2010թ. հունվարի 1-ի դրությամբ կենսաթոշակների և այլ հետաշխատանքային հատուցումների գծով բոլոր կուտակված ակտուարային օգուտները և վնասները կապիտալի կազմում: Խումբը նախընտրել է ՀՀՄՍ 19 «Աշխատակիցների հատուցումներ» ստանդարտի 120Ա(ժգ) կետի կողմից պահանջվող գումարների բացահայտումները կատարել առաջընթաց՝ ՖՀՄՍ-ներին անցումից հետո:
- ▶ Խումբը կիրառել է ՖՀՄՍ 4 «Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում» մեկնաբանության անցումային դրույթները և գնահատել է բոլոր համաձայնությունները անցման ամսաթվի դրությամբ:
- ▶ Խումբը նախընտրել է կիրառել ՖՀՄՍ 1-ի համաձայն ապագործարկման պահուստների ամբողջական հետընթաց կիրառումից ազատումը: Այդ պատճառով Խումբը վերահաշվարկել է պահուստները 2010թ. հունվարի 1-ի դրությամբ ըստ ՀՀՄՍ 37 «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և ակտիվներ» ստանդարտի, և հաշվարկել է համապատասխան ակտիվի արժեքում ներառվող գումարը՝ զեղչելով պարտավորությունը այն ամսաթվի դրությամբ, երբ այն առաջ է եկել: Խումբը իրականացրել է վերը նշվածը՝ օգտագործելով պատմական ռիսկով ճշգրտված զեղչադրույքի լավագույն գնահատականները, և վերահաշվարկել է կուտակված մաշվածությունը, սպառումը և ամորտիզացիան՝ մինչև ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթիվը:

## Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ

ՖՀՄՍ 1 Գ1 Առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրողը կարող է նախընտրել չկիրառել ՖՀՄՍ 3 «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ» (վերանայված 2008թ.) ստանդարտը հետընթաց նախկին ձեռնարկատիրական գործունեության միավորումների նկատմամբ (ձեռնարկատիրական գործունեության միավորումներ, որոնք տեղի են ունեցել մինչ ՖՀՄՍ-ներին անցումը): Այնուամենայնիվ, եթե առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրողը վերաներկայացնում է որևէ ձեռնարկատիրական գործունեության միավորում ՖՀՄՍ 3-ին համապատասխան (վերանայված 2008թ.), ապա այն պետք է վերաներկայացնի բոլոր հաջորդ ձեռնարկատիրական գործունեության միավորումները և կիրառի նաև ՀՀՄՍ 27-ը (վերանայված 2008թ.) այդ նույն ամսաթվից: Օրինակ՝ եթե առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրողը նախընտրում է վերաներկայացնել 20X6թ. հունիսի 30-ի դրությամբ ձեռնարկատիրական գործունեության միավորումը, այն պետք է վերաներկայացնի բոլոր ձեռնարկատիրական գործունեության միավորումները, որոնք տեղի են ունեցել 20X6թ. հունիսի 30-ի և ՖՀՄՍ-ներին անցման ամսաթվի միջև ընկած ժամանակահատվածում և, բացի այդ, պետք է նաև կիրառի ՀՀՄՍ 27-ը (վերանայված 2008թ.) 20X6թ. հունիսի 30-ից:

## Վերահաշվարկման կուտակային տարբերություններ

ՖՀՄՍ 1 Դ12 ՀՀՄՍ 21 «Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» ստանդարտը պահանջում է, որպեսզի կազմակերպությունը՝

- (ա) ճանաչի վերահաշվարկման տարբերությունների մի մասը այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում և կուտակի այդ տարբերությունները որպես կապիտալի առանձին տարր,
- (բ) արտերկրյա ստորաբաժանման օտարման ժամանակ վերադասակարգի այդ ստորաբաժանման կուտակված վերահաշվարկման տարբերությունները (ներառյալ, եթե կիրառելի է, համապատասխան հեջերի գծով օգուտները կամ վնասները)՝ կապիտալից տեղափոխելով շահույթի կամ վնասի մեջ՝ որպես օտարումից օգուտի կամ վնասի մաս:

ՖՀՄՍ 1 Դ13 Այնուամենայնիվ, առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրողը կարող է չհետևել վերահաշվարկման կուտակված տարբերություններին վերաբերող այս պահանջներին, որոնք գոյություն են ունեցել ՖՀՄՍ-ներին անցման ամսաթվին: Եթե առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրողը օգտվի այս ազատումից՝

- (ա) բոլոր արտերկրյա ստորաբաժանումների գծով վերահաշվարկման կուտակային տարբերությունները համարվում են հավասար զրոյի՝ ՖՀՄՍ-ներին անցման ամսաթվին,
- (բ) ցանկացած արտերկրյա ստորաբաժանման հետագա օտարումից օգուտը կամ վնասը պետք է բացառի վերահաշվարկման կուտակային տարբերությունները, որոնք առաջացել են մինչ ՖՀՄՍ-ներին անցման ամսաթիվը, և պետք է ներառեն դրանից հետո առաջացած վերահաշվարկման տարբերությունները:



# Հավելված 1. ՖՀՄՍ-ների առաջին անգամ որդեգրում (շարունակություն)

## Նախկինում ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների նախատեսումը

ՖՀՄՍ 1 Դ-19 ՀՀՄՍ 39 թույլ է տալիս, որ ֆինանսական ակտիվը սկզբնական ճանաչման պահին նախատեսվի որպես վաճառքի համար մատչելի, կամ ֆինանսական գործիքը (որոշակի չափանիշի համապատասխանելու դեպքում) նախատեսվի որպես ֆինանսական ակտիվ կամ պարտավորություն՝ չափվող իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Չնայած այս պահանջին հնարավոր են հետևյալ բացառությունները՝

- (ա) կազմակերպությունը կարող է վերադասակարգել որպես վաճառքի համար մատչելի ՖՀՄՍ-ներին անցման ամսաթվին,
- (բ) կազմակերպությունը կարող է նախատեսել ցանկացած ֆինանսական ակտիվ կամ պարտավորություն որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով ՖՀՄՍ-ներին անցման ամսաթվին, եթե ակտիվը կամ պարտավորությունը այդ ամսաթվին բավարարում են ՀՀՄՍ 39-ի 9(բ)(i), 9(բ)(ii) կամ 11Ա պարագրաֆներով նախատեսված չափանիշներին:

## Ակտիվների իրական արժեքը որպես անցման ժամանակ ելակետային սկզբնական արժեք

ՖՀՄՍ 1.30 Եթե կազմակերպությունն իր ֆինանսական վիճակի մասին՝ ՖՀՄՍ-ներով սկզբնական հաշվետվության մեջ իրական արժեքն օգտագործում է որպես հիմնական միջոցների, ներդրումային գույքի, կամ ոչ նյութական ակտիվի միավորի ելակետային արժեք (տե՛ս Դ5 և Դ7 պարագրաֆները), կազմակերպության՝ ՖՀՄՍ-ներով առաջին ֆինանսական հաշվետվությունները պետք է ֆինանսական վիճակի մասին՝ ՖՀՄՍ-ներով սկզբնական հաշվետվության յուրաքանչյուր տողային հոդվածի համար բացահայտեն՝

- ▶ Այդ իրական արժեքների հանրագումարը
- ▶ Նախկին ՀԸՀՍ-ների շրջանակներում ներկայացված հաշվեկշռային արժեքներում կատարված ճշգրտումների հանրագումարը

## Դուստր կազմակերպությունների, ասոցիացված կազմակերպությունների և համատեղ ձեռնարկումների ակտիվներն ու պարտավորությունները

ՖՀՄՍ 1 Դ-16 Եթե դուստր կազմակերպությունը դառնում է առաջին անգամ ՖՀՄՍ-ներ որդեգրող ավելի ուշ, քան մայր կազմակերպությունը, այն պետք է իր ֆինանսական հաշվետվություններում չափի իր ակտիվները և պարտավորությունները հետևյալ հիմունքներից որևէ մեկով՝

- (ա) այն հաշվեկշռային արժեքները, որոնք կներառվեն մայր կազմակերպության համախմբված ֆինանսական հաշվետվություններում, մայր կազմակերպության՝ ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի հիման վրա, եթե ճշգրտումներ չեն կատարվել համախմբման ընթացակարգերի նպատակով և այն ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքները հաշվի առնելու նպատակով, որի արդյունքում մայր կազմակերպությունը ձեռք է բերել դուստր կազմակերպությանը,
- (բ) սույն ՖՀՄՍ-ի մնացյալ մասում պահանջվող հաշվեկշռային արժեքներ՝ դուստր կազմակերպության՝ ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի հիման վրա: Այս հաշվեկշռային արժեքները կարող են տարբերվել (ա) կետում նշվածներից
  - (i) երբ սույն ՖՀՄՍ-ի ազատումների արդյունքում կատարվում են չափումներ, որոնք կախված են ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվից,
  - (ii) երբ դուստր կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում օգտագործվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը տարբերվում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաշվապահական հաշվառման քաղաքականությունից: Օրինակ՝ դուստրը կարող է որպես հաշվապահական հաշվառման քաղաքականություն օգտագործել ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտով նախատեսված սկզբնական արժեքի (ինքնարժեքի) մոդելը, մինչդեռ Խումբը կարող է օգտագործել վերազնահատման մոդելը:

Նմանատիպ ընտրության հնարավորություն ունեն ասոցիացված կազմակերպությունը կամ համատեղ ձեռնարկումը, որ դառնում է առաջին անգամ որդեգրող ավելի ուշ, քան այն կազմակերպությունը, որը նրա նկատմամբ ունի նշանակալի ազդեցություն կամ համատեղ վերահսկողություն:

ՖՀՄՍ 1 Դ-17 Սակայն, եթե կազմակերպությունը դառնում է առաջին անգամ որդեգրող ավելի ուշ, քան նրա դուստր կազմակերպությունը (կամ ասոցիացված կազմակերպությունը կամ համատեղ ձեռնարկումը), կազմակերպությունը պետք է իր համախմբված ֆինանսական հաշվետվություններում չափի դուստր կազմակերպության (կամ ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկման) ակտիվները և պարտավորությունները նույն հաշվեկշռային արժեքներով, ինչ դուստր կազմակերպության (կամ ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկման) ֆինանսական հաշվետվությունում՝ կատարելով համախմբման և բաժնեմասնակցության մեթոդով հաշվառման ճշգրտումները, ինչպես նաև այն ձեռնարկատիրական միավորման արդյունքների գծով ճշգրտումները, որի արդյունքում կազմակերպությունը ձեռք է բերել դուստր կազմակերպությունը: Նմանապես, եթե մայր կազմակերպությունն իր առանձին ֆինանսական հաշվետվությունների մասով դառնում է առաջին անգամ որդեգրող ավելի շուտ կամ ավելի ուշ, քան իր համախմբված ֆինանսական հաշվետվությունների մասով, այն պետք է չափի իր ակտիվները և պարտավորությունները միևնույն գումարներով ֆինանսական հաշվետվությունների երկու տարբերակներում, բացառությամբ՝ համախմբման ճշգրտումների:

# Հավելված 1. ՖՀՄՍ-ների առաջին անգամ որդեգրում (շարունակություն)

## Վարձակալություն

ՖՀՄՍ 1 Դ9 Առաջին անգամ որդեգրողը կարող է կիրառել ՖՀՄՍ 4 «Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում» մեկնաբանության անցումային դրույթները: Հետևաբար, առաջին անգամ որդեգրողը կարող է որոշել, թե արդյոք ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրույթամբ առկա համաձայնությունը պարունակում է վարձակալություն այդ ամսաթվի դրույթամբ առկա փաստերի և համաձայնաբերի հիման վրա:

ՖՀՄՍ 1 Դ9Ա Եթե առաջին անգամ որդեգրողը համաձայնության մեջ վարձակալության առկայության վերաբերյալ կատարում է նույն որոշումը, ինչ՝ համաձայն նախկին ՀՀՀՄ-ների, ինչպես պահանջում է ՖՀՄՍ 4-ը, սակայն դա անում է ոչ ՖՀՄՍ 4-ով պահանջվող ամսաթվի դրույթամբ, այսպես կարիք չկա, որ առաջին անգամ որդեգրողը ՖՀՄՍ-ները որդեգրելու ժամանակ վերանայի այդ որոշման գնահատականը: Կազմակերպության տեսանկյունից, որը համաձայնության մեջ վարձակալության առկայության վերաբերյալ կատարել է նույն որոշումը, ինչ՝ համաձայն նախկին ՀՀՀՄ-ների, այդ որոշումը կտա նույն արդյունքը, ինչը կստացվեր ՖՀՄՍ 17 «Վարձակալություն» ստանդարտի և ՖՀՄՍ 4-ի կիրառման արդյունքում:

## Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ

ՖՀՄՍ 1 Դ2 Խրախուսվում է, սակայն չի պահանջվում, որ առաջին անգամ որդեգրողը ՖՀՄՍ 2 «Բաժնետոմսերի վրա հիմնված վճարում» ստանդարտը կիրառի 2002թ. նոյեմբերի 7-ին կամ դրանից առաջ տրամադրված բաժնային գործիքների նկատմամբ: Նաև խրախուսվում է, սակայն չի պահանջվում, որ առաջին անգամ որդեգրողը ՖՀՄՍ 2-ը կիրառի 2002թ. նոյեմբերի 7-ից հետո տրամադրված բաժնային այն գործիքների նկատմամբ, որոնց մասով իրավունքները առաջացել են մինչև նշվածներից առավել ուշ ամսաթիվը. (ա) ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթիվ և (բ) 2005թ. հունվարի 1: Սակայն, եթե առաջին անգամ որդեգրողը որոշում է ՖՀՄՍ 2-ը կիրառել այդպիսի բաժնային գործիքների նկատմամբ, այն կարող է այդպես վարվել, միայն եթե կազմակերպությունը հրապարակայնորեն բացահայտել է այդ բաժնային գործիքների իրական արժեքը չափման ամսաթվի դրույթամբ, ինչպես սահմանված է ՖՀՄՍ 2-ում: Բաժնային գործիքների բոլոր տրամադրումների համար, որոնց մասով ՖՀՄՍ 2-ը չի կիրառվել (օրինակ՝ 2002թ. նոյեմբերի 7-ին կամ դրանից առաջ տրամադրված բաժնային գործիքներ), առաջին անգամ որդեգրողը պետք է, այնուամենայնիվ, բացահայտի ՖՀՄՍ 2-ի 44-րդ և 45-րդ պարագրաֆներով պահանջվող տեղեկատվությունը: Եթե առաջին անգամ որդեգրողը փոփոխում է բաժնային այն գործիքների տրամադրման պայմանները, որոնց նկատմամբ չեն կիրառվել ՖՀՄՍ 2-ի պահանջները, կազմակերպությունից չի պահանջվում կիրառել ՖՀՄՍ 2-ի 26-29-րդ պարագրաֆները, եթե փոփոխությունը տեղի է ունեցել մինչև ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթիվը:

ՖՀՄՍ 1 Դ3 Խրախուսվում է, սակայն չի պահանջվում, որ առաջին անգամ որդեգրողը ՖՀՄՍ 2-ը կիրառի բաժնետոմսերի վրա հիմնված վճարման գործարքներից առաջացած այն պարտավորությունների նկատմամբ, որոնք մարվել են մինչև ՖՀՄՍ-ներին անցնելը: Նաև խրախուսվում է, սակայն չի պահանջվում, որ առաջին անգամ որդեգրողը ՖՀՄՍ 2-ը կիրառի այն պարտավորությունների նկատմամբ, որոնք մարվել են մինչև 2005թ. հունվարի 1-ը: Այն պարտավորությունների համար, որոնց մասով կիրառվում է ՖՀՄՍ 2-ը, առաջին անգամ որդեգրողից չի պահանջվում վերաներկայացնել համադրելի տեղեկատվությունը այնքանով, որքանով այդ տեղեկատվությունը վերաբերում է մինչև 2002թ. նոյեմբերի 7-ն ընկած ժամանակաշրջանին կամ ամսաթվին:

## Հեղինակի ծանոթագրությունը՝

Ո՛չ ՖՀՄՍ 1-ը, ո՛չ ՖՀՄՍ 2-ը հստակորեն չեն նշում առաջին անգամ որդեգրողի կողմից մինչև ՖՀՄՍ անցումը ըստ ՀՀՀՄ-ների հաշվառված այն ծախսումների նկատմամբ մոտեցումը, որոնք հանդիսանում են ՖՀՄՍ 1-ի անցումային դրույթների առարկա: Տարբեր իրավահամակարգերում տարբեր տեսակետներ կան այս խնդրի վերաբերյալ, որոնց մի մասը համահունչ են նախկին կանոնակարգերին: Ըստ մի տեսակետի՝ առաջին անգամ որդեգրողը պետք է՝

- (ա) կիրառի ՖՀՄՍ 2-ը ամբողջությամբ բոլոր գործարքների նկատմամբ, կամ
- (բ) կիրառի անցումային դրույթների առավելությունը, որի արդյունքում, որոշ գործարքները դադարում են գոյություն ունենալ ճանաչման և չափման նպատակներով:

Սակայն, ըստ մյուս տեսակետի՝ նման գործարքներին վերաբերող մինչև անցումը ըստ ՀՀՀՄ-ների ճանաչված ծախսումները չպետք է հակադարձվեն, այն բանի հիման վրա, որ նման մոտեցումը չի բերի ավելի տեղին և արժանահավատ տեղեկատվության օգտագործողների համար:

## Հիմնական միջոցների արժեքում ներառված ապագործարկման գծով պարտավորություններ

ՖՀՄՍ 1 Դ21 ՖՀՄՍ 1 «Փոփոխություններ ապագործարկման, վերականգնման և նմանատիպ գոյություն ունեցող պարտավորություններում» մեկնաբանությամբ սահմանել է, որ ապագործարկման, վերականգնման և նմանատիպ այլ պարտավորության փոփոխությունները պետք է ավելացվեն կամ պակասեցվեն այն ակտիվի արժեքին (արժեքից), որին այն վերաբերում է. ակտիվի ճճզգրված մաշվող գումարը, այդուհանդերձ, մաշեցվում է առաջընթաց կերպով դրա մնացորդային օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Առաջին անգամ որդեգրողը կարող է չհետևել այնպիսի պարտավորություններում տեղ գտած փոփոխությունների նկատմամբ այս պահանջներին, որոնք առաջացել են մինչև ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթիվը: Եթե առաջին անգամ որդեգրողը օգտվում է այս ազատումից, այն պետք է.

- (ա) չափի պարտավորությունը ՀՀՄՍ 37-ի համաձայն՝ ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրույթամբ,
- (բ) այն չափով, որքանով պարտավորությունը ՖՀՄՍ 1-ի գործողության ոլորտում է, գնահատի այն գումարը, որը կներառվեր դրա հետ կապված ակտիվի արժեքում պարտավորության առաջին անգամ առաջանալիս՝ պարտավորությունը զեղչելով այդ ամսաթվի դրույթամբ, օգտագործելով պատմական ռիսկի գործոնով ճճզգրված այն զեղչման դրույթաչափի (դրույթաչափերի) իր լավագույն գնահատականը, որը կկիրառվեր այդ պարտավորության նկատմամբ դիտարկվող ժամանակաշրջանի ընթացքում,
- (գ) հաշվարկի կուտակված մաշվածություն այդ գումարի նկատմամբ, ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրույթամբ՝ հիմք ընդունելով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի վերաբերյալ ներկա գնահատականը և կիրառելով կազմակերպության կողմից ՖՀՄՍ-ների համաձայն ընդունված մաշվածության քաղաքականությունը:

# Հավելված 1. ՖՀՄՍ-ների առաջին անգամ որդեգրում (շարունակություն)

## ՖՀՄՍ-ների փոխարկումը (շարունակություն)

Խմբի՝ սեփական կապիտալի ճշգրտումը 2010թ. հունվարի 1-ի դրությամբ	Նախկին ՀՀՄ ճշգրտումներ		ՀՀՄ 16 ճշգրտումներ		Վերականգնման պարտավորության ճշգրտումներ		Ընդամենը ՖՀՄ ճշգրտումներ	
	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար
<b>Ոչ ընթացիկ ակտիվներ</b>								
Հետախուզման և գնահատման ակտիվներ	-	344	-	-	-	-	344	344
Ոչ նյութական ակտիվներ	24	-	-	-	-	-	-	24
Հանքեր	3,182	(705)	(98)	10	-	(793)	2,389	
Հիմնական միջոցներ	226	-	-	-	-	-	-	226
Համատեղ ձեռնարկումներում ներդրումներ՝ հաշվարկված բաժնետնայնակցության մեթոդով	73	-	-	-	-	-	-	73
Սառեցված դրամական միջոցներ	50	-	-	-	-	-	-	50
Հետաձգված հարկային ակտիվներ	10	-	-	-	-	-	-	10
	<b>3,565</b>	<b>(361)</b>	<b>(98)</b>	<b>10</b>	<b>-</b>	<b>(449)</b>	<b>3,116</b>	
<b>Ընթացիկ ակտիվներ</b>								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	481	-	-	-	-	-	-	481
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	424	-	-	-	-	-	-	424
Պաշարներ	85	-	-	-	-	-	-	85
Այլ ֆինանսական ակտիվներ	28	-	-	-	-	-	-	28
	1,018	-	-	-	-	-	-	1,018
<b>Ընդամենը ակտիվներ</b>	<b>4,583</b>	<b>(361)</b>	<b>(98)</b>	<b>10</b>	<b>-</b>	<b>(449)</b>	<b>4,134</b>	
<b>Բաժնետիրական կապիտալ</b>								
Թողարկված կապիտալ	836	-	-	-	-	-	-	836
Զբաղիված շահույթ	2,092	(361)	(98)	(37)	79	(417)	1,675	
	<b>2,928</b>	<b>(361)</b>	<b>(98)</b>	<b>(37)</b>	<b>79</b>	<b>(417)</b>	<b>2,511</b>	
<b>Ոչ ընթացիկ պարտավորություններ</b>								
Թոշակային հատուցումների գծով պարտավորություններ	13	-	-	-	3	3	16	
Տոկոսային վարկեր և փոխառություններ	302	-	-	-	-	-	302	
Հետաձգված հարկային պարտավորություններ	372	-	-	-	(81)	(81)	291	
Պահուստներ	249	-	-	47	-	47	296	
	<b>936</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>47</b>	<b>(78)</b>	<b>(31)</b>	<b>905</b>	
<b>Ընթացիկ պարտավորություններ</b>								
Թոշակային հատուցումների գծով պարտավորություններ	1	-	-	-	-	-	1	
Կրեդիտորական պարտքեր և հաշվեգրված պարտավորություններ	390	-	-	-	1	1	391	
Հարկային պարտավորություններ	201	-	-	-	-	-	201	
Տոկոսային վարկեր և փոխառություններ	32	-	-	-	-	-	32	
Հետաձգված հարկային պարտավորության ընթացիկ մասը	7	-	-	-	(7)	(7)	-	
Պահուստներ	88	-	-	-	5	5	93	
	<b>719</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>(1)</b>	<b>(1)</b>	<b>718</b>	
Ընդամենը պարտավորություններ	1,655	-	-	47	(79)	(32)	1,623	
<b>Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ</b>	<b>4,583</b>	<b>(361)</b>	<b>(98)</b>	<b>10</b>	<b>-</b>	<b>(449)</b>	<b>4,134</b>	

# Հավելված 1. ՖՀՄՍ-ների առաջին անգամ որդեգրում (շարունակություն)

## ՖՀՄՍ-ների փոխարկումը (շարունակություն)

Խմբի՝ սեփական կապիտալի ճշգրտումը 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Նախկին ՀՀՀՄ	Նախկին ՀՀՀՄ ճշգրտումներ	ՖՀՄՍ 6 ճշգրտումներ	ՀՀՄՍ 16 ճշգրտումներ	Վերականգնման պարտավորության ճշգրտումներ	Այլ ՖՀՄՍ ճշգրտումներ	Ընդամենը ՖՀՄՍ ճշգրտումներ	ՖՀՄՍ
	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար
<b>Ոչ ընթացիկ ակտիվներ</b>								
Հետախուզման և գնահատման ակտիվներ	-	-	501	-	-	-	501	501
Ոչ նյութական ակտիվներ	27	-	-	-	-	-	-	27
Հանքեր	4,689	-	(952)	(41)	10	-	(983)	3,706
Հիմնական միջոցներ	227	-	-	-	-	-	-	227
Համատեղ ձեռնարկումներում ներդրումներ՝ հաշվարկված բաժնեմասնակցության մեթոդով	98	-	-	-	-	-	-	98
Սահեցված դրամական միջոցներ	50	-	-	-	-	-	-	50
Հետաձգված հարկային ակտիվներ	57	-	-	-	-	-	-	57
	<b>5,148</b>	<b>-</b>	<b>(451)</b>	<b>(41)</b>	<b>10</b>	<b>-</b>	<b>(482)</b>	<b>4,666</b>
<b>Ընթացիկ ակտիվներ</b>								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	489	-	-	-	-	-	-	489
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	599	-	-	-	-	-	-	599
Պաշարներ	88	-	-	-	-	-	-	88
Այլ ֆինանսական ակտիվներ	20	-	-	-	-	-	-	20
	<b>1,196</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>1,196</b>
<b>Ընդամենը ակտիվներ</b>	<b>6,344</b>	<b>-</b>	<b>(451)</b>	<b>(41)</b>	<b>10</b>	<b>-</b>	<b>(482)</b>	<b>5,862</b>
<b>Բաժնետիրական կապիտալ</b>								
Թողարկված կապիտալ	1,564	-	-	-	-	-	-	1,564
Զբաղիչված շահույթ	2,906	(6)	(451)	(41)	(34)	81	(445)	2,455
	<b>4,470</b>	<b>(6)</b>	<b>(451)</b>	<b>(41)</b>	<b>(34)</b>	<b>81</b>	<b>(445)</b>	<b>4,019</b>
<b>Ոչ ընթացիկ պարտավորություններ</b>								
Թոշակային հատուցումների գծով պարտավորություններ	13	-	-	-	-	5	5	18
Տոկոսային վարկեր և փոխառություններ	315	-	-	-	-	-	-	315
Հետաձգված հարկային պարտավորություններ	471	-	-	-	-	(85)	(85)	386
Պահուստներ	323	6	-	-	44	-	44	373
	<b>1,122</b>	<b>6</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>44</b>	<b>(80)</b>	<b>(36)</b>	<b>1,092</b>
<b>Ընթացիկ պարտավորություններ</b>								
Թոշակային հատուցումների գծով պարտավորություններ	2	-	-	-	-	-	-	2
Կրեդիտորական պարտքեր և հաշվեգրված պարտավորություններ	516	-	-	-	-	-	-	516
Հարկային պարտավորություններ	166	-	-	-	-	-	-	166
Տոկոսային վարկեր և փոխառություններ	51	-	-	-	-	-	-	51
Հետաձգված հարկային պարտավորության ընթացիկ մասը	8	-	-	-	-	(8)	(8)	-
Պահուստներ	9	-	-	-	-	7	7	16
	<b>752</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>(1)</b>	<b>(1)</b>	<b>751</b>
Ընդամենը պարտավորություններ	1,874	6	-	-	44	(81)	(37)	1,843
<b>Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ</b>	<b>6,344</b>	<b>-</b>	<b>(451)</b>	<b>(41)</b>	<b>10</b>	<b>-</b>	<b>(482)</b>	<b>5,862</b>

## Հավելված 1. ՖՀՄՍ-ների առաջին անգամ որդեգրում (շարունակություն)

### ՖՀՄՍ-ների փոխարկումը (շարունակություն)

2010 թ.

դեկտեմբերի 31-ին  
ավարտվող  
տարվա խմբի  
շահույթի կամ  
վնասի ճշգրտում

	Նախկին ՀՀՀՄ	Նախկին ՀՀՀՄ ճշգրտումներ	ՖՀՄՍ 6 ճշգրտումներ	ՀՀՄՍ 16 ճշգրտումներ	Վերականգնման պարտավորության ճշգրտումներ	Այլ ՖՀՄՍ ճշգրտումներ	Ընդամենը ՖՀՄՍ ճշգրտումներ	ՖՀՄՍ
	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար	մլն. ԱՄՆ դոլար
Հասույթ	2,917	-	-	-	-	-	-	2,917
Վաճառքի ինքնարժեք	(1,211)	(6)	(90)	57	31	-	(2)	(1,219)
<b>Համախառն շահույթ</b>	<b>1,706</b>	<b>(6)</b>	<b>(90)</b>	<b>57</b>	<b>31</b>	<b>-</b>	<b>(2)</b>	<b>1,698</b>
Այլ եկամուտ	76	-	-	-	-	-	-	76
Հիմնական միջոցների վաճառքից օգուտ/ (վնաս)	(11)	-	-	-	-	-	-	(11)
Ածանցյալ ֆինանսական գործիքների գծով օգուտ	9	-	-	-	-	-	-	9
Համատեղ ձեռնարկման գուտ շահույթի մասնաբաժին	25	-	-	-	-	-	-	25
Այլ ծախսեր	(130)	-	-	-	-	2	2	(128)
Հիմնական և վարչական ծախսեր	(203)	-	-	-	-	(2)	(2)	(205)
<b>Գործառնական շահույթ</b>	<b>1,472</b>	<b>(6)</b>	<b>(90)</b>	<b>57</b>	<b>31</b>	<b>-</b>	<b>(2)</b>	<b>1,464</b>
Ֆինանսական եկամուտ	25	-	-	-	-	-	-	25
Ֆինանսական ծախսեր	(12)	-	-	-	-	(28)	(28)	(40)
<b>Շահույթ նախքան հարկումը</b>	<b>1,485</b>	<b>(6)</b>	<b>(90)</b>	<b>57</b>	<b>31</b>	<b>(28)</b>	<b>(30)</b>	<b>1,449</b>
Շահութահարկի գծով ծախս	(531)	-	-	-	-	2	2	(529)
<b>Տարվա շահույթը</b>	<b>954</b>	<b>(6)</b>	<b>(90)</b>	<b>57</b>	<b>31</b>	<b>(26)</b>	<b>(28)</b>	<b>920</b>
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	-	-	-	-	-	-
<b>Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ</b>	<b>954</b>	<b>(6)</b>	<b>(90)</b>	<b>57</b>	<b>31</b>	<b>(26)</b>	<b>(28)</b>	<b>920</b>

## Հավելված 1. ՖՀՄՍ-ների առաջին անգամ որդեգրում (շարունակություն)

### Ըստ Նախկին ՀՀՀՍ-ի սեփական կապիտալի և ներկայացված շահույթի վերաներկայացման վերաբերյալ Թանոթագրություններ

Այս հաշվետվություններին կցված պատմողական մասը ներառվել է այն բացահայտումների մակարդակի վերաբերյալ ցուցում տալու նպատակով, որոնք ակնկալվում է ներառել ՖՀՄՍ-ների համապատասխան առաջին ֆինանսական հաշվետվություններում՝ ՖՀՄՍ 1-ի պահանջներին բավարարելու նպատակով:

Պրակտիկայում այս բացահայտումները կհիմնվեն կազմակերպության կողմից արդեն հրապարակված ՖՀՄՍ-ների անցման հաշվետվության վրա: Միայն ավելի վաղ ՖՀՄՍ-ներին համապատասխանության հայտարարությունը ընդունելի չի լինի, քանի որ ՖՀՄՍ 1-ը պահանջում է բացահայտումներ կատարել ֆինանսական հաշվետվություններում:

Նաև նախնական ՖՀՄՍ-ներին համապատասխան տրամադրված տեղեկատվության մանրամասնության մակարդակից կախված՝ հնարավոր կլինի այն ամփոփել կամ կպահանջվի այն մշակել:

#### Համաձայնեցումներ

- ՖՀՄՍ 1.23 Կազմակերպությունը պետք է տրամադրի բացատրություն, թե ինչպես է Նախկին ՀՀՀՍ-ներից ՖՀՄՍ-ներին անցումը ազդել իր ներկայացված ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի վրա:
- ՖՀՄՍ 1.24 ՖՀՄՍ 1.23 կետի համաձայնեցման համար, կազմակերպության ՖՀՄՍ համապատասխան պատրաստված առաջին ֆինանսական հաշվետվությունները պետք է ներառեն հետևյալ կետերը՝
- ▶ Նախկին ՀՀՀՍ-ի համապատասխան ներկայացված սեփական կապիտալի համաձայնեցումը ՖՀՄՍ-ների համապատասխան սեփական կապիտալին՝ հետևյալ ամսաթվերի համար՝
    - (i) ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ
    - (ii) Նախորդ ՀՀՀՍ-ի համաձայն պատրաստված ամենավերջին տարեկան ֆինանսական հաշվետվություններում ներկայացված ամենաուշ ժամանակաշրջանի վերջի դրությամբ
  - ▶ Կազմակերպության ամենավերջին տարեկան ֆինանսական հաշվետվություններում ներկայացված ամենաուշ ժամանակաշրջանի համար ՖՀՄՍ-ների համաձայն իր ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունքների համաձայնեցումը: Այդ համաձայնեցման համար սկզբնապես պետք է նախկին ՀՀՀՍ –ի համաձայն նույն ժամանակաշրջանի ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունքները, կամ եթե կազմակերպությունը այդպիսի ընդհանուր ֆինանսական արդյունքների մասով հաշվետվություն չի ներկայացրել, նախկին ՀՀՀՍ-ի համաձայն շահույթը կամ վնասը:
  - ▶ Եթե կազմակերպությունը իր ֆինանսական վիճակի մասին ՖՀՄՍ-ներով սկզբնական հաշվետվությունը պատրաստելիս ճանաչել կամ հակադարձել է արժեզրկման կորուստներ, այն բացահայտումները, որ կպահանջվեն ՀՀՄՍ 36 «Ակտիվների արժեզրկում» ստանդարտով, եթե կազմակերպությունը ճանաչած լինեք այդ կորուստները կամ հակադարձումները ՖՀՄՍ-ներին անցնելու ամսաթվով սկսվող ժամանակաշրջանում:
- ՖՀՄՍ 1.25. ՖՀՄՍ 1.24-ին համապատասխան պահանջվող համաձայնեցումները պետք է բավարար մանրամասներ պարունակեն, որ ֆինանսական հաշվետվություններից օգտվողները հնարավորություն ունենան հասկանալու ֆինանսական վիճակի մասին հաշվետվության և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ կատարված էական ճշգրտումները: Եթե կազմակերպությունը դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն ներկայացրել է համապատասխան նախկին ՀՀՀՍ-ի, ապա այն նաև պետք է բացատրի դրամական հոսքերի մասին հաշվետվության մեջ կատարված էական ճշգրտումները:
- ՖՀՄՍ 1.26 Եթե կազմակերպությանը հայտնի է դառնում ՀՀՀՍ-ի համապատասխան պատրաստած հաշվետվություններում արված սխալների մասին, ապա ՖՀՄՍ 1.24-ով պահանջվող համաձայնեցումները պետք է այդ սխալների ուղղումները տարանջատեն հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններից:

# Հավելված 1. ՖՀՄՍ-ների առաջին անգամ որդեգրում (շարունակություն)

## Կապիտալի վերաներկայացում նախկին ՀՀՀՍ-ներից ՖՀՄՍ-ների

### 1. ՖՀՄՍ 6 «Օգտակար հանածոների հետախուզում և գնահատում»

#### ճշգրտումներ

##### ա) Մինչ լիցենզիայի ստացումը կատարված ծախսումներ

Այն ծախսումները, որոնք տեղի են ունեցել մինչև տարածքը հետախուզելու իրավունք ստանալը, նախկին ՀՀՀՍ-ի համաձայն կապիտալացվել են: ՖՀՄՍ-ների համաձայն այս ծախսումները այլևս ենթակա չեն կապիտալացման: Այսպիսով, 26 մլն. ԱՄՆ դոլար մինչ լիցենզիայի ստացումը կատարված ծախսումները, որոնք տեղի են ունեցել մինչև 2010թ. հունվարի 1-ը, դուրս են գրվել սկզբնական չբաշխված շահույթի միջոցով: 2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար 9 մլն. ԱՄՆ դոլար ծախսումները, որոնք կատարվել են մինչ լիցենզիայի ստացումը, ծախսագրվել են շահույթի կամ վնասի միջոցով:

#### Մեկնաբանություն

Այս ցուցադրական ֆինանսական հաշվետվություններում Խումբը որոշել է վերահաշվարկել հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը ըստ ՀՀՄՍ 16-ի: Ընկերությունը կարող էր նաև կիրառել ՖՀՄՍ 1.30-ի ազատումը՝ որոշակի հոդվածների համար կիրառելով իրական արժեքը իր ՖՀՄՍ-ներով սկզբնական ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես ելակետային արժեք:

##### բ) Լիցենզիայի և ձեռքբերման ծախսումներ

Համաձայն նախորդ ՀՀՀՍ-ի, լիցենզիայի և ձեռքբերման ծախսումները, որոնք կապված չեն տնտեսապես փոխհատուցվող պաշարների հետ, ենթակա են արժեզրկման հայտանիշների ստուգման: Երբ այսպիսի հայտանիշեր գոյություն ունեն, համապատասխան ծախսումները տեղափոխվում են սպառվող խումբ, ինչը ենթակա էր առանձին արժեզրկման ստուգման:

Խումբը որդեգրել է ՖՀՄՍ-ների համապատասխան հաշվապահական հաշվառման քաղաքականություն, որը պահանջում է յուրաքանչյուր հիմնական միջոցների տարեկան վերանայում, համոզվելու որ գոյություն չունեն արժեզրկում հաստատող փաստեր կամ հանգամանքներ: Եթե ապագայում ոչ մի գործունեություն չի պլանավորվում, կամ այլ կերպ հիմնական միջոցը արժեզրկվում է, լիցենզիայի և գույքի ձեռքբերման արժեքների մնացորդները դուրս են գրվում շահույթ կամ վնաս: Արդյունքում՝ Խումբը վերադասակարգել է 131 մլն. ԱՄՆ դոլար ոչ նյութական հետախուզման ծախսումներ, որոնք նախկին ՀՀՀՍ-ի համաձայն ներառվում էին հանքի արժեքում որպես հետախուզման և գնահատման ակտիվ: Այս ծախսումները ՖՀՄՍ-ների համապատասխան ենթարկվել են արժեզրկման գնահատման և արդյունքում՝ կուտակված շահույթով սկզբնական հաշվետու ամսաթվին (2010թ. հունվարի 1-ին) դուրս է գրվել 3.2 մլն. ԱՄՆ դոլար, և 6 մլն. ԱՄՆ դոլար դուրս է գրվել 2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերջով:

##### գ) Հետախուզման ծախսումներ

Այն ծախսումները, որոնք կապված են երկրաբանական և երկրաֆիզիկական, ինչպես նաև անհաջող հետախուզման և գնահատման աշխատանքների հետ, նախկին ՀՀՀՍ-ի համաձայն կապիտալացվել են հանքարդյունաբերության ակտիվների ամբողջական ծախսային կետորոնում: Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն, որոշակի վաղ փուլում որոնման համար կատարված ծախսումները ծախսագրվում են կատարման ժամանակ, մինչդեռ հետախուզման ծախսումները սկզբնական պահից կապիտալացվում են որպես ակտիվ, և եթե հետագայում գնահատվում են որպես տնտեսապես ոչ կենսունակ, ապա ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես այլ ծախսեր:

Քանի որ նախկին ՀՀՀՍ-ի համաձայն հանքավայրի ակտիվները ներառում էին ոչ նյութական հետախուզման ծախսումներ, ինչպես նաև հաջողված և անհաջող հետախուզման ծախսումներ, ուստի Խումբը սկզբնական ՖՀՄՍ-ների ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում վերադասակարգել է 548 մլն. ԱՄՆ դոլար հանքերի ակտիվներից հետախուզման և գնահատման ակտիվներ, և դուրս է գրել 303 մլն. ԱՄՆ դոլար անհաջող հետախուզման և գնահատման ծախսումներ, իսկ 2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար դուրս է գրել 75 մլն. ԱՄՆ դոլար:

#### Մեկնաբանություններ

Այս ցուցադրական ֆինանսական հաշվետվություններում Խումբը որոշել է հետևել հաշվապահական հաշվառման «հաջող փորձի» մոտեցման տեսակին, դուրս գրելով բոլոր որոնման և անհաջող հետախուզական ծախսումները: Խնդրում ենք հաշվի առնել այն, որ ՖՀՄՍ 6-ի համաձայն այլ մոտեցումներ էլ են թույլատրվում, և դիտարկեք «Գուղ մայնինգի» հաշվապահական հաշվառման քաղաքականության մեկնաբանությունները ՖՀՄՍ 6-ի այլընտրանքային հաշվապահական մոտեցումների համար:

## 2. ՀՀՄՍ 16 Հիմնական միջոցների ճշգրտումներ

### ա) Հաշվեկշռային արժեքի վերանայում

Նախկին ՀՀՀՍ-ի համաձայն, Խումբը չէր ճանաչում օգուտ կամ վնաս հանքի մասնաբաժնի փոխանցման համաձայնություններից, ակտիվների փոխանակումներից և հանքերի օտարումներից, եթե այդ օտարումները կփոխելին ամորտիզացիայի տոկոսադրույքը 20%-ից պակաս չափով:

Այս ամենը առաջացրեց 103 մլն. ԱՄՆ դոլարի հանքերի հաշվեկշռային արժեքի նվազում 2010թ. հունվարի 1-ի դրությամբ, և 58 մլն. ԱՄՆ դոլար օտարումից ստացված օգուտ 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:



# Հավելված 1. ՖՀՄՍ-ների առաջին անգամ որդեգրում (շարունակություն)

## 2. ՀՀՄՍ 16 Հիմնական միջոցների ճշգրտումներ (շարունակություն)

### Մեկնաբանություններ

Այս ցուցադրական ֆինանսական հաշվետվություններում համաձայն ՀՀՄՍ 16-ի խումբը որոշել է վերահաշվարկել հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքները: Ընկերությունը կարող էր նաև կիրառել ՀՀՄՍ 1.30-ի ազատումը՝ որոշակի հոդվածների համար կիրառելով իրական արժեքը իր ՖՀՄՍ-ներով սկզբնական ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես ելակետային արժեք:

### բ) Հիմնական միջոցների արժեքի անհամարժեք ճշգրտումներ

Նախկին ՀՀՄՍ-ների համաձայն, խումբը կիրառում է հանքերի զուտ հաշվեկշռային արժեքի արժեքի անհամարժեք երկաստիճան ստուգում, որի առաջին քայլը ակտիվի զուտ հաշվեկշռային արժեքի համեմատումն է հաստատված պաշարների արտադրությունից գնահատված չգեղջկած ապագա զուտ դրամական հոսքերի և չհաստատված ակտիվի՝ արժեքի անհամարժեք սկզբնական արժեքի հանրագումարի հետ: Եթե հանքավայրի զուտ հաշվեկշռային արժեքը գերազանցի վերջնական վերականգնվող գումարին, ապա արժեքի անհամարժեք կզնհակառակ արժեքի անհամարժեք ստուգման երկրորդ քայլով՝ որպես դեֆիցիտ (բացասական տարբերություն), եթե կա այդպիսին, հաստատված և հավանական պաշարների արտադրությունից գնահատված չգեղջկած ապագա դրամական հոսքերը գումարած չհաստատված ակտիվի՝ արժեքի անհամարժեք սկզբնական արժեք է հանած համապատասխան ակտիվի հաշվեկշռային արժեք:

Համաձայն ՖՀՄՍ-ների փոխհատուցվող գումարը սահմանվում է որպես առավելագույնը օգտագործման արժեքից և իրական արժեքից՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումները, որը հաշվարկվում է դրամատեղծ միավորի մակարդակի վրա կամ անհատական ակտիվների համար՝ ըստ Ծան. 2.4-ում նկարագրված խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության: Եթե ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է իր փոխհատուցվող գումարը, ակտիվը համարվում է արժեքի անհամարժեք և արժեքի անհամարժեք կորուստները արտացոլվում են շահույթում կամ վնասում և նվազեցնում են ակտիվի հաշվեկշռային արժեքը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ մինչև ակտիվի փոխհատուցվող գումարը: Սրա արդյունքում 2010թ. հունվարի 1-ի դրությամբ արժեքի անհամարժեք կորուստները կազմել են 27 մլն. ԱՄՆ դոլար և 2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար՝ 9 մլն. ԱՄՆ դոլար:

### գ) Մաշվածություն, սպառման և ամորտիզացիայի ճշգրտումներ

Նախկին ՀՀՄՍ-ների համաձայն հանքերի մաշվածությունը, սպառումը և ամորտիզացիան հաշվարկվում էին արտադրության միավորի հիման վրա, որն այժմ կիրառվում է յուրաքանչյուր հանքի կտրվածքով առանձին, որոնց միավորվում են մշակման առանձին տարածքներ՝ ըստ 2.4 Ծանոթագրությունում նշված հաշվապահական հաշվառման քաղաքականության, իսկ այն տարրերը, որոնց օգտակար ծառայության ժամկետը ավելի փոքր է հանքի շահագործման ժամկետից, համապատասխանաբար ամորտիզացվում էին գծային մեթոդով:

Խումբը նաև ճշգրտել է մաշվածության և ամորտիզացիայի ծախսումները համադրելի ժամանակաշրջանների համար, որպեսզի վերաներկայացնի հանքերի հաշվեկշռային արժեքները ըստ ՀՀՄՍ 16-ի և ՖՀՄՍ 6-ի վերը նշված ճշգրտումների: Սրա արդյունքում 2010թ. հունվարի 1-ի դրությամբ կուտակված մաշվածությունը նվազել է 32 մլն. ԱՄՆ դոլարով, և 2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար մաշվածության ծախսը նվազել է 8 մլն. ԱՄՆ դոլարով:

## 3. Վերականգնման ճշգրտումներ

### ա) Նախկին ՀՀՄՍ-ների ճշգրտումներ

ՖՀՄՍ-ների փոխակերպման նպատակով նախկին ՀՀՄՍ-ների համաձայն վերականգնման պահուստների հաստատման ժամանակ հայտնաբերվել է զեղչման դրույքի նախկին հետադարձման հաշվարկի սխալ: Սա հանգեցրել է, 2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար ապագործարկման պահուստների և կուտակված ծախսերի թերազնահատմանը 5 մլն. ԱՄՆ դոլարով: 2010թ. հունվարի 1-ին ավարտվող տարվա համար պատրաստված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ազդեցություն տեղի չի ունեցել:

### բ) Վերականգնման ճշգրտումներ

ՖՀՄՍ-ի պահանջների հետ համահունչ կերպով վերականգնման պահուստները նախկինում չափվել էին՝ հիմնվելով գնահատված վերականգնման ծախսումների վրա՝ սկզբնական ճանաչման պահից զեղջկած մինչև դրա զուտ ներկա արժեքը:

Սակայն զեղչման տոկոսադրույքի ճշգրտումները չէին արտացոլվում համապատասխան ակտիվներում կամ պահուստներում նախկին ՀՀՄՍ-ի համաձայն, եթե դրանք չէին առաջացնում գնահատված ապագա ծախսումների աճի վերանայում:

Խումբը որոշել է կիրառել ՖՀՄՍ 1-ի համաձայն ամբողջական հետընթաց կիրառումից ազատումը: Այսպիսով, խումբը վերաչափել է վերականգնման պարտավորությունները 2010թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀՄՍ 37-ի համաձայն, ներառել է սահմանված գումարը համապատասխան ակտիվի արժեքի մեջ՝ զեղջկած այդ ամսաթվի դրությամբ՝ օգտագործելով պատմական ռիսկի գործոնով ճշգրտված զեղչման դրույքների լավագույն գնահատականները, և վերահաշվարկել է ՖՀՄՍ-ների համաձայն կուտակված մաշվածությունը և ամորտիզացիան:

Բացի այդ, նախկին ՀՀՄՍ-ների համաձայն զեղչման տոկոսի հետադարձումը ներառվում էր մաշվածության ծախսի մեջ, ինչը հիմա դասակարգված է որպես ֆինանսական ծախս ՖՀՄՍ-ների համաձայն:

# Հավելված 1. ՖՀՄՍ-ների առաջին անգամ որդեգրում (շարունակություն)

## 3. Վերականգնման ճշգրտումներ (շարունակություն)

### Մեկնաբանություններ

Խումբը նախընտրել է վերականգնման պահուստների հետադարձ վերաներկայացման ազատումը ՖՀՄՍ 1-ի, Հավելված Դ21-ի համաձայն: Սակայն կազմակերպությունը, որն ունի՝ (1) կարճ պատմություն; կամ (2) ունի անհրաժեշտ մանրամասն տեղեկատվություն, կարող է փոխարենը ընտրել հետընթաց վերաներկայացումը: Կազմակերպությունը, հավանաբար, կցանկանա օգտագործել այս հնարավորությունը, եթե նախկին ՀՀՄՍ-ի և ՖՀՄՍ-ի միջև տարբերությունը նվազագույն է:

## 4. Այլ ճշգրտումներ

### ա) Թոշակային սխեմայի ակտիվներ

Նախկին ՀՀՄՍ-ների համաձայն Խումբը կիրառում է հաշվարկված արժեքի մեթոդը շուկայում գրանցված ներդրումները գնահատելու նպատակով, որի արդյունքում ներդրումների օգուտները և վնասները ամորտիզացվում են հինգ տարում:

ՀՀՄՍ 19-ի համաձայն պլանի ակտիվները գնահատվում են իրական արժեքով՝ շուկայական գների տեղեկության հիման վրա: Խումբը ճշտագրտել է սահմանված թոշակային հատուցումների սխեմայի ակտիվները հաշվարկված արժեքից իրական արժեքի, որի ազդեցությունը սահմանված թոշակային հատուցումների պարտավորության վրա կազմել է 3 մլն. ԱՄՆ դոլար (2010թ. հունվարի 1-ի դրությամբ) և 5 մլն. ԱՄՆ դոլար (2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ):

### բ) Կարճաժամկետ հատուցումներ աշխատակիցներին

Նախկին ՀՀՄՍ-ների համաձայն Խումբը հանգստյան օրերի վճարները հաշվեգրում էր, երբ այն ենթակա էր դառնում կանխիկ վճարման, կամ երբ աշխատակիցը իրավունք ուներ իր վաստակած արձակուրդը փոխանցել ապագա ժամանակաշրջան առանց սահմանափակումների: Սակայն Խումբը կուտակում/հաշվեգրում չէր իրականացրել այն հանգստյան օրերի վճարները, որոնք համարվում էին վաստակված և հանգստյան օրերը ակնկալվում էին օգտագործվել հաշվետու ժամանակաշրջանում: ՀՀՄՍ 19-ի համաձայն Խումբը պարտավոր է կատարել կուտակում/հաշվեգրում բոլոր կարճաժամկետ բացակայությունների համար, որոնք վերագրվում են հաշվետու ժամանակաշրջանում վաստակված, բայց չօգտագործված հանգստյան օրերին:

ՀՀՄՍ 19-ի ազդեցությունը Խմբի ՖՀՄՍ-ներին անցման վրա արտացոլվում է հանգստյան օրերի կուտակումների պահուստի աճով 5 մլն. ԱՄՆ դոլար գումարի չափով: 2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար տեղի է ունեցել 2 մլն. ԱՄՆ դոլարի աճ հանգստյան օրերի վճարների գծով, որն արտացոլվել է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

### գ) Վերադիր ծախսումներ

Երբ Խումբը գործում է որպես օպերատոր, այն կարող է գանձել վերադիր վճարներ, ընդհանուր ծախսումների ֆիքսված դրույքի հիման վրա, ինչպես սահմանված է որոշակի համատեղ ձեռնարկման պայմանագրերով: Այս գանձումները, որոնք իրականացվել են Խմբի կողմից, որպես օպերատոր, ճանաչվել են որպես վարչական և ընդհանուր ծախսերի նվազում նախկին ՀՀՄՍ-ների համաձայն: ՖՀՄՍ-ների համաձայն Խումբը չի գործում որպես գործակալ այս ընդհանուր գանձումների նկատմամբ, այն ճանաչում է ընդհանուր վերադիր ծախսերը և վերադիր վճարները շահույթում կամ վնասում, որպես համապատասխանաբար ծախս և եկամուտ:

### դ) Հետաձգված հարկ

Նախկին ՀՀՄՍ-ների համաձայն հետաձգված հարկային ակտիվները դասակարգված էին որպես ընթացիկ և ոչ ընթացիկ հիմնվելով համապատասխանաբար կապված ակտիվների և պարտավորությունների վրա, որոնք առաջացնում են տարբերություններ: ՀՀՄՍ 12-ը պահանջում է, որ հետաձգված հարկերի գումարները դասակարգվեն որպես ոչ ընթացիկ ակտիվներ:

Բացի այդ հետաձգված հարկերը ճշգրտվել են ՖՀՄՍ-ների առաջին անգամ որդեգրման հետևանքով զուտ հաշվեկշռային արժեքների փոփոխության արդյունքում՝ ըստ վերը նկարագրվածների:

## 5. Նախկին ՀՀՄՍ-ներից ՖՀՄՍ-ներով դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության վերաներկայացում

Նախկին ՀՀՄՍ-ներից ՖՀՄՍ-ներ անցումը չի ունեցել ազդեցություն Խմբի կողմից պատրաստված դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության վրա: Նախկին ՀՀՄՍ-ի և ՖՀՄՍ-ի ներկայացումների միջև համաձայնեցման տարրերը չեն ունեցել զուտ ազդեցություն առաջացած դրամական հոսքերի վրա:

## Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության վերաներկայացման վերաբերյալ ծանոթագրություններ

ՖՀՄՍ 1.23-ի համաձայն, եթե կազմակերպությունը դրամական հոսքերի մասին հաշվետվությունը ներկայացնում է նախկին ՀՀՄՍ-ների համաձայն, ապա այն պարտավոր է բացատրել նաև դրամական հոսքերի մասին հաշվետվության նշանակալի ճշգրտումները:

# Բառարան

Սույն հրապարակման մեջ օգտագործված հանքային արդյունաբերությանը հատուկ տերմինների և հապավումների բառարան՝

<i>Ձուլակտոր</i>	Մետաղը սալիկների, մետաղածողերի կամ այլ չդրոշմված ձևով:
<i>Կողմնակի արտադրանք</i>	Երկրորդային մետաղ կամ հանքային արտադրանք, որը ստացվում է հանածոյի աղացման/մանրացման գործընթացում, և որի ստացումը սկզբնական մշակման կամ հետախուզման ժամանակ նախատեսված չէր:
<i>Կիսասակտիվ բաժնային մասնակցություն</i>	Համաձայնություն, ըստ որի կազմակերպությունը, որը պարտավորվում է գործարկել հանքը, և հետևապես համաձայնվում է կրել հետախուզման և մշակման ծախսումները (ֆինանսավորող կողմը) իրավունք ունի փոխհատուցել կրած ծախսումները (և սովորաբար որոշակի գումար փաստացի կատարված ծախսումներից բացի) ավելի շուտ, քան այն կազմակերպությունը, որը սկզբնապես հանդիսանում էր հանքի սեփականատեր (ֆինանսավորվող կողմը) իրավունք կունենա ստանալ արտադրանքից հասույթի բաժնեմաս:
<i>Ֆինանսավորվող կողմը</i>	Կողմը, որի համար կիսասակտիվ բաժնային մասնակցություն համաձայնությամբ հատկացվում են միջոցներ:
<i>Ֆինանսավորող կողմը</i>	Կողմը, որն ըստ կիսասակտիվ բաժնային մասնակցություն համաձայնության հատկացնում է միջոցներ:
<i>խտանյութ</i>	Օգտակար հանածոների աղացման/մանրացման գործընթացի արդյունք, որում ջարդված հանքաքարը ենթակա է հարստացման կամ քիմիական մշակման, որպեսզի ձևավորվի մետաղի խտանյութը: Այդ խտանյութի մնացորդային մետաղը դառնում է հալեցման հումքը:
<i>Հանքում պարունակվող ունցիաներ</i>	Ներկայացնում է ընդերքում առկա ունցիաները՝ նախքան այն ունցիաների նվազեցնելը, որոնք հնարավոր չի լինի փոխհատուցել կիրառելի արդյունահանման գործընթացում:
<i>Մշակում</i>	Օգտակար հանածոների հանքավայրի բացման համար կատարված աշխատանք: Օրինակ, ստորգետնյա հանքում վերջինս կարող է ներառել հիմնանցքի փորումը, լայնական կտրվածքների բացումը և հորատումը: Բաց հանքում այն ներառում է նաև հանքանյութը ծածկող ապարի հեռացումը:
<i>Հետախուզում</i>	Որոնում, նմուշարկում, քարտեզագրում և այլ աշխատանքներ՝ կապված օգտակար հանածոներ փնտրելու հետ:
<i>Հանքում մասնաբաժնի տրամադրման կամ ստացման համաձայնագիր</i>	Համաձայնություն, ըստ որի հանքի գործարկման իրավունք ունեցողը (ընդերքօգտագործողը) փոխանցում է իր շահերի մի մասը երկրորդ կողմին (մասնակից)՝ ի հատուցում նրան, որ վերջինս պետք է վճարի հետախուզման ամբողջ կամ որոշակի ծախսումները և, հավանաբար, իրականացնի ամբողջ կամ մասնակի մշակում, եթե հայտնաբերվեն պաշարներ:
<i>Աստիճան</i>	Հանքաքարի յուրաքանչյուր տոննայում պարունակվող մետաղի քանակը, որը թանկարժեք մետաղների համար արտահայտված է տրոյան ունցիաներով կամ գրամով յուրաքանչյուր տոննայում, և մնացած այլ մետաղների համար՝ տոկոսադրույքով:
<i>ՀՊՄԿ օրենսգիրք</i>	Հանքաքարի Պաշարների Միասնական Կոմիտեի Օրենսգիրք: ՀՊՄԿ օրենսգրքի նպատակն է ապահովել Ավստրալիայում հետախուզման արդյունքների, օգտակար հանածոների և հանքաքարի պաշարների վերաբերյալ հաշվետվությունների պատրաստման նվազագույն ստանդարտներ:
<i>Արտադրության ցիկլում գտնվող մետաղ</i>	Մետաղ, որը հաշվետու ամսաթվին գտնվում է արտադրության գործընթացում և կարող է առանձին որոշվել:
<i>Մետագործական գործարան</i>	Վերամշակող արտադրական հզորություն, որում հանքաքարը մանրացվում է և ենթարկվում է ֆիզիկական կամ քիմիական մշակման՝ մետաղների դուրս բերման նպատակով:
<i>Բաց հանք</i>	Հանք, որում մետաղները արդյունահանվում են բացառապես մակերևույթից:
<i>Հանքաքար</i>	Օգտակար հանածոներ ներառող քար, որը պարունակում է տնտեսապես փոխհատուցվող պաշարներ:
<i>Հանքաքարի պաշար</i>	Հանքաքարի պաշարները հանդիսանում են օգտակար հանածոների պաշարի չափվող կամ առանձնացող մաս, որը տնտեսապես ենթակա է արդյունահանման: Այն ներառում է նոսրացնող նյութեր և կորուստների պահուստները, որոնք կարող են ի հայտ գալ, երբ օգտակար հանածոն արդյունահանվում է: Համապատասխան գնահատումներ և ուսումնասիրություններ են իրականացվել ներառելով իրատեսական ենթադրված հանքարդյունաբերական, մետաղագործական, տնտեսական, մարքեթինգային, օրենսդրական, շրջակա միջավայրի, սոցիալական, կառավարական գործոնների փոփոխություններն ու ազդեցությունները: Այս գնահատումները ցույց են տալիս, որ հաշվետվությունների ներկայացման պահին արդյունահանումը կարող է ողջամտորեն արդարացվել: Վստահելիության բարձրացման նպատակով հանքաքարի պաշարները բաժանված են հավանական հանքաքարի պաշարների և ապացուցված հանքաքարի պաշարների:

## Բառարան (շարունակություն)

<i>Հանքանյութը ծածկող ապար</i>	Հանքանյութը ծածկող ապարները իրենցից ներկայացնում են անօգուտ նյութեր, որոնք անհրաժեշտ է հեռացնել հանքից մետաղ պարունակող քարի (հանքաքար) արդյունահանման համար:
<i>Գնանշման ժամանակահատված</i>	Ապրանքների փաստացի առաքման պահից հետո ընկած ժամանակահատվածը, որի ընթացքում վաճառված օգտակար հանածոների գինը և աստիճանը կարող են փոփոխվել ապրանքների գների տատանումներից, ինչպես նաև գործընկերոջ կողմից օգտակար հանածոների պարունակության ստուգումից:
<i>Օգտակար հանածո</i>	Օգտակար հանածոների հանքավայր, որից արժեքավոր մետաղները կարող են փոխհատուցվել: Իրագործելիության ուսումնասիրության հաջող ավարտից հետո հանածոն կառաջացնի պաշար:
<i>Ռոյալթի</i>	Արդյունահանված արտադրանքի գծով մուտքերի մի մաս՝ սովորաբար մինչ գործառնական ծախսերի նվազեցումը, որը վճարվում է վարձակալվող սեփականության մասնաբաժին ունեցող կողմին:
<i>Մակաբացում</i>	Հանքանյութը ծածկող ապարների կամ թափոն քարերի հեռացումը հանքամարմնից՝ բաց մեթոդով արդյունահանման նախապատրաստման նպատակով: Արտահայտված է որպես ոսկու յուրաքանչյուր ունցիայի արդյունահանված կամ արդյունահանվելիք տոննաների ընդհանուր գումարով:
<i>Հարստապրջ</i>	Նյութեր, որոնք մնում են այն բանից հետո, երբ բոլոր տնտեսապես և տեխնիկապես փոխհատուցվող թանկարժեք մետաղները առանձնացվել են հանքաքարից վերամշակման ընթացքում:
<i>Վերցրու կամ վճարի սկզբունքով պայմանագիր</i>	Վաճառողի և գնորդի միջև համաձայնություն, ըստ որի գնորդը պարտավոր է վճարել որոշակի գումար անգամ, եթե ծառայությունը չի մատուցվել կամ ապրանքը չի մատակարարվել: Եթե գնորդը ձեռք չի բերում նվազագույն քանակությունը, ապա պահանջվում է տվյալ նվազագույն քանակի դիմաց վճարում՝ համաձայն պայմանագրային գնի: Սովորաբար, չբավարարող գումարները կարող են փոխհատուցվել հետագա տարիների ընթացքում, եթե գնումների ծավալը գերազանցեն նվազագույն քանակությունը:







**Ընկերության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն**

«Էրնսթ ընդ Յանգ» ընկերությունը առաջատար դիրք է գրավում առդիտորական, հարկային, գործարքների ուղեկցման և խորհրդատվական ծառայությունների համաշխարհային շուկայում: Աշխարհի տարբեր երկրներում գտնվող մեր 152,000 աշխատակիցներին միավորում է ընդհանուր արժեքների և որակյալ սպասարկման հանդեպ իրենց հավատարմությունը: Մեր հաջողությունը մեր աշխատակիցների, հաճախորդների և ամբողջ հանրության ներուժի բացահայտման մեջ է:

Ավելի մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ey.com վեբ-հասցեում:

Մենք մշտապես ընդլայնում ենք մեր ծառայությունների և ռեսուրսների շրջանակը՝ հաշվի առնելով հաճախորդների կարիքները: Շուրջ 4,000 մասնագետներ պշխատում են ԱՊՀ երկրներում գտնվող 18 գրասենյակներում՝ Մոսկվայում, Սանկտ Պետերբուրգում, Նովոսիբիրսկում, Եկատերինբուրգում, Կազանում, Կրասնոդարում, Տոլյատիում, Յուժնո-Սայխայինսկում, Ալմաթիում, Աստանայում, Աթիրաուում, Բաքվում, Կիևում, Դոնեցկում, Տաշքենդում, Թբիլիսիում, Երևանում և Մինսկում:

«Էրնսթ ընդ Յանգ»-ը գլոբալ կազմակերպություն է, որը միավորում է Ernst & Young Global Limited անդամ ընկերությունները, որոնցից յուրաքանչյուրը առանձին իրավաբանական անձ է: Ernst & Young Global բրիտանական ընկերությունը սահմանափակված է իր մասնակիցների երաշխիքներով և հաճախորդներին ծառայություններ չի մատուցում:

**«Էրնսթ ընդ Յանգ» ընկերության Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների խմբի մասին**  
Ֆինանսական հաշվետվություններ հրապարակող յուրաքանչյուր կազմակերպության համար Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին անցումը հանդիսանում է կարևորագույն գործընթաց, ինչի ազդեցությունը անդրադառնում է ոչ միայն հաշվապահական հաշվառման, այլև կայացվող բոլոր որոշումների վրա, և չի սահմանափակվում միայն վերջիններիս արտացոլման կարգով:

Հաճախորդների հետ աշխատելիս մենք օգտագործում ենք «Էրնսթ ընդ Յանգ» կազմակերպության միջազգային ռեսուրսները՝ մեր մասնագետների խմբերը ներգրավելու և կուտակված գիտելիքները կիրառելու միջոցով: Տնտեսության տարբեր ոլորտներում ծառայությունների մատուցման ընդարձակ փորձի, առաջադրված ինտիլիգենցիայի ըմբռնման և աշխարհի տարբեր երկրներում գտնվող կազմակերպությունների հետ համատեղ աշխատանքի ընթացքում ստացված նորագույն մշակումների շնորհիվ մենք կապահովենք անվիճելի առավելություններ ձեր կազմակերպությանը: Այսպիսով՝ մենք պատրաստ ենք աջակցել մեր հաճախորդների բիզնեսի զարգացմանը:

© 2012 «Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ.

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Այս հրատարակությունը պարունակում է ամփոփ տեղեկատվություն և, հետևաբար, նախատեսված է օգտագործելու միայն որպես ընդհանուր ուղեցույց: Այն նախատեսված չէ փոխարինելու որևէ մանրակրկիտ հետազոտություն և չի կարող հիմք հանդիսանալ մասնագիտական դատողության իրականացման համար: Ոչ «Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ-ն, ոչ էլ համաշխարհային «Էրնսթ ընդ Յանգ» կազմակերպության որևէ անդամ որևիցե պատասխանատվություն չեն կրում այն վնասների համար, որոնք կարող են պատճառվել որևէ անձի՝ սույն հրատարակությունում առկա տեղեկատվության օգտագործման արդյունքում որևէ գործողություն իրականացնելու կամ գործողությունից հրաժարվելու հետևանքով: Ցանկացած մասնավոր հարցի դեպքում անհրաժեշտ է դիմել համապատասխան խորհրդատուին:

